


Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Հ. ԱՂԱՅԱՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

10-րդ դասարան



ԵՐԵՎԱՆ



2 0 0 9

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՈՐՊԵՍ ԳԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԳՊՐՈՅԻ ԲՈԼՈՐ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՏԴ 373.167.1:3 (075)
ԳՄԴ 60 g 72
Հ 362

Հ 362 Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար /Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան և այլք. - Եր.: Տիգրան Մեծ, 2009. - 240+8 էջ ներդիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
«ՄԻԽԹԱՐ ԱԷԲԱՍՏԱՑԻ»
Կրթական Համալիր
ԻՐԱՎԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՄԴ 60 g 72

ISBN 978-99941-0-328-7

© Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան,
Կ. Վարդանյան, Հ. Աղաջանյան, 2009 թ.
© «Տիգրան Մեծ», 2009 թ.

ՍԻՐԵԼԻՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Ճեր առջև է «Հասարակագիտություն» առարկայի 10-րդ դասարանի դասագիրքը: Այն բաղկացած է չորս բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է «Հասարակագիտություն» համընդգրկուն բնագավառի առանձին բաղադրիչներին: Հասարակագիտության բաղադրիչները շատ են: Այս ուսումնական տարում դուք կուսումնասիրեք դրանցից չորսը. գեղագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն և տնտեսագիտություն: Դրանց ուսումնասիրումն ավագ դպրոցում կարևոր է, քանի որ մարդիկ իրենց անձնական ու հասարակական կյանքում հաճախ են առնչվում խնդիրների, որոնց լուծումները որոնելիս կարիք են զգում գիտելիքների, հմտությունների ու արժեքային կողմնորոշիչների, որոնք կարող են ձեռք բերվել տվյալ բաղադրիչները սովորելու շնորհիվ:

Հասունացող անձնավորությանը հուզում են գեղեցկանալու և ներդաշնակ միջավայրում ապրելու, բարոյական ընտրություններ կատարելու, սեփական ներաշխարհն ավելի լավ հասկանալու և մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցվելու, բարեկեցիկ ու ապահով կյանք ունենալու և բազմաթիվ այլ հարցեր, որոնցից շատերի պատասխանները գտնել ձեզ կօգնի առաջարկվող դասագիրքը:

Դասագրքում կան ընթերցանության նյութեր, հարցեր մտորելու և քննարկելու համար, տարատեսակ առաջադրանքներ: Ցանկալի է, որ դուք հարցերն ու առաջադրանքները չանտեսեք, քանի որ հասարակագիտություն սովորել չի նշանակում պարզապես ընթերցել-սերտել որոշ տեքստեր: Հասարակագիտություն սովորել նշանակում է իրական կյանքում փորձարկել սովորած նոր հասկացությունները, գաղափարներն ու սկզբունքները, քանավիճել դրանց շուրջ հարազատների ու մտերիմ ընկերների հետ, կարողանալ հանգել սեփական եզրակացությունների: *Հիշեք. հասարակագիտությունը յուրահատուկ գիտություն է. ի տարբերություն բազմաթիվ այլ գիտությունների՝ հասարակագիտությունը չի տալիս պատրաստի պատասխաններ: Այն տալիս է միայն գործիքներ. մտածելու ձևեր և մոտեցումներ, որոնք կիրառելով ու քննադատաբար յուրացնելով կարող եք կառուցել ձեր սեփական արժեքային համակարգն ու աշխարհայացքը:*

Ցանկալի է, որ սովորելիս հանդես բերեք ստեղծագործական մտածելու, կատարեք ինքնուրույն հետազոտություններ, դիտարկեք ձեր համայնքը քննարկվող հարցերի տեսանկյունից ու մտածեք, քե՞ս առօրյա կյանքում ինչպես կարող եք կիրառել ձեր ստացած գիտելիքներն ու հմտությունները:

Միտով մաղթում ենք հաջողություններ:

Գ Ե Ղ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԹԵՍԱ 1. ԻՆՉ Է ԳԵՂԵՉՈՒԿԸ

ԳԱՍ 1-2. ԳԵՂԵՑԻԿԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԹԵՐՑԵՔ ՏԵՔՍԸ

Գեղեցկությունը բնության մեծագույն գաղտնիքներից մեկն է, որի ազդեցությունը մենք տեսնում և զգում ենք, իսկ նրա էության մասին հարակ պարզեցրածում ցավ չարտերն են փորձել, բայց անհաջող...

Յոհան Վիլհելման

Մեր ամենօրյա կյանքի բազմազան երևույթներն ու գործընթացները, այսինքն՝ այն ամենը, ինչ առկա է ու տեղի է ունենում մեր շրջապատում, մեր կողմից, ի թիվս այլ գնահատականների (ճշմարիտ է, թե կեղծ, հետաքրքիր է, թե ծանծրալի, շահավետ է, թե վնաս բերող և այլն), արժանանում է ևս մեկ կարևոր գնահատականի՝ գեղեցիկ է արդյոք: Մեզանից յուրաքանչյուրը շարունակ գնահատում է: *Գեղեցիկի տեսանկյունից մենք գնահատում ենք մարդկանց արարքները, վարվելակերպը, շարժուձևը, միջավայրը, առավել ևս արվեստի գործերը և բազմազան այլ երևույթներ:* Ամեն մարդ ունի գեղեցիկի իր պատկերացումը և շատ արագ կարող է տարբեր երևույթների ու իրադարձությունների մասին դատողություններ անել գեղեցիկի տեսանկյունից: «Այս ի՞նչ գեղեցիկ երեխա է», «Գեղեցիկ զգեստ է հագել», «Մեր մայրաքաղաքն օրեցօր գեղեցկանում է», նման արտահայտություններ կարելի է լսել ամեն քայլավորիս: Կամ՝ «Այդպես մի՛ վարվիր, գեղեցիկ չէ», «Որքանո՞վ է գեղեցիկ հեռուստահաղորդման ժամանակ միայնաց վիրավորելը», «Երգիչը ո՞չ գեղեցիկ ձայն ունի, ո՞չ ակներև երաժշտական ունակություններ» և այլն:

- ◆ **Խորհե՛ք այն մասին, թե ինչն էք համարում գեղեցիկ, թվարկե՛ք երևույթներ, որոնք, ըստ ձեզ, գեղեցիկ են:** Գեղեցիկի օրինակներ գտե՛ք բնության մեջ և մարդկային ստեղծագործություններում ու մտորե՛ք, թե դրանք ինչ հատկանիշներով են օժտված: Օրինակ, եթե գեղեցիկ է, ասենք, տվյալ կառույցը, ապա ի՞նչն է, ըստ ձեզ, այն դարձնում գեղեցիկ:

Մարդը գնահատող էակ է և շարունակ գնահատելով իրողությունները ի քիվս այլ չափանիշների նաև գեղեցիկի տեսանկյունից՝ հետևողական լինելու ղեպքում հանգում է մի կարևոր խնդրի. «Իսկ ի՞նչ է գեղեցիկը»:

- ♦ **Դուք երևի հիշում եք, որ 8-րդ դասարանում առիթ եք ունեցել մտորելու գեղեցիկի խնդրի շուրջ և որոնելու գեղեցիկի ձեր սեփական ձևակերպումները: 2-3 բույն գույներով գրուցե՛ք գեղեցիկի մասին, փորձե՛ք վերհանել այնպիսի հատկանիշներ, որոնք իրենց հերթին բնորոշում են գեղեցիկի էությունը:**

Գեղեցիկը դարեր շարունակ եղել է մտածողների որոնումների առարկան: Իմաստասերները հնուց ի վեր որոնել են «Ի՞նչ է գեղեցիկը» հարցի պատասխանը: Դուք արդեն գիտեք, որ այդ հարցին տրվել են բազմազան պատասխաններ, քանի որ հնարավոր չէ որևէ մեկ սահմանմամբ սպառիչ ներկայացնել «գեղեցիկ» հասկացության բովանդակությունը: Ստորև կներկայացվեն գեղեցիկի ընկալման որոշ տարբերակներ:

- ♦ **Մտորե՛ք առաջարկվող սահմանումների ու նկարագրությունների շուրջ՝ փորձելով ձևակերպել գեղեցիկի ձեր ընկալումը: Եթե համաձայն չեք բերվող տեսակետներին, բերե՛ք գեղեցիկը բնութագրող նոր հատկանիշներ ու հիմնավորե՛ք ձեր ընտրությունը:**


Հին Հունաստանում ողջ տիեզերքն է համարվել գեղեցիկ. հունարեն «*կոսմոս*» բառն ունի «ներդաշնակ», «կարգավորված» և «գեղեցիկ» իմաստները: Զանազան տիեզերքը համարվել է գեղեցիկ, իսկ մարդը դիտվել է որպես *փոքր տիեզերք՝ միկրոկոսմոս*, հետևաբար մարդը նույնպես համարվել է գեղեցիկ:

Պյութագորասականները գեղեցիկ են համարել ներդաշնակը, տիեզերականը՝ գտնելով, որ տիեզերքում հնչում է հրաշալի երաժշտություն, որն այն ընկալելու ունակ մարդուն նույնպես ի վիճակի է գեղեցկացնել:


Հին հույն մեծ իմաստասեր **Սոկրատեսը** գեղեցիկ է դիտել *օգտակարն ու նպատակահարմարը՝* նկատելով, որ իրենում օգուտ չպարունակողը չի կարող գեղեցիկ համարվել: Այս տեսակետը վիճարկվել է բազմիցս, քանի որ օգուտի հասկացությունը նույնպես կարող է տարբեր կերպ ընկալվել: Եթե ընդունենք, որ գեղեցիկ երևույթներն ու գործընթացները մարդու մեջ առաջացնում են դրական զգացումներ, տրամադրվածություն, և դա օգտակար է մարդուն, ապա կարող ենք եզրակացնել, որ ինչ-որ իմաստով գեղեցիկն իրոք օգտակարն է:

Սոկրատեսի հետևորդ **Պլատոնը** գեղեցիկը տարբերակում է ըստ աստիճանների: Ըստ նրա՝ գեղեցիկի առաջին աստիճանը *ֆիզիկական՝ բնական կամ մարմնական գեղեցկությունն է*, որը, ցավոք, խիստ անցողիկ է, քանի որ ժամանակն անգիշյում է նրա նկատմամբ:

- ♦ **Որքա՞ն ժամանակ կարող է պահպանվել, ասենք, ծաղիկ կամ պատանու գեղեցկությունը:**



Սոկրատես
(մ.թ.ա. 469-399)



Պլատոն
(մ.թ.ա. 428-348)

Որպես գեղեցիկի հաջորդ աստիճան՝ Պլատոնը նշում է *հոգու գեղեցկությունը*, որն ավելի երկար կարող է պահպանվել, քան մարմնականը, սակայն նույնպես անցողիկ է, քանի որ մարդը փոփոխական է, նրա հոգին կարող է լինել կամակոր, հոգնել, չարանալ, ծերանալ՝ խեղաթյուրելով գեղեցիկի էությունը:

Գեղեցիկի երրորդ աստիճանին *այն երևույթներն են, որ սպեղծվում են գիրությունների և արվեստների շնորհիվ*: Թվում է, թե ժամանակի հոսքն անգոր է գեղեցկության այս տեսակի հանդեպ, քանի որ մարդկության կուտակած գիտելիքներն ու հմտություններն են մարմնավորված այստեղ: Բայց, ըստ Պլատոնի, այս աստիճանին էլ չի տրվում գեղեցիկի լիարժեք պատկերացումը, քանի որ տարբեր գիտությունների ու արվեստների ներկայացուցիչների համար գեղեցիկը կարող է տարբեր լինել:

Հետևապես, կատարյալ գեղեցիկը ենարավոր է միայն չորրորդ մակարդակում՝ իմաստության ու բարիքի գերագույն ոլորտում: *Իսկական, անփոփոխ, հարստի գեղեցիկը գոյություն ունի միայն գաղափարների աշխարհում՝ փրարածությունից ու ժամանակից դուրս*: Այդ անպատճառ գեղեցկությունը հանդես է գալիս որպես սկզբունք և օրինակ, որին պետք է ձգտեն մարդիկ թե ամենօրյա կյանքում (իրենց մարմնի և հոգու գեղեցկացման ամենօրյա ջանքերում), թե ստեղծագործելիս (երբ գրում են գիտական երկեր, կատարում հայտնագործություններ կամ ստեղծում արվեստի արժեքներ): *Պլատոնը գրնում է, որ այդ իդեալական, կատարյալ գեղեցիկը միաժամանակ նաև ճշմարիտ է ու բարի*:

Արիստոտելը որպես գեղեցիկի բնագավառ դիտարկում է արվեստը՝ *ընդունելով, որ գեղեցիկ է չափավորն ու կարգավորվածը*: Ըստ նրա՝ գեղեցիկն ունի մարգարծործող հատկություն, քանի որ գեղագիտական հաճույքը մարդուն թեթևացնում ու ազատում է կուտակված անկատարություններից: Արիստոտելը գտնում է, որ մարդն ազնիվ ու վեհ արարքներ է գործում հանուն գեղեցիկի:

Միջնադարյան մտածողները գեղեցիկ են համարել աստվածայինը, իսկ բնությունն ու մարդուն՝ ստվերային, անկատար: Նրանք մարմինն ու հոգին հակադրել են միմյանց՝ գեղեցիկ համարելով հոգևոր իրողությունները:

Լուսավորիչ Դիդրոն առաջին հանրագիտարանում *գեղեցիկը մեկնաբանել է որպես հարաբերակցություն՝ նշելով, որ գեղեցիկ է այն, ինչ կարգավորված է, միասնական ու համամասնական*: Դիդրոն նաև հավելում է, որ վերոնշյալ հատկությունները կձևեն գեղեցկություն միայն այն դեպքում, եթե դրանց համադրությունը ի վիճակի լինի հուզել մարդկանց:

Գեղեցիկի վերոնշյալ պատկերացումներն ունեն մեկ ընդհանրություն. դրանց համաձայն՝ *գեղեցիկն ինքնին կա, այն մարդու կամքից անկախ է, այսինքն՝ օբյեկտիվ և ինչ-որ իմաստով՝ փիեզերական*:

Գեղագիտական մտքի պատմության մեջ եղել է մեկ այլ *մոտեցում ևս, ըստ*

որի՝ գեղեցիկն իրականում չկա, այն միայն մարդու ներաշխարհին է բնորոշ: Բնության երևույթներն ինքնին ոչ գեղեցիկ են, ոչ ւրզեղ: Մարդն է, որ իր ունեցած գեղեցկության շահանիշներով դաստիարակումներ է անում բնության մասին: Սա սուբյեկտիվիստական մոտեցումն է, ըստ որի գեղեցիկը սուբյեկտիվ է, այսինքն՝ մարդու կամքից կախված: Այս տեսակետի հետևորդներ եղել են և՛ անտիկ աշխարհում, և՛ նոր դարաշրջանում, և՛ ժամանակակից գեղագիտության մեջ: Այս տեսակետի ամենահայտնի ներկայացուցիչներն են անգլիացի իմաստասերներ **Հյումն** ու **Քերկլին**: Ըստ Դեյվիդ Հյումի՝ գեղեցիկն այնպիսի հատկությունն է, որ գոյություն ունի իրերի մեջ ինքնին: Գեղեցիկը գոյություն ունի այն ընկալող մարդու հոգում, և բնության նույն տեսարանը տարբեր մարդիկ կարող են ընկալել տարբեր կերպ: Մեկին այն կրճա գեղեցիկ, մյուսին՝ բնավ ոչ:



«Երվանդ Քոչարի դիմանկարը» գործ՝ Մարտիրոս Մարյանի

Կարծես թե նման ձևով է մտածում և XX դարի հայ մեծ նկարիչ ու քանդակագործ Երվանդ Քոչարը՝ գեղեցիկը բացատրելով հետևյալ կերպ.

«Ի՞նչ է գեղեցկությունը: Գեղեցկությունը մի ուժ է, ինչպես մագնիսականությունը, էլեկտրականությունը, ջերմությունը. ասում են շատերը: Գեղարվեստն այդ ամենն աշխատում է հավաքել, որսալ, արտահայտել:

Բայց այդպե՞ս է արդյոք, թե՞ գեղեցկությունը մեր զգայությունն է, որ բխում է մեր վերաբերմունքից դեպի աշխարհը: Գեղեցկությունը արդյոք մի հարաբերական գաղափար չէ՞, որ կախում ունի մեր հոգու բնակազմությունից: Մի բան ինձ համար գեղեցիկ է, մյուսի համար՝ տգեղ, ուրեմն բացարձակ գեղեցկություն կա՞, թե՞ ոչ:

Գեղեցիկ է այն ամենը, ինչ մեզ գեղագիտական ապրում է պատճառում: Սա անհատական զգացողություն է և չի կարելի որոշակիորեն սահմանել:

Գեղեցիկի, գեղարվեստական ապրումի ձևակերպումն Արվեստն է»:



Երվանդ Քոչար. Մասունցի Գավթի արշանը

(Մեջբերվում է ըստ Քոչար Երվանդ, «Ես և Դու»: Ելույթներ, հոդվածներ ու հիշողություններ, պիես, Երևան, 2007, էջ 17)

ՀԱՐՑԵՐ ՄՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է գեղեցիկը:
2. Արդյոք հե՞շտ է սահմանել գեղեցիկը: Ինչո՞ւ:
3. Գեղեցիկի բերված ընկալումներից ո՞րն է ամենարևոտնե՞լին չեզ համար:
4. Իսկ ո՞ր ընկալման հետ ընդհանրապես համաչալն չեք:
5. Թվարկե՞ք հայրկություններ, որոնք իրենց հերթին բնորոշում են գեղեցիկը:
6. Համաչալն եք, որ գեղեցկությունն ու՞մ է: Եթե այո, ապա ինչո՞վ է նման մագնիսականությանը. էլեկտրականությանն ու ֆերմիոններին:
7. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Քոչարը «Արվիստ» բառը գրել մեծատառով:
8. Մեկնաբանե՞ք գեղեցիկի օբյեկտիվիստական և սուբյեկտիվիստական ընկալումները:

ԱՌՈՋԱԿՐԱՆՔ

Ճ Թվարկեք բնական ու արհեստական 10-ական գեղեցիկ երևույթ: Նշե՞ք, թե դրանցից որոնք են ավելի կատարյալ, ներդաշնակ, համամասնական, ամբողջական, համաձայնեցված և այլն: Բացատրե՞ք, թե ինչու:

ԳԱՍ 3. ԳԵՂԵՅԻԿԸ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Անհատական աշխատանք

Կարդացե՞ք աղյուսակում բերվող երևույթները և մտորե՞ք, թե դրանցից որոնք են գեղեցիկ ձեզ համար, մատիտով լրացրե՞ք աղյուսակը.

Գոյ	Գեղեցիկ է	Գեղեցիկ չէ	Գե՞ծվարանում եմ պատասխանել
Կարապ			
Կով			
Օձ			
Նիհար կին			
Գեր կին			
Դուրս ցցված շրթունքներ			
Գիմաներկ օգտագործող տղամարդ			
Հոնքերը սափրած կին			
Գլխի որոշ հատվածների մագերը խուզած մարդ			
Որովայնի վրայի սպի			
Ձեռքով սնունդն ավստից բերանը տանելը			

Խմբային աշխատանք

Իսկ այժմ մտածե՞ք նույն երևույթների մասին հնդիկի, քաղցանդացու, աֆրիկյան տարբեր տոհմերի ներկայացուցիչների, ամերիկացու, չինացու, ուզբեկի կամ Վերածննդի դարաշրջանում ապրած մարդկանց տեսանկյունից: Ի՞նչ եք կարծում, նրանցից յուրաքանչյուրն ինչպե՞ս կլրացներ տրված աղյուսակը: 4-5 հոգանոց խմբերում քննարկե՛ք աղյուսակը վերոնշյալ մարդկանց տեսանկյունից՝ փորձելով գտնել ձեր և նրանց մտածելակերպի տարբերությունները: Վերհիշե՛ք ձեր կարդացած գրքերը, դիտած ֆիլմերը (այդ թվում նաև գիտահանրամատչելի), ձեր գիտելիքներն աշխարհագրությունից, պատմությունից և աղյուսակից գտե՛ք այն գոյերը, որոնք գեղեցիկ են համարվում վերոնշյալ մարդկանց համար, մատիտով ստորև բերվող աղյուսակի երկրորդ սյունակում լրացրե՛ք. թե նշված գոյերից յուրաքանչյուրը ո՞ր երկրում, մշակույթում է համարվում գեղեցիկ: Կարող եք ավելացնել նաև այլ մշակույթների կամ տարածաշրջանների անուններ, որոնցում, ըստ ձեզ, տվյալ գոյը համարվում է գեղեցիկ:

Գոյ	Գեղեցիկ է համարվում
Կարաս	
Կով	
Օձ	
Նիհար կին	
Գեր կին	
Դուրս ցցված շրթունքներ	
Դիմաներկ օգտագործող տղամարդ	
Հոնքերը սափրած կին	
Գլխի որոշ հատվածների մազերը խուզած մարդ	
Որովայնի վրայի սպի	
Զեռքով սնունդը ափսեից բերանը տանելը	

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել աղյուսակների լրացումից:
2. Կա՞ն գոյեր, որոնք գեղեցիկ են համարվում ամենուր: Ի՞նչ եք կարծում, որո՞նք կամ ինչպիսի՞ք են դրանք:
3. Դժվա՞ր էր արդյոք աղյուսակը լրացնելը: Ինչո՞ւ: Խմբերով աշխատելն օգնո՞ւմ էր, թե՞ ոչ:
4. Եթե տարբեր վայրերի ու դարաշրջանների մարդկանց համար գեղեցիկի ընկալումը տարբեր է, ապա վարպետակերպի ի՞նչ կանոն կարող է բխել դրանից:

ԸՆԹԵՐՑԵՔ ՏԵՔՍՏԸ

«Գեղեցկություն» բառը որտեղ և ինչպես էլ գործածվի, նշանակում է հարկանիշներ, որոնց շնորհիվ մենք սիրում ենք իրը, հիանում դրանով կամ չգտնում դրան:

Ռորին Չորջ Քոլլինգվուդ

Վաղ անցյալում մարդիկ հիմնականում տեղից տեղ են գնացել ոտքով կամ աստիճանաբար ընտելացվող որոշ կենդանիների (ծիեր, ավանակներ, այծեր և այլն) օգնությամբ: Նրանց տեղաշարժման արագությունը մեծ չի եղել, ու մարդկանց մեծամասնությունն իր ողջ կյանքի ընթացքում այդպես էլ դուրս չի եկել այն տարածաշրջանից, որտեղ ծնվել ու հասունացել է:



Անդրանիկ Պոլյաչուր
Կնոջ դիմանկար
Կնոջ նակարի մագերթը սափրած են գեղեցիկ երևալու համար

Մարդիկ իրենց ողջ կյանքն ապրել են մեկ մշակույթի շրջանակներում՝ չհավորելով բարու, գեղեցիկի, նշմարիտի իրենց պարկերացումները: Քանի որ նրանք, ըստ էության, որևէ այլ պատկերացման չեն հանդիպել, այդ դաշտաշրջանում մարդիկ մտածել են, որ իրենց ունեցած գեղեցիկի, բարու, նշմարիտի չափանիշները բացարձակ են: Եվ եթե ինչ-որ մի երևույթ գեղեցիկ է համարվել իրենց կողմից, ուրեմն դա պետք է լիներ գեղեցիկն ընդհանրապես՝ անկասի ամեն ինչից: Հայտնի է, որ ճապոնացիները պարսավել են իրենց նկարիչներից մեկին, որն առաջին անգամ նկարել է եվրոպացու դիմանկար՝ ասելով՝ մի՞թե կարելի էր նկարել այդպիսի այլանդակ մեծ աչքեր: Հասկանալի է, որ ճապոնացու համար աչքի գեղեցկության ընկալումը լրիվ այլ էր, ու եվրոպացու,

ման մեր տարվածությունը խոշոր, արտահայտիչ աչքերով նրա համար անհասկանալի էր:

Գիտության, տեխնիկայի ու մասնավորապես տրանսպորտային միջոցների զարգացումը մարդուն հնարավորություն է տվել հաշված ժամերի ընթացքում հասնել երկրագնդի մի ծայրից մյուսը: *Տարբեր մշակույթներ, լեզուներ, ավանդույթներ ու արժեքներ ունեցող մարդիկ սկսել են շփվել միմյանց հետ և երբ գործնականում փոռչել են բացահայտել, թե որն է, օրինակ, ամենագեղեցիկ շինությունը, գրվածքը, մարդը, բնության երևույթը, հասկացել են, որ փարբեր վայրերի ու ժամանակների մարդկանց ունեցած գեղեցիկի պարկերացումները ոչ միայն փարբեր են, այլև կարող են նույնիսկ հակասել միմյանց:* Օրինակ՝ դասական եվրոպացին գեղեցիկ կենդանիներ էր համարում ձիուն, կարապին: Իսկ կովը կամ օձը եվրոպացու համար գեղեցիկ չեն համարվել, այնինչ Հնդկաստանում կովը, իսկ Թաիլանդում օձը համարվել են գեղեցկագույն կենդանիներ:

Այլ օրինակ. ավանդական հայկական մտածելակերպի համաձայն՝ կնոջ գեղեցկության կարևոր բաղադրիչն են համարվել երկար մազերն ու կամար հոնքե-

ըր (պարսավանքի արժանացած կանանց մազերը կտրելը համարվել է պատիժ): Վերածննդի դարաշրջանի կանայք գեղեցիկ են համարել լայն ճակատն ու սափրել են հոնքերը, իսկ նեղ ճակատ ունեցողները՝ նաև գագաթի մազերը՝ լայն (գեղեցիկ) ճակատ ունենալու համար: Եվ պատահական չէ, որ Լեոնարդո դա Վինչիի պատկերած Մոնա Լիզային (որի հոնքերը սափրած են) ժամանակակիցները համարում էին գեղեցկուհի, իսկ այսօրվա մարդը տարակուսում է արդյո՞ք գեղեցկուհի է պատկերված նկարում:

Տարբեր մշակույթներում գեղեցիկի ընկալման հարաբերականության բազմազան օրինակներ կան: Բերենք ևս մի քանիսը: Այսպես՝ միջնադարյան Չինաստանում կանացի ոտքի գեղեցկությունը նրա փոքրության մեջ էր: Չինացիներն աղջիկ երեխաների ոտքերը կտրում էին եզան դեռևս չչորացած մորթով:

Մորթին չորանում էր՝ ընդունելով երեխայի ոտքի ձևը և աղջկա մեծանալուն զուգընթաց սեղմում էր նրա ոտքերը՝ չբողնելով, որ դրանք մեծանան: Մորթին հանում էին արդեն հասունացած աղջկա ոտքերից, որոնք արդյունքում մնում էին փոքր ու նրբագեղ՝ չինական պատկերացումների համաձայն: Հին Պարսկաստանում տղամարդիկ այտերը ծածկում էին կարմրաներկով ու կրում էին երկար մազեր: Հին եգիպտացիները սափրած գլխի վրա մազերի մի գիսակ էին թողնում ձախ ականջից փոքր-ինչ վեր: Բիրմայում աղջիկները ձգտում էին իրենց պարանոցը երկարացնել մետաղյա օղերի միջոցով, և, վերջապես, Մայա մշակույթի աղջիկներն առջևի ատամների մեջ անցքեր էին անում, որտեղ դրվում էին թանկարժեք քարեր:

Ներկայումս մարդկությունն ապրում է գլոբալացման դարաշրջանում, այսինքն՝ ավելի ու ավելի սերտ են դառնում փարբեր երկրների ու մշակույթների մարդկանց շփումները: Դրանք իրենց հենքերում են գեղեցիկի ընկալման նորանոր ելևէջներ, հնարավորություն են տալիս, օրինակ՝ հային հիանալ աֆրիկյան, ամերիկյան երաժշտական ոճներով, իսկ ամերիկացուն՝ հայկական դուդուկի թովիչ հնչողությամբ: Հնարավորություն է ստեղծվում նաև համադրել տարբեր գեղեցիկ երևույթներ ու ստանալ գեղեցիկ նոր իրողություններ: Չպետք է մոռանալ, սակայն, որ այս դրական միտումների կողքին գլոբալացումը բերում է նաև վտանգներ: Փոքրաթիվ ազգերի մշակույթները վտանգվում են՝ անկարող լի-



Նիգերիայի բնիկ փղամարդիկ օգտագործում են գարդեր և դիմահարդարում, որպեսզի գեղեցկանան



Չադի սառա րոնմի աչքիկը հպարտանում է որովայնի գեղեցիկ սպիտ

ներով դիմակայել մեծ ծավալով տարածվող որոշ մշակույթների քելադրանքին ու ընդունելով նրանց պարտադրած գեղեցիկի չափանիշները:

◆ **Խորհե՛ք այն մասին, թե ինչու մենք՝ հայերս, առօրյայում չենք կրում մեր ազգային հագուստը: Մի՞թե այն իր գեղեցկությամբ զիջում է օրինակ, եվրոպական դասական կոստյումին:**

Նման իրավիճակում կարևոր է, որ յուրաքանչյուր մշակույթի կրող (այդ թվում նաև մենք՝ հայերս) հասկանա ու արժևորի սեփական արժեքները, կարողանա պահպանել ու զարգացնել դրանք, հալոսկ ինքնաբեկ հանդես բերի սեփական մշակույթի գեղեցկության հանդեպ՝ չվախենալով և չներժելով նաև համամարդկային համարվող շահանիշները, ընդհակառակը, սովորելով դրանցում եղած լավագույնից ու դրա շնորհիվ կատարելության նոր մակարդակի հասցնելով մեր ազգայինը:

◆ **Խորհե՛ք այն մասին, թե ինչ արեց Կոմիտասը հայկական երաժշտության համար, գրուցե՛ք ավագների հետ այդ մասին, որոնք գրքերում ու հանրագիտարաններում: Եզրակացություններ արեք երաժշտության ժամանակակից իրադրության մասին:**

ՀԱՐՅԵՐ ՕՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Հնարավո՞ր է մի իրավիճակ, երբ երկրագնդի վրա տարրող բոլոր մարդիկ կունենան գեղեցիկի նույն պարիկերացումը: Ինչո՞ւ:
2. Կարո՞ղ եք բերել գեղեցիկի առանձնահատուկ ընկալման այլ օրինակներ:
3. Հնարավո՞ր է համեմատել փարբեր մշակույթներում եղած գեղեցիկ իրողությունները՝ «ընդհանուր հայտարար» գրվելու միտումով: Ինչո՞ւ:
4. Ի՞նչ առավելություններ ու վրանգներ է բերում գործարարական գործընթացը փարբեր մշակույթների ներկայացուցիչների համար:

ԱՌԱՋԱԴՐՄԸ

Ճ Դասարանում կամ մի այլ հարմար տեղում կազմակերպե՛ք երաժշտության ունկնդրում: Փորձե՛ք լսել տարբեր ոճերի երաժշտություն, հանրամատչելի (փոփ), որ ձեզանից ոմանք երևի նախընտրում են, հայկական ժողովրդական, դասական և այլն: Ցանկալի է անպայման լսել Կոմիտաս: Ունկնդրումից հետո ձեր տպավորությունները կիսե՛ք միմյանց հետ:

ԹԵՄԱ 2. ԿԵՆՉԱԴՐԻ ԵՎ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

ԴԱՍ 4. ԳԵՂԵՑԻԿԸ ՄԵՐ ԱՄԵՆՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ

ԸՆԹԵՐՅԵՔ ՏԵՔՍԸ

Ամեն արժեք գեղեցկությունն է դառնում, բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր է...

Երվանդ Քոչար

Արևելքի մեծ մտածող, բուդդայականություն կրոնի հիմնադիր Բուդդայի կյանքից մեզ է հասել հետևյալ ավանդազրույցը:

Անանդան՝ Բուդդայի զարմիկը և սիրելի աշակերտն ու հետևորդը, մի անգամ գալիս է Բուդդայի մոտ և ասում. «Ես հասկացա, Ուսուցի՛չ, որ գեղեցկության մեր որոնումները, մեր ձգտումն առ գեղեցկություն, վերջապես՝ մեր միաձուլումը գեղեցկության հետ հենց այն է, ինչը կազմում է մեր հոգևոր կյանքի կեսը»:

«Այդպես մի՛ ասա, Անանդա՛, - պատասխանում է Բուդդան, - դա ոչ թե մեր հոգևոր կյանքի կեսն է, այլ ողջ հոգևոր կյանքը»:

♦ **Ի՞նչ էք հասկանում «հոգևոր կյանք» ասելով: Ինչպե՞ս կմեկնաբանեք Բուդդայի խոսքերը:**

8-րդ դասարանի հասարակագիտության դասընթացից դուք արդեն գիտեք, որ մարդ էակն ունի մի շարք բնութագրեր. դիտարկել էք մարդուն որպես բանական, քաղաքական, գործիքներ ստեղծող էակի և այլն: Ի թիվս նշված և այլ հատկությունների՝ **մարդը նաև գեղեցկության չգպտող էակ է**: Մա նշանակում է, որ **մարդը մի էակ է, որն անընդհար գեղեցկություն ու ներդաշնակություն է որոնում իր գործունեության մեջ**: Ընդ որում՝ ձգտումն առ գեղեցկություն նա կարող է իրականացնել երկու եղանակով. Բուդդայի նշած հոգևոր որոնումների ձևով (որն արտահայտվում է կրոնում, արվեստում, խմաստասիրության մեջ և հոգևոր մշակույթի այլ ոլորտներում), ինչպես նաև մարդու ամենօրյա կյանքում, նրա սովորական, օրից օր կրկնվող գործողություններում՝ առօրեականության մեջ:



Բուդդա (մ.թ.ա. VI դար)

Մարդն ապրում է կարծես երկակի իրականության մեջ: Մի կողմից՝ հոգևոր մշակույթն է, որը սրեղծվում է նվիրյալների ոգեշնչված աշխատանքով, իսկ մյուս կողմից՝ մեր բոլորի ապրած սովորական կյանքն է: Անկախ այն բանից, թե ինչ մասնագիտություն, հասարակության մեջ ինչ դեր, կյանքի ինչ կոչում ունի մարդը, նա գոյատևում է նաև մի ոլորտում, որը կոչվում է կենցաղ:

Նախկինում կենցաղի նշանակությունը մարդու կյանքում թերագնահատվում էր: Տիրապետող մտածելակերպի համաձայն՝ հոգևոր որոնումներ ունեցող մար-



Հակոբ Հակոբյան
«Նապոլեոնոսի գործիքներով»

դր պետք է անտեսեր կենցաղային խնդիրներն իր նյալատակներին հասնելու համար: Առօրեականությունը դիտվում էր որպես գուտ կենսասպառնալից մշակույթ, որը չէր օժտվում հոգևոր մշակույթին բնորոշ գծերով, օրինակ՝ գեղագիտական նշանակությամբ: Այսօր, սակայն, մարդաբանները բացահայտել են, որ մարդու մշակութայնացման ընթացքում առօրեականության դերը կարող է լինել նշանակալից: Շատ կարևոր է, թե ինչպիսի միջավայրում, ինչ մարդկային հարաբերությունների մեջ է մեծանում մշակույթի հետ առաջին ծանոթությունը հասրապրող մանուկը:


- ◆ Նկատել էք արդյոք, որ գեղեցիկ միջավայրում դուք էլ ակամա ձգվում եք: Զգացել էք, որ գեղեցիկ, մաքուր, ծաղկագարդ փողոցով քայլելիս ձեզ լավ եք զգում:
- ◆ Բաժանվեք երկու խմբի և բանավիճեք. արդյոք առօրյայում հանդիպող գեղեցկությունը էական է, թե՞ անէական: Փաստարկներ բերեք դրույթին կողմ և դեմ տեսակետների օգտին: Ո՞ր փաստարկներն են գերակշռում: Արե՞ք եզրակացություններ:

Կենցաղի և առօրեականության հետ սերտորեն կապվում է «ապրելակերպ» հասկացությունը: Ապրելակերպը, ամենալայն իմաստով, մարդու ապրելու եղանակն է, այն ձևը, որով մարդը գոյապահում է. նրա ամենօրյա կենսագործունեության եղանակը: Ապրելակերպի և կենցաղի մաս են կազմում մարդու ամենօրյա հիգիենան, սնունդ ընդունելու ձևերը տանը և հասարակական վայրերում, հագուստը, ժամանցի տարրեր տեսակները, սովորույթները, որոշ ծեսեր և այլն: Կենցաղի նշված կողմերն անհրաժեշտաբար ունեն նաև գեղագիտական բաղադրիչ, որով ազդում են մարդկանց հոգեկերտվածքի վրա: Պատահական չէ, որ ժամանակակից շատ քաղաքներում համայնքային օրենքները ստիպում են մարդկանց ծաղիկներով պատել իրենց տների շրջակայքը, մաքրել տեղացած ձյունը, չադտոտել փողոցները՝ կանոնները խախտողների համար նախատեսելով զգալի դրամական պատիժներ: Արդյունքում ստեղծվում է գեղեցիկ քաղաքային միջա-

վայր, որտեղ ապրելն ու գործելն իսկ մաքրագործող ազդեցություն է թողնում մարդկանց վրա:

- ◆ **Մտորեք** առօրեականության այնպիսի տարրի մասին, ինչպիսին է առաջին հայացքից անկարևոր քվազող հասարակական գուգարանը: Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ն պետք է լինի այն: Երևի շատերը կասեն՝ մաքուր, խնամված: Իսկ ինչպիսի՞ն են, օրինակ, ձեր դպրոցի գուգարանները: Ո՞վ է պատասխանատու դրանց համար:
- ◆ **Մտորեք՝** արդյո՞ք հասարակական վայրերում ձեզ պահում եք այնպես, որ ձեզանից հետո թողնեք միայն գեղեցիկ և մաքուր միջավայր: Հիշեք, որ յուրաքանչյուրի անպատասխանատու վերաբերմունքի արդյունքում ստեղծվում է բնավ ոչ գեղագիտական զգացումներ առաջացնող իրադրություն:
- ◆ **Գիտե՞ք** արդյոք, թե այն վայրերում, որտեղ սովորույթ ունեք գրասեղ, որքան աղբամաններ կան և որտեղ են տեղադրված: Հաճա՞խ եք օգտվում դրանցից: Արդյո՞ք հաճելի է գրասեղ աղբով ծածկված փողոցներում կամ գրապահներում:
- ◆ **Ուշադրություն դարձնո՞ւմ** եք սնվելու գեղագիտական կողմին, թե՞ կարող եք ուտել ինչ որտեղ պատահի և ինչպես պատահի: Փողոցում արևածաղկի սերմեր ուտո՞ւմ եք: Ի՞նչ եք կարծում, դա գեղեցի՞կ է: Համաձա՞յն եք արդյոք հանուն գեղեցկության հրաժարվել ձեր որոշ սովորույթներից: Ինչո՞ւ:

Առօրեականության դերը չի կարելի անտեսել, քանի որ, ի տարբերություն բարձր հոգևոր մշակույթի ոլորտում ապրող սակավաթիվ ընտրյալների, մարդկանց մեծամասնությունն իր կյանքի հիմնական մասն անց է կացնում կենցաղի, առօրեականության աշխարհում: *Եվ եթե մեր կենցաղում գեղեցկությունը տեղ չի գտնում, դրանով մենք աղքատացնում ենք ինքներս մեզ՝ հնարավորություն չտալով զգալու, վայելելու գեղեցիկը որքան հնարավոր է հաճախ, զգալու մեր գոյության լիակատարությունը նաև գեղեցիկի միջոցով:* Գեղեցիկը տիեզերական երևույթ է, այն պարունակում է մարդուն՝ վեհացնելով ու բարձրացնելով նրան մանր առօրեական ունայն քաշքշուկից, ուրեմն եկեք չպակասեցնենք գեղեցիկը մեր առօրյայում, չստեղծենք խոչընդոտ ի սկզբանե մարդուն տրված բնական կամ գուցե աստվածային գեղեցկության առջև:



Տեսարան Ալավերդի քաղաքից

ԳԱՍ 5.6. ՄԵՁ ՇՐՋԱՂԱՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂԱԸ

ԸՆԹԵՐՅԵՔ ՏԵՔՍԵ

Գեղեցիկը տիեզերական երևույթ է: Բնություն-տիեզերքն իր ամբողջության մեջ գեղեցիկ է, ներդաշնակ և կատարյալ: Մարդը նախնադարից առ այսօր աստիճանաբար սովորել է տեսնել-զգալ բնության գեղեցկությունը, գնահատել այն ու նմանակել դրան:


Գեղագիտորեն դասարիարակված մարդն իր շրջապարի հասնեալ դրսևորում է լրիվ այլ վերաբերմունք, քան գեղագիտորեն չգարգացածը: Նա չի կարող խեղաբյուրել իրեն շրջապարող ներդաշնակությունը, ի վիճակի չէ աղյուրել միջավայրը, լինի դա բնություն, թե մարդու կողմից սրեղծված արհեստական միջավայր:

- ◆ **Վերյուժեք ձեր վարքը բնության գրկում էրկուրսիանների ժամանակ: Ի՞նչ զգացում եք ունենում, երբ որոնելով բնության գողորիկ անկյուն հանգստանալու համար տեսնում եք ձեզանից առաջ այնտեղ եղած մարդկանց «հետքերը»: Հչեր, տուգրակներ, զանազան տուփեր և այլ աղբ: Արդյո՞ք լիակատար է հանգիստը նման միջավայրում:**

Բնության գեղեցկությունը չափանիշ է մարդու համար, և պատահական չէ, որ շատ ու շատ մարդկային ստեղծագործություններ կրկնում են բնության այս կամ այն տարրի գեղագիտական բնութագրերը. ձևերը, գույները, ծավալները և այլն: Իհարկե, նման կրկնության մեջ հաճախ կան տեխնիկական լուծումներ, օրինակ որոշ ինքնաթիռների թևերը դեպի հետ են թեքվում՝ նմանակելով արծվի սրընթաց վայրէջքի ժամանակ նրա թևերի դիրքը, որպեսզի հասնեն արագության մեծացման: Չարմանալի չէ, որ ինքնաթիռները նման են թռչունների, իսկ որոշ ուղղաթիռներ՝ ճալուճների և այլն: Մակայն նմանակումը, բացի տեխնիկական պատճառներից, ունի մաս գեղագիտական կողմ. երբ արդեն ստեղծվել է մարդու գործնական նպատակները բավարարող սարք, օրինակ ավտոմեքենա, սկսում են մտածել դրա գեղեցկության, ձևերի սահունության, գույնի, լույսի խաղի և այլ գեղագիտական բնութագրերի մասին: Արդյունքում ստեղծվում են և՛ իրենց գործը կատարող, և՛ աչքին հաճելի մեքենաներ ու սարքեր:

Մարդը մեծ հաշվով ապրում է բնության գրկում: Մակայն ունի ավելի նեղ միջավայր, դա նրա համայնքն է՝ գյուղը կամ քաղաքը, իսկ է՛լ ավելի նեղ միջավայրը մարդու տունն է, բնակարանը: Եթե փորձենք մարդուն շրջապատող իրերի աշխարհը նկարագրել մարդուն պարուրող համակենտրոն շրջանների տեսքով, ապա կատանանք հետևյալ պատկերը: Մարդուն ամենամոտից պարուրող իրերի շրջանը պարունակում է հագուստը և զանազան զարդարանքները: Հնչոքոք շրջանում կենցաղի իրերն են՝ սպասքը, որ անհրաժեշտ է սնվելու համար, կահույքը և այլ իրեր, որոնց շնորհիվ մարդը կազմակերպում է իր ամենօրյա կյանքը (սեղան, բազմոց, հեռուստացույց, կարի մեքենա, լվացքի մեքենա, նարդի, շաշկի,

տարբեր գործիքներ և այլն): Երրորդ շրջանում արդեն կացարանն է՝ իր ներքին պլանավորմամբ, պատերի բաժանումներով կամ դրանց բացակայությամբ: Չորրորդ շրջանը բուն ճարտարապետական միջավայրն է, որը մարդուն շրջապատող արտաքին միջավայրն է՝ բակը, փողոցը, հրապարակը, քաղաքը: Մարդուն շրջապատող այս բազմաշերտ միջավայրը կարևոր նշանակություն ունի նրա գեղեցիկի պահանջմունքի բավարարման ու գեղագիտական դաստիարակության գործում:



*Մանկական սենյակի կահույքի նմուշ
Ուշադրություն դարչնեք՝ ինչպես է օգտագործված
փարածությունը*

Մտաբերեք ձեր մանկության այն խաղալիքները, որոնք ազդեցություն են բողել ձեզ վրա: Ինչպիսի՞ն էին դրանք: Գեղեցի՞կ էին արդյոք: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ:

Գեղեցկության հանդեպ մարդու ձգտումն արտացոլվել է նրա ունեցած իրերում. հնագետները պեղել են բազմաթիվ գեղեցիկ զարդեր ու կենցաղի իրեր երկրագնդի տարբեր բնակավայրերում: Մարդը հնուց ի վեր ձգտել է գեղեցկացնել նաև իր կացարանը: Հնագույն քարանձավների պատերին օժտված մարդիք նկարներ են արել՝ գեղեցկացնելով իրենց բնակության վայրը: Հետագայում մարդը սկսել է կառուցել տարատեսակ շինություններ՝ գետնափոր նկուղներից մինչև ժամանակակից երկնաքերները ու միշտ իր առջև, հարմարավետությունից բացի, դրել է նաև գեղեցկության պահանջը: Բոլոր դարաշրջաններում մարդը փորձել է գեղեցկացնել իր կացարանը, ինչպես որ կարողացել է: Այդ ձգտման արդյունքում առաջացել են պերճաշուք պալատներ, հոյակերտ կառույցներ, որոնցից շատերը դարեր շարունակ հիացմունք են պատճառում մարդկանց: Ժամանակակից մարդը նույնպես ձգտում է գեղեցկացնել իր կացարանը՝ դրա համար դիմելով գիտատեխնիկական նորագույն նվաճումներին՝ կախովի առաստաղներ, լուսավորման նորագույն համակարգեր, արդի տեխնոլոգիաներով ստացված ներկանյութեր և այլն:



Քարանձավի պատին արված մարդկանց ու կենդանիների հնագույն պատկերներ

Ներկայումս կացարանը բնութագրելիս տարբերում են **ներսույքը՝ ինտերիերը**,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԻՐԹԱՐ ԱՆՔԱՍՏԱՑԻՑ
ԿՐԹԱԿԱՆ ՀՈՒՍՅՈՒՆԻ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

և դրսույքը՝ էքսպերիենթ, որոնք հավասարապես կարևոր են գեղագիտական տեսանկյունից: Հայերիս շրջանում հաճախ է հանդիպում հետևյալ մտայնությունը, բող կացարանը գեղեցիկ և հարմարավետ լինի ներսից, իսկ դրսից ինչ ուզում է՝ բող լինի:

- ◆ Նկատել էք երբևէ, թե ինչպես է աղավաղվում ճարտարապետական գեղեցիկ լուծումներ ունեցող շենքի տեսքը, երբ որոշ բնակիչներ կցակառուցում են, օրինակ՝ պատշգամբներ, առանց հաշվի առնելու շենքի ամբողջականության պահպանման խնդիրը:
- ◆ Գեղեցիկ է արդյոք, երբ տեսնում եք ճոխ առանձնատուն՝ հավանաբար գեղեցիկ այգիով ներսում, որը, սակայն, պարսպապատված է դրսից անհրապույր քարե պարսպով, որի աջ ու ձախ կողմերում, որպես կանոն, աղբ է լինում թափված: Արդյո՞ք նման տների, տերերը չպետք է մտածեն որջ միջավայրի, այլ ոչ թե միայն պարսպի ներսի տարածքի մասին:

Մարդը ներսույքը գեղեցկացնելու ժամանակ (ինչն ինքնին կարևոր է) մտածում է անչնական շահի (թեկուզ գեղագիտական) մասին, իսկ գեղեցկացնելով դրսույքը՝ մարդը մտածում է համահասարակական շահի մասին, չգիրում է բոլորի համար համեղի դարձնել իրականության այն հատվածը, որտեղ ունի գործելու հնարավորություն: Հետաքրքիր է, բայց մեզանից յուրաքանչյուրի տուն որքան էլ շատ մարդ այցելի, միևնույն է, դա շատ ավելի սահմանափակ թիվ է, քան այն մարդկանց թիվը, ովքեր ուղղակի կարող են անցնել մեր տան մոտով: Մտածելով նրանց մասին, ի վերջո, մենք կմտածենք բոլորիս մասին, որպեսզի մեր հարազատ համայնքներում զբոսնելիս ստանանք դրական լիցքեր ու բավարարվածություն:

Իհարկե, մարդիկ միշտ չեն այդ կերպ մտածել: Պատմականորեն քաղաքները սկսել են կառուցվել տարերային կերպով: Մարդիկ միմյանց կից կառույցներ են շարել ու նույնիսկ «լափիրիմքոսներ» են ստացվել, ինչպես Կրետե կղզու մայրաքաղաք Կնոսոսում: Սակայն ժամանակի ընթացքում, և՛ գործնական, և՛ գեղագիտական նկատառումներից ելնելով, մարդիկ հանգել են քաղաքների կառուցումը վերահսկելու՝ քաղաքաշինության խնդրին: Այսօր որջ աշխարհում կան բազմաթիվ հաստատություններ, որտեղ նախագծվում են ոչ միայն առանձին շենքեր կամ նույնիսկ շենքերի համալիրներ, այլև ամբողջ քաղաքներ ու քաղաքներ: Հարմարավետության, հուսալիության ու գործառույթային այլ նպատակների կողքին նման հաստատությունները մեծ տեղ են տալիս գեղագիտական քաղաքիչին: Երբ ժամանակակից քաղաքներում ցանկանում են կառուցել նոր մեծ շինություն, նախ և առաջ քննարկում են այն հարցը, թե որքանով է տվյալ շինությունը ներդաշնակում արդեն ստեղծված միջավայրին, որքանով է գեղեցկացնում այն: Եթե նախագծվել է ինքնին գեղեցիկ շինություն, որը, սակայն, չի համապատասխանում այն վայրին, որտեղ որոշել են կառուցել այն, ապա հատուկ հանձնաժողովները կարող են մերժել նման շինարարությունը կամ առաջարկել այդ շինությունը կառուցել այլ համապատասխան վայրում:

- ◆ Կազմակերպվեք զրոսանք ձեր համայնքում ու փորձեք դատողություններ անել միջավայրի գեղագիտական կողմի մասին (Յերդաշնա՞կ են արդյոք կառույցները շրջակա բնության լանդշաֆտին ու ճարտարապետությանը, յուրակե՞րպ են, թե՞ միանման, առաջացնո՞ւմ են գեղագիտական զգացմունքներ, թե՞ անտարբեր են թողնում, կա՞նչ օջախ, խանգարող որևէ բան, իսկ ի՞նչ կարելի էր ավելացնել և այլն):

Պարահավասար չէ, որ մարդուն շրջապատող և համախա նրա կողմից սրեղծվող միջավայրն անվանվում է նաև **գեղագիտական միջավայր**: Չէ՞ որ մարդիկ իրենց մտքերը, զգացմունքներն ու իդեները մարմնավորում են իրենց կողմից սրեղծվող շինություններում և բազմաթիվ առարկաներում, որոնցով ձևավորվում է մարդու կենսական առարկայատարածական միջավայրը, որն էլ իր հերթին ձևավորում է իր սահմաններում ապրող ու գործող մարդկանց: Մարդը հուզական-պատկերային կապվածություն է ունենում միջավայրի հետ՝ գիտակցված լինի դա, թե ոչ:

- ◆ Հիշեք զինվորի հոգում իր նախրյան հեռու-հեռու դալար բարդու կարտոր կամ հորիզոնին Մառիսի ու Միսի պերճաշուք ուրվապատկերը տեսնելու հայաստանցիների կարոտախտն արտասահմանում և այլն:
- ◆ Կա՞նչ շրջակա միջավայրի պատկերներ, որ տպավորվել են ձեր մեջ: Ունե՞ք կարոտախտ որևէ պատկերի հանդեպ:

Մարդը կապվում է ոչ միայն բնական երևույթների հետ՝ ծառեր, լեռներ, լճեր և այլն, այլև մարդաստեղծ երևույթների՝ դարպասներ, շինություններ, փողոցներ, որոնց արտաքին գեղագիտական լուծումները խորապես տպավորվում են մարդու հոգում՝ իր բնակավայրին հաղորդելով անկրկնելիություն և հարազատություն:

Մարդուն շրջապատող առարկայատարածական միջավայրը՝ «երկրորդ բնությունը», ստեղծում են **ճարտարապետությունը և դիզայնը**: Գարտարապետությունը ձևավորում է այդ միջավայրի կայուն «կմախքը», իսկ դիզայնը միս ու արյուն է հաղորդում այդ կմախքին: Գարտարապետությունը կազմակերպում է տարածությունը՝ բաժանելով այն որոշակի հատվածների, ընդգծելով կարևոր մասերը, համամասնություն ստեղծելով բնական երևույթների ու կառույցների միջև, իսկ դիզայնը ենարավորություն է տալիս տարածությունը «յցնել» բազմազան առարկաներով և առարկաների խմբերով, որոնք ծառայելով մարդկային գործունեության բազմազան ձևերին՝ միաժամանակ ունեն նաև գեղագիտական նշանակություն (օրինակ՝ լուսացույցները փողոցում, աղբամանները և այլն): Իրերն ազդում են միջավայրի վրա և պետք է լինեն իրենց տեղում: Օրինակ՝ գերժամանակակից գովազդային լուսային տառերը գեղեցիկ կարող են դիտվել ժամանակակից շինությունների վրա, բայց կհամարվեն անճաշակ ու բացասական հույզեր կառաջացնեն, եթե տեղադրվեն անցյալ դարերի ճարտարապետական կառույցների վրա՝ հակադրվելով վերջինների գեղեցկության արտահայտման այլ եղանակին:

«Երկրորդ բնության» նշանակությունը չի սահմանափակվում մարդու գործ-

նական նպատակներով, անվտանգության խնդիրներով, նպատակահարմարությանը: Մարդուն շրջապատող առարկայական-փարածական միջավայրի ձևերը կրում են տեղեկույթ՝ ինֆորմացիա, որը հնարավորություն է տալիս պահպանել մշակութային ավանդույթները, վարքի ձևերը, վարվելակերպի կանոնները և այլն: Օրինակ՝ ժամանակակից քաղաքներում փողոցների երթևեկելի մասերում լայնքով գծված սպիտակ շերտերը «հուշում են» հետիոտներին, որ ճանապարհը պետք է անցնել այդ մասերով, իսկ ճանապարհի երկայնքով գծված հոծ գիծը «հուշում է» վարորդներին, որ այն հատել չի կարելի: Մարդու միջավայրը կազմող առարկաների ձևերում խտացվում են տվյալ դարաշրջանի հասարակության պատկերացումները, բարոյական սկզբունքները: Միջավայրն ազդում է մարդու վրա նաև գեղագիտորեն՝ բավարարելով նրա ունեցած գեղեցիկի պահանջումները: Չևավորելով իրեն շրջապատող միջավայրը՝ մարդը ձևավորում է իր ապագան, իր տրամադրությունը, հույզերը, վերաբերմունքն իր և այլոց հանդեպ: Միջավայրը ծնում է մարդու հոգում տեղի ունեցող բարդ երևույթներ (դժգոհություն, ցավ կամ հակառակը՝ գոհունակություն, բավարարություն), այն առավել ևս կարևոր է նոր ձևավորվող անհատների համար:

- ◆ **Պատահական չէ, որ մարդասեր մտածողներն անհրաժեշտ են համարում ժամանակակից բանտերում գորշ գույնի և սառը ցեմենտի տիրապետումից հրաժարվելն ու մարդու համար հաճելի ինտերիեր ստեղծելը: Նրանք գտնում են, որ ազատության կորուստն արդեն իսկ պատիժ է բանտում գտնվողի համար, և պետք չէ նրա ամեն օրն անուսնելի դարձնել նաև ավանդական բանտային դաժան միջավայրով:**

Արդեն նշվեց, որ միջավայրի գեղեցկացմանը նպաստում է դիզայնը: *Դիզայնը արեղծագործության մի ձև է, որի նպատակն է իրերին տալ որոշակի արտաքին տեսք:* Դիզայնի առարկա են դառնում, որպես կանոն, այն իրերը, որոնք թողարկվում են զանգվածաբար՝ արտադրվում են: Նման արտադրանք կարող են լինել սպասքը, կահույքը, գործարանային հաստոցները, մեքենաները և այլն: «Դիզայն» բառն անգլերենում նշանակում է նախագծել, սակայն որպես միջավայրի գեղագիտական ձևավորում այն ձեռք է բերել նոր իմաստ անցյալ դարի կեսերին:



Ներսույթի դիզայնի փորձերակ

Մարդիկ հնուց ի վեր զբաղվել են իրենց շրջապատող իրերի հարդարմամբ: Սակայն դա արել են արհեստավորները՝ այդ իրերը ստեղծելուն զուգընթաց: Ժամանակակից աշխարհում դիզայնի անհրաժեշտությունը կարևորվեց այն բանից հետո, երբ ոգևորված ինչ-որ արտադրանք զանգվածային թողարկելու հնարավորությունից՝ մարդիկ սկսեցին տեխնիկայի միջոցով արտադրել անհրապույր, միայն գործնական նշանակությամբ օժտված առարկաներ:

- ◆ **Ձեր ծնողները կհիշեն բերես այլումինն ամաններն ու զգալ-պատառաբաղները, որոնցով սնունդ ընդունելը երևի զուրկ էր գեղագիտական բավարարությունից:**

Ներկայումս «դիզայն» բառն օգտագործվում է շար լայն իմաստով, ու մարդուն շրջապատող իրերի, ներսույթի ու դրսույթի ձևավորումը համարվում է դիզայն: Նախորդ դարերի արհեստավորների փոխարեն արդյունաբերական հասարակությունում առաջ է գալիս նախագծողի (կոնստրուկտոր) մասնագիտությունը, որին օգնության է գալիս նկարիչը՝ նախագծվածը գեղեցկացնելու ձգտումով: Երբ նախագծողն ու նկարիչը միավորվում են նույն անձնավորության մեջ, խոսում են դիզայների մասին: *Դիզայները գեղագիտական կողմնորոշում ունեցող նարարարագիտ-ինժեներն է:* Հագուստի դիզայներները մտահոգված են հագուստի ձևերով, իսկ ներսույթի դիզայներների խնդիրն է կապակցել, օրինակ, ննջասենյակի գործառույթները նրա գեղագիտական կողմի հետ:

Գեղագիտական մոտեցումը ներկայումս հիմնովին ներառվել է արդյունաբերության մեջ և համարյա բոլոր ոլորտներում խաղում է իր կարևոր դերը (ընդհուպ մինչև կամուրջների, ճանապարհների, մարզադաշտերի նախագծում և այլն): Այսօր արտադրության համարյա ոչ մի բնագավառ չի կարող գոյատևել առանց գեղարվեստական նախագծման՝ դիզայնի, քանի որ մարդու մեջ գեղագիտական հաճույք չառաջացնող իրերը պարզապես սպառող չեն ունենա:

ՀԱՐՅԵՐ ԱՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Համաձայն էր, որ մարդն առ գեղեցիկ չգտնում ունեցող էակ է: Ինչո՞ւ:
2. Ազդո՞ւմ է արդյոք միջավայրը մարդու վրա: Ինչպե՞ս:
3. Ո՞ր միջավայրն է, ըստ ձեզ, ավելի գեղեցիկ, գյուղական՞ն, թե՞ քաղաքային: Ինչո՞ւ:
4. Մարդուն շրջապատող իրերի աշխարհն ըստ շրջանների դասակարգման հետ համաձայն էք, թե՞ ոչ: Ինչո՞ւ:
5. Ի՞նչ դեր ունեն նարարարագիտությունն ու դիզայնը միջավայրի ձևավորման գործում:
6. Կարո՞ղ էք բերել, ըստ ձեզ, մեկ նաշակով և մեկ անձնաշակի դիզայնի օրինակ ու վերլուծել:

ԱՌԱՋԱԴՐՄԵՐ

Ձեր ընտանիքի անդամների շրջանում անցկացրե՛ք հարցում «Մոդան դրակա՞ն երևույթ է, թե՞ բացասական» թեմայով: Ամփոփե՛ք արդյունքները դասարանում ներկայացնելու համար:

ԳԱՄ 7. ՄՈՂԱՅԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԲԸ: ԱԶԳԱՅԻՆ ՀԱԳՈՒՄՑ

Խմբային աշխատանք

4-5 հոգանոց խմբերում ամփոփեք ձեր անցկացրած հարցման արդյունքները: Արե՞ք եզրակացություններ:

ԸՆԹԵՐՑԵՔ ՏԵՔՍԸ

«Մոդա» բառը ծագում է ֆրանսերեն «մոդ» բառից, որն իր հերթին գալիս է լատիներեն «մոդուս» եզրույթից, որը նշանակում է չափ, եղանակ, կանոն: *Մոդան ընդհանուր առմամբ, հասարակական կյանքի այս կամ այն ոլորտում որոշակի չեփերի, սկզբունքների, օրինակների տիրապետությունն է: Ի տարբերություն ոճի, որի մասին կխոսենք հետագայում, մոդան արտացոլում է կենցաղային իրերի և արվեստի գործերի արտաքին տեսքի կարճաժամկետ և համեմատաբար մակերեսային փոփոխությունները:*

Նեղ իմաստով «մոդա» բառը նշանակում է հագուստի ու սանրվածքի ձևերի և հագնվելու ու դիմահարդարվելու եղանակների հերթագայումը: Այս բառն օգտագործվում է նաև փոխաբերական իմաստով՝ նշանակելով ամկայուն, անցողիկ հանրաճանաչություն: Խոսվում է, օրինակ՝ մոդայիկ երգչի, մոդայիկ խոսելաձևի, մոդայիկ գրքերի կամ կինոնկարների մասին՝ ի հակադրություն այնպիսի գրքերի, կինոնկարների, խոսելաձևերի և այլն, որոնք անցողիկ չեն, այլ մնայուն, ամանց արժեքներ:

◆ **Վերիշեք, թե ինչ առնչությամբ եք օգտագործել կամ լսել «մոդա» կամ «մոդայիկ» բառերը:**

Մոդան առկա է մարդու գործունեության ամենատարբեր բնագավառներում, կենցաղից (սանրվածք, դիմահարդարում, կենցաղային իրեր, մեքենաների դիզայն և այլն) մինչև արվեստի տարբեր ճյուղեր (գրականություն, երաժշտություն, ճարտարապետություն և այլն): Այն ունի մարդկանց վարքը կարգավորող, հաճախ նույնիսկ պարտադրող բնույթ: Տվյալ ժամանակահատվածում մոդայիկ համարվող ձևերը (սանրվածք, քայլվածք, շենքի արտաքին ձևավորում և այլն) համարվում են գեղեցիկ ու հարգելի, և կամա-ակամա հասարակության սովոր գանգվածները ձգտում են հագնվել, սանրվել հենց այդ ձևով, իրենց տները կառուցել նման սկզբունքներով և այլն:

Մոդան մարդկանց վարքը կարգավորում է հետևյալ մեխանիզմով: Այն, որպես կանոն, թելադրվում է հասարակության վերնախավի կողմից, որը դրանով իսկ փորձում է ցույց տալ իր առանձնահատուկ, այսպես ասած, «էլիտար» (ընտրյալ) լինելը: Իսկ հասարակության մնացած շերտերի ներկայացուցիչները հեռանում են մոդային, որպեսզի նախ իրենց հարգանքը ցուցադրեն մոդա թելադրողների հանդեպ, և ապա ցույց տան բոլորին, որ իրենք ոչնչով պակաս չեն նրանցից:

Մոդայի պարտադրող բնույթն էլ արտացոլվում է նրանում, որ տվյալ պահի մո-

դան արհամարհող մարդիկ հաճախ հայտնվում են «լուսանցքում», կարծես թե անտեսելով արտաքին ձևերը՝ նրանք անտեսում են նաև տվյալ հասարակության սկզբունքները: Արդյունքում հասարակությունը չի ընդունում նրանց այլ կերպ լինելը՝ անուղղակի ճնշում գործադրելով ու ստիպելով հետևել մոդային:

Մոդան բարդ երևույթ է, որի զարգացումը վերջին հարյուրամյակում մեծ թափ է ստացել, և եթե նախկինում որոշակի ճաշակն ու ձևերը կարող էին տիրապետել մինչև 20 տարի, ապա վերջին տարիներին յուրաքանչյուր հնգամյակում մոդան կարող է սկզբունքային փոփոխությունների ենթարկվել: Ներկայումս մոդայի զարգացումը դարձել է մասնագիտական խմբերի մենաշնորհը: Այդ խմբերը, որոնք Փարիզում, Հռոմում կամ այլուր ստեղծում են որոշակի ձևեր, կադապարներ, գունային նախապատվելի համադրություններ, որոնց ձգտում են հետևել աշխարհի տարբեր ծայրերում ապրող մարդիկ՝ մտածելով, որ դրանով կարող են հասնել իրենց ձգտումներին:

Մոդան պայմանականություն է, քայց անհրաժեշտ պայմանականություն, որն արտացոլում է տվյալ հասարակությունը կազմող անհատների ազատության, ոգեղենության, ճաշակի և այլ հատկանիշների ամբողջությունը: Մոդան հնարավորություն է տալիս անհատին յուրացնել հասարակության կուտակած մշակութային փորձը, և դրանով այն շատ կարևոր է երիտասարդների համար: *Մյուս կողմից՝ մոդան արյուցողում է նոր սերունդների չգրումն ապրել նոր ձևով, չնմանվել նախորդ սերունդներին, ինքնահասարակվել:* Կարևոր է նաև չմոռանալ, որ մոդայում «նորը լավ մոռացված հիմն է», և մոդային կուլտրեն հետևելը կարող է, ընդհակառակը, անհատին դիմագրկել՝ դարձնելով ինքնուրույն մտածողություն չունեցող նմանակող:

Ժամանակակից աշխարհում շատ արագ են փոփոխվում կյանքի պայմանները: Նույնչափ արագ փոփոխվում է մոդան՝ ստիպելով մարդկանց ավելի շատ դրամ ծախսել արտաքինի վրա, քան դա կարվեր 50-100 տարի առաջ: Այսօր նոր և հաճելի տեսք ունեցող զգեստը, կոշիկը, պայուսակը կարող է դեմ նետվել մոդայիկ չհամարվելու պատճառով: Մարդը դադարում է կապվել որևէ զգեստի կամ զարդի հետ, այնինչ անցյալում մարդը կարող էր մեկ տոնական զգեստ ունենալ իր կյանքի տարբեր իրադարձությունների ժամանակ հագնելու համար (և դրանով իսկ այդ զգեստը կրում էր մարդու ուրախություններին ականատես եղած քարեկամի խորհուրդը): Իսկ ընտանեկան զարդերը կարող էին փոխանցվել սերնդեսերունդ՝ իրենց մեջ կրելով մեր նախնիների ոգին, նրանց երազանքների ու քարեմադրանքների խտացումը:



Բնմահարթակի վրա

ԱԶԳԱՅԻՆ ՀԱԳՈՒՄՍ (տարազ)

Ազգային փարազը փվյալ ազգի ներկայացուցիչների կողմից դարերի ընթացքում ընդունված զգեստների, գլխանոցների, ոտքերին հագցվող միջոցների և արդուզարդի ամբողջությունն է: Ավանդական տարազը ցույց է տալիս, թե տվյալ հագուստ-կապուստը կրող մարդը հասարակության որ շերտին է պատկանում, ինչ դիրք ու դեր ունի: Տվյալ ազգի պատմության նյութական կրողը լինելով՝ ազգային հագուստն արտացոլում է տվյալ ազգի մշակութային ինքնատիպությունն ու ազգային քնուրազարդի որոշ կողմեր:

Հագուստն առաջացել է, որպեսզի մարդուն պաշտպանի բնության անբարենպաստ պայմաններից՝ քամուց, ցրտից, խոնավությունից և այլն: Մսկայն ժամանակի ընթացքում մարդը չի բավարարվել այս կամ այն կերպ իր մարմինը ծածկելով, այլ հագուստին փվել է նաև գեղագիտական նշանակություն՝ չգրելով



Շարախի փարազ, XIX դ.



Երևանի փարազ, XIX դ.

նրա միջոցով արտացոլել գեղեցիկի իր պատկերացումները կամ պարզապես գեղեցիկնալ: Առօրյա հագուստը ծնվել է տվյալ տարածքի բնակչության պայմաններից: Հասկանալի է, որ Հին Հունաստանում տաք կլիմայական պայմանների շնորհիվ հագուստը եղել է թեթև, ոտնամանները՝ բաց: Իսկ տուուրյայի կամ տայգայի ժողովուրդների հագուստը հիմնականում մորթիներից է, ծանր, իսկ ոտնամանները՝ երկարաճիտ ու տաք:

Մեկ համահայկական ընդհանուր տարազ չկա: Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում կլիմայական պայմանների տարբերության, ինչպես նաև մարդկանց նիստուկացի և ավանդույթների բազմազանության շնորհիվ առաջացել են հայկական տարազի մի շարք համալիրներ, որոնցում հագուստի այս կամ այն դետալը, օրինակ՝ կանանց գոգնոցը կամ տղամարդկանց բիկնոցը, առկա է եղել կամ բացակայել է: Ազգագրագետները տարբերում են Վասպուրականի, Բարձր Հայքի, Սյունիք-Արցախի, Գուգարքի և այլ տարազային համալիրներ: Դրանցում արտացոլվել են նաև հայոց շփումներն իրենց հարևան ժողովուրդների հետ ու նրանցից փոխառած հագուստների դետալները, անվանումները և այլն: Միևնույն տարածքում նույնպես եղել են տարբերություններ առանձին խավերի տարազների միջև. դրանք իրարից տարբերվել են օգտագործված գործվածքների, թելերի, կարի որակով, նրանց վրա կատարված նուրբ ձևագործների քանակով, հարգի համարվող դետալների առկայությամբ կամ բացակայությամբ և, իհարկե, գարդերի քանակով ու արժեքով:

Հայկական տարազը համարվում է արձակ, բաց տիպի, քանի որ զգեստն ունի կտրվածքներ առջևից և կողքերից: Չզբստի ուրվագիծն ազատ է, իսկ գույներից գերակշռում են կարմիրը, կապույտը, կանաչը, մանուշակագույնը և դեղինը: Հայկական զգեստը երկարափեշ է, կողքերի ճեղքվածքներով, ունի նաև գոտի: Հայկական հագուստի մեջ լայնորեն օգտագործվել է ասեղնագործությունը, իսկ նախշերն ունեցել են և՛ գեղագիտական նշանակություն, և՛ պաշտամունքային (հին հայերը հավատացել են, որ այս կամ այն նախշը կրողին կարող է պահել առողջ և անփորձանք):

♦ **Ի՞նչ էք կարծում, հնարավո՞ր է արդյոք և իմաստ ունի՞ վերադառնալ հայկական ավանդական հագուստին: Եթե այո, ապա ի՞նչ եղանակով դա կարելի է անել:**

Հայկական ազգային հագուստի պահպանված քաղմաշկությունն ու գեղեկությունը կարող են ոգեշնչել հայկական նորաշեղանակի տղերին, որպեսզի վերջիններս օգտագործեն ավանդական ազգային զգեստի յուրակերպ կողմերն ու սրեղծեն այնպիսի համադրություններ, որոնք կդիտվեն և՛ ժամանակակից, և՛ գեղեցիկ՝ միաժամանակ կրողի մեջ առաջացնելով ազգային պատկանելության ու հպարտության անթաքույց զգացմունք:

ՀԱՐՅԵՐ ՄՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԵՐ

1. Ի՞նչ է մոդան:
2. Ի՞նչ է նշանակում, ըստ ձեզ, կուրորեն հետևել մոդային:
3. Արդյո՞ք գեղեցիկ է այն, ինչ մոդայիկ է:
4. Երբևէ եղե՞լ է, որ հանուն մոդայիկ երևալու դեմ գնաք ձեր սկզբունքներին:
5. Ի՞նչ է ազգային հագուստը:
6. Ինչո՞վ է տարբերվում ազգային հագուստը մոդայիկ զգեստից:
7. Ի՞նչ ընդհանրություններ կան ազգային տարազի և մոդայի միջև:
8. Այս թեմայի ուսումնասիրումից ի՞նչ հզորակացություններ կարող էք անել:

ԱՌԵՉՆԳՐՈՒՄ

1. Օգտագործելով գրադարաններում եղած նյութերը, ինտերնետը կամ այցելելով քանգարաններ՝ փորձեք պատկերացում կազմել Հայաստանի տարբեր տարածքների տարազների մասին: Հնարավորության դեպքում դասարան բերեք ազգային հագուստի կամ զարդերի նմուշներ: Կազմեք վահանակ հայկական տարազի տարբեր համալիրների վերաբերյալ:

2. Եթե համայնքում կա հնարավորություն, հետազոտեք նաև այլ ազգությունների ներկայացուցիչների ազգային հագուստը: Կազմեք վահանակ ՀՀ-ում ապրող ազգային փոքրամասնությունների տարազների պատկերներով:

ԴԱՍ 8. ԳԵՂԵՑԻԿ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ ԵՎ ՀԱՂՈՐԳԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մարդկային շփումն ամենամեծ շքեղությունն է...

Անբուսան դր Սենյու-Էրզրուպերի

Աշխատանք գույզերով

Ց-րդ դասարանի հասարակագիտության դասընթացից վերիիշե՛ք, թե ինչ է հա-
ղորդակցությունը և գրուցե՛ք գեղեցիկ վարվելակերպի ու շփման մասին: Չույզե-
րով ընտրե՛ք 2-3 կանոն, որոնց օգտագործումը կարող է, ըստ ձեզ, գեղեցկացնել
ձեր վարվելակերպն ու շփումը միմյանց հետ:

Կանոնների ընտրության համար օգտակար կարող է լինել հետևյալ տեքստի
ընթերցումը:

Ի՞նչ է գեղեցիկ վարվելակերպը: Մի՞թե բավարար չէ այն, որ պատանին կամ
աղջիկը գեղեցիկ են, հետևում են իրենց արտաքինին, գիտեն պարել, նրբագեղ
շարժվել, հագնվում են ճաշակով և այլն: Պարզվում է, որ ոչ, քանի որ վերոնշյալ
բոլոր հատկություններն ունեցող մեկը կարող է եխասքափություն առաջացնել՝
մեզ հետ շփվելու ժամանակ հանդես բերելով կոպտություն, աննրբանկատու-
թյուն, անբաղաբավարի վարք ու բարք:

Հիշե՛ք. մեզանից յուրաքանչյուրն ուզում է, որ իր հետ վարվեն քաղաքավարի,
հարգալից ու մեղմ: Իսկ սա նշանակում է, որ մենք ինքներս նույնպես այլոց հետ
պետք է վարվենք նման ձևով: **Գեղեցիկ է այն վարվելակերպը, որ մարդկանց
միմյանց հետ վարվելու ընթացքում առաջացնում է գեղեցիկի զգացողություն:**
Դպրոցի, դասարանի կամ վերելակի մուտքի մոտ ճանապարհը քաղաքավարի
ժպիտով զիջելը կարող է ձեր ուսուցիչների, ծնողների կամ անձանոթ մեկի տրա-
մաղությունը բարձրացնել, իսկ կոպտորեն հրել անցնե՞լը...

- ◆ **Մտաբերե՛ք ոչ վաղ անցյալում ձեր կատարած որևէ արարք, որն ինքներդ կա-
րող եք անվանել գեղեցիկ: Ի՞նչ եք կարծում, գեղեցիկ արարքները պե՞տք են
մարդկանց, ինչո՞ւ...**



Լեոնարդո դա Վինչի. «Խորհրդավոր ընթրիք»

*Քրիստոսի աշակերտները քիչ առաջ լսել են. «Չեզանից մեկը ինչ կմտաբերի»
արքայապետությունը: Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչ պարբեր չևերով է նրանցից
յուրաքանչյուրն արքայապետում իր հուզմունքը*

Պարզվում է, որ ի թիվս մի շարք հատկությունների, որոնցից շատերն արդեն ուսումնասիրել եք, գեղեցիկն ունի ևս մեկ կարևոր հատկություն. *գեղեցիկն ի վիճակի է մաքրել մարդու հոգին կուրակված դառնությունից, գայրույթից, ցավից, չարությունից և այլ քացասական հույզերից ու հոգեվիճակներից*: Գեղեցիկն ունի մաքրագործող հատկություն, հետևապես, միմյանց հետ գեղեցիկ վարվելով մեզանից յուրաքանչյուրը շատացնում է աշխարհում եղած ներդաշնակությունը՝ հնարավորություն տալով դիմացինին մաքրագործվել, վեհանալ: Գեղեցիկ արարքին ակամա պատասխանում են նույն ձևով, քանի որ բոլորի մեջ էլ առկա է մարդուն բնորոշ ձգտումն առ գեղեցկություն:

◆ **Մտորենք ստորե բերվող սկզբունքների շուրջ, փորձեք դրանք օգտագործել ձեր կողմից մշակվող կանոնների մեջ:**

Սկզբունք 1. *Խոսել գեղեցիկ, չաղավաղել լեզուն, բառերն օգտագործել փեղին՝ խոսասիրելով դրանց անհարկի գործածումից:*

Սկզբունք 2. *Հասակակիցներին պիտակներ չկայցնել: Պիտակը կարող է ցավ առաջացնել հասցեատիրոջ հոգում: Որպես կանոն, գեղեցիկ պիտակներ չեն լինում:*

Սկզբունք 3. *Եթե դիմացինի արարքներում որևէ բան դուր չի գալիս, պետք է ընկալարել արարքը և ոչ թե այն գործած մարդուն: Օրինակ՝ «Դու լավն ես, բայց քո արածն ինձ դուր չի գալիս», այլ ոչ թե՝ «Ես քեզ հետ ընկերություն էի ուզում անել, բայց պարզվում է, որ դու վատն ես»:*

Խմբային աշխատանք

Չույգերով աշխատելուց հետո միավորվեք ավելի մեծ խմբերում և մշակեք գեղեցիկ վարվելակերպի ու հաղորդակցության կանոններ ձեր դասարանի համար:

ՀԱՐՅԵՐ ԲՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Անդրադարձե՞ք ձեր խմբային աշխատանքին ու մտորե՞ք, թե արդյոք միմյանց համոզելու ժամանակ դուք հետևում էիք հենց այն կանոններին, որոնց մշակմամբ էիք զբաղված:
2. Մի՞ թե կարևոր է գեղեցիկ վարվելակերպի գաղափարը: Ինչո՞ւ:
3. Ի՞նչ ընդհանրություններ կան գեղեցիկ և բարոյական վարվելակերպերի միջև:
4. Ինչպե՞ս հասկանալ մարմնի և հոգու ներդաշնակման գաղափարը: Ո՞ր գեղեցկությունն է կարևոր մարմնակա՞ն, թե՞ հոգևոր: Ինչո՞ւ:
5. Մտորե՞ք Անրոսան դը Սենտ-Էքզյուպերիի «Մարդկային շփումն անենամեծ շքեղությունն է» խոսքերի մասին: Ի՞նչ եք կարծում, միմյանց հետ չե՞ր շփումը շքեղությո՞ւն է: Ինչո՞ւ:

ԱՌԱՋԱԳՐՆԵՐ

Ճ Մեկ շաբաթվա ընթացքում ինքնադիտարկում արե՞ք՝ գրառելով այն բոլոր դեպքերը, երբ հետևել կամ չեք հետևել ձեր իսկ ընդունած կանոններին: Ջրուցեք դիտարկման արդյունքների մասին ուսուցչի կամ վստահելի այլ մեծահասակի հետ:

ԹԵՄԱ 3. ԳԵՂԵՉԻԿԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ

ԳԱՄ 9. ԱՐՎԵՍՏԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԳՈՒ ԻՆՔՆԱՐՏԱՐՔԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆԹԵՐՅԵՔ ՏԵՔՍԸ

Արվեստը մի անավարտ կամուրջ է, որի մեկ ուրքը հենված է կյանքի վրա, իսկ մյուսը մեկնված է դեպի անեզրությունը... Ամեն մի համնար երկարացնում է այդ ուրքը, որպեսզի գտնի երկրորդ հենարանը... և այդպես անվերջ... Դրա համար արվեստը մարդկության լավագույն իղջերի պարմությունն է...

Երվանդ Քոչար



Մ. Մարյանի դիմարանդակի գործ՝ Հակոբ Գյուրջյանի

Այժմ լսենք **Մարտիրոս Սարյանին**. «Արվեստագետը պետք է տեսանելի առարկաների ու երևույթների ընկալման միջոցով, իր ողջ էությունը զգա ու արտացոլի Բնություն-Տիեզերքի ներքին շնչառությունն ու ներդաշնակությունը, կարգն ու միասնությունը: Արվեստը արտաքին աշխարհի պատկերմամբ (լինի մարդ թե սար, միրգ թե ծաղիկ, թռչուն թե ծառ) պիտի ներշնչի բնության տիեզերակնությունը, նույնն է թե՛ պիտի արտացոլի օրինաչափորեն իր հավերժական դրսևորումն ապրող Ունիվերսալ Գեղեցկությունը: Եվ դրա հետ մեկտեղ, չնայած որ արվեստը բնության պատեհնահանում է, բնության զուգահեռն է և ոչ թե նրա շարունակությունը, անպայման պետք է լինի բնության պես ներդաշնակ, բնության պես միասնական ու համոզիչ»:

(Մեջբերվում է ըստ Վ. Մաքևոյան, «Զրույցներ Սարյանի հետ», Երևան, 2002, էջ 47)

ՀԱՐՅԵՐ ՄՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Մտորեն ք արվեստի մասին Քոչարի խոսքերի շուրջ: Արդյո՞ք կամրջի խորհրդանիշը բնորոշում է արվեստի էությունը:
2. Համաձայն՞ եք արդյոք արվեստի սարյանական ընկալման հետ:
3. Ի՞նչ է նշանակում «Ունիվերսալ Գեղեցկություն» արտահայտությունը: Ինչո՞ւ են այդ երկու բառերը գրվել մեծաբառերով:
4. Եթե արվեստը բնության զուգահեռն է, կարելի՞ է ասել, որ արվեստ սրեղծող մարդը արարիչ է: Ինչո՞ւ:
5. Փորձե՞ք գտնել արվեստի ձեր սեփական ձևակերպումը:

Ի՞նչ է արվեստը. նմանակո՞ւմ, կրկնությո՞ւն, խա՞ղ, արարո՞ւմ, ինքնանպատա՞կ, թե՞ այլոց ծառայող գործիք, զբաղմո՞ւնք, ժամա՞նց, բե՞ մտորումների, ներքին աշխատանքի մղող ազդակ: Հնուց ի վեր խորհելով արվեստի էության մասին՝ մարդիկ ժամանակ առ ժամանակ նախապատվություն են տվել արվեստի վերոնշյալ կողմերից որևէ մեկին: Արվեստը համարվել է և նմանակում՝ բնությանը կամ մարդուն, և՛ խաղ, որպեսզի ամեն ինչ պայմանակա՛ն է, և՛ ինքնանպատակ, այսինքն՝ արվեստն արվեստի կամ արվեստագետների համար, և՛ մարդկանց կրթող, հոգեպես մաքրող գործիք, և՛ զբաղմունք, ժամանց, ինչպես կասեր Խաչատրուր Աբովյանը՝ «պարսպ վախի խաղալիք», և, իր բարձրագույն արտահայտություններում, մարդկության հոգևոր որոնումներն արտացոլող բարձր սրբեղծագործականություն, որ ի վիճակի է մարդուն վեր բարձրացնել ինքն իրենից, իր կյանքի պայմաններից ու տարատեսակ սահմանափակություններից:



Մարտիրոս Սարյան «Հայկական գյուղ»

- ◆ Մտորե՛ք, թե ձեր կյանքում քանի օր է եղել, որ արվեստի այս կամ այն տեսակի հետ չեք շփվել. չեք լսել որևէ երաժշտություն, չեք պարել, երգել, չեք դիտել որևէ կինոնկար կամ քատերակամ մերկայացում, չեք կարդացել որևէ գիրք կամ լսել որևէ հեթիաք և այլն:
- ◆ Իսկ այժմ պատկերացրե՛ք մի իրականություն, որտեղ արվեստ չկա: Կուզենա՞լի՞ք ապրել նման աշխարհում: Ինչո՞ւ:

Արվեստը մարդու հոգևոր որոնումների ամենավաղ առաջացած ձևերից է: Դեռևս նախնադարյան հասարակության մարդը, երբ կարողացել է հոգալ իր կենսասպահովման խնդիրը և ունենալ ազատ ժամանակ, փորձել է արտահայտել իր հոգում աստիճանաբար ավելի ու ավելի նրբացող-բյուրեղացող գեղեցկությունները: Նա զգացել է բնության անսահման կատարելությունը և փորձել իրեն հասանելի ձևերով պահպանել այն. կերտել է մայրությունը խորհրդանշող արձանիկներ, քարանձավների պատերին մկարել է կենդանիների, մարդկանց, լուսատուների պատկերներ, աշխատելիս քթի տակ երգի մման ինչ-որ բան է եղանակել ու պարել է... Պարը, որոշ մարդաբանների կարծիքով, եղել է ամեննակզբում: Պարում արտահայտվել են մարդու կյանքի բնական դիսֆերը: Պարն անցյալում, ինչպես և հիմա, նպաստել է, որ ուղղաձիգ քայլող մարդու մարմինը ձևավորվի

կատարյալ և ուժեղ: Մակայն պարն ունեցել է նաև պաշտամունքային նշանակություն. պարի միջոցով հին մարդիկ նմանակել են կենդանիներին ու թռչուններին, որոնց պաշտել են ու փորձել հաղորդակցվել նրանց հետ շարժումների լեզվով: Արվեստի ծագման վերաբերյալ տեսակետներից մեկի համաձայն՝ արվեստը ծնվել է որպես պաշտամունքն իրականացնելու միջոց, չե: Իր պաշտամունքի առարկաներին մարդը ձոնել է օրհներգներ, ստեղծել է կոտր քանդակ-իուշարձաններ և այլն:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ արվեստն առաջացել է մարդու կենցաղային պահանջմունքները բավարարելու համար կիրառական նշանակություն ունեցող իրերի ստեղծմամբ: Ասենք, եթե նախամարդն ուտում էր ավելի շատ կենդանու նման, ապա աստիճանաբար զարգացող բանական մարդը ստեղծում էր ամանեղեն, որի մեջ ոչ միայն պատրաստում ու պահում էր կերակուր, այլև ուտում էր: Ըստ այս տեսակետի՝ մարդը, կենցաղային իրերի միջոցով իր պահանջմունքները բավարարելով, աստիճանաբար սկսում է այդ կիրառական իրերը զարդարել, գեղեցկացնել՝ դրանով իսկ ստեղծելով արվեստի նախնական ձևերը:

Եվ կա արվեստի առաջացման մասին զուր գեղագիտական մոտեցումը, ըստ որի մարդուն՝ որպես տեսակային հատկանիշ տրված է գեղեցիկի զգացումը: Այն հասարակության զարգացմանը զուգընթաց աստիճանաբար ավելի ու ավելի է նյութականացել, քանի որ մարդը սովորել է ոչ միայն հիանալ բնության պարզևս զգեցողությանը, այլև ստեղծել գեղեցիկ պարագաներ, որոնք անցողիկ չեն բնության երևույթների նման և միշտ կարող են գեղագիտական հաճույք պատճառել:



*Ռաֆայել Մանգրի
«Աստվածամայրը
մանուկ Քրիստոսի հետ»*

Դժմարտությունը երևի այս երեք մոտեցումների համադրության մեջ պետք է որոնել, քանի որ մարդն իր զարգացման վաղնջական ժամանակներից ի վեր ստեղծել է հավատք, կրոն, ուրեմն նաև կրոնական արվեստ, ունեցել է կենցաղ, հետևապես՝ դեկորատիվ-կիրառական արվեստ, և մտորել ու զգացել է գոյավորի ներդաշնակությունը՝ ստեղծելով որևէ այլ օգուտ չպարունակող, զուտ գեղագիտական հաճույք պատճառող իրականություն:

Մարդը ստեղծել է արվեստ՝ որպես ինքնահաստատում: Եթե կրոնում մարդը լիովին իր կամքը ենթարկում է աստվածային նախախնամությանը, գիտության մեջ որոնում է օբյեկտիվ օրինաչափություններ, փիլիսոփայության շնորհիվ փորձում է իմաստավորել գոյություն ունեցող ամեն ինչն ու ինքն իրեն, ապա արվեստը ծառայեցնելով այդ

բոլոր նպատակներին՝ մարդն արվեստում հանդես է գալիս որպես արարիչ Արարչից հետո, քանի որ չեռք է բերում մեծ ազատություն՝ սրեղծելու մի նոր, քեկուզե պայմանական իրականություն, որտեղ իրականացած է տեսնում իր չգրումները, հույզերն ու նախապարվությունները: Պատահական չէ, որ դարեր շարունակ մարդկանց ամենահասանելի արվեստի ձևերից է եղել հեքիաթը: Հեքիաթում մարդը խորհրդանշանների միջոցով արտահեղել է իր վիշտն ու ցավը, իրականացրել է բարու, գեղեցիկի հանդեպ իր ունեցած մղումն ու ավելի է մարդկայնացել:



Մարտիրոս Մարյան
«Հորի Փերին» հեքիաթի
նկարազարդում

♦ Կարող՞ւմ եք արդյոք հեքիաթներ: Հիշե՛ք, հեքիաթը միայն փոքրիկների համար չէ, ինչպես սխալմամբ մտածում են շատերը: Հեքիաթում խտացված են տվյալ ժողովրդի բարոյաեռզբանական առանձնահատկությունները, արժեքային ողջ համակարգը: Անձնավորության աճի ընթացքում կարևոր է հեքիաթին հաղորդակից լինելը: Թե՛ ժողովրդական, քե՛ հեղինակային հեքիաթները տալիս են մտորելու, ապրել գարգանալու նյութ: Մի ամտեսե՛ք դա:

Արվեստը բազմաբնույթ և բազմաշերտ էրևույթ է, ունի և՛ ժամանցային, կենցաղային շերտ, և՛ բարձրագույն ոլորտ, որտեղ մարդը կարող է շփվել ողջ մարդկության՝ դարերի ընթացքում սրեղծած գլուխգործոցների, գերագույն արժեքների հետ ու ձևավորվել որպես մարդկության ու սեփական ազգի սրեղծած մշակութային արժեքներին արժանի ժառանգորդ:

ՀԱՐՅԵՐ ՍՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է արվեստը:
2. Ինչո՞ւ է մարդը հասնում ազատության ամենամեծ աստիճանին արվեստում:
3. Ի՞նչ էք կարծում, արվեստում միայն գեղեցի՞կն է արտահայտվում, քե՞ սյուսնդակը, սրորը: Ինչո՞ւ:
4. Բացառիկ ք արվեստի առաջացման մասին ուսմունքները:
5. Արվեստի առաջացման մասին ո՞ր տեսակետն էք նախընտրում: Ինչո՞ւ:

ՄԱԼՁԱԿՐԱՆՔ

✂ 1. Կազմակերպե՛ք այց թատրոն, համերգ կամ ցուցահանդես: Վերլուծե՛ք արվեստի տվյալ ոլորտի գործը մարդու ստեղծագործական ազատության տեսանկյունից:

✂ 2. Շարունակե՛ք շարադրանքը. «Եթե հրաշագործ լինեի, կստեղծեի մի աշխարհ, որտեղ...»:

ՉԱՍ 10-11. ԳԵՂԵՑԻԿԸ ԱՐՎԵՍՏԻ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

ԸՆԹԵՐՑԵՔ ՏԵՔՍԸ

Կան արվեստի բազմաթիվ տեսակներ, և ներկայումս դրանց քանակն ավելանում է, քանի որ տեխնիկայի զարգացումը հնարավորություն է տալիս ստեղծել նորանոր գեղեցիկ երևույթներ: Արվեստի նոր ձևերից են կինոն, լուսանկարչությունը, իսկ նորագույն ձևերից՝ տեսահոլովակները, լագերային գրաֆիկան և այլն:

Արվեստի բազմազանությունն ունի մի շարք պատճառներ: *Պատրճառներից մեկը համարվում է այն, որ մարդն ունի փարթեր զգայարաններ, որոնց համար սրեղծել է փարսպեսակ արվեստներ: Օրինակ՝ երաժշտությունը հաճույք է պարգևում ականջին, իսկ ճարտարապետությունը՝ աչքին: Մեկ այլ պատրճառ համարվում է այն, որ մարդն ի վիճակի է ինքնաարտահայտվել փարթեր ձևերով, որոնց առկայությունն էլ ծնում է արվեստի տեսակների բազմազանությունը: Ստեղծվելով՝ արվեստի իսկական գործերը դառնում են մարդու կյանքի մասնիկը, ուղեկցում նրան՝ կրթելով, դաստիարակելով, գեղագիտական հաճույք պատճառելով, մաքրագործելով, սփռիչելով և այլն: Արվեստի բազմազանության հիմնական պատրճառներից մեկն էլ այն է, որ իրական բազմազան աշխարհն արտահայտելու համար անհրաժեշտ են փարթեր արտահայտչամիջոցներ, որոնք սրեղծվում են փարթեր արվեստների միջոցներով:*

Կա արվեստների դասակարգման մի ավանդական սկզբունք, ըստ որի արվեստները բաժանվում են երեք խմբի՝ տարածական, ժամանակային և տարածաժամանակային արվեստների: *Տարածական արվեստների* գործերն առկա են տարածության մեջ, որտեղ և ընկալվում են, օրինակ՝ ճարտարապետական կառույցները, քանդակները, գեղանկարները և այլն: Տարածական արվեստներ են ճարտարապետությունը, քանդակագործությունը, գեղանկարչությունը: *Ժամանակային արվեստների* գործերը, թեև ունեն տարածական կրողներ (օրինակ՝ գրքերը, նոտայագրերը և այլն), սակայն իրականացնում են համար ժամանակ են պահանջում (գիրքն «ապրում է» այն կարգալիս, երաժշտությունը՝ լսելիս և այլն): Ժամանակային արվեստներ են երաժշտությունը, գրականությունը և այլն: *Տարածաժամանակային են համարվում այն արվեստները, որոնց համար որպես ընկալման միջավայր կարևոր են թե՛ տարածությունը, թե՛ ժամանակը: Օրինակ՝ բալետի կամ օպերային ներկայացման համար հարկավոր են հարդարված բեմ և ժամանակ, որպեսզի կատարվի ներկայացումը: Տարածաժամանակային արվեստներ են բալետը, օպերան, թատրոնը, կրկեսը և այլն:*

Արվեստները երբեմն դասակարգվում են նաև ըստ կատարման անհրաժեշտության՝ կատարվող և չկատարվող: *Կատարվող են այն արվեստները, որոնք, բացի հեղինակից, կարիք ունեն նաև կատարողի, օրինակ՝ երգչի, ասմունքողի, պարողի և այլն: Միմիջոցների կատարման համար երբեմն անհրաժեշտ է լինում հարյուր հոգանոց և ավելի նվագախումբ, կինոն ստեղծվում է կատարողների մի*



1. Արսիսի Բոսս, «Պարսիսանդես»



2. Իրանսուս Բուշե,
«Լուի Ֆիլիպ Ժոզեֆի դիմանկարը»



3. Յան Վերմեր,
«Աղբիկը գիտու բաժակով»



1. Արսիստ Բուս. «Պարսիսանդես»



2. Ֆրանսուա Բուշե
«Լուի Ֆիլիպ Ժոզեֆի դիմանկարը»




3. Ֆան Վերմեեր.
«Աղջիկը գինու բաժակով»



4. Էմիրյան Վաչագո. «Պարը»




5. Գուսպալ Կուրբե. «Քարհարները»




6. Հովհաննես Այվազովսկի
«Քառս կամ աշխարհի արարումը»



7. Օնորե Գոնյե
«Էվագարարուհին»



8. Կասպար Գալսթյան *Ֆրիդրիխ* «Կինը և արևամուտը»




9. Նորավանքի ճարտարապետական համալիրը (XIII-XIV դդ.)



10. Հովհաննես Այվազովսկիի «Սևան»



11. Մինաս Ագևոյան «Մարտուն»




12. Գրիգոր Խամբյան «Արագած»



13. Լեոնարդո դա Վինչի
«Կզարխաով փիկինը»



14. Ռենն Մազրիպ
«Կնդծ հայելի»



15. Օգյուստ Բեկնուար,
«Պարը Բուժիվարում»

16. Մարվադոր Գալի,
«Խաչելություն»



17. Անտոնիո Գաուդի
Շենք Բարսելոնում



18. Սերգեյ Փարաջանով.
«Ճարերժնի հիշարարսին»



19. Արդի ճարտարապետական կառույցներ Եյու Յորթում

մեծ շղթայի միջոցով: Կան նաև արվեստներ, որոնք կատարման կարիք չեն զգում, հեղինակն արվեստի գործի միջոցով անմիջապես հաղորդակցվում է մեզ հետ, բանի որ այդ արվեստների գործերը, հեղինակի կողմից ստեղծվելով, ձեռք են բերում ինքնաբավ գոյություն: Օրինակ՝ արձանը, կտավը, կառույցը և այլն: Մակայն երկու դեպքում էլ արվեստը կարիք ունի ընկալող հասկացող, մեկնաբանողի, առանց որի չի կարող գոյություն ունենալ:

Միջնադարի հայ մեծ մտածող **Դավիթ Անհաղթը** արվեստները բաժանում էր օգտակար և անօգուտ արվեստների՝ գտնելով, որ, օրինակ, հյուսնությունն օգտակար արվեստ է, իսկ լարախաղացությունը՝ ունայն, անօգուտ:

Կան արվեստի բազմաթիվ տեսակներ: Մտորև խոսք կլինի արվեստի որոշ տեսակների մասին:

Դեկորատիվ-կիրառական արվեստ: Արվեստի այս տեսակի նպատակն է սրեղծել կենցաղի առարկաներ և շեփոթել մարդու միջավայրը գեղեցիկի կանոններով: Կիրառական արվեստի ստեղծագործություններ պահպանվել են հնագույն ժամանակներից: Դրանցից են նրբագույն զարդանախշերով զավաթները, զարդատուփերը, տափորները, կահույքի տարբեր դետալներ և այլն: Դեկորատիվ արվեստների ստեղծագործություններ են դրճերի գեղեցիկ բռնակները, երկաթյա ցանկապատերը, պատուհանի զարդանախշված ապակիները՝ վիտրաժ, և այլն: Դեկորատիվ-կիրառական արվեստն իր հերթին ունի բազմաթիվ ենթատեսակներ՝ ոսկերչություն, արծաթագործություն, գորելեն, մաքրամե, ուլունքագործություն և այլն: Դեկորատիվ-կիրառական որևէ արվեստի տիրապետելն ու դրանով ժամանցի պահերին զբաղվելը հնարավորություն է տալիս իրականացնել գեղեցիկի սեփական պատկերացումները, հանգստանալ ու լիցքաթափվել:



Դավիթ Անհաղթ (V-VI դդ.)
XIII դ. մանրանկար



Արծաթե գոգի և դաշույն Արցախից (XIX դ.)

♦ **Տիրապետում էք դեկորատիվ-կիրառական արվեստի որևէ տեսակի:**

Ճարտարապետություն: Դեկորատիվ-կիրառական արվեստների մնացն ճարտարապետությունը պատկանում է արվեստի հնագույն տեսակների շարքին: Այն ծնունդ է առնում հեռավոր անցյալում, երբ մարդը, չբավարարվելով քարանձավներում, այրերում, ծառերի փշակներում ապրելով, ստեղծում է իր համար արհեստական կացարաններ: Մակայն ամեն մի շինարարություն ճարտարապետություն չէ: Ծնվելով կառուցելու անհրաժեշտությունից՝ *ճարտարապետությունը*

դառնում է արվեստ, որի նպատակն է իրական տարածության շնամորումը գեղեցկության կանոնների համաչափ, այնպիսի կառույցների սրեղծումը, որոնք և՛ հարմարավետ են, և՛ ներդաշնակ: Ծարտարապետության միջոցով մարդիկ «մարդկայնացնում» են շրջակա միջավայրը՝ բավարարելով իրենց թե՛ նյութական, թե՛ հոգևոր պահանջմունքները: Ծարտարապետությունն արտացոլում է ավյալ դարաշրջանի մարդու հուզական աշխարհը, մտածելակերպը, վերաբերմունքն աշխարհի հանդեպ: Ծարտարապետական կառույցները նույնիսկ թելադրում են վարվելակերպի որոշակի կանոններ:

- ◆ **Հայկական եկեղեցիների մուտքերը ցածր են արված, որպեսզի եկեղեցի մտնողն ակամա խոնարհվի:** Իսկ գմբեթներում արված լուսանցքներն այնպես են կառուցված, որ եկեղեցու ներսում մարդն ակամա եայացքը հառում է դեպի երկինք: Երկու դեպքում էլ նպատակը մեկն է՝ եկեղեցի մտնողին զգացնել տալ աստվածայինի մեծությունը: Կամ այլ օրինակ. Գառնիի հեթանոսական տաճարի աստիճաններն այնպես են կառուցված, որ համարյա հնարավոր չէ հենց այնպես, մանրիկ քայլերով մտնել տաճար կամ դուրս գալ այնտեղից: Այդ աստիճաններով բարձրանալ կամ իջնել կարող ես միայն հանդիսավոր դանդաղ քայլերով: Հանդիսավորության տաճում է ճարտարապետական լուծումը, քանի որ տաճարը նույնպես աստվածների սպասարանն էր, և ի միջի այլոց տաճար մտնել պարզապես չի հաջողվի:



*Ֆիրայր Օրաբյան
«Ընդամիք»*

Գեղանկարչությունը հարթության վրա իրական աշխարհի պարկերումն է, որին հասնելու համար նկարիչը լուծում է բազմաթիվ խնդիրներ. հեռանկար, լույս, ստվեր, գույների համադրություն և այլն: Հնագույն նկարներն արվել են՝ ելնելով գործնական նպատակներից: Նախնադարի նկարիչները պատկերել են որսի կենդանուն՝ հույս ունենալով «հմայել» նրան, որպեսզի որսի ժամանակ կենդանին բռնվի: Գիմանկարներ արել են, որպեսզի փոխանցեն հեռվում գտնվող մարդկանց, օրինակ՝ հարսնացու-փեսացուներին: Սակայն երբեմն, ունենալով գործնական նպատակներ, գեղանկարչության հիմնական նպատակը գեղագիտական հաճույք և մտորում առաջացնելն է: Դա է պատճառը, որ լուսանկարչության հայտնագործումից

հետո գեղանկարչությունը չդադարեց գոյություն ունենալ: Գեղանկարչի խնդիրն իրականության պասիվ վերարտադրումը չէ, գեղանկարիչն իր տեսած իրականության մեջ վեր է հանում հոգևոր բովանդակությունն ու այն ներկայացնում է դիտողին խորհրդանշանների, ընդհանրապես գեղարվեստական պատկերի միջոցով: Իրականության խորքային էությունը ցույց տալու նպատակով գեղանկարիչը երբեմն կարող է խեղաթյուրել իրերի իսկական գույները, համամասնությունները, ընդհանրապես ողջ տեսքը: Օրինակ՝ ցույց տալու համար մարդու մեջ եղած

տագնապը՝ նկարիչը կարող է պատկերել ոչ թե երկու իրական աչք, այլ երեք կամ ավելի: Գեղանկարչությունը կարծես կառուցում է մի նոր աշխարհ ու հանձնում այն դիտողի դատին:

Երաժշտությունը, ըստ որոշ մտածողների, արվեստի տեսակներից բարձրագույնն է, քանի որ այն հնարավորություն է տալիս անմիջականորեն զգալ ներդաշնակությունը, վեհ-գեղեցիկն ու տրիեգերական անասիմանությունը՝ չդիմելով տարբեր ազգերի ներկայացուցիչներին միմյանցից բաժանող խոսքի օգնությանը: Ի տարբերություն հողաբաշխ խոսքն օգտագործող արվեստների՝ երաժշտությունը հասանելի է բոլոր ազգությունների մարդկանց, քանի որ անմիջապես դիմում է մարդու հուզական ապրումների ու զգացմունքայնության աշխարհին: Երաժշտությունն իր նպատակին հասնում է ձայնի միջոցով: Չայնը կարող է լինել մարդու (վոկալ, օրինակ՝ սուպրանո, բարիտոն և այլն) և գործիքային (օրինակ՝ դուդուկ, դիոլ, ջութակ և այլն): Երաժշտության միջոցով մարդն արտահերոսում է իր ներսում եղածը, միաձուլվում է այլ մարդկանց ու ողջ բնությանը, կարծես «գրկում է»՝ աշխարհը: Երաժշտությունը կարող է օգտագործել նաև խոսքը՝ պոեզիան: Այս դեպքում ծնվում է երգը, որի լավագույն օրինակներում կա երաժշտության և խոսքային բովանդակության միաձուլում ու ազդեցության ուժգնացում (օրինակ՝ Կամաչյանի օրորոցայինը, «Հորովելը» և այլն):

Պարը երաժշտության «արձագանքն է», *ոիթմիկ մեղեդու ազդեցությանը մարդկային մարմնի շարժումների ամբողջությունը*, որը բացահայտում է մարդկանց բնավորությունները, հոգեվիճակները, զգացմունքներն ու մտքերը և այլն: Երաժշտության նման պարը ևս հնագույն ժամանակներում է ծագել: Մարդաբանները գտնում են, որ ամենահին արվեստն է սա, քանի որ ոիթմիկ շարժումներ կատարելու պահանջումը մարդու մեջ առկա է բնությունից: Մեր նախնիներն ապրում էին բնության ոիթմերով, որոնց արտացոլումն էին կրակի կամ որսի ակնկալվող գոհի շուրջ կատարվող պարերը: Պարի հնագույն ձևերը եղել են տարբեր կենդանիների կամ թռչունների շարժումների նմանակումները: Պարի շնորհիվ մարդը նույնպես միանում է ողջ տիեզերքին, ինչպես նաև իր նախնիներին: Պահպանելով ու պարելով նախորդ սերունդների ստեղծած պարերը՝ մենք համակվում ենք նրանց զգացումներով, ապագայի համդեպ հույսով, ապրելու և գործելու վճռակամությամբ: Պարելով այլ ազգությունների մարդկանց ստեղծած պարերը՝ մենք զգում ենք մեր ընդհանրությունը որպես մարդ էակներ: Երաժշտության նման պարը նույնպես ծնունդ է առնում ժողովրդի ներսում, ապա մասնագետների կողմից մշակվելով՝ ծնունդ է տալիս դասական պարին՝ բալետին:



«Յրեղերիկ Ըոպենի դիմանկարը»
գործ՝
Էժեն Գելյակրուայի



Գրականությունն իրականության գեղարվեստական վերարտադրումն է *խոսքի միջոցով*: Այս արվեստի անվանումը կապված է «գիր» բառի հետ, և թվում է, թե գրականությունը ծնունդ պետք է առներ գրի առաջացման հետ: Սակայն քանի որ խոսքը եղել է շատ ավելի վաղ, ապա գրականության միջոցով գրված պահպանվածի հիմքը կազմող մի մեծ մաս «խոսվել-ասվել-պահպանվել»՝ բանահյուսվել է շատ ավելի վաղ: Մարդկանց հնագույն առասպելները, ասքերը, ավանդագրությունները սերնդեսերունդ պատմվել փոխանցվել են՝ հասնելով գրավոր մշակույթի դարաշրջան ու գրի առնվել՝ պահպանվելով ընթերցող հասարակության համար: Գրականությունն առանձնանում է արվեստի մյուս տեսակներից մարդու վրա իր ունեցած ազդեցությամբ: Եթե երաժշտական ձայնային կամ գեղանկարչական գունային պատկերները ոմանց համար կարող են անհասկանալի, դժվարընկալելի լինել, ապա գրականության «բջիջը» խոսքն է, որն այս կամ այն չափով հաստ է տվյալ լեզվով խոսող բոլոր մարդկանց: Գրականությունն ազդում է խոսքով, բացահայտում է մարդու ներաշխարհը, իրականության հանդեպ վերաբերմունքը, կրթում դաստիարակում է նրան՝ սովորեցնելով հույզ-զգացմունքների նրբություն, ճաշակ, իրականությունն ընկալելու խորք և այլն: Ներկայումս տեխնիկական նորագույն միջոցների հայտնագործումը, ցավոք, հաճախ հետին պլան է մղում գրականությունը: Սակայն մարդու հոգեկան աշխարհը ձևավորելու իր հզորությամբ այսօրվա նորագույն արվեստները դեռ չեն կարող համեմատվել գրականության հետ: Իհարկե, կինոն, հեռուստատեսությունը օժտված են մարդու ժամանցն իրականացնելու մեծագույն ներուժով, սակայն ընթերցանությունն ունի մի խորք, որին նշված արվեստներն ի վիճակի են հասնել հազվադեպ, միայն իրենց բարձրագույն դրսևորումներում: «Մարդը բանական կենդանի է» ձևակերպումը կարելի է հասկանալ մասն առ մաս. մարդը բան՝ խոսք ունեցող էակ է, իսկ խոսքը զարգանում է կարդալով ու կարդացածի շուրջ մտորելով: Պետք չէ մոռանալ, որ արվեստի որոշ այլ տեսակներ (կինո, թատրոն, օպերա և այլն) «ածանցվում են» գրականությունից՝ հենվելով գրավոր տեքստերի, խոսքային նկարագրությունների վրա: Իսկ դերասաններն այն մարդիկ են, որոնք սերտում ներկայացնում են գրավոր խոսքը:

Ընթերցանությունը չի կարելի փոխարինել որևէ այլ բանով, այլ գեղարվեստական տպավորությունները հրաշալի են, բայց ընթերցանության ժամանակ (եթե ընթերցվում է արվեստի բարձրարժեք գործ) ընթերցողը նույնպես ստեղծագործում է, մտովի վերարտադրում է իրականությունը, ստեղծում է կերպարներ և այլն:

♦ **Մտորեք հետևյալ իմաստախոսության շուրջ. «Հունարհվի՛ր գրքի վրա, որպեսզի բարձրանա»:** Համաձա՞յն եք արդյոք: Ինչո՞ւ:

Թատրոնն արվեստի այնպիսի տեսակ է, որում աշխարհի գեղարվեստական յուրացումն իրականացվում է քննական գործողության միջոցով: «Թատրոն» բառն ունի հունական ծագում և նշանակում է ներկայացման տեղ: Դա է պատճառը, որ թատրոն են կոչվում մասն այն շինությունները, որտեղ տրվում են ներկայացումներ: Թատրոնը կոլեկտիվ ստեղծագործության մի տեսակ է, որտեղ ի մի են

բերվում դրամատուրգի, ռեժիսորի, բեմանկարչի, երաժշտության հեղինակի, հագուստի նկարչի և, ամենակարևորը, դերասանի ջանքերը: Թատերական արվեստի «շինանյութը» կենդանի մարդն է, դերասանը, որն իր ողջ էությանը մարմնավորում է կերպարը՝ փորձելով հանդիսատեսին ներկայացնել վերջինիս ներաշխարհը, կենսական դրաման, գործողություններն ու դրդապատճառները և այլն: Թատրոնի ազդեցությունն իրականանում է հանդիսատեսի հետ անմիջական շփմամբ բեմում «ապրող» դերասանների հետ: Հանդիսատեսն ապրումակցում է կերպարներին, ինքն իրեն նույնացնում նրանց հետ՝ միաժամանակ հասկանալով, որ այն, ինչ կատարվում է, խաղ է, պայմանականություն: Թատերական արվեստն ունի զարգացման երկար պատմություն. մեկ ներկայացնողից մինչև մեծ կոլեկտիվներ, բացօթյա ներկայացումներից մինչև բարդ տեխնիկայով ու հարդարանքով բեմեր: Սակայն թատրոնի նպատակը նույնն է. բեմական գործողությամբ արտացոլել իրական կյանքը՝ երբեմն օգտագործելով հեզմանքը՝ որպես ինքնամաքրման միջոց ու հանդիսատեսին հնարավորություն տալով նայել իր ներսն ու կատարել ինքնավերլուծություն: Թատերական արվեստի ենթատեսակներից են տիկնիկային թատրոնը, մնջախաղը, երգիծական կոմեդիան, դրամատիկ թատրոնը և այլն:




*Հին Հունական
բայերական դիմակ
Ժամանակակից
թատրոնում դերասանն իր
դիմախաղն է օգտագործում
որպես դիմակ*

♦ **Այցելո՞ւմ եք թատրոն, թե՞ բավարարվում եք հեռու-տացույց դիտելով: Գիտե՞ք, թե ինչ ներկայացումներ են բեմադրվում հայկական թատրոններում:**

Լուսանկարչություն: 1839 թվականին ֆրանսիացի գյուտարար Դագերն առաջին անգամ հանրության դատին ներկայացրեց արժաքյա թիթեղների վրա արված պատկերներ: Դրանք առաջին լուսանկարներն էին, որոնց վրա պատկերված էին Լուվրը, Փարիզի Աստվածամոր տաճարը, Սենայի ափը և այլն: Այդ ժամանակից ի վեր լուսանկարչական ապարատները մեծ զարգացում են ապրել: Այսօր մասնագիտական ապարատների կողքին կան նաև սիրողական ֆոտոապարատներ (ինչպես նաև բջջային հեռախոսների մեջ ներդրված), որոնք հնարավորություն են տալիս յուրաքանչյուր մարդու «անմահացնել» կյանքի ցանկացած պահ: Այսօր արդեն լուսանկարել կարող են համարյա բոլորը, բայց յուրաքանչյուր լուսանկար արվեստ չէ: *Լուսանկարչական արվեստի խնդիրն է հոգևոր բովանդակություն դնել արտապարկելով իրականության մեջ, դիպորդին փոխանցել ոչ միայն և ոչ այնքան իրականության արտապարկերը, որքան այդ իրականու-*





Ժամեր Քիրիշյան «Ընդանիք»

քյան հանդեսը լուսանկարիչ-հեղինակի վերաբերմունքը: Հետևապես զարմանալի չպետք է լինի, որ լուսանկարչական արվեստում չեն բավարարվում բնության, մարդու կամ մարդու ստեղծած հրաշալիքների արտացոլմամբ, այլ օգտագործում են մի շարք հնարքներ ու ստանում գոյություն չունեցող երևույթներ պատկերող լուսանկարներ: Համակարգչի միջոցով կարելի է իրար կայցնել լուսանկարների ցանկացած դետալներ ցանկացած համակցություններով: Բայց դա կհամարվի արվեստ միայն այն դեպքում, երբ պարունակի իրականության ստեղծման կամ վերարտադրման հոգևոր տարր, երբ դիտորդին դրդի մտածել:

- ♦ **Վերցրե՛ք լուսանկարչական ապարատ ու փորձե՛ք ձեզ շրջապատող իրականության մեջ գտնել լուսանկարելու արժանի դրվագներ: Լուսանկարներով ստեղծե՛ք վահանակ:**

Կինոն արվեստի նոր տեսակներից է, որն առաջացել է նախանցյալ դարավերջին: «Կինո» բառը ծագում է հունարեն «կինեո»՝ շարժել, շարժվել բառից: Արվեստի այս տեսակն այսպես է կոչվել, քանի որ կինոյի գյուտարարներ Լյումիեր եղբայրներին հաջողվել է շարժել պատկերները՝ դրանց հաղորդելով կյանք: 1895 թվականին մարդիկ առաջին անգամ պատին փակցված սավանի վրա տեսան դեպի իրենց սլացող շոգեքարշ: Հանդիսատեսներից շատերը տեղներից թռան, քանի որ նրանց թվաց, թե ուր որ է շոգեքարշը կտրորի իրենց: Այդ պահից ի վեր սկսեցին կատարելագործել շարժանկարներ ցուցադրող գործիքները: 1930-ականներին «համր» նկարները դարձան «խոսուն», կինոյում կատարվեց պատկերի ու ձայնի համադրում, իսկ անցյալ դարի կեսերից ստեղծվեց գունավոր ֆիլմարտադրությունը: Կինոն դարձավ XX դարի ամենաազդեցիկ արվեստներից մեկը, իրականության վառ, գունեղ պատկերման իր կարողությամբ այն նվաճեց բազմաթիվ մարդկանց սրտերը: Ստեղծվեցին կինոարտադրության օջախներ, որոնք ստացան «երազանքների ֆաբրիկա» անվանումը, քանի որ կինոյի շնորհիվ մարդիկ հնարավորություն ստացան «ճամփորդել» տարածության ու ժամանակի մեջ, տեսնել վայրեր ու մարդկանց, որոնց իրական կյանքում դժվար թե երբևէ հանդիպեին: Կինոյի զարգացումը շարունակվում է առ այսօր: Այժմ արդեն իրականություն են եռաչափ տարածական ցուցադրումները, երբ հատուկ ակնոցների միջոցով հանդիսատեսն իր «քթին շատ մոտ» է տեսնում ամեն ինչ և երբեմն շոգեքարշ տեսած առաջին հանդիսականների նման ընկնում է աթոռից, քանի որ մտածում է, թե իր վրա է ընկնում, օրինակ, ժայռից պոկված քարը:

Կինոն ունի հանդիսականի վրա ազդելու բազմազան հնարավորություններ, ահռելի ներուժ, սակայն բարձրարժեք արվեստի գործ ստեղծելը կինոյում շատ բարդ է ու ծախսատար: Դա է պատճառը, որ ներկայումս հանդիսատեսին ավելի

հաճախ մատուցվում են նորօրյա իրականության մաս դարձած «օճառային օպերա» հորջորջվող անվերջանալի սերիալները: Դրանք իրենց հետ քերում են բավական լուրջ վտանգներ: Որպես կանոն, սերիալները ոչ թե արվեստագետի, այլ արհեստավորի ստեղծագործություններ են, դրանցում օգտագործվում են մտակաղապարներ, գովազդվում են վարքի՝ երբեմն ոչ ցանկալի ձևեր: Եթե հեղինակները կամ կատարողներն օժտված չեն տաղանդով, ապա երբեմն որևէ երևույթ քննադատելու մղումով իրականում դրա տարածման են նպաստում: Երեխաների համար սերիալներն էլ ավելի վտանգավոր են, քանի որ եթե ձևավորված հասուն մարդու համար դրանք ծառայում են որպես յուրատեսակ ժամանակ սպանելու գործիք, ապա նոր ձևավորվող անձի վրա դրանք ունենում են կրկնակի վնասակար ազդեցություն՝ ծնելով զանգվածային հասարակության անդեմ, «բոլորի նման» մարդու: Երեխաները երբեմն նմանակում են սերիալային հերոսների անտրամաբանական վարքը, անհասկանալի դրդապատճառներ ունեցող արարքները, գեղագիտական տեսանկյունից կասկածելի խոսելաոճը և այլն:



Թապրոնի և կինոյի սիրված դերասան Մեդր Մկրտչյանը երեխաների աչքերով

Կինոն նույնպես ունի տարատեսակներ. մուլտիպլիկացիոն կամ անիմացիոն ֆիլմեր, գեղարվեստական, հանրամատչելի, վավերագրական կինոնկարներ և այլն: Կինոարվեստի բարձրարժեք գործերն անուրանալի ազդեցություն են բողճում մարդկանց վրա, շատ արտահայտություններ կինոնկարներից մտնում են կյանք և ուղեկցում մարդկանց, *կինոն հնարավորություն է տալիս իրականության խոհափիլիսոփայական ընկալման՝ մարդուն տալով «նոր տեսողություն», որը սովորական իրականությանը մարդը սկսում է նայել ռեժիսորի աչքով:*

Հեռուստատեսություն: Ինչպես լուսանկարչության, այնպես էլ հեռուստատեսության դեպքում չեն դադարում վեճերն այն խնդրի շուրջ՝ արդյոք արվեստ է այն: *Հեռուստատեսությունն իրականության վերարտադրումն է ու դրա փոխանցումը քաղաքական մեծ հեռավորությունների վրա:* Տարածված է այն կարծիքը, թե հեռուստատեսությունը միջնորդ է արվեստի տարբեր տեսակների ու հանդիսատեսի միջև: Ներկայումս արբանյակների շնորհիվ երկրագնդի ցանկացած կետից կարելի է որսալ տարբեր հեռուստատեսային ալիքներ: Հեռուստատեսությունում շատ բան կա. այն ինֆորմացիայի՝ տեղեկույթի փոխանակման և զանգվածային դարձնելու ժամանակակից միջոց է, արվեստի տարբեր տեսակների ժողովրդականացման եղանակ, պատմության տարեգրությունը հիշեցնելու գործիք, գիտատեխնիկական նվաճումներին հաղորդակից դարձնող միջոց և այլն: Հեռուստատեսությունն այսօր երևի թե ամենամեծ լսարանն ունի, ինչի շնորհիվ դարձել է ազդեցիկ երևույթ հասարակության կյանքում: Հազարավոր մարդիկ իրենց քնակարաններում միաժամանակ վերապրում են նույն իրադարձությունները (սպոր-

տային խաղ, համերգ, փառատոն, քաղաքական հանդիպումներ և այլն): Բացի իր կատարած միջնորդի դերից (համերգ ցուցադրելիս հեռուստատեսությունը նպաստում է երաժշտության տարածմանը, կինոֆիլմ ցուցադրելիս՝ կինոյի և այլն), հեռուստատեսությունը ստեղծում է նաև արվեստի՝ միայն իրեն բնորոշ տարատեսակներ՝ այսպես կոչված զանազան նախագծեր, իրական ցուցադրումներ (ռեալիթի շոու), հեռուստականուրջներ, հեռուստաքննարկումներ և այլն: Առանձնապես հաջողված է հեռուստաքարտոնը:

Հեռուստատեսային արվեստի նորագույն ենթատեսակներից է տեսահոլովակը: Այսօր համակարգչային տեխնիկայի և բջջային հեռախոսների շնորհիվ իրականություն են դառնում նաև «պատվիրվող հեռուստաալիքները», որոնք ունեն միայն ընդհանուր ուղղվածություն (ցուցադրում են կինոնկարներ, տեսահոլովակներ կամ ֆուտբոլային խաղեր), իսկ թե այս կամ այն պահին ինչ կցուցադրվի, կախված է պատվիրող հանդիսատեսների ցանկությունից: Համակարգչային լեզուն օգտագործելով՝ նման ալիքներն իրենց կոչում են ինտերակտիվ՝ փոխներգործուն: Հեռուստատեսությունն ունի մշակույթի արժեքների ժողովրդայնացման մեծագույն ներուժ, սակայն ցավոք, ելնելով անմիջական շահույթի շարժառիթներից ու գովազդատուների ցանկություններից, հաճախ այն ավելի շատ նպաստում է հեշտ յուրացվող, բայց ցածրարժեք գործերի տարածմանը: Հեռուստատեսությունն դիտելն ուշադիր ընտրություն կատարելու դեպքում կարող է զարգացնել հանդիսատեսին, սակայն չպետք է մոռանալ, որ չափն այստեղ նույնպես կարևոր է, քանի որ թեպետ հետաքրքիր հաղորդումները կարող են շատ լինել, սակայն անշարժ նստած ժամերով դիտելն ընդարմացնում է մարմինը, ինչպես նաև միտքը և ստեղծագործել-որոնելու փոխարեն դրդում լինել պասիվ սպասող:

ՀԱՐՅԵՐ ՄՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Փորձի ք *Դավիթ Անհաղթի դասակարգմանը հերքելով՝ բաժանել վերոնշյալ արվեստներն ըստ օգտակար կամ անօգուտ լինելու: Ի՞նչ հիմունքներով կարող եք հանգել: Իսկ կա՞ն արդյոք արվեստի վնասակար տեսակներ:*
2. Կա՞ արվեստի որևէ տեսակ, որի մասին նշված չէ: Գրե՛ք տեղեկույթ այդ արվեստի մասին ու բերե՛ք դասարան:
3. Հնարավո՞ր է դասակարգել արվեստի տեսակներն ըստ մարդու վրա ունեցած ազդեցության: Ինչո՞ւ: Եթե այո, ապա ի՞նչ հերքականությամբ:
4. Ի՞նչ եք կարծում: համակարգիչը և ինտերնետը արվե՞ստ են, թե՞ ոչ: Մեկնաբանե՛ք չեք պատասխանը:

ԵՈՒՉԱԳՐԱԿ

✎ Ընտրե՛ք արվեստի մի տեսակ ու դրա մասին պատրաստե՛ք հինգրոպեանոց հաղորդում: Օգտագործե՛ք հանրագիտարաններ, տեղեկագրքեր, ինտերնետ և այլն:

ԹԵՄԱ 4. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԻՂԵԱԼ ԵՎ ՃԱՇԱԿ

ԴԱՍ 12. ԻՆՉ Է ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԻՂԵԱԼԸ

ԸՆԹԵՐՑԵՔ ՏԵՔՍԸ

Անեն արվեստը արտահայտում է իր ժամանակի իդեալը, ուրեմն այն հասկանալու, ճաշակելու համար պետք է հասկանալ այդ ժամանակի իդեալը և այդ ժամանակի միջոցները, արտահայտչական տեխնիկան:

Միջոցները սրեղծում են իդեալ, և իդեալը սրեղծում է միջոցներ: Օրինակներ՝ Եգիպտոս – քարը և հավիդեղնականությունը, Հունաստան – մարմարը և երկնային գեղեցկությունը:

Երվանդ Քոչար

Իդեալն ինչ-որ բանի կարարելարիպն է, այն բարձրագույն վիճակը, որին կարող է հասնել տվյալ առարկան կամ երևույթը: «Իդեալ» բառը ծագում է հունարեն «իդեա» բառից, որը նշանակում է գաղափար, կերպար, տեսիլ: Իդեալը պատկերացնելու համար մարդիկ վերանում են իրական առարկաների կամ երևույթների մի շարք հատկություններից՝ թողնելով միայն ամենակարևոր հատկությունները, որոնք էլ կազմում են իդեալի էությունը (օրինակ՝ ֆիզիկայում օգտագործվում է «իդեալական գազ» հասկացությունը, որն ընդամենը գիտական վերացարկում է):

♦ Ի՞նչ եք կարծում, կա՞ն արդյոք իդեալական մարդիկ, պետություններ, կա՞ արդյոք իդեալական ընկերություն: Ինչո՞ւ:

Իդեալը նպատակ է, որին ամբողջովին հասնելն անհնար է, բայց որը հանդես է գալիս որպես կողմնորոշիչ, քայքայչակ, և որին հասնելու ջգրումը մարդկանց ջրդում է գործել: Իդեալի ընտրությունը կամ ձևավորումը կատարվում է առանձին մարդու և հասարակությունների գոյության տարբեր փուլերում տարբեր ձևով: Եթե երիտասարդների իդեալը գեղեցիկ մարմնաձևեր ունեցող մարդը կարող է լինել (հետևաբար նրանք կգրադվեն մարմնակրթությամբ, պարով՝ իրենց իդեալին մասնավոր համար), ապա հասուն տարիքի մարդու համար իդեալ կարող է լինել ինքնարտահայտված, ինքն իրեն գտած, իրենում եղած պոտենցիալն իրականացրած մարդը՝ անկախ արտաքին համամասնություններից: Իմաստասերների պնդմամբ՝ իդեալներ չունեցող մարդիկ կարող են վտանգավոր լինել հասարակության համար...

♦ Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ...

Կարող են լինել տարբեր իդեալներ. պետության, հասարակական հարաբերությունների, բարոյականության և այլն: Նման իդեալները, որպես կանոն, հան-

դես են գալիս որպես ուղենիշ՝ իրականում մնալով անհասանելիի ոլորտում: Բայց կա մի իդեալ, որն իրականանում է, այսինքն՝ ձեռք է բերում առարկայական, ընկալելի կերպար: **Կա գեղագիտական իդեալն է, որը ծնվելով մարդկանց հոգևոր որոնումներում՝ մարմնավորվում է արվեստի գործերում:**

Գեղագիտական իդեալը գեղեցիկի կատարելատիպն է: Չկա մեկ ընդհանուր գեղագիտական իդեալ ողջ մարդկության կամ մարդկային հասարակության արած բոլոր դարաշրջանների համար: Ընդհակառակը, *յուրաքանչյուր դարաշրջանի, յուրաքանչյուր մշակույթի բնորոշ է գեղեցիկի սեփական իդեալը:* Ընդ որում՝ *յուրաքանչյուր գեղագիտական իդեալ կառուցվում է մարդու որոշակի իդեալի հիման վրա*, քանի որ, ինչպես ժամանակին նկատել է հին հույն իմաստասեր **Պրոպագորասը**. «Մարդն է բոլոր իրերի չափանիշը՝ գոյություն ունեցողների, որ դրանք գոյություն ունեն, և գոյություն չունեցողների, որ դրանք գոյություն չունեն»: Այս դրույթը կարելի է հասկանալ այսպես. մարդն է բոլոր իրերի չափանիշը, քանի որ բոլոր իրերին իմաստ հաղորդողը, դրանք ճանաչողն ու տվյալ դեպքում գեղեցիկ համարողը մարդն է:

Առաջին հայացքից թվում է, որ արվեստագետները գլուխգործոցներ, իրոք իդեալական գեղեցկություններ են ստեղծում՝ ելնելով իրենց ներսում եղած անհատական հակումներից ու իրենց սեփական արժեքային համակարգից: Սակայն առավել խորը վերլուծության ժամանակ պարզվում է, որ *յուրաքանչյուր դարաշրջանի մարդիկ, գիտակցված թե՛ ակամա, ունենում են ընդհանուր մղումներ, պատկերացումներ, որոնց հիմքում ընկած է լինում իրենց դարաշրջանում կամ մշակույթում ընդունված չափանիշների ամբողջությունը:* Օրինակ՝ անտիկ քանդակագործության, ճարտարապետության հիասքանչ գործերում արտացոլված գեղագիտական իդեալը հիմնվում էր ներդաշնակ, մեծ տիեզերքի համանմանությամբ իրեն փոքր տիեզերք համարող մարդու իդեալի վրա: Միջնադարյան Եվրոպայի գուսպ, հոգեկան կատարելությունը մարմնականից գերադասող գեղագիտական իդեալն իր հիմքում ուներ աստվածամեծար կրոնական մարդու կատարելատիպը: Իսկ Վերածննդի վարպետները ստեղծեցին առ այսօր չգերազանցված արժեքներ, քանի որ նրանց գեղագիտական իդեալը ելնում էր ունիվերսալ, կատարյալ, աստվածային մարդու իդեալից: Ինչ խոսք, *չի կարելի անկրեսել արվեստագետի անհատականությունն ու փրապեպոզ հասարակական չափանիշներին հակադրվելու կարողությունը, սակայն գեղագիտական իդեալն արտահայտում է, այսպես ասած, դարաշրջանի ոգին, որի շրջանակներում փարբեր սրեղծագործողներ կարող են արարել լրիվ փարբեր գեղեցկություններ:*



Հովհաննես Այվազովսկի. «Փոքրիկ մեջ»

Գեղագիտական իդեալն իրականանում է ոճի ու ճաշակի միջոցով: **Ոճը այն չեն է, որով արվեստագետը նյութականացնում է իր հոգում եղած իդեալը:** Ոճն ունի բովանդակային և ձևական կողմեր: **Բովանդակային կողմն** այն է, թե ինչպիսի բովանդակություն է ընտրում հեղինակն իր իդեալը մեզ հասցնելու համար: Օրինակ՝ պատկերելով բնության ահեղ երևույթ՝ փոթորիկ ծովի վրա՝ **Հովհաննես Այվազովսկին** պատկերել է ազատ մարդու իր իդեալը. նույն բանը նա կարող էր անել նաև այլ բովանդակության ներկայացմամբ: **Ոճի ձևական կողմն** իրականանում է գույների, տարածական ձևերի, բառապաշարի և այլ հանգամանքների ընտրությամբ, որոնք բառի բուն իմաստով ձևավորում են իդեալը (հասկանալի է, որ արվեստի տարբեր տեսակներում ձևերի ընտրությունը պետք է տարբեր լինի): Օրինակ՝ **Արշիլ Գորկին** «Նկարիչն ու իր մայրը» կտավում, ձգտելով ցույց տալ կորցրած երջանկության կարոտախոտն ու ցավը, չի պատկերել մոր ձեռքերն ամբողջությամբ՝ դրանց փոխարեն աչիտակ ներկաբիծ թողնելով: Աստիճանաբար խտացնելով իրեն համակած տագնապի ու անելանելիության զգացումների ներկայացումը՝ Գորկին հետագայում հրաժարվում է կոնկրետ ձևերի պատկերումից՝ նկարելով վերացական խորհրդանիշներ, որոնք արտահայտում են ցավ, կորուստ, կարոտախոտ և այլն: Այն ոճը, որով նկարում էր մեր մեծ հայրենակիցը, հետագայում անվանվեց *վերացական էքսպրեսիոնիզմ*¹:



Արշիլ Գորկի «Նկարիչն ու իր մայրը»

Ոճն արվեստագետին հնարավորություն է տալիս ընկալողին ներկայացնել իր գեղարվեստական ճաշակը: Իսկ ի՞նչ է ճաշակը: **Ճաշակը մարդու հոգևոր կերպվածքի այնպիսի բնութագիր է, որի շնորհիվ վերջինս կարողանում է գեղեցիկը, վեհը, ներդաշնակը զանազանել ոչ գեղեցիկից, աններդաշնակ-անհամամասնականից:** Եթե ոճի խնդիրը հուզում է հիմնականում ստեղծագործողին (թեպետ կարող է լինել նաև խոսելու ոճ, շփվելու, մտածելու ոճ և այլն, որը բնորոշ է բոլորին), ապա ճաշակի ձևավորման խնդիրը շատ կարևոր է տվյալ հասարակությունը կազմող բոլոր անհատների համար: **Ճաշակն առաջանում է համապատասխան գեղագիտական իդեալի շրջանակներում. չի կարող լինել վերացական ճաշակ բոլոր ժամանակների ու մշակույթների մարդկանց համար:** Այս երևույթը վաղուց է նկատվել, երբ մեր նախնիները պնդել են, թե ճաշակի հարցերում անիմատ է վիճաբանելը: Սակայն յուրաքանչյուր մարդ ունի նաև միայն իրեն բնորոշ ճաշակի զգացում, որում արտացոլվում են նրա անկրկնելիությունն ու անհատական աշխարհընկալումը:

¹ Էքսպրեսիոնիզմ – XX դարի գեղարվեստական ուղղություն, որի նպատակն էր արտահեղել, արտահայտել մարդու ներսում կուտակված տագնապը, վախը անորոշության հանդեպ:



**Սերգեյ Փարազանովի
տուն-թանգարանի սրահներից մեկը**

շոցով, այլ ձգարելու մարդկության կողմից սրեղծված բարձրարժեք գործերին, որոնք առկա են մեր հասարակության մշակութային կյանքի բազմաթիվ ոլորտներում: Դաշակի ձևավորումն անվերջանալի գործընթաց է, որը մարդուն ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում: Սակայն պատանեկության և երիտասարդության տարիները շատ կարևոր են, քանի որ մարդկանց մեծամասնությունը, ձևավորելով որոշակի ճաշակ, հետագա ողջ կյանքում հետևում է դրան:

Հաջորդ դասերի ընթացքում կանդիդատուհանք գեղարվեստի մի շարք ոճերի, որոնց ազդեցությունն առ այսօր շատ մեծ է հասարակական կյանքում:

ՀԱՐՅԵՐ ԱՏՈՐԵԼՈՒ ՀՍՄՐ

1. Ի՞նչ է գեղագիտական իդեալը:
2. Ի՞նչ գեղագիտական իդեալներ կարող եք նշել:
3. Ի՞նչ է ոճը: Ի՞նչ դեր ունի այն գեղագիտական իդեալի սրեղծման մեջ:
4. Ի՞նչ է գեղագիտական ճաշակը:
5. Արվեստի այն գործերը, որոնց հեյտ առնչվում եք, ըստ չեզ, բարձրանաչա՞կ են, թե՞ ցածրանաչակ: Ինչո՞ւ:

ԱՌՁՆՈՒԲՈՒՔ

Ճ Հետազոտություն կատարեք ձեր համայնքում. քարտեզագրե՛ք ձեր համայնքը՝ նշելով նրանում եղած ճարտարապետական կառույցները, քանդակները, խճանկարները և այն ամենը, ինչը գեղեցիկ է: Ուսումնասիրե՛ք այդ գործերից մեկ-երկուսի պատմությունը, կազմե՛ք պատասա:

Ճ Կազմակերպե՛ք քանավեճ-գրույց ճաշակի մասին, վերլուծե՛ք բարձրարվեստ գործերի տարբերությունը զուտ ժամանցային, այսպես կոչված՝ զանգվածային մշակույթի գործերից: Փորձե՛ք հասկանալ, թե ձեր կյանքում նշվածներից որն է ավելի մեծ տեղ գրավում:

ԳԱՄ 13. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԻԴԵԱԼԻ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԳԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

ԸՆԹԵՐՅԵՔ ՏԵՔՍԵ

Գեղեցիկի մասին պատկերացումներ մարդն ունեցել է իր առաջացման վաղն-ջական ժամանակներից ի վեր: Յուրացնելով միտքն ու արտահայտելով այն խոսքում՝ մարդը, ի թիվս այլ կարգի դատողությունների, արել է նաև գեղագիտական գունավորում ունեցող դատողություններ: Գեղեցիկի ընկալումն այնպես է միահյուսված իրականության ընկալում-իմաստավորման հետ, որ անհնար է այն առանձնացնել: Երբ մարդը տեսնում է ծառ-ծաղիկ, ամպ, ջրվեժ կամ ցանկացած այլ բնական երևույթ, ընկալելով դրա ձևն ու շարժումը, միաժամանակ մարդը նաև գիտակցում է, որ այն, օրինակ, գեղեցիկ է կամ հաճելի, ահարկու է կամ ծիծաղելի և այլն: Նման դատողություններն անվանվում են արժեքային կամ գնահատման, քանի որ ընկալելով իրականությունը՝ մարդը միաժամանակ նաև գնահատում է այն իր համար արժեքավոր լինելու տեսանկյունից: Գեղագիտական արժեքներն այնքան խորն են արմատավորված մարդու գիտակցության մեջ, որ նույնիսկ որևէ բանի մասին գեղագիտական դատողություն չանելու դեպքում էլ մենք, հետագայում մտաբերելով անցյալում ընկալվածը, կարող ենք տալ դրա գեղագիտական գնահատականը:

Հասկանալի է, որ մեր հեռավոր նախնիները նույնպես չէին կարող չունենալ մարդ տեսակին բնորոշ գեղեցիկի գգացումը, որը պետք է արտահայտություն գտներ նրանց ստեղծագործություններում, որոնց մի մասն է միայն հասել մեր օրեր:

Նախնադարյան գեղագիտական իդեալի մասին խոսելը բավական պայմանական կարող է լինել, քանի որ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չկա, սակայն քարանձավների պատերին արված նկարների, պահպանված արձանիկ-քանդակների շնորհիվ կարելի է անել որոշ եզրակացություններ: *Հնադարյան գեղագիտական իդեալին բնորոշ է կենդանիների հանդեպ մեծ ուշադրությունը* (կենդանին միաժամանակ և՛ որսի նպատակն էր, և՛ աստվածություն), *բնությունը պարկերվում էր, որպես կանոն, կրրորված, հարվածաբար, ինչը նշանակում էր, որ իրականության միասնականության ընկալում դեռ չկար, ավելի կարևոր էին առանձին դետալները*: Մարդու պատկերումը շատ նման էր կենդանիների պատկերմանը. ընդգծված էին մարմնաձևերը, իսկ դեմքը, որպես կանոն, արտահայտիչ չէր: Հնարավոր չէ առանձին նկարներում կամ, օրինակ, «պալեոլիթյան Վեներաների» արձանիկներում տեսնել անհատական դեմքեր, դրանք ընդհանուր են ու «անդեմ»:



*Հին քարեդարյան
«Վեներաների» արձանիկներ*



Միրոն

«Մկաժտակ նկարող»
Ուշադրություն դարձրեք
հին հույն մարզիկի մարմնի
կապարելությանը

գացումը, ուժը, կորույրը և նրբագեղությունը միաժամանակ: Ասորական արվեստի գործերում տեսնում ենք բիրտ արքայական ուժի պաշտամունք, ահասարսուռ դիցաբանական կենդանիների ու մարդկանց մարմնական պատիժների պարկերում: Հին Եգիպտոսի մարդկանց համար կարևոր է եղել անմահության որոնումը, ինչի նպատակով նրանք ստեղծել են հին աշխարհի պահպանված հրաշալիքները՝ բուրգերը, որոնք խորհրդանշում են հանձին փարավոնի մարդու ասարվածացումը, ուժն ու չգտնվող առ երկինք - արև: Արևելքում գեղեցիկի չափանիշ է համարվել բնականը, և իդեալը եղել է բնության օրենքներին համապատասխան շարժվելը, բնությանը չվնասելը: Այդ իդեալից ելնելով՝ ծնունդ է առել մի ճարտարապետություն, որի ձևերը, ի տարբերություն արևմտյան երկրաչափական պարզ մարմինների ձևերի (խորանարդ, գլան և այլն), նմանակել են բնական երևույթների ձևերը: Արևելքում ճարտարապետական կառույցները ստեղծվել են այնպես, որ կարծես իրենցով շարունակել են բնության համամասնությունները՝ չհակադրվելով միջավայրին, այլ լրացնելով այն: Հին Հռոմում գեղագիտական իդեալի մասնիկ է համարվել մարդու հպարտու-



Քոյուչի վանական համալիրը
Ճապոնիայում
Նկարել է թե շինությունները որքան են
նման շրջապատող ծառերին

թյուն հանդիսացող տոհմային պատկանելությունը, դիրքն ու ազդեցությունը: Հունական քանդակներում մարդը, որպես կանոն, մերկ է, որպեսզի վեր հանի իր մարմնի կատարյալ ներդաշնակությունը: Իսկ հռոմեական քանդակներում տեսնում ենք իր խավին բնորոշ ամենագեղեցիկ հագուստներով ու գլխանոցներով զարդարված մարդկանց, որոնք ինչ-որ կերպ ցուցադրում են նաև իրենց տոհմիկ պատկանելության նշաններ (ձեռքին կարող է ունենալ նախնու կիսանդրին, գլխին՝ պսակ, սաղավարտ կամ քազ և այլն):

Միջնադարի գեղագիտական իդեալն աստվածայինն է, հոգևորը, իսկ քնական-մարմնականը համարվում է անկալար, ուրեմն պատկերելու ոչ արժանի: Ճարտարապետական կառույցները՝ եկեղեցիները, վեր են խոյանում իրենց շրջապատող բնությունից, որպեսզի ցույց տան աստվածային հզորության անհամեմատ լինելը մարդուն շրջապատող բնական միջավայրի

հետ: Գիմնապատկերում ամենակարևոր դետալ են համարվում աչքերը՝ որպես հոգու հայելիներ, որոնք պատկերվում են երբեմն անբնականորեն մեծ, միշտ արտահայտիչ՝ ստվերում թողնելով քիթը, շուրթերը և այլն: Մարդկանց մարմինը սովորաբար պատկերվում է շղարշով ծածկված՝ ընդհուպ մինչև ձեռքերի դաստակները: **Հայկական միջնադարյան արվեստում** առանձնապես կարևոր են եկեղեցիների ճարտարապետական կառույցները, որոնցում արտահայտվում է հայ մարդու վերաբերմունքն աստվածայինի ու բնության հանդեպ: Որպես կանոն, եկեղեցիները կառուցվել են բնության այնպիսի գեղեցիկ անկյուններում, որ արտաքինից դրանք դիտողներին հիացմունք են պատճառել ու հիշեցրել թե՛ բնությունը, թե՛ տվյալ եկեղեցու շենքը ստեղծած Աստծո մեծության մասին (Միջնադարում հավատացած էին, որ ամեն ինչ ստեղծում է Աստված՝ որոշ բաներ ստեղծելու համար մարդուն որպես գործիք օգտագործելով): Եվ որոշ վանքեր, կառուցվելով սև քարից, իրենց ողջ պատկերով ասես նմանվել են վեղարավոր վանականի, որն աշխարհից հեռու լուռ ու հանդիսավոր խորհում է աստվածային արարչագործության վեհության մասին: Միջնադարյան հայկական արվեստի բովանդակությունն են կազմել հիմնականում աստվածաշնչյան պատմությունները, իսկ գեղարվեստի ժանրերից կատարելության է հասել մանրանկարչությունը: Որոշ մանրանկա-



Ռեյմոնի Աստվածամոր փանդարը Զորանիսայում, XII դ.



Գրիգոր Նարեկացի (951-1003) Նկարիչ՝ Գրիգոր Սկևռացի

րիչներ հասել են կերպարների պատկերման հուզական լարվածության ու մեծ համոզականության:

Գրականության մեջ **Գրիգոր Նարեկացին** արտացոլում է ողջ մարդկության ցավով փառասպող, իրական կյանքում աստվածայինի պակասը զգացող ու մարդկանց արարները բժշկել ցանկացող մարդու իդեալը: Մարդ, որի համար ուրիշի ցավ չկա, որն անհասկանալի է, քանի որ ի վիճակի է սրբի խորքից խոսք ասել Աստծուն: Մարդու մարեկացիական ընկալումն արդիական է առ այսօր, քանի որ մարդու ներաշխարհում կատարվող վայրիվերումների արդի նկարագրությունները միայն իրենց բարձրագույն դրսևորումներում են կարող հասնել Նարեկացու անմահ ստեղծագործության մակարդակին:



Սանդրո Բոտիչելլի. «Վաներայի ծնունդը»

Վերածննդի դարաշրջանում

վերած է արվում վերածնել անտիկ աշխարհի գեղագիտական իդեալը: Սակայն ստեղծված գեղեցիկն արդեն մի նոր որակի գեղեցկություն էր, քանի որ քրիստոնեության հազարամյա պատմությունն անտիկ հեքանոս բացմիտ գեղեցկությանը տվել էր համեստացած, աստվածայինի անսահմանությունը զգացող, բայց և միա-

ժամանակ կատարելության ձգտում ունեցող մարդու բնութագրեր: **Վերածննդի գեղագիտական իդեալը** բազմակողմանի՝ ունիվերսալ մարդն է, որի մեջ այս դարաշրջանի արվեստագետներն իրոք տեսնում են աստվածային արարչագործության պակասը: Բնությունը նույնպես ընկալվում է նորովի, ու յուրաքանչյուր բնական թրթիռ դառնում է արվեստի կողմից պատկերվելու արժանի երևույթ:

Վերածննդին հաջորդում է **կլասիցիզմի՝ դարաշրջանը**, որի իդեալը դասական հունա-հռոմեական գեղեցկությունն էր՝ պարփակված որոշակի իխար կանոնների շրջանակներում: Կլասիցիստներն ի վիճակի չէին համոզես բերելու Վերածննդի ստեղծագործողների հախուռն թափը և, բացի այդ, ուզում էին անտիկ գեղեցկությանը տալ տրամաբանական մեկնաբանություն: Այս դարաշրջանում մարդու հերոսականության և գործի համար ինքնանվիրաբերման գաղափարն է խիստ կարևորվում:

ՀԱՐՑԵՐ ԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ներկայացված իդեալներից որի՞ մասին կցանկանայիր ավելի շատ իմանալ: Պատրաստ եք որոնումներ կատարել այդ ուղղությամբ:
2. Կա՞ որևէ գեղագիտական իդեալ, որ չեզ փարձրիմակ է բովում: Ինչո՞ւ:
3. Ձեր կարծիքով, ո՞րն է արդի հայաստանցու գեղագիտական իդեալը:

1 Կլասիցիզմ – (լատ. «կլասիկոս»՝ դասական, օրինակելի) գեղարվեստական ոճ XVII-XVIII դդ. եվրոպական արվեստում:

ԳԱՍ 14. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԻԳԵԱԼԻ ՓՈՒՍԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԳԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

ԸՆԹԵՐՅԵՔ ՏԵՔՍԸ

Առօրյա խոսակցություններում երբեմն կարելի է լսել նման արտահայտություններ. «Այս *ռոկոկո* ծաղկամանը գեղեցիկ է», «Շատ *ռոմանտիկ* տղա է», «Երգիչների հագած *բարոկկո* ոճի զգեստները չէին համապատասխանում իրենց ներկայացրած երաժշտական նյութին», «Փոքր-ինչ *ռեսլիսպ* եղիր» և այլն:

♦ Իսկ գիտե՞ք, թե ինչ են նշանակում ընդգծված բառերը, երբևէ օգտագործո՞ւմ եք դրանք:

Բարոկկոն, ռոկոկոն, ռեսլիզմն ու ռոմանտիզմը նոր դարաշրջանի եվրոպական մշակույթին բնորոշ ոճային ուղղություններ են, որոնք ենթադրում են ոչ միայն արվեստի գործերի որոշակի կատարելատիպ, այլև մարդու որոշակի իղեալ: Ստորև կներկայացվեն բարոկկոյի, ռոկոկոյի, ռեսլիզմի և ռոմանտիզմի գեղագիտական իղեալի մի շարք բնութագրեր՝ ելնելով այդ ուղղությունների հիմքում ընկած մարդու պատկերացումից:

Խմբային աշխատանք

Դասարանը բաժանվում է չորս խմբի, որոնցից յուրաքանչյուրը կարդում սովորում է իր հատվածը՝ դառնալով այդ հատվածի փորձագետը, որպեսզի հետագա կազմվելիք խմբերում տվյալ հատվածը ներկայացնի մյուս անդամներին:

Կարդում է առաջին խումբը

Բարոկկոյի (պորտուգալերեն՝ «պերոլա բարոկա» – պաճուճագարդ մարգարիտ) գեղագիտական իղեալը տարածված էր Եվրոպայում XVII-XVIII դարերում և ելնում էր հաճույքներ սիրող, բայց միաժամանակ հերոսական մարդու իղեալից: Բարոկկոյի դարաշրջանի հագուստը, շինությունները, շփման ոճը և, վերջապես, արվեստը, բոլոր տարբերություններով հանդերձ, ունեն ընդհանրություններ, որոնցից կարևորները կթվարկվեն ստորև:

Հաճոյապաշտ-հերոսական մարդուն ձգում է *ազնվածին բարդությունը և անհանգիստ վեհությունը*: Եթե Վերածննդի արվեստին բնորոշ է անվրդով վեհությունը, ապա բարոկկոյի գեղագիտական իղեալը պետք է լինի շարժման մեջ, վեհ, բայց անդադար: Բարոկկոյի գեղագիտական իղեալին բնորոշ է նաև բարդությունը, բայց դա խճճված, առավել ևս խառնիճաղանջ բարդություն չէ, այլ ազնիվ, ներդաշնակ ու հաճելի զգացումներ առաջացնող բարդություն:



*Պեյրեր Պաուլ Ռուբենս
«Շղթայված Պրոմեթեոս»*

Ստորև ներկայացվում են բարոկկոյի գեղագիտական իդեալի որոշ բովանդակային ու ձևական (այսինքն՝ բովանդակությանն ու ձևին առնչվող) չափանիշներ:

Բովանդակային չափանիշներ.

- հիմնականում անտիկ և բիբլիական թեմաներ,
- հաճելին ու հերոսականը զուգակցող դրվագներ,
- արխատոկրատների պատկերում, հագուստների ու միջավայրի ճոխություն,
- անգամ նատյուրմորտներում՝ ճոխության առկայություն, նրբագեղ ու ազնվագարն մարդու իրեր,
- շարժման պաշտամունք, պաթետիկ հերոսականություն,
- առողջ, ծաղկուն մարմինների պատկերում:

Ձևական չափանիշներ.

- տարրերի դինամիզմ,
- ձևերի, ուրվագծերի բուռն խաղ (օրինակ՝ փետուրների, զիգագազան գծերի առկայություն),
- լուսաստվերի բռնկուն անցումներ,
- գունային կտրուկ փոխակերպումներ (ամենավառ գույնին հաջորդում է ամենամուգը և այլն),
- կոմպոզիցիան անկայուն է (շարժման շարունակականության պատրանք):

Կարդում է երկրորդ խումբը

Ռոկոկո (ֆրանսերեն՝ «ռոկայլ» – ոճավորված խեցի) ոճը զարգանում է XVIII դարի Եվրոպայում՝ սկզբնավորվելով որպես դեկորատիվ ոճ՝ բարձր ազնվականության տոնախմբություններն ու զվարճությունները գեղեցկացնելու նպատակով: Ռոկոկոյի գեղագիտական իդեալը ծագում է բարոկկոյի իդեալից, երբ բարձրատոհմիկ ազնվականությունը, տրվելով հաճույքներին, հրաժարվում է հերոսականությունից և դրա հետ կապված լարումից ու պայքարից (ի դեպ, գուտ հերոսական մարդու իդեալից ծնունդ առավ կլասիցիզմի գեղագիտական իդեալը): Այս գեղագիտական իդեալը ցանկալի էր կյանքի իմաստը հաճույքների մեջ որոնող արխատոկրատ խավերի ներկայացուցիչների համար: Ռոկոկո ոճին բնորոշ է նրբագեղությունը, մանր դետալների հանգամանալից մշակվածությունը և ուշադրությունը անխռով, խաղաղ, գոյտրիկ հաճույքների հանդեպ:



Ճան Օնորե Իրագոնար «Մոնսուսկ»

Ստորև ներկայացվում են ռոկոկոյի գեղագիտական իդեալի որոշ բովանդակային ու ձևական չափանիշներ:

Քովանդակային չափանիշներ.

- հիմնականում առօրյա, բայց ինչ-որ նուրբ հաճույք պարունակող թեմաներ,
- եթե անտիկ և բիրլիական թեմաներ, ապա դիցաբանական և հովվերգական սյուժեների թեթևամիտ մեկնաբանությամբ,
- գողտրիկ բնապատկերներ, շինությունների գողտրիկ անկյուններ,
- հարստության առկայություն, բայց ոչ շլացուցիչ փարթամ, այլ նրբորեն հմայող:

Ձևական չափանիշներ.

- տարրերի հավասարակշռվածություն,
- մեղմ ու աչք շոյող երանգների օգտագործում,
- պարուրագծերի կիրառում մեծ չափերով,
- հազուստի, միջավայրի դետալների մանրամասն մշակում,
- զարդանախշի նրբագեղ ու քմահաճ դիզայն,
- կոմպոզիցիայի կայունություն:

Ռոկոկո ոճի գործը պետք է ընկալողի մեջ առաջացնի կյանքի հաճույքները վայելելու ձգտում, տազնապ առաջացնող դիմախաղեր, ձայներ, գույներ չպետք է լինեն:

Ի տարբերություն բարոկկոյում ընդունված արտասովոր մեծ չափերի ու տարերքների պաշտամունքի՝ ռոկոկոյի գեղագիտական իդեալին բնորոշ է գողտրիկության պաշտամունքը:

Կարդում է երրորդ խումբը

Ռեալիզմի (լատիներեն՝ «ռեալ» – իրական) գեղագիտական իդեալը տարածվում է Եվրոպայում XIX դարից սկսած՝ հիմքում ունենալով «իրական մարդու» իդեալը: Չէ՞ որ իրական են թե՛ հաճոյապաշտ, թե՛ կրոնական, թե՛ հերոսական մարդիկ: Մյուս կողմից էլ, քանի որ իդեալը մտակաղապար է, նպատակ, այլ ոչ թե իրականություն, իսկ իրական մարդը հակասական է, շարժուն, փոփոխական, ստացվում է, որ «իրական մարդու» իդեալը նույնպես պայմանական է, ու սվեյիլավ կլինի «իրական» բառն այստեղ փոխարինել «տիպական» բառով: Տիպական նշանակում է ամենատարածվածն ու ամենաբնորոշը, հետևապես կարող է լինել արիստոկրատի տիպ, բանվորի տիպ, ռազմիկի տիպ և այլն:

Ռեալիզմի գեղագիտական իդեալն իրականության մեջ եղած ընդհանրությունների ու օրինաչափությունների պատկերումն է: Ռեալիզմի տիպական մարդուն քնորոշ է գործունյա և պարզ լինելը:



Ալբրեխտ Անկեր
«Աղջիկը դամիսոյով»

Ստորև ներկայացվում են ռեալիզմի գեղագիտական իդեալի որոշ բովանդակային ու ձևական չափանիշներ:

Բովանդակային չափանիշներ.

- արվեստագետի ժամանակին ու երկրին բնորոշ ցանկացած սյուժե (նույն հաջողությամբ կարող են պատկերվել մութացիկի և ամենահարուստ մարդու տիպեր),
- անախի և բիրլիական սյուժեներից խուսափում,
- պարզության և անմիջականության պաշտամունք,
- շարժման, կենսական ռիթմի պատկերում, կյանքի շնչի առկայություն,
- առօրյա-կենցաղային տեսարաններ,
- պատկերվողի ճշմարտացիության (իրականությանը նման լինելու) պահանջ:

Ձևական չափանիշներ.

- տարրերը տիպական են,
- միջավայրը, իրերը, մարդիկ բնական են, սարքովի ոչինչ չպետք է լինի,
- կոմպոզիցիան միասնական է, կենդանի,
- ռեալիստական գործերը ավարտուն են, չեն հանդուրժում քերասացություն:

Ռեալիզմի գեղագիտական իդեալն արվեստի միջոցով իրականության համընդգրկուն պատկերումն է: Ռեալիստները նույնիսկ համոզված էին, որ իրականությունը հենց այն է, ինչը պատկերված է իրենց գործերում: Մակայն չպետք է մոռանալ, որ ոչ մի առանձին իրական մարդ չի կարող լրիվ տիպական լինել, նա միշտ ունի անկրկնելի կողմեր, որոնց պատկերումն էլ ռոմանտիզմի գեղագիտական իդեալն էր:

Կարգում է չորրորդ խումբը

Ռոմանտիզմը (Ֆրանսերեն «ռոմանտիկ» – արտասովոր, ֆանտաստիկ, գեղատեսիլ)՝ որպես գեղարվեստական ուղղություն և ընդհանրապես մտքի ոճ, առաջանում է XVIII դարում Գերմանիայում: Ռոմանտիզմի գեղագիտական իդեալը հիմնվում է ազատ մարդու իդեալի վրա և հակադրվում կլասիցիզմի կարգուկանոնին անտրտունջ ենթարկվող հերոսական մարդու իդեալին: Ազատ մարդու իդեալը ենթադրում է ազատություն թե՛ տարածական, թե՛ ժամանակային կապանքներից: Ելնելով դրանից՝ ռոմանտիկները պատկերում էին հեռավոր աշխարհներ, իդեալականացնում էին անցյալը: Ռոմանտիզմի ազատ մարդը սահմանափակված չէ ոչ մի բանով, գուցե թե միայն սեփական երևակայությամբ. նա կարող է անել ինչ ուզում է, ապրել ինչպես ուզում է: Կարգուկանոնից հրաժարունը բերում է քառսայնության, փոթորկի, անորոշության, անվերջության պաշտամունքի: Ռոմանտիզմի գեղագիտական իդեալի համար կարևորը անհատականն է, անկրկնելին, արտասովորը, իսկ ընդհանուրը, օրինաչափը երկրորդական են:

Ստորև ներկայացվում են ռոմանտիզմի գեղագիտական իղեալի որոշ բովանդակային ու ձևական չափանիշներ:

Բովանդակային չափանիշներ.

- էկզոտիկ վայրերի ու միջնադարյան կյանքի իղեալականացված պատկերում,
- հեղինակին ժամանակակից առօրյա-կենցաղային սյուժեների հանդեպ հեռաքրքրության բացակայություն,
- պայքարի ու շարժման պաշտամունք,
- մղում դեպի անորոշությունը, քառասյունությունը և անվերջությունը,
- անսովոր հագուստներ և միջավայր,
- քերասացություն:



Հովհաննես Այվազովսկի
«Գոնդոլավարը ծովի վրա գիշերով»

Ձևական չափանիշներ.

- գույների գերակայություն գծերի նկատմամբ, քանի որ գույները ազատությունն են խորհրդանշում, իսկ գծերը՝ կարգուկանոնը,
- գունային երանգների և նրբերանգների առատություն,
- նկարի ոչ հստակ, «լրդված» պատկերում,
- կոմպոզիցիայի ազատականացում. այն կարող է լինել ցանկացած տիպի՝ կայուն կամ անկայուն, խմբավորված կամ առանց որևէ հստակ խմբավորման, ներդաշնակ կամ աններդաշնակ:

Ռոմանտիզմի գեղագիտական իղեալը ազատ մարդու իղեալի վրա է հիմնվում և, հետևապես, հեղինակ-ստեղծագործողներին մույնպես տալիս է ազատություն: Վերջիններս կարող են դեպքերի արտատոջ զարգացումներ ընտրել գրական երկերում, կարող են գոյություն չունեցող բնապատկերներ նկարել, մի դարաշրջանի մարդկանց դնել մի այլ դարաշրջանի հանգամանքներում և այլն:

- ◆ **Խմբերով դիտել ներդրի 1-8 գեղանկարները:** Ելնելով ձևի սովորած բովանդակային և ձևական չափանիշներից՝ պարզե՞ք, քե որ գեղանկարը քի գեղագիտական իղեալի շրջանակներում է ասեղծվել:

♦ Քննարկումների արդյունքում եկե՛ք ընդհանուր հայտարարի և լրացրե՛ք ստորև բերվող աղյուսակը.

Ոճ	Բարոկկո	Բարոկկո	Ռոկոկո	Ռոկոկո	Ռեալիզմ	Ռեալիզմ	Ռոմանտիզմ	Ռոմանտիզմ
Ստեղծագործություն								
Այվագոլմսկի «Քառս կամ աշխարհի արարումը»								
Բուշե «Լուի Ֆիլիպ Ժոզեֆի դիմանկարը»								
Դոմյե «Լվացարարուհին»								
Ֆրիդրիխ «Կինը և արևամուտը»								
Կուրբե «Ջարհատները»								
Վատտո «Պարը»								
Վերմեեր «Աղջիկը գինու բաժակով»								
Բոսս «Պարահանդես»								

ՀԱՐՑԵՐ ՄՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Հե՞տք էր արդյոք որոշել, թե տրված գեղանկարները ո՞ր գեղագիտական իդեալին էին պատկանում: Ինչո՞ւ:
2. Նկարագրե՛ք բարոկկոյի ու ռոկոկոյի գեղագիտական իդեալները, համեմատե՛ք դրանք միմյանց հետ:
3. Համեմատության մեջ վերլուծե՛ք ռեալիզմի և ռոմանտիզմի գեղագիտական իդեալները:
4. Ո՞ր ոճին եք տալիս նախապատվությունը: Ինչո՞ւ:
5. Բացի գեղանկարներից, ուրիշ ի՞նչ արվեստի գործեր գիտեք, որ պատկանում են ներկայացված գեղագիտական ոճերից որևէ մեկին:


ԱՄԵՋԱԴԱՆՔ

Օգտվելով հանրագիտարաններից, բառարաններից կամ գեղանկարչությանը նվիրված ալբոմ-գրքերից՝ գտե՛ք բարոկկո, ռոկոկո, ռեալիզմ և ռոմանտիզմ ոճերին պատկանող այլ գեղանկարներ ու վերլուծե՛ք, թե արդյոք ձեր ուսումնասիրած բովանդակային ու ձևական չափանիշները բնորոշ են նաև դրանց:

ՂԱՍ 1516. ԳԵՂԵՑԻԿԻ ԱՐՏԱԿԱՅՏՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Ընդունված է արևմտյան արվեստում տարբերակել դասականության և ոչ դասական արվեստի դարաշրջաններ: **Դասական է համարվում այն արվեստը, որն արժանի է համարվել սովորելու, նրանից դաս քաղելու, քանի որ կարարելության է հասել իր բազմաթիվ արտացոլումներում:** Դասական արվեստը ծնունդ է առնում հնագույն քաղաքակրթություններում և զարգանում է ու իր բարձրագույն արտահայտությանը հասնում XIX դարում: Ի տարբերություն դասական արվեստի, **ոչ դասական է համարվում XIX դարի վերջերից ծնունդ առնող նորարարական-փորձարարական ոճ ունեցող արվեստը:** Երբեմն այն անվանում են նաև մոդեռն կամ արդի արվեստ: Ոչ դասական արվեստի ներկայացուցիչները խնդիր են դնում չքավարարվել միայն արդեն ստեղծված գեղեցիկի պահպանությամբ, այլ փորձում են գտնել նոր թեմաներ, նոր արտահայտչամիջոցներ, գեղեցիկը ներկայացնելու նոր հնարավորություններ: Նրանք մտածում են՝ իսկ ինչո՞ւ ոչ: Եթե մարդկության պատմության բոլոր դարաշրջաններում արվեստագետները եղել են հնարավոր մեծագույն ազատությամբ օժտված մարդիկ (խոսքը ստեղծագործական ազատության մասին է), ապա արդի արվեստի ներկայացուցիչները ձեռք են բերում ազատության էլ ավելի մեծ աստիճան, քանի որ փորձում են հրաժարվել արվեստի տարբեր տեսակների պարտադրած պայմաններից ու կաղապար դարձած մոտեցումներից: Իհարկե, ոչ միշտ են նրանք կարողանում ստեղծել արվեստի դասական գործերի հետ մրցակցել կարողացող գործեր, բայց իրենց բերած նորությով, մարդու ընկալման ու բացահայտման խորքով ոչ դասական արվեստի իսկական գործերը բնավ չեն զիջում դասական արվեստի գլուխգործոցներին:

Ոչ դասական արվեստն արտացոլում է արդի մարդուն նրա երկատվածության, տեղեկատվական ու իշխանական ուժի հանդեպ անպաշտպանության, անդիմության և այլ հատկանիշներով: Եվ ինչպիսին մարդն է, այնպիսին էլ դառնում է արվեստը: Ինքն իրեն կորցրած, իր երբեմնի հպարտ անհատականությունը կասկածի տակ դրած մարդուն պատկերելու համար արվեստագետներն օգտագործում են երբեմն մույնիսկ պարադոքսալ՝ հնարներ: Ոչ դասական



Հասկոբ Հասկոբյան «Կայսրանում»
Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ է նկարիչը մարդկանց պարկիրել առանց գլուխներին

1 Պարադոքսալ – հունարեն բառ, որ նշանակում է անսպասելի տարօրինակ, ընդունված կարծիքին ռակասող:

երաժշտության մեջ սկսում են կիրառել նոր գործիքներ, ճոռոցների, բախյունների ձայներ և այլն, հրաժարվում են դասական հարմոնիայի մի շարք պահանջներից՝ կատարելով թռիչքներ շատ ցածր ձայներից դեպի շատ բարձրերը և այլն, երբեմն դեմ են գնում հաստատուն ուղիքին՝ մեկ գործի մեջ բազմաթիվ անգամներ փոփոխելով այն: Այս ամենը չնախապատրաստված ունկնդրին կարող է դնել անհարմար վիճակի մեջ. տարակուսում են՝ երաժշտություն է արդյոք լսածը, կամ ի՞նչ էր ուզում ասել սրանով հեղինակը:

Ոչ դասական պարուն հնարավոր է ցանկացած շարժում, հագուստի ցանկացած ձև, բեմի հարդարման ոչ մի սահմանափակություն չկա, կարող է լինել և լրիվ դատարկ բեմ: Եթե որոշ շարժումներ դասական պարողի տեսանկյունից կարող են դիտվել ոչ նրբագեղ, ապա ոչ դասական պարում խնդիրը նրբագեղությունը չէ, այլ XX դարում մարդկության գլխով անցած բնական ու հասարակական աղետների պատկերումը, ինչի համար պարը դուրս է բերվում իր դասական ընկալումից ու ստանում ավելի համապարփակ մեկնաբանություն:



*Գառոլի: Ժամանակակից բնակելի շենք
Խազանիայում*

Ճարտարապետության մեջ ոչ դասական մոտեցումն արտահայտվում է նրանում, որ ավանդական ճարտարապետական տարրերը կորցնում են իրենց անբազրված ձևերն ու նշանակությունները: Օրինակ, եթե դասական ճարտարապետական կառույցում կան հստակ արտահայտված ճակատամասեր, պատուհաններ, պատեր, տանիք և այլն, ապա ոչ դասական ճարտարապետական շինություններում կարող են որոշ մասեր բացակայել, իսկ որոշ մասեր ուռճացվել: Այսպես՝ ժամանակակից շատ քաղաքների համայնապատ-

կերում տեսնում ենք լրիվ ապակեպատ երկնաքերներ, որոնք, ըստ էության, մեկ ամբողջական պատուհան են ներկայացնում իրենցից, որոնցում դժվար է տարբերակել, թե որն է ճակատամասը, քանի որ շուրջ բոլորը նույն ապակեպատ տարածությունն է: Եթե դասական ընկալմամբ տանիքն ուներ շինության ծածկ լինելու գործառույթ, ապա ժամանակակից կառույցներում տանիքը կարող է լինել ուղղաթիռի կայան, լողավազան և այլն: Այն կարող է ունենալ ոչ միայն ավանդական ձևեր, այլև նոր, այն կարող է լինել ցանկացած ձևի, որքանով որ թույլ կտան տեխնիկական միջոցները: Ժամանակակից շինությունները կարող են ներկայացնել ցանկացած տիպի երկրաչափական մարմիններ, կարող են լինել կտրտված, ոչ թե հարթ, այլ ալիքաձև առաստաղներով և այլն, և այլն:

Քանդակագործության մեջ արդի մոտեցումն արտահայտվում է նրանով, որ քանդակվող մարմինը դադարում է միայն մարմին լինելուց. այն կարող է իր ներ-

սում պարունակել անգամ շենքեր («Մարդ քաղաք»), այն կարող է իրենից ծնունդ տալ ծառի կամ ցանկացած այլ առարկայի:

Նմանատիպ նորամուծություններ են կատարվում նաև գրականության մեջ: Եթե դասական գրականությունն իր տարբեր ժանրերում (ասք, պոեզիա, հեքիաթ, առակ, նովել, վեպ և այլն) ուներ որոշակի օրինաչափություններ,



*Արա Ալիքյան «Ռեզեզյուր»
Ուշադրություն դարչինք, թե ինչ դեպքերից է կազմված
ննգեզյուրի «քանդակը»*

որոնց հետևում էին ստեղծագործողները, ապա արդի գրականության մեջ հիմնական օրինաչափությունն օրինաչափություններից հրաժարումն է: Եթե դասական պոետը, օրինակ, սոնետ գրելու համար գիտեր, թե քանի վանկ, հանգ ու տող պետք է օգտագործի, ապա ժամանակակից բանաստեղծը փորձում է գրել երբեմն առանց հանգի, երբեմն առանց տողերի բաժանման, երբեմն ամեն մի տողում ունենալով միայն մեկ բառ և այլն: Անկախ արտահայտման ձևերի նման տարբերություններից, եթե բանաստեղծն ունի ասելիք ու վերլուծության խորք, նրա գործը դառնում է գլուխգործոց: Արձակում նույնպես նոր փոխակերպումներ է ապրում գեղեցիկի ընկալումը: Եթե դասական վեպ-վիպակի համար արժանիք էին համարվում հեղինակի մտքի հստակությունը, շարադրանքի տրամաբանական շաղկապվածությունը, երկը կազմող հատվածների հարաբերական սավարտունությունը, ապա ոչ դասական արձակում կարող է կատարվել լրիվ հակառակը: Հեղինակը երբեմն կարող է խճողել միտքը, ներկայացնել դետալների անվերջանալի պատումներ, խճճված իրադարձությունների կույտ՝ ընթերցողին ղնելով տարակուսանքի մեջ: Երկի որոշ մասեր կամ ողջ երկը կարող են թողնվել կիսատ, բառերը կարող են օգտագործվել մաս-մաս, կտրտված, հնարավոր են բազմաթիվ նեոլոգիզմներ՝ հեղինակի կողմից ստեղծված նոր բառեր և այլն: Բայց, այս ամենով հանդերձ, իսկական գրական երկերն առաջ են բերում խորհրդածությունների ու ապրումների նույնպիսի խորություն, որ կարող էին առաջացնել դասական գործերը: Ողջ այդ հնարների բազմությունը նորօրյա գրողներն օգտագործում են, որպեսզի վեր հանեն արդի հասարակությանը համակած ճգնաժամը, առանձին մարդուն կարևորելու-գնահատել-բարձրացնելու պահանջը:

Ոչ դասական արվեստի գործերի ընկալումը քարդ է, քանի որ պահանջում է ներքին աշխատանք, համաստեղծագործություն հեղինակի հեյ: Իրենք՝ ոչ դասական գործեր ստեղծողները, դրանով նաև մարտահրավեր են նետում հասարակությանը, որը սովորել է սպանել հարաբերականորեն դյուրընկալելի դասա-



Երվանդ Քոչար.
«Մտավոր» քարածական գեղանկար

կան գործերը (ցավոք, դրանց մի մակերեսային մասը միայն): Նրանք ստեղծում են, իրենց կարծիքով, էլիտար (ընտրյալների համար ստեղծված) արվեստ, որը հասկանալի գնահատել կարող են միայն պատրաստվածություն ու ներքին աշխատանք կատարելու ձգտում ունեցողները:

Եթե դասական գեղանկարը ստեղծվում էր հարթության մեջ, ապա ոչ դասական գեղանկարը կարող է լինել նաև տարածական: Ոչ դասական գեղանկարչության հայ մեծանուն ներկայացուցիչ Երվանդ Քոչարը ստեղծում է պատկերներ տարածության մեջ, որոնք դիտելու համար օգտագործվում են հատուկ պտտող մեխանիզմներ:

Ոչ դասական գեղանկարչության մեջ ի հայտ են գալիս բազմաթիվ ուղղություններ, որոնցից բավական ազդեցիկ էին իմպրեսիոնիզմը և սյուրռեալիզմը: Այս ոճական ուղղություններն արտահայտվում են նաև արվեստի մյուս տեսակներում՝ գրականություն, երաժշտություն և այլն: Մական գեղագիտության օրինակով ավելի ընկալելի է նրանց բերած նորոյթն ու գեղագիտական իդեալի նորովի պատկերումը:


«Իմպրեսիոնիզմ» բառը ծագում է «իմպրեսիոն»՝ տպավորություն բառից, քանի որ *իմպրեսիոնիստների նպատակն էր պահպանել վայրկենական տպավորությունն այնպիսին, ինչպիսին այն կար*: Իմպրեսիոնիստները հասկացան, որ թեև նախկինում թվում էր, թե դասական գեղանկարչությունը նույնպես նպատակ է ունեցել պահպանել վայրկյանը, սակայն դասական նկարիչներն իրենց գործերում անբազրել են ոչ թե իրենց ստացած անմիջական տպավորությունները, այլ երկարատև մտորում-վերլուծությունների արդյունքում բացահայտած օրինաչափությունները: Իմպրեսիոնիստների խնդիրն էր տալ ոչ թե օրինաչափը, կրկնվող կառուցը, այլ անկրկնելի-անցողիկը: Դա, ինչպես պարզվեց, այնքան էլ դյուրին գործ չէր, քանի որ նույն բնապատկերը մի քանի լուսնի ընթացքում կարող է բազմիցս փոփոխվել քամու շարժման, արևի ու ամպերի, լույսի խաղի և բազմաթիվ այլ պատճառներով: Տպավորությունն անմիջականորեն որսալու նպատակով իմպրեսիոնիստները նկարում էին բաց օդում՝ պլենեռոմ, նրանք բացահայտում էին լույսի թեկման, շարժումների պատկերման և շատ ու շատ այլ գաղտնիքներ: Թեպետ դասական նկարչությանը սովոր դիտորդները չընդունեցին իմպրեսիոնիստական առաջին ցուցահանդեսները, սակայն XX դարում իմպրեսիոնիզմը

համարվեց իրականության պատկերման ամենաազդեցիկ ձևերից մեկը: Այն բերեց նոր թեմաներ՝ պատկերելով, օրինակ, երեխաներին լողացնող մայրիկին, ասեղ թելող ծեր կնոջ, աղքատիկ սնունդ ընդունող հոգնած հանքավորների և այլն: Իսկ ձևի տեսանկյունից այն հետաքրքիր է գունեղ ներկապնակով, վրձնահարվածների նոր տեխնիկայով, որի պատճառով իմպրեսիոնիստական կտավները շատ մոտից դիտելիս երբեմն հնարավոր չի լինում գանազանել ինչ-որ բան. այդ գեղանկարներն ընկալելի են դառնում միայն որոշակի հեռավորության վրա:



Էդուարդ Մանն. «Մոնեի ընկալիքը այգում»

«Սյուրռեալիզմ» նշանակում է գերիրապաշտություն. սյուրռեալիստ արվեստագետների նպատակն է փայլ ավելին, քան իրականությունն է, վեր հանել իրականության խորքային էությունն ու մարտցել այն հանդիսատեսին: Սյուրռեալիստներն ընդհանրապես հրաժարվում են դասական տրամաբանական սկզբունքներից. նրանք կարող են միասին պատկերել այնպիսի իրեր, որոնք իրականության մեջ միասին չեն լինում, կարող են ստեղծել բնության օրենքներին հակասող բնապատկերներ: Օրինակ՝ կտավում պատկերված շենքում կարող է լինել գիշեր, իսկ դրսում՝ ցերեկ, և հակառակը: Ծովը կարող է պատկերվել որպես ծածկոց, որը կարելի է բարձրացնել տեսնելու համար, թե ինչ կա դրա տակ: Մարդու ուսերին կարող է պատկերվել ոչ թե գլուխ (ինչպես ենթադրվում է դասական մտածողությամբ), այլ, օրինակ, խնձոր: Առարկաները կարող են ունենալ կամ չունենալ ստվերներ, իսկ ստվերները կարող են լինել ցանկացած տեսակի, այլ ոչ թե բնական և այլն, և այլն: Ո՞րն է այս անիմաստ թվացող փոխակերպումների իմաստը, կա՞ այստեղ գեղագիտական որևէ խղճալ: Պարզ-փում է, որ կա: Սյուրռեալիստները ցանկանում են ցույց տալ մեր իրականության ավելի լայն լինելը, քան զուտ տրամաբանությունը կարող է ընկալել: Երանք բացահայտում են ողջ գոյություն ունեցող ոչ տրամաբանական, հանելուկային-պարաֆրաստ կողմերը, մարդկանց մեջ եղած ոչ բանա-



Ռենն Մագրիթ. «Մարդու երազ»



Մալխարր Գալի. «Արևածագ»



Լևոն Թյուրյունճյան. «Տարերք»

կան՝ իրացիոնալ տարրը, որը թեպետ անտեսվում է մարդու կողմից, բայց նրա վրա ունի մեծ ազդեցություն: Մյուրոնեալիստները կարծես բացում են մի «երրորդ աչք», որի միջոցով տեսանելի է դառնում այն ամենը, ինչ անտեսանելի է սովորական աչքի համար:

ՀԱՐՑԵՐ ՄՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԵՐ

1. Ի՞նչ էք հասկանում դասական և ոչ դասական արվեստ ստեղծի:
2. Արվեստի ո՞ր ճևն էք գերադասում՝ դասականը, թե՞ ոչ դասականը: Ինչո՞ւ:
3. Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ արվեստագետները համզեցին դասական հրաշալի սրեղծագործությունների կողքին ոչ դասական գործեր սրեղծելու գաղափարին:
4. Ծանո՞ք էք ոչ դասական արվեստի գործերի, կարո՞ղ էք մեկնաբանել դրանք:
5. Կարո՞ղ էք բացատրել, թե ինչ է ինսյոնսիոնիզմը: Ունե՞ք արդյոք սիրած ինսյոնսիոնիստ մկարիչ:
6. Իսկ ինչպե՞ս կարելի է մեկնաբանել այուրոնեալիստական ուղղությունը: Ծանո՞ք էք արդյոք այուրոնեալիստ սրեղծագործողների գործերին:

ԱՌՆՁԱՆԵՐԱՆԻՔ

✎ Կազմակերպե՛ք այցելություն արվեստի ոչ դասական ուղղություն ներկայացնող որևէ թանգարան ու կազմակերպե՛ք դիտած-ընկալածի վերլուծություն-քննարկում:

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Այժմ, երբ մենք սովորել ենք թռչել օդով, ինչպես թռչուններ,
լողալ ջրում, ինչպես ձկներ, մեզ չի բավականացնում մեկ բան.
սովորել երկրի վրա ապրել մարդու նման:*

Քեռնարդ Շոու

ԹԵՍԱ 1. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ: ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴԱՍ 1-2. ԻՆՉ Է ԲԱՐՈՅԱԿԱՆԸ: ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ


*Բարոյականությունն այնպիսի բան է,
որը մեզ այլ բաներից ավելի շատ է հերաքրքրում:
Մենք կարծում ենք, որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրա-
քանչյուր որոշումն ազդում է հասարակության մակարագրի վրա:*

Գեյվիդ Հյուս

«**Բարոյականություն**» հասկացությունը ծագել է հունարեն **ethos** բառից, որը նշանակում է ավանդույթ, բնավորություն: Այն առաջին անգամ օգտագործել է հույն հայտնի փիլիսոփա Արիստոտելը: Ըստ Արիստոտելի՝ բարոյականությունն ուսումնասիրող գիտությունը՝ բարոյագիտությունը (էթիկա), փորձում է պատասխանել «Ի՞նչ **պետք է անենք**» հարցին: Այդ պատճառով Արիստոտելը բարոյագիտությունը համարում էր գործնական փիլիսոփայություն: Բարոյագիտության մեջ այնքան է կարևորվում արարքի արժեքը, որ XX դարի հայտնի փիլիսոփա Լյուդվիգ Վիտգենշտեյնը կարծում էր, որ մարդկանց բարոյական կերպարի մասին պետք է դատել ոչ թե նրանց խոսքերով, այլ արարքներով: Ավելին՝ Վիտգենշտեյնը կարծում էր, թե բարոյական հարցերի մասին ընդհանրապես չպետք է խոսել, քանի որ մարդու բարոյական նկարագիրը երևում է նրա արարքներից:

♦ **Ձեր կարծիքով՝ արդյոք մի՞շտ է բարոյական հարցերի մասին ընդհանրապես խոսելը: Ինչպիսի՞ հետևանքներ դա կունենա:**

Եթե գեղագիտության հիմնական հասկացությունները «գեղեցիկն» ու «ուզեղն» են, ապա բարոյագիտությունն ուսումնասիրում է «բարին» ու «չարը»,



Լյուդվիգ Վիլգենշյան
(1889-1951)

«լավն» ու «վատը»: Եթե գեղագիտությունն ամեն ինչ գնահատում է գեղեցիկի տեսանկյունից, ապա բարոյագիտությունը՝ բարու և լավի: Բարոյագիտությունը մարդկանց սովորեցնում է գնահատել իրավիճակները, կատարել ընտրություն ու գործել բարու և լավի հիման վրա:

Բարոյականությունը սկսվում է այն պահից, երբ մարդը հոգ է տանում այլ մարդու մասին: Այլ մարդկանց հանդեպ վերաբերմունքը բարոյականության հիմքերից է: Դրա վկայությունն է բարոյականության ոսկե կանոնը. *«Վարվի՛ր ուրիշի հետ այնպես, ինչպես կուզեիր, որ քեզ հետ վարվին»*: Աստվածաշնչում այդ կանոնը ձևակերպված է հետևյալ կերպ. *«Այն ամենը, ինչ որ կամենում եք, որ մարդիկ չեզանեն, այդպես և դուք արեք նրանց»*:

ԸՆԹԵՐՑԵՔ ՏԵՔՍԵ

Հին առասպելում ասվում է, արարելով մարդուն՝ աստվածները առատաբար նրան պարգևեցին բանականություն, խոսք: Յուրաքանչյուր մարդու շնորհեցին որոշակի տաղանդ: Հայտնվեցին շինարարներ, ատաղձագործներ, երաժիշտներ, բժիշկներ: Մարդիկ սկսեցին գեղեցիկ իրեր պատրաստել, տներ կառուցել: Բայց աստվածները մարդկանց չկարողացան սովորեցնել հասնել փոխհամաձայնության: Ու երբ մարդիկ հավաքվում էին ինչ-որ կարևոր գործ անելու, նրանց միջև ծագում էին վեճեր: Մարդիկ ծայրահեղ եսասեր, անհանդուրժող ու դաժան էին և ցանկացած հարց լուծում էին ուժի միջոցով:

Մարդկանց սպառնում էր ինքնառչկացման վտանգը: Այդ ժամանակ Ջեսը հրամայեց մարդկանց կյանք ներմուծել ամոթն ու ճշմարտասիրությունը: Աստվածները ոգևորվեցին: Ջեսի այդ որոշումով և հարցրեցին, թե ինչպես բաշխեն ամոթն ու ճշմարտությունը մարդկանց միջև՝ նկատի ունենալով, որ շատ բաներ մարդկանց միջև անհավասար են բաշխված: Ջեսը պատասխանում է, թե **ամոթն ու ճշմարտությունը հավասարապես պետք է վերաբերեն բոլոր մարդկանց**: Հակառակ դեպքում Երկրագնդի վրա ոչ քաղաքներ կմնան, ոչ պետություններ, ոչ էլ մարդիկ:

◆ **Ի՞նչ հեռուություններ կարող եք անել վերոնշյալ պատմությունից:**

Բարոյագիտության մեջ տարբերակում են երեք հիմնարար հասկացություններ. բարոյական, անբարոյական և ոչ բարոյական:

1. **Բարոյական** նշանակում է բարի, լավ:
2. **Անբարոյական** նշանակում է չար, վատ:
3. **Ոչ բարոյական** նշանակում է բարոյական հարթությունից դուրս: Օրինակ՝

մաթեմատիկական բանաձևերը, մեքենաներն ինքնին ոչ բարոյական են: Բայց մարդը կարող է դրանք օգտագործել բարոյական կամ անբարոյական քայլերի համար:

Բարոյական և ոչ բարոյական արժեքներ

Երբ մարդիկ խոսում են արժեքների մասին, շատ հաճախ նկատի են ունենում բարոյական արժեքները, որոնք վերաբերում են մարդկանց ճիշտ կամ սխալ, բարի կամ չար լինելուն: Կան շատ արժեքներ, որոնք առնչություն չունեն բարոյականության հետ: Եթե արժեքները տարբերակելիս չփոթոթյուն առաջանա, ապա բարոյական արժեքները զանազանելու համար հարցրեք. «Արդյո՞ք այս արժեքը բարու կամ ճիշտ վարքագծի մասին է: Այդ արժեքները կրող մարդն ավելի լա՞վն է, քան դրանք չունեցողը»:

Դիտարկենք հետևյալ օրինակը:

Արմենն ունի սպիկերիկ կազմվածք և ընդգրկված է բասկետբոլի քիմում: Նա ինձ շատ դուր է գալիս, քանի որ քիմային խաղացող է: Նա իրեն ցուցադրելու համար երբեք չի տարվում անհատական խաղով: Հոգատար է քիմի բոլոր անդամների նկատմամբ:

Այս օրինակում «ատլետիկ» արժեքը բարոյական չէ, քանի որ ատլետիկ կազմվածք ունեցող մարդն ավելի լավը կամ բարի չէ ոչ ատլետիկ կազմվածք ունեցող մարդուց: Փոխարենը «հոգատար» արժեքը բարոյական է, քանի որ հոգատար մարդն ավելի լավ մարդ է:

Ստորև բերվում են մի քանի օրինակներ: Յուրաքանչյուր ընդգծված արժեքի համար որոշե՛ք՝ բարոյակա՞ն է, թե՞ ոչ բարոյական:

Օրինակ 1.

Մեղան շատ պարասիսանապուր մարդ է: Նա շատ արկածասեր մարդ է և սիրում է տարբեր փորձությունների ենթարկել իրեն: Մի անգամ մենք միասին գնացել էինք լողալու: Մեղան փորքառու լողորդ է: Երբ բավականաչափ հեռացել էինք ափից, փոթորիկ բարձրացավ: Մեղան այդ պահին մտածեց ոչ միայն իր մասին, այլև օգնեց ինձ՝ հասնելու ափ: Նա շատ րնկերասեր մարդ է:

Օրինակ 2.

Աննան սրկեղծագործ միտք ունեցող մարդ է: Հավանաբար մի օր նա նկարիչ կդառնա: Նա ինձ օգնում է, երբ դասերի ժամանակ խմբային աշխատանքներ ենք կատարում: Նա համագործակցող աշակերտ է և կարողանում է աշխատել բոլորի հետ: Ես երբեք չեմ զգացել, որ նա մարդկանց ուզենա ցույց տալ, թե շատ խելացի է:

Օրինակ 3.

Լևոնը շատ երաժշտական մարդ է: Ես երազում եմ, որ մի օր էլ ինքս կկարողանամ նրա նման ջութակ նվագել: Ես շատ գնահատում եմ նաև նրա պարկեչյուր:

քունը: Նախորդ օրը, երբ խմբի փորձն անհաջող էր ընթացել, մա ազնվորեն խոստովանեց, որ պատճառն իր վատառողջ լինելն էր:

Օրինակ 4.

Ես շատ հավանում եմ Գևորգին, քանի որ մա հարգանքով է վերաբերվում բուլդին: Նա շատ կարակասեր է: Շատ մարդիկ անեկդոտներ պատմելիս վիրավորում են ուրիշներին: Բայց Գևորգն այնքան նորանկապ է, որ կարողանում է բուլդին ուրախություն պարգևել:

Սիրոնն նշվում են արժեքներ: Արդագրիք դրանք Ձեր տեսլականն և ընդգծիք այն արժեքները, որոնք բարոյական են.

ազնիվ	խաղասեր	լուրջ
խելացի	նուրբ	հոգատար
ուշադիր	բարի	գեղեցիկ
սրամիտ	իրական	երաժշտական
արտիստիկ	պատասխանատու	ուշադիր
հյուրասեր	խիզախ	հավակնոտ
արդար	ստեղծագործ	ազատական (լիբերալ)

Կան քանավե՞րն այն հարցի շուրջ, թե որտեղից է ծագել բարոյականությունը: Կա երեք հիմնական մոտեցում:

1. Բարոյականության աղբյուրը գերբնական էակն է (կամ էակները): Օրինակ՝ հեթանոսական ժամանակաշրջանում համարում էին, որ բարոյականության աղբյուրը աստվածներն են: Քրիստոնեության մեջ բարոյականության աղբյուրը Հայր Աստվածն ու Հիսուս Քրիստոսն են: Աստվածաշնչի 10 պատվիրանները համարվում են քրիստոնեական բարոյականության հենքը:
2. Բարոյական նորմերը բխում են բնությունից: Այն, ինչը ներդաշնակ է բնության օրենքներին, բարոյական է, և հակառակը, եթե բարոյական է, ուրեմն ներդաշնակ է բնության հետ: Միջնադարյան փիլիսոփա Թոմաս Աքվինացին կարծում էր, որ եթե մարդիկ խախտում են բնության օրենքները, ուրեմն անբարոյական են:

3. Բարոյականությունը ներհատուկ է մարդուն: Այս տեսակետի համաձայն՝ մարդն ունի երևույթները, արարքները բարի կամ չար, լավ կամ վատ գնահատելու կարողություն: Այդ արժեքները գոյություն ունեն որպես մարդու անբաժանելի մասնիկ:

♦ **Գնահատե՛ք վերոնշյալ երեք մոտեցումները՝ յուրաքանչյուրի օգտին բերելով հիմնավոր փաստարկներ:**

Բարոյականություն և իրավական նորմեր

Դուք արդեն գիտեք, որ մարդկանց արարքները կարգավորվում են նաև իրավական նորմերով: Փորձենք հասկանալ բարոյականության և իրավունքի տարբերությունը: Իրավունքը կարգավորում է մարդկանց հարաբերությունները օրենքների միջոցով՝ հիմնվելով պետության ուժի վրա: Բարոյականությունը կարգավորում է մարդկանց հարաբերությունները համոզմունքների, գործողությունների միջոցով: Բարոյականությունը հիմնվում է հասարակական կարծիքի և մարդկանց խղճի վրա: Իրավական նորմերը արտահայտվում են օրենքներում և պարտադիր են բոլոր քաղաքացիների համար: Իրավական նորմերը ոչինչ են առանց պարտադրանքի: Պատկերավոր կարելի է ասել, որ եթե իրավական նորմերը հիմնվում են **ուժի** հեղինակության վրա, ապա բարոյական նորմերը՝ **հեղինակության** ուժի:

♦ **Նշե՛ք բարոյական և իրավական նորմեր և համեմատե՛ք դրանք:**

ՀԱՐՅԵՐ ՄՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ մարդը պետք է լինի բարոյական: Նկարագրե՛ք, քի ինչպես կփոխվեր մեր կյանքը, եթե չլիներին բարոյական նորմերը:
2. Ինչո՞ւ է բարոյագիտությունը համարվում գործնական փիլիսոփայություն:

ԱՄԵՋԱԿՐԵՐ

Ձեր ընտանիքի անդամների, բարեկամների, ընկերների շրջանում անցկացրե՛ք հարցում «Որտեղից են ծագել բարոյական նորմերը» թեմայով: Առաջարկե՛ք պատասխանի հետևյալ տարբերակները.

1. Տրվել են Աստծո կողմից:
2. Մարդկանց պայմանավորվածության արդյունք են:
3. Փիլիսոփաներն են ձևակերպել:
4. Չգիտեմ:
5. Այլ պատասխան -----

Հարցման արդյունքները ներկայացրե՛ք դասարանին:

ԳԱՄ 3. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վաղ ժամանակներից սկսած փիլիսոփաները ստեղծել են կանոնակարգված տեսություններ բարոյականության մասին: Դիտարկենք դրանցից երեքը:

Արիստոտելի առաքինությունների տեսությունը

Բարոյագիտական տեսությունները հիմնականում փորձում են պատասխանել այն հարցին, թե «ինչ է նշանակում լինել բարոյական»: Արիստոտելը և նրա համախոհները կարծում էին, որ լինել բարոյական նշանակում է լինել լավ մարդ, լինել առաքինությունների կրող: Ի՞նչ է նշանակում առաքինություն: Առաքինությունը, ըստ Արիստոտելի, երկու ծայրահեղությունների ոսկե միջինն է: Օրինակ՝ խիզախությունը անխիճեմության և վախկոտության ոսկե միջինն է, պարկեշտությունը՝ երկշտության և անպատկառության, ճշմարտախոսությունը՝ պարծենկոտության և թերարժեքության: Բարոյագիտության մեջ Արիստոտելն ավելի շատ ապավինում էր մարդու ողջախոսությանը, բանականությանը, քան արտաբնական պարտադրվող բարոյական նորմերին: Եթե մարդիկ լինեն առաքինությունների կրող, ապա շատ բարոյական նորմեր պարտադրելու անհրաժեշտություն չի լինի: **Առաքինի մարդը սպանություն չի գործում ոչ թե այն պատճառով, որ գոյություն ունի «մի՛ սպանիր» բարոյական նորմը, այլ որովհետև ինքն ընդունակ չէ սպանելու:**

Իմանուիլ Կանտի բարոյական պարպրի տեսությունը

Ի տարբերություն Արիստոտելի՝ շատ բարոյագետներ չէին ընդունում, որ բարոյականությունը մարդուն ներհատուկ հատկանիշ է: Հետևաբար, բարոյագիտության մեջ ի հայտ եկան տեսություններ, որոնք բարոյական նորմերի միջոցով էին փորձում ազդել մարդու բարոյական վարքագծի ձևավորման վրա: Այս հարցի շուրջ ձևավորվեցին բազմաթիվ բարոյագիտական տեսություններ, որոնց միջև ծագեցին բանավեճեր բարոյական նորմերի և սկզբունքների բնույթի շուրջ: Գերմանացի փիլիսոփա Կանտի տեսության համաձայն՝ բարոյական նորմերը համընդհանուր կիրառություն ունեն և չեն կարող ունենալ բացառություններ: Օրինակ՝ «մի՛ ստիր» պատգամը պետք է համընդհանուր գործածություն ունենա՝ անկախ հանգամանքներից ու հետևանքներից: Կանտի բարոյագիտության առանցքը կատեգորիկ իմպերատիվն (հրամայական) է: Դրա բովանդակությունը հետևյալն է. «**Գործիր միայն այն նորմի համաձայն, որով առաջնորդվելիս միաժամանակ կուզեիր, որ այն դառնա համընդհանուր օրենք**»: Սա նշանակում է, որ ամեն անգամ, երբ մարդը պետք է որոշում կայացնի, նախ պետք է հարցնի. «Ի՞նչ կանոնի հիման վրա եմ ես այս քայլը կատարում», ապա պետք է հարցնի. «Ես կուզեի՞, որ այդ կանոնով առաջնորդվեն բոլոր մարդիկ»: Օրինակ, եթե ծույլ մարդը մտածի, որ աշխատելու փոխարեն ինքը կարող է գողանալ, ապա այդ կանոնը ընդհանրացնելու դեպքում պետք է ասի. «Ոչ որ չպետք է աշխատի, բոլորը

պետք է գողանան»: Բայց եթե ոչ ոք չաշխատի, ապա ոչինչ հնարավոր չի լինի գողանալ: Հետևաբար, գողությունը անբարոյական է, քանի որ այն ընդհանրացնել հնարավոր չէ:

♦ **Նույն տրամաբանությամբ փորձե՛ք հիմնավորել, թե ինչու է սպանությունն անբարոյական:**

Կանոնի բարոյագիտության մյուս հրամայականն այն է, որ յուրաքանչյուր մարդ նպատակ է, և անթույլատրելի է մարդուն օգտագործել որպես միջոց: Օրինակ, եթե բժշկության մեջ մեկ մարդու վրա փորձարկումներ արվեն տասնյակ հազարավոր մարդկանց փրկելու նպատակով, ապա դա, ըստ Կանոնի, կդիտարկվի որպես անբարոյականություն, քանի որ մարդն օգտագործվում է որպես միջոց:

Կանոնի տեսությունը բարոյագիտության մեջ հայտնի է որպես «պարտքի բարոյականության» ուսմունք: Կանոնը պարտքի զգացումը հակադրում է մարդկային հակումներին: Մենք ունենք տարբեր հակումներ, որոնց մի մասը բարոյական է, մյուսները՝ անբարոյական: Օրինակ՝ մենք հակված ենք օգնելու այլ մարդկանց ծուլություն դրսևորելու: Կանոնի տեսության համաձայն՝ արարքը բարոյական է, եթե դրա շարժառիթը պարտքի զգացումն է, այլ ոչ թե հակումը: Օրինակ, եթե մարդը հակված է բարություն դրսևորելու այլ մարդկանց նկատմամբ, ապա դա դեռևս բարոյական արարք չէ: Փոխարենը պատկերացնենք մի իրավիճակ, երբ մարդու հետ դժբախտություն է պատահել, և նա այլևս հակված չէ բարություն դրսևորելու: Եթե այդ մարդը, առաջնորդվելով պարտքի զգացումով, հաղթահարում է իր հակվածությունը և դրսևորում բարություն, ապա նա բարոյական արարք է գործում:

♦ **Ի՞նչ կարծիք ունեք այս մտտեցման վերաբերյալ:**

ԸՆԹԵՐՑԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՔՍՏԸ ԵՎ ԿԱՏԱՐԵՔ ԱՌԱՋԱԳՐԱՆՔԸ

Ի՞նչ է սուտը: Սուտն այն է, երբ դուք ինչ-որ մեկին ասում եք ճշմարտություն՝ համոզված լինելով, որ դա անհնչին էլ ճշմարտություն չէ: Մենք հաճախ ենք լսում, որ ստելը ճիշտ չէ: Բայց արդյո՞ք միշտ սխալ է ստելը:

Ընթերցե՛ք ստորև բերվող դասողությունները և ազնվորեն պատասխանե՛ք «այո» կամ «ոչ»:

1. Եթե Ձեր մայրը հարցնում է, թե արդյոք ճաշից առաջ քաղցրավենիք եք կերել (իսկ դուք կերել եք), կատե՞ք:
2. Եթե Ձեր լավագույն ընկերը անճաշակ հագուստ է կրում, կատե՞ք նրան, որ շատ գեղեցիկ տեսք ունի:
3. Եթե կարծում եք, որ ստելով կարող եք վնասել Ձեր հակառակորդին, կդիմե՞ք արդյոք այդ քայլին:
4. Եթե կարծում եք, որ կեղծ տեղեկություններ ներկայացնելով կարող եք ընդունվել համալսարան, կդիմե՞ք այդ քայլին:
5. Եթե սուտ խոսելով կարող եք հարստություն դիզել, ապա կատե՞ք արդյոք:
6. Եթե ստելով կարող եք մարդու կյանք փրկել, ապա կդիմե՞ք այդ քայլին:

Եթե հարցերից թեկուզ մեկին պատասխանել եք «այո», ապա Գուք համաձայն չեք գերմանացի հայտնի փիլիսոփա Իմանուիլ Կանտի հետ, որը համարում էր, որ ոչ մի պարագայում չի կարելի ստել:

Քարոյական օգտապաշտություն

Կանտի քարոյագիտական ուսմունքը հիմնվում էր այն թեզի վրա, որ քարոյական նորմերն ունեն համընդհանուր բնույթ և չեն կարող ունենալ բացառություններ: Ի տարբերություն Կանտի տեսության՝ քարոյական օգտապաշտությունը (ուտիլիտարիզմ) կարևորում է ոչ այնքան նորմերի համընդհանրությունը, որքան դրանց հետևանքները: Եթե հետևանքները կարող են վատը լինել, ապա կարելի է բացառություններ անել: Օրինակ՝ վերոնշյալ «Եթե ստելով կարող եք մարդու կյանք փրկել, ապա կդիմե՞ք այդ քայլին» հարցին օգտապաշտները կպատասխանեն «այո»:

Օգտապաշտությունը (ուտիլիտարիզմ) քարոյագիտության առավել տարածված տեսություններից է: Այս ուղղության անվանումն առաջացել է լատիներեն utilitas տերմինից, որը բարգմանաբար նշանակում է օգտակարություն: XVIII-XIX դարերի փիլիսոփա Ջերեմի Բենտամը տեսակետ հայտնեց, որ քարոյական արարքները պետք է գնահատվեն ըստ դրանց բերած օգուտի: Արարքը քարոյական է, եթե այն օգուտ ու երջանկություն է բերում՝ նվազեցնելով մարդու ցավն ու դժբախտությունը:

Օգտապաշտական քարոյականության համաձայն՝ արարքը քարոյական է, եթե այն օգտակար է տվյալ իրավիճակում ներգրավված մարդկանց համար: Կա քարոյական օգտապաշտության երկու տարատեսակ. արարքներով առաջնորդվող օգտապաշտություն և կանոններով առաջնորդվող: Արարքներով առաջնորդվող օգտապաշտությունը չի ընդունում քարոյական նորմերը, քանի որ յուրաքանչյուր իրավիճակ անկրկնելի է, և պետք է կատարել այնպիսի գործողություններ, որոնք օգտակար են տվյալ իրավիճակում: Այսինքն՝ յուրաքանչյուր իրավիճակում մարդն ինքն է որոշում՝ ստի, թե ոչ: Եթե տվյալ իրավիճակում սուտը կարող է բարիք բերել, ինչ-որ մեկին փրկել, ապա այն թույլատրելի է:

Կանոններով առաջնորդվող քարոյականությունը պնդում է, որ յուրաքանչյուրը պետք է առաջնորդվի այնպիսի կանոններով, որոնք կարող են բերել առավելագույն բարիք բոլոր շահագրգռված մարդկանց: Օրինակ, եթե Կանտի համար «մի՛ սպանիր» նորմն ուներ համընդհանուր արժեք, ապա օգտապաշտության մեջ ընդունելի է «Մի՛ սպանիր, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անում ես ինքնապաշտպանության նպատակով» դրույթը: Կամ՝ «Մի՛ ստիր, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անում ես ինչ-որ մեկի կյանքը փրկելու նպատակով»:

◆ Որո՞նք են նման մոտեցման վտանգները:

◆ Երբե՞տ գործե՞լ եք այս մոտեցմամբ:

Օգտապաշտական քարոյականության մեջ ընդունված է հաշվարկել արարքի հետևանքները, ինչը առաջ է բերում խնդիրներ: Եթե Կանտը բոլոր մարդկանց

համարում էր նպատակ, ապա օգտապաշտական բարոյականության մեջ ընդունված է որոշակի նպատակի հասնելու ճանապարհին կանգ չառնել միջոցների առջև:



Սենեկա
(4-65)

ԸՆԹԵՐՑԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի փիլիսոփա Սենեկայի կողմից նկարագրված իրավիճակը վերլուծենք առաքինությունների, պարտքի և օգտապաշտության տեսանկյուններից:

Կլեանփր երկու տղաների ուղարկում է Ակադեմիա՝ Պլատոնին գտնելու: Նրանցից մեկը Պլատոնին փնտրում է բոլոր հավանական վայրերում, բայց չի կարողանում գտնել և հոգնած ու անարդյունք վերադառնում է: Մյուս տղան գնում է մոտակայքում գտնվող անպարարի մոտ և պատահաբար տեսնում է Պլատոնին:

ՀԱՐՑԵՐ ԽՏՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Արդյո՞ք բարոյական է մեկ մարդու հակառակ իր կամքի զոհաբերելով գտնել որևէ հիվանդության բուժում և փրկել տասնյակ հազարավոր այլ մարդկանց:
2. Բարոյագիտական ո՞ր տեսությունն է Ձեզ համար նախընտրելի: Պարասիսանը հիմնավորե՞ք:

ԱՌՋՈՒՂՐՈՒՔ

1. Հիմնվելով Կանտի բարոյագիտական տեսության վրա՝ փորձե՞ք հիմնավորել, թե ինչու ստեյլը, կարիքավորներին չօգնելը անբարոյական են:

2. Քննարկե՞ք հետևյալ իրավիճակը Կանտի տեսության և օգտապաշտության տեսանկյուններից: Արտահայտե՞ք նաև ձեր սեփական դիրքորոշումը:

«Ավտոմեքենան ընթանում է փողոցով: Հանկարծ վարորդը նկատում է, որ փողոցի երթևեկելի մասում կանգնած են 5 մարդ: Եվս 1 մարդ կանգնած է մայթեզրին տեղակայված կանգառում: Վարորդն ի վիճակի չէ արգելակելու: Նա ունի երկու ընտրանք. վրաերթի ենթարկել երթևեկելի մասում կանգնած 5 մարդկանց կամ մայթեզրին կանգնած մարդուն: Ինչպե՞ս վարվի վարորդը»:

ԹԵՄԱ 2. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

ԳԱՍ 4. ԲԱՐԻՆ ՈՒ ՉԱՐԸ

Բարի է այն, ինչը նպաստում է կյանքի պահպանմանը և զարգացմանը, չարն այն է, ինչը ոչնչացնում է կյանքը:

Ա. Շվեյցեր

ԸՆԹԵՐՑԵՔ ՏԵՔՄՍԸ

«Բարի» բառն այնքան կարևոր է մարդու կյանքում, որ բնութագրում է ոչ միայն մարդուն և նրա արարքները, այլև ավելի լայն իմաստով է օգտագործվում: Օրինակ՝ հայերենում մենք օգտագործում ենք «բարի առավոտ», «բարի ճանապարհ» արտահայտությունները: Այսինքն՝ բարին ընկալվում է մաքուր պես տրամադրություն, միջավայր, մտքանք:

♦ Երբ մարդուն համարում եք բարի, ի՞նչ հատկանիշներ եք նրան վերագրում:



Բլեզ Պասկալ
(1623-1662)

Այն ամենը, ինչը հակադիր է բարուն, չար է: «Չար» բառը նույնացվում է հակամարդկայինի, բռնության, խաբեության հետ: Բարի մարդը բարոյապես առողջ է, չար մարդը՝ բարոյապես հիվանդ: Ֆրանսիացի փիլիսոփա *Բլեզ Պասկալի կարծիքով՝ որքան մարդը բարի է, այնքան ավելի չար է ուրիշների մեջ բարոյություն փնտնում:*

Բարոյագիտության մեջ երկար ժամանակ քննարկվել է հետևյալ հարցը. մարդն ի բնե բարի՞ է, թե՞ չար: Ոմանք կարծում են, որ մարդն ի բնե բարի է, մյուսների համոզմամբ՝ մարդն ի բնե չար է, երրորդները կարծում են, որ մարդը ոչ բարի է, ոչ էլ չար: Օրինակ՝ գերմանացի փիլիսոփա Ֆ. Նիցշեն մարդուն համարում էր չար էակ: Ֆրանսիացի փիլիսոփա Ժան-ժակ Ռուսոն կարծում էր, որ մարդն ի բնե բարի է: Նրան չար է դարձնում հասարակությունը:

Կանոնը կարծում էր, որ մարդն ի բնե չար է: Մարդը հակված է չարիք գործելու: Բայց մարդու մեջ կան մաքուր հատիկներ: Բարոյական դաստիարակության հիմնական նպատակը բարու հատիկները զարգացնելն է, որպեսզի դրանք գերիշխեն չարիք գործելու մարդու բնական հակվածության նկատմամբ:

♦ Վերոնշյալ տեսակետներից ո՞րն է Ձեզ համար բնորոնեյի:

Շատ բարոյագետներ այն կարծիքին են, որ անհնար է արմատախիլ անել չարը: «Բարին գոյություն ունի այնքանով, որքանով գոյություն ունի չարը», - ասում են նրանք: Հայտնի փիլիսոփա Օգոստինոս Երանելին ասում էր. «Բարին ավելի

դուրեկան և գովելի է դառնում, եթե հնարավոր է լինում համեմատել չարի հետ»։ Չարը համարվում է կյանքի անհրաժեշտ տարրերից մեկը։ Այն, ինչ մենք կոչում ենք չար, բարոյ հակառակն է։ Առանց չարի չկա նաև բարին։

♦ **Արդյո՞ք համաձայն եք այս տեսակետների հետ: Արդյո՞ք բարին իմաստալից է դառնում այն պատճառով, որ կա չարը:**

Շատ կարևոր է բարին տարբերել օգտակարից: Երբ մենք խոսում ենք օգտակարի մասին, պալա անմիջապես հարց է առաջանում՝ ո՞ւմ համար: Մինչդեռ բարին բոլորի համար է: Թեև առօրեական իմաստով հաճախ բարին ու չարն էլ են դիտարկվում նեղ խմբային իմաստով: Օրինակ՝ պատերազմում կողմերից մեկն իր հաղթանակը կարող է դիտել որպես բարոյ հաղթանակ, իսկ մյուս կողմը՝ չարի հաղթանակ:

ԸՆԹԵՐՑԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՌԱԿԸ

Երկնքի արքայությունը նման է մի մարդու, որ իր արտում բարի սերմ ցանեց: Երբ մարդիկ քնեցին, նրա թշնամին եկավ և ցորենի մեջ որոմներ ցանեց ու գնաց: Եվ երբ ցորենն անեց ու պտուղ տվեց, այդ ժամանակ որոմներն էլ երևացին: Եվ տանտիրոջ ծառաները մոտ գալով նրան ասացին.

- Տե՛ր, մի՞թե Դու էո արտում բարի սերմ չցանեցիր: Այդ որտեղի՞ց են որոմները:

Իսկ նա պատասխանեց.

- Թշնամին է արել դա:

Մտռաներն էլ ասացին նրան.

- Հիմա կուզե՞ս, որ գնանք քաղենք, որոմները դուրս հանենք:

Նա էլ ասաց.

- Ո՛չ: Միգուցե որոմներ քաղելիս ցորենն էլ նրանց հետ պոկեք: Թույլ տվեք, որ երկուսն էլ միասին մեծանան մինչև հունձքը: Եվ ենձի ժամանակ հնձողներին կասեմ, որ առաջ որոմները քաղեն և խուրձ-խուրձ կապեն այրելու համար: Իսկ ցորենը հավաքեն իմ ամբարի մեջ:

Ըստ Աստվածաշնչի

♦ **Մեկնաբանե՛ք առակը:**

ՀԱՅԵՔ ՄՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Արդյո՞ք մարդը կարող է միաժամանակ լինել և՛ բարի, և՛ չար:
2. Սուկրասյեսն ասում էր. «Ով իմաստուն է, նա բարի է»: Համա՞չա՞յն եք այս արեսուկիսի հետ:

Վ ԴԱՍ 5. ՊԱՐՏՔ ԵՎ ԽԻՂՃ

Բարոյական արժեքները կողմնորոշում են մարդուն իր գործողություններում: Բարոյական արժեքներին հետևելը մարդու պարտքն է: Պարտքի չկատարումն ընկալվում է որպես մեղք և տանջում մարդու խիղճը: Բարոյական արժեքները պարտադիր են կատարման համար: Դրանցով պետք է առաջնորդվել ոչ միայն մտերիմ մարդկանց հետ հարաբերություններում, այլև բոլոր մարդկանց հետ: Պարտքը բարոյագիտության հիմնական հասկացություններից է: **Պարտքը** սահմանվում է որպես **պարտականությունները** և **պարտավորությունները** կատարելու անհրաժեշտություն: Անհրաժեշտ է տարբերակել «պարտք», «պարտականություն» և «պարտավորություն» հասկացությունները: Պարտականությունը լայն իմաստով «պարտք» հասկացության հոմանիշն է, բայց մեղ իմաստով վարքագծի պարտադիր տեսակ է, որը սահմանվում է պետության կողմից և նպատակ ունի երաշխավորել այլ մարդկանց իրավունքները: Օրինակ՝ այլ մարդկանց կյանքից չզրկելու պարտականությունը երաշխավորում է նրանց կյանքի իրավունքը, այլ մարդկանց ազատության դեմ ոտնձգություն չկատարելու պարտականությունը՝ նրանց ազատության իրավունքը: Պարտավորությունը այլ մարդկանց, կազմակերպությունների հետ հարաբերություններում որոշակի վարքագծի, ծառայությունների կամավոր ստանձնումն է: Օրինակ՝ աշխատողը կարող է որոշակի ժամկետում ինչ-որ աշխատանք ավարտելու պարտավորություն ստանձնել:

Քանի որ պարտքն անհրաժեշտություն է, ապա այն ենթակա է կատարման, եթե նույնիսկ չի համընկնում մեր ցանկությունների, քմահաճույքների հետ: Պարտքը բարոյական բովանդակություն է ստանում այն դեպքում, երբ դրա կատարումը կամավոր է, այլ ոչ արտաքինապես պարտադրված: Իրավական նորմերը մարդուն պարտադրվում են դրսից: Բարոյական նորմերը հնարավորություն են տալիս մարդուն դրսևորվել որպես ինքնուրույն էակ: Մենք պարտք ունենք մեր ծնողների, հարազատների, ընկերների, բարեկամների առջև: Մարդը պարտք ունի ոչ միայն ներկայի, այլև անցյալի և ապագայի հանդեպ: Օրինակ՝ նախնիների հիշատակը հարգելը մեր պարտքն է: Կամ ապագա հայրերն ու մայրերը պարտավոր են մտածել իրենց առողջության մասին, որպեսզի նոր սերունդը լինի առողջ: Մարդը պարտք ունի ոչ միայն ուրիշների, այլև ինքն իր առջև: Ըստ բարոյագետների կարծում են, որ մարդու ձգտումն ինքնակատարելագործման սեփական անձի հանդեպ պարտք է: Ուրիշները մարդու պարտքն են համարում երջանկության հասնելը:

Պարտքի հասկացությունն առանցքային դեր ունի Իմանուիլ Կանտի տեսության մեջ: Վերհիշենք, որ Կանտը բարոյական էր համարում միայն այն արարքները, որոնք հիմնվում են պարտքի վրա: Ըստ Կանտի՝ յուրաքանչյուր մարդ ունի ինչ-որ բաներ անելու հակումներ, ցանկություններ: Օրինակ՝ մարդը կարող է հակված լինել աշխատելու, հանգստանալու, աղքատներին օգնելու: Եթե մարդը պարզապես ցանկանում է օգնել աղքատներին, լինել բարի, ապա, ըստ Կանտի տեսության, դա դեռևս լիարժեք բարոյականություն չէ: Բարոյական է այն արար-

քը, երբ մարդը լիարժեք հիմքեր ունի որևէ մեկին չարությամբ վերաբերվելու, բայց այդպես չի վարվում՝ հիմնվելով բարոյական պարտքի վրա: Կանոնի տեսության մեջ բարոյականությունը և պարտքը նույնականացված են:

Խիղճ

Խիղճը մարդու կարողությունն է քննադատորեն դիտարկելու իր արարքները, մտքերը, ցանկությունները: Խիղճը մարդու ինքնագնահատականն է, ինքնակառավարումը: Գերմանացի փիլիսոփա Կանտը խիղճը համարում է մեր մեջ ապրող օրենք, իսկ ֆրանսիացի փիլիսոփա Հոլբախը՝ մեր ներքին դատավորը: Ինչպես պարտքը, այնպես էլ խիղճը կախված չէ ուրիշների կարծիքից: Դրանով է խիղճը տարբերվում մարդու ներքին կարգավորման մեկ այլ ձևից՝ ամոթից: Ամոթն անբողոքությամբ հիմնված է ուրիշների կարծիքի վրա: Այսինքն՝ մարդն ամաչում է, երբ կարծում է, թե ուրիշներն քրեան կմեղադրեն հասարակական նորմերը խախտելու մեջ: Ամոթի զգացումն առավել խորն է այն դեպքում, երբ այդ մարդիկ շատ կարևոր են իր համար: Սենեկան ամոթի մասին ասել է. «Ամոթն արգելում է այն, ինչն արգելված չէ օրենքով»:

Խիղճը տարբերվում է ամոթից: Դեռևս հին աշխարհում փիլիսոփաները խոսել են խղճի մասին: Հին հույն փիլիսոփա Գեոկրիտը, առանց «խիղճ» հասկացությունն օգտագործելու, ասել է. «Ոչ մի վատ բան մի խոսի՛ր կամ արա, նույնիսկ եթե միայնակ ես»: Խրիմյան Հայրիկը խղճի մասին ասել է հետևյալը. «Խիղճը եաշվեպահպան ոստիկան է, որն իբրև դատավոր սրտի սրտի վրա բազմած խայթահարում է միշտ»: Խիղճը ֆոխկապակցված է պարտքի զգացման հետ: Խիղճը կապված է ոչ թե այլ մարդկանց կարծիքի, այլ պարտքի հետ: Շատ հաճախ խիղճը համարվում է մարդու երկրորդ ես-ը: Որոշ բարոյագետների կարծիքով՝ խիղճը Աստծո ձայնն է: Այս իմաստով խիղճը մարդու պատասխանատվությունն է իր առջև:


Անորոշյալում մենք հաճախ ենք օգտագործում «մաքուր խիղճ», «հանգիստ խիղճ» արտահայտությունները:

- **Փորձե՛ք վերհիշել դրվագներ Ձեր կյանքից, երբ արտաբերել եք «խիղճս մաքուր է» կամ «խիղճս հանգիստ է» արտահայտությունները:**

Բարոյագիտության մեջ կան տարակարծություններ այն հարցի շուրջ, թե ինչպե՞ս հնարավոր է «մաքուր խիղճ» ունենալ: Շատ բարոյագետներ կարծում



Փոլ Հոլբախ
(1723-1789)



Գեոկրիտ
(մ.թ.ա. 460 - մահվան թիվն անհայտ է)

են, թե խղճով մարդը միշտ ձգտում է ինքնակատարելագործման և իր առջև նորանոր պահանջներ է դնում: Նման դեպքում մարդն ավելի խստապահանջ է դառնում իր նկատմամբ, և նրա խիղճը կարող է տանջել այնպիսի բաների համար, որոնց նկատմամբ ուրիշներն անտարբեր են: Մարդը միշտ հակված է սխալներ գործելու: Հետևաբար, հնարավոր չէ ունենալ մաքուր խիղճ: Այն մարդիկ, ովքեր կարծում են, թե իրենց խիղճը մաքուր է, բարոյապես հասուն չեն կամ էլ անհոգի են:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ մարդը կարող է ունենալ մաքուր խիղճ: Մաքուր խիղճն այն գիտակցությունն է, որ Դուք ընդհանուր առմամբ կատարում եք Ձեր բարոյական պարտքը և, ըստ էության, չեք շեղվում բարոյական արժեքներից:

- ◆ Արտահայտեք Ձեր դիրքորոշումն այս երկու մոտեցումների վերաբերյալ: Ո՞ր տեսակետն է ավելի ընդունելի Ձեզ համար:

Մենք հաճախ օգտագործում ենք նաև «խղճի ազատություն» հասկացությունը: Այն նշանակում է մարդու իրավունք՝ ունենալու անկախ ներքին հոգևոր կյանք և համոզմունքներ: Ջուտ բարոյագիտական տեսանկյունից «խղճի ազատություն» արտահայտությունն անիմաստ է, քանի որ խղճի մեջ ազատության իմաստն արդեն իսկ ներառված է:

ԱՌՆՁԱԿՐԱՆՔ

- 1. Համենատե՛ր «պարտք», «խիղճ», «ամոթ» հասկացությունները:
- 2. Արտահայտե՛ք ձեր տեսակետը «Բոլոր մարդիկ խիղճ ունեն» արտահայտության վերաբերյալ:

ԳԱՏ 6. ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին հայացքից թվում է, թե երջանկության հարցը բարոյական չէ, քանի որ այն վերաբերում է անհատներին և չունի հասարակական նշանակություն: Բայց երջանկությունը պատասխանն է այն հարցի, թե որն է լավ կյանքը, և մարդն ինչի պետք է ձգտի:

Երջանկության հարցը մշտապես հուզել է մարդուն: Շատերի կարծիքով՝ երջանիկ լինելը կյանքի գերագույն նպատակն է: Երջանկությունը և դրան հասնելու ուղիները եղել են նաև բարոյագիտության առաջին խնդիրներից մեկը:

Պատմության ընթացքում երջանկության տարբեր ըմբռնումներ են առաջարկվել: Մասնավորապես, հին հունարենում «երջանկություն» բառը՝ **եվդեմոնիա**, բառացիորեն նշանակել է աստվածների հովանու տակ գտնվող մարդու ճակատագիր: Մրա հիման վրա ձևավորվել էր տեսակետ, որ երջանիկ լինել նշանակում էր արժանանալ աստվածների բարեհաճությանը, լինել հաջողակ: Բայց երջան-

կոթյան մման ընկալման պարագայում ստացվում է, որ ոչինչ կախված չէ մարդուց: Իհարկե, կյանքում բախտը կարող է ժպտալ մարդուն: Բայց դա դեռևս երջանկություն չէ, քանի որ պատրաստի տրվածը ոչ միշտ է մարդու մեջ առաջ բերում երջանկության զգացում: Մինչդեռ զգացողությունը երջանկության կարևորագույն բաղադրիչն է:

Քրիստոնեության մեջ երջանկություն է համարվում Աստծո հետ անմիջական կապը: Հին հույն բարոյագետ Էպիկուրի կարծիքով՝ երջանկությունը մարդու այն հոգեվիճակն է, երբ նա գտնվում է հանգստության, հոգեկան անդորրի մեջ:


Երջանկությունը շատ հաճախ նույնացվում է ուրախության հետ: Բայց դրանք տարբեր են: Հաճախ ասում են, որ մարդն ուրախություն ապրում է առանձին իրադարձությունների պարագայում, իսկ երջանկությունը տևական ուրախությունն է: Բացի այդ, մարդն ուրախությունն արտահայտում է ավելի բուռն, ավելի հուզականորեն, իսկ երջանկությունը՝ ավելի չափավոր:

Կա երկու մոտեցում երջանկության մասին: Առաջին երջանկությունը ճակատագրի նվերն է, հաջողություն, պատահականություն: Մյուսներն այն փարձիքին են, որ երջանկությունն ամբողջությամբ կախված է մարդուց, նրա բնավորությունից, կամքից և ձգտումներից: XVIII դարի հայտնի փիլիսոփա Ժան-ժակ Ռուսոն ասել է. «Երջանիկ լինելու արժեստն այն բանի գիտակցումն է, որ երջանկությունը ջո ձեռքերում է»:


Որոշ հասարակագետների կարծիքով՝ երջանկությունը չպետք է ընկալել որպես կյանքից բացարձակ բավարարվածության զգացում: Եթե մարդն ունենա բացարձակ բավարարվածության զգացում, ապա այլևս ոչինչ չի անի: Նոր բարձունքների և նվաճումների հավերժ ձգտելու զգացումն է երջանկությունը: Մարդու առանձնահատկությունն այն է, որ նա երբեք չի բավարարվում ձեռք բերածով:

♦ Արտահայտեք ձեր դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ:

Կարելի է ասել, որ մարդկային երջանկությունը հակասական է: Այն իր մեջ ներառում է ինչպես բավարարվածության, այնպես էլ անբավարարվածության, նոր նվաճումների ձգտելու զգացումները: Կարելի է ասել, որ երջանկությունը բավարարվածության և անբավարարվածության զգացումների շարունակական հեր-



Էպիկուր
(մ.թ.ա. 341-270)



Ժան-ժակ Ռուսո
(1712-1778)

բափոխում է: Եթե կյանքը լիներ միայն բավարարվածության շղթա, առանց անբավարարվածության, ապա չէր լինի նաև բավարարվածության զգացումը: Մի խումբ երիտասարդների հարցրել են, թե ինչ կլինի, եթե աշխարհից վերանա դժբախտությունը: Նրանց մեծ մասն ասել է, որ այդ դեպքում աշխարհում չեն լինի ուրախություն, երջանկություն, սեր և ընկերություն:

Բայց ոչ միշտ է անբավարարվածությունը կապված երջանկության հետ: Երջանկության հետ կապված է այն անբավարարվածությունը, որը մարդուն մղում է նոր ձեռքբերումների: Իսկ եթե անբավարարվածությունը ձախողման արդյունք է, ապա դա կարող է հանգեցնել տառապանքի և դժբախտության:

Երջանկություն և հարստություն

Կա տեսակետ, որ երջանկությունը հարստության մեջ է: Բայց հարց է ծագում. արդյո՞ք հարստությունը կարող է երջանկություն պարգևել, արդյո՞ք ամեն զնով



Դենի Դիդրո
(1713-1784)

ձեռք բերված հարստությունը կարող է մարդուն երջանիկ դարձնել: Հին աշխարհի հայտնի փիլիսոփա Մենեկան հարստության և երջանկության մասին ասել է. «Բացե՛ք Ձեր տան դռները և հանրությանն առաջարկե՛ք տանել այն, ինչը համարում են իրենց սեփականությունը կամ իրենցից գողացված: Եթե Ձեր տնից ոչինչ չտանեն, ապա դուք իրոք հարուստ եք: Չպետք է Ձեր տուն մուտք գործի անազնիվ ծագման ոչ մի լումա»:

Հարստությունից չպետք է հրաժարվել, բայց չպետք է մտածել, որ երջանկությունը հարստության մեջ է: Հարուստների մեջ կան ինչպես երջանիկներ, այնպես էլ դժբախտներ:

Շատերը խոսում են այն մասին, որ երջանկությունն այլ մարդկանց երջանկացնելու մեջ է: «Ամենաերջանիկ մարդը նա է, ով երջանկություն է պարգևում մեծ թվով մարդկանց», - ասում էր ֆրանսիացի փիլիսոփա Դենի Դիդրոն:

♦ **Համաձայն եք այն մտտեցման հետ, որ ուրիշը կարող է երջանկացնել Ձեզ: Պատասխանը եիմնավորե՛ք:**

Երջանկությունն ու դժբախտությունը կողք կողքի են: Քանի որ մարդիկ տարբեր են, հնարավոր չէ ունենալ հասարակություն, որտեղ բոլոր մարդիկ երջանիկ լինեն: Կյանքում լինում են նաև իրավիճակներ, երբ մեկի երջանկությունը բերում է մյուսի դժբախտությանը:

Սովորաբար մարդու երջանկության վրա ազդում են ինչպես անձնական ձեռքբերումները, այնպես էլ միջավայրը: Օրինակ, եթե որևէ երկիր ներքաշված է պատերազմի մեջ, եթե տեղի է ունեցել բնական աղետ, եթե համատարած աղ-

քատություն է, ապա նորմալ մարդը չի կարող իրեն երջանիկ զգալ նման միջավայրում:

Երջանկությունը չպետք է լինի եսասիրական: Հենց այս գործոններն են կարևոր բարոյականության տեսակետից: Բարոյական մարդը չի կարող երջանիկ զգալ, երբ իր շրջապատում շատերը դժբախտ են: Բարոյականության հիմքում հոգածությունն է այլ մարդկանց հանդեպ:

Կա տեսակետ, որ մարդն ինչքան քիչ մտածի երջանիկ լինելու մասին, այնքան ավելի երջանիկ կլինի: Եվ հակառակը, որքան մարդն ավելի շատ ձգտի երջանկության, այնքան ավելի դժվար կլինի երջանկության հասնելը:

ՀԱՐՅԵՐ ՄՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Արդյո՞ք համաշայն եք այն փեսակերպի հետ, քե՛ր թողո՞ր երջանիկ մարդիկ նման են իրար: Պատասխանը հիմնավորե՛ք:
2. Արդյո՞ք երջանիկ լինելու համար պետք է անընդհատ չզգու՞ղ երջանկության:
3. Նշե՛ք, քե՛ ինչ է պետք Ձեզ երջանիկ զգալու համար:

ԱՌԱՋԱՊԻՆՔ

✍ 1. Ձեզ տրված է հնարավորություն երեք հարց ուղղելու մարդուն պարզելու համար՝ արդյոք երջանիկ է նա: Նշե՛ք այդ երեք հարցերը:

✍ 2. Ստորև նշված արժեքներից որո՞նք են կարևոր Ձեզ երջանիկ մարդ համարելու համար: Դասակարգե՛ք ըստ կարևորության.

ընկերներ, հարստություն, լավ կրթություն, սիրած աշխատանք, շրջապատի կողմից գնահատված լինելու զգացում, հարգված լինել, առողջություն, խաղաղություն, բարեկեցիկ հասարակություն, լավ ընտանիք:

✍ 3. Ընթերցե՛ք ստորև բերվող ասույթները և արտահայտե՛ք Ձեր դիրքորոշումը:

Երջանիկ է նա, ով բավարարվում է էջով:

Հապոնական ասացվածք

Քանի որ այս աշխարհում երջանիկ են էջով բավարարվող մարդիկ, ապա ինչքան դժբախտ են հարուստները, որոնց երջանիկ լինելու համար շատ բան է պետք:

Լաոռչֆուկո

Մարդուն հնարավոր չէ սովորեցնել երջանիկ լինել, բայց կարելի է նրան այնպես դաստիարակել, որ երջանիկ լինի:

Ա. Մակարենկո

ԴԱՍ 7. ԷԳՈՒԶՄ ԵՎ ԱԼՏԵՐՖԻԶՄ

Էգոիզմը (լատ. ego – «ես» բառից) դիրքորոշում է, որի համաձայն սեփական շահերին հետամուտ լինելը դիտարկվում է որպես բարիք: Հետևաբար, յուրաքանչյուր որ պետք է ձգտի բավարարել սեփական շահերը՝ անտեսելով ուրիշների կամ ընդհանուր շահերը:

◆ **Քերեք էգոիզմի օրինակներ:**

Էգոիզմին հակադրվում է **ալտերոիզմը** (լատ. alter – «ուրիշ» բառից): Դա բարոյական այն դիրքորոշումն է, որի համաձայն յուրաքանչյուր որ պետք է անշահախնդիր վարքագիծ դրսևորի՝ ուղղված այլ մարդկանց շահերին: Ալտերոիստը այն մարդն է, ով ավելի շատ հոգ է տանում ուրիշի, քան իր մասին:

◆ **Քերեք ալտերոիզմի օրինակներ:**

Սովորաբար էգոիզմը համարվել է բացասական սկզբունք, իսկ ալտերոիզմը՝ դրական: Հաճախ էգոիզմի և ալտերոիզմի հակադրությունը մտանցեցրել են բարու և չարի հակադրությանը: Բայց էգոիզմի և ալտերոիզմի ընկալումը միանշանակ չէ:

Էգոիզմ

Էգոիզմի վերաբերյալ կան հակասական մեկնաբանություններ: Ոմանք էգոիզմը դիտարկում են որպես կյանքի շարժիչ ուժ: Մասնավորապես, գործարարության մեջ մարդը, հետապնդելով սեփական շահերը, ստեղծում է աշխատատեղեր և նպաստում նաև այլ մարդկանց բարօրությանը: Նույն տրամաբանությամբ էգոիստական մղումներով՝ շահույթ ստանալու նպատակով, մարդիկ ստեղծում են բազմաթիվ արժեքներ (սարքեր, դեղամիջոցներ), որոնք հետագայում քարելավում են հասարակության լայն զանգվածների կյանքը: Էգոիզմը դրական երևույթ համարող մտածողները կարծում են, որ մարդն իր կյանքի զգալի հատվածն անցկացնում է իր մասին հոգ տանելով, ինչի արդյունքում էգոիզմը միանգամայն ընդունելի դիրքորոշում է:



Վլադիմիր Սոլովյով
(1853-1900)

Այդուհանդերձ, բարոյագիտական տեսանկյունից էգոիզմը դիտարկվում է որպես բացասական դիրքորոշում: Մասնավորապես, կա տեսակետ, որ էգոիզմը ուրիշների հաշվին սեփական անձի մասին հոգ տանելն է: Ռուս փիլիսոփա Վլադիմիր Սոլովյովը, անդրադառնալով էգոիզմի խնդրին, նշել է, որ ամենեւին վատ չէ, երբ մարդն ինքն իրեն արժևորում է, երբ ինքն իր մասին հոգ է տանում: Էգոիզմի չարությունն այն է, որ մարդը, բարձր գնահատելով իրեն, նույնը չի անում ուրիշների հանդեպ: Իսկ Արիստոտելի կարծիքով՝ էգոիզմի վտանգը ոչ թե այն է, որ մարդն ինքն իրեն սիրում է, այլ այն, որ անհրաժեշտից ավելի շատ է սիրում:

Քարոյագիտության մեջ էգոիզմի մասին առկա տարակարծությունների արդյունքն է այն, որ կա էգոիզմի երեք ընկալում.

1. **Բոլորը պեպք է ծառայեն իմ շահերին:**

2. **Բոլորը պեպք է առաջնորդվեն բարոյական նորմերով, բացի ինչնից:**

3. **Բոլոր մարդիկ պեպք է հեղամուտք լինեն իրենց շահերի իրագործմանը:**

Այնհայտ է, որ առաջին և երկրորդ ընկալումները ակնհայտորեն հակադրվում են քարոյականության ոսկե կանոնին, քանի որ վերջինս մարդուց պահանջում է հավասարություն և փոխադարձություն: Այս ընկալումները նաև հակադրվում են մարդասիրության սկզբունքներին, քանի որ թույլատրելի են համարում սեփական նպատակներին հասնելու համար այլ մարդուն որպես միջոց օգտագործելը:

Ինչ վերաբերում է երրորդ մոտեցմանը, ապա այն կարող է դիտարկվել բարոյական դիրքորոշում, եթե վերածնակերպենք հետևյալ կերպ. «Բոլորը կարող են հետամուտ լինել իրենց շահերի պաշտպանությանը, եթե չեն ուսնահարվում այլոց շահերը»: Այլ կերպ ասած. «Մի՛ վնասիր»:

Ալտրուիզմ

Ալտրուիզմը բարոյական տեսանկյունից դիտարկվում է որպես դրական սկզբունք: Չափավոր ձևակերպմամբ՝ ալտրուիզմ նշանակում է ուրիշների մասին ավելի շատ հոգ տանել, քան սեփական անձի: «Վարվիր այնպես, որ քո անձնական շահը ծառայի ուրիշի շահին», - այսպիսին է չափավոր ալտրուիզմի կանոնը: Ծայրահեղ ձևակերպմամբ՝ ալտրուիզմ նշանակում է սեփական անձի հաշվին հոգ տանել ուրիշների մասին: Որպես ալտրուիզմ բառի հոմանիշ հաճախ օգտագործում են «ինքնագոհաբերում», «անձնագոհություն» քառերը:


Թեև ընդհանուր առմամբ ալտրուիզմը դիտվում է որպես դրական հատկանիշ, սակայն կան տեսակետներ, որ ալտրուիզմը հատկապես վնասակար է այն մարդկանց համար, ում ուղղված է: Անգլիացի գրող Օսկար Ուայլդն իր պիեսներից մեկում հերոսի միջոցով ասում է հետևյալը. «Ինքնագոհաբերումը պետք է օրենքով արգելվի, քանի որ բարոյագրվում է նրանց, ում գոհաբերություն է մատուցվում»: Մարդկանց մի մասի ալտրուիզմը հանգեցնում է մեկ այլ մասի էգոիզմին: Այլ մարդկանց հանդեպ չափից ավելի հոգատար լինելը բերում է նրան, որ այն մարդիկ, ում ուղղված է հոգատար վերաբերմունքը, սկսում են իրենց մասին հոգ չտանել, ծուլանալ:

♦ **Համաձայն էք այս տեսակետի հետ:**



Օսկար Ուայլդ
(1854-1910)

ԸՆԹԵՐՑԵՔ ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԵՔ ՀԱՋՈՐԴՈՂ ՀԱՐՑԵՐԻՆ



**Յրհղորդիս Նիցչե
(1844-1900)**

Կալանավորների երկընտրանք

Երկու կալանավորվածներ մեղադրվում են հանցանքի մեջ: Նրանք պահվում են իրարից առանձին և միմյանց հետ շփվելու հնարավորություն չունեն: Նրանց կատարած հանցանքի վերաբերյալ չկան ապացույցներ: Գործը բննող բննիչը կալանավորներին առաջարկում է հետևյալ տարբերակները.

Ա. Եթե երկուսն էլ ընդունեն իրենց հանցանքը, ապա կազատագրվեն 3-ական տարով:

Բ. Եթե երկուսն էլ չխոստովանեն, ապա կդատապարտվեն 5-ական տարով:

Գ. Եթե նրանցից մեկը խոստովանի, իսկ մյուսը՝ ոչ, ապա խոստովանողը կդատապարտվի 10 տարով, իսկ մյուսն ազատ կարձակվի:

ՀԱՐՑԵՐ ՍՏՈՐԵՎՈՒ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ կարացվի, եթե կալանավորները մտածեն միայն իրենց շահերը պաշտպանելու մասին:
2. Ի՞նչ որոշում կկայացնեն կալանավորները, եթե նրանց հնարավորություն տրվի որոշում կայացնել միմյանց հեղ իրենցից հետո:
3. Ի՞նչ որոշում կկայացնեն կալանավորները, եթե երկուսն էլ գործեն արբորուհարական սկզբունքով:

ԿՈՍՉԱՊՐԱՆՔ

1. Արտահայտե՛ք Ձեր դիրքորոշումը հետևյալ դատողության վերաբերյալ. «Մարդկանց մեծ մասը էգոիստներ են, բայց ոչ բոլորն են դա խոստովանում»:

2. Գերմանացի փիլիսոփա Ֆ. Նիցչեն համարում էր, որ սերը մարդու էգոիզմի դրսևորում է, իսկ ռուս փիլիսոփա Մոլոտովի կարծիքով՝ սերը մարդու էգոիզմը հաղթահարելու ձևերից մեկն է: Արտահայտե՛ք Ձեր դիրքորոշումն այս երկու տեսակետների վերաբերյալ:

ԹԵՄԱ 3. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՇՈՒԴԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՅՈՒՄ

ԴԱՄ 8.9. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՇՈՒԴԱՏՈՒՄՆԵՐ

ԸՆԹԵՐՅԵՔ ՏԵՔՍԵ

XX դարի հայտնի քարոյագետ Լուսիննա Քուլբերգը մշակել է քարոյական կշռադատման սանդղակ, որն ունի երեք մակարդակ՝ երկուական աստիճանով:

Քարոյական զարգացման մակարդակներն ըստ Քուլբերգի

Մակարդակ 1. Մինչպայմանական

Քարոյական զարգացման այս մակարդակում գտնվող մարդիկ հաշվի են առնում հեղինակավոր անձանց իշխանությունը և այնպիսի գործոններ, ինչպիսիք են պատիժը, պարգևը կամ փոխադարձ լավությունները: Այս մակարդակը ներառում է հետևյալ երկու աստիճանները.

Աստիճան 1. Հնազանդություն իշխանությանը: Այս աստիճանում գործողության լավ կամ վատ լինելը որոշելիս հաշվի են առնում ոչ թե տվյալ գործողության մարդկային կամ արժեքավոր բնույթը, այլ դրա ֆիզիկական հետևանքները: Այս աստիճանում մարդիկ մտածում են պատժից խուսափելու կամ պարգևներ վաստակելու մասին. «Արա այն, ինչ քեզ ասում են», «Հայրիկն ասում է, որ ես պետք է այդպես վարվեմ»:

Աստիճան 2. Սեփական կարիքների բավարարում: Այս աստիճանում կշռադատող մարդիկ կատարում են գործողություններ, որոնք բավարարում են անձի սեփական կարիքները, իսկ երբեմն նաև այլոց կարիքները: 2-րդ փուլում կշռադատումը հաճախ ունենում է արդարացիության տարրեր, սակայն դրա պատճառը ոչ թե արդարության զգացումն է, այլ շահամոլությունը: «Ես դրանից ի՞նչ օգուտ կստանամ»:

Մակարդակ 2. Պայմանական

Այս մակարդակում քարոյական կշռադատման մեջ սկսում են հաշվի առնել այլոց, հատկապես ընտանիքի և շրջապատի կարիքներն ու շահերը: Տվյալ մակարդակում կշռադատող մարդը ձգտում է անփոփոխ թողնել առկա վիճակը:

Աստիճան 3. Այս աստիճանում մարդիկ լավ վարքագիծը հավասարեցնում են քրիշներին հաճույք պատճառող կամ օգուտ տվող, ինչպես նաև այլոց հավանությանն արժանացող վարքագծին: 3-րդ փուլում գտնվելիս մարդիկ հաճախ առաջ-

նորդվում են մեծամասնության տեսակետներով. «Եթե այդպես վարվեմ, ի՞նչ կմտածեն ընկերներս»:

Աստիճան 4. Այս աստիճանում մտածողությունը կողմնորոշվում է իշխանության, ամրագրված կանոնների և հասարակական հարաբերությունների պահպանման ուղղությամբ: Ճիշտ վարքագիծ է համարվում սեփական պարտականությունները կատարելը, իշխանության նկատմամբ հարգանք դրսևորելը. «Մա՞ է լավագույն քայլն իմ հասարակության համար», «Իմ հասարակությունն ընդունելի՞ է համարում իմ այս քայլը»:

Մակարդակ 3. Սկզբունքային կամ հեղափոխական

Այս մակարդակում բարոյական կշռադատումը և որոշումների կայացումը իրականացվում է համամարդկային սկզբունքների, այլ ոչ թե որևէ մեկ անձի կամ հասարակության կարիքների հիման վրա: Փիլիսոփաներ Պլատոնի, Կանտի, Չոն Ռուլսի բարոյագիտական տեսությունները համապատասխանում են 5-րդ և 6-րդ աստիճաններին: Քոլբերգը գտնում է, որ մարդկանց ընդամենը 10 տոկոսն է կարողանում 4-րդ աստիճանից վեր բարձրանալ:

Աստիճան 5. Այս աստիճանում մարդիկ կշռադատում են անհատի ընդհանուր իրավունքների և հասարակության կողմից ընդունված շափանիշների հիման վրա: 5-րդ աստիճանում մարդիկ մտածում են օրինապահության տեսակետից, բայց կարևորում են ողջախոհ ձևով օրենքները փոխելու հնարավորությունը. «Եթե այս օրենքը հասարակության համար լավ չէ, ապա այն կարող է փոխվել»:

Աստիճան 6. Այս աստիճանում մարդիկ որոշումներ են կայացնում իրենց իսկ ընտրած այնպիսի բարոյական սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են արդարությունը, հավասարությունը կամ արժանապատվությունը. «Մա իրո՞ք լավագույն տարբերակն է բոլոր մարդկանց համար, նույնիսկ եթե ինձանից գոհողություն է պահանջում», «Իմ հասարակությունը սրանից օգուտ չի ստանա, սակայն սա ճիշտ տարբերակն է, որը պետք է իրականացնել, քանի որ երկարատև հատվածում այն կնպաստի Մոլորակի բոլոր բնակիչների միջև հավասարության ապահովմանը»:

Հեղիություններ

Բարոյական զարգացման վեց աստիճանների թվարկումից հեղու կարելի է անել հեղույալ եզրահանգումները.

1. Բարոյական կշռադատման միջոցով կայացվող որոշումներն աստիճանաբար փոխվում են եսասիրականից դեպի ոչ եսասիրական:

2. Որոշումներ կայացնելիս մարդիկ մտածում են, թե ինչն է ճիշտ կոնկրետ իրավիճակում: Այդ որոշումը կայացնելիս մարդիկ առաջնորդվում են եսասիրական և ոչ եսասիրական կշռադատմամբ՝ կախված, թե իրենք ո՞ր փուլում են այդ ժամանակ գտնվում:

ԸՆԹԵՐՅԵՔ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԸ ԵՎ ԿԱՏԱՐՔԻ ՀԱՋՈՐԴՈՂ ԱՌԱՋԱԳՐԱՆՔԸ

Գևորգը և Արսենը լավ ընկերներ էին: Մի օր նրանք միասին գնացին գնումներ կատարելու: Արսենը փորձելու համար հագավ մի սվիտեր և, ի գարմանս Գևորգի, վերարկուի տակից սվիտերը հագին դուրս եկավ խանութից: Հաջորդ պահին խանութի աշխատակիցը կանգնեցրեց Գևորգին և պահանջեց ասել դուրս եկած տղայի անունը: Այս աշխատակիցը խանութի տիրոջն ասաց, որ երկու տղաներին տեսել էր միասին և որ վստահ էր, թե ապրանքը գողացել էր նրա՝ խանութից դուրս եկած ընկերը: Խանութի տերն ասաց Գևորգին, որ վերջինս կարող է խնդիրներ ունենալ, եթե չասի իր ընկերոջ անունը:

ԱՌԱՋԱԳՐԱՆՔ

Ստորև նշվում են երկրնորանքի մի քանի պատասխաններ: Ընթերցե՛ք դրանք և նշե՛ք, թե որ պատասխանը բարոյական կշռադատումների ո՞ր մակարդակին և աստիճանին է համապատասխանում:

1. Գևորգը չպետք է ասի, եթե Արսենը Գևորգին լավություն է արել:
2. Ընկերությունը կարևոր է, սակայն օրենքներ խախտելն արդար չէ: Եթե օրենքներին չենթարկվենք, հասարակությունը կքայքայվի:
3. Գևորգը չպետք է ասի: Եթե ասի, խնդիրներ կունենա Արսենի հետ: Արսենը և նրա ընկերները Գևորգի կյանքը դժոխքի կվերածեն:
4. Գևորգը չպետք է ասի ընկերոջ անունը, ի՞նչ կմտածեն մարդիկ դավաճան ընկերոջ մասին:
5. Խանութից գողություն անելը սխալ է, նույնիսկ եթե մեկ գող կա և մեկ տուժող: Խանութից գողություն անողը խախտում է խանութի տիրոջ իրավունքները:
6. Գևորգը պետք է ասի: Եթե չասի, խնդիրներ կունենա:
7. Ինչո՞ւ պետք է Գևորգը խնդիրներ ունենա Արսենի պատճառով: Եթե Արսենը միայն իր մասին էր մտածում, ապա նույնը պիտի անի նաև Գևորգը:
8. Գևորգը պետք է ասի, որովհետև եթե չասի, նա կհամարվի հանցագործության մասնակից:
9. Գևորգը պետք է ասի, չնայած որ դա շատ դժվար կլինի անել: Ընկերությունը կարևոր է, սակայն օրենքներ խախտելն արդար չէ: Եթե օրենքներին չենթարկվենք, հասարակությունը կքայքայվի:

ԴԱՍ 10. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՐԿԸՆՏԲԱՆՔՆԵՐ

Մեզանից յուրաքանչյուրը կյանքում պարբերաբար որոշումներ է կայացնում: Լինում են որոշումներ, որոնք մենք կայացնում ենք առանց երկմտելու: Բայց հաճախ լինում են իրավիճակներ, որոնցում որոշումներ կայացնելը շատ դժվար է: Հատկապես դժվար է որոշում կայացնել, երբ մենք երկընտրանքի առջև ենք: Երկընտրանքներն այնպիսի իրավիճակներ են, որոնցում առկա է մեզ համար կարևոր արժեքների բախում: Օրինակ՝ կարող են լինել իրավիճակներ, որոնցում մեր ընկերը անօրինական քայլ է կատարել: Տվյալ դեպքում մի կողմում ընկերության արժեքն է, մյուս կողմում՝ օրինականության: Երկուսն էլ մարդու համար կարևոր են և շատ դժվար է ընտրություն կատարել: Երկընտրանքն առաջանում է այն դեպքում, երբ լուծման երկու տարբերակներն էլ մեզ համար ընդունելի են թվում:

Երկընտրանքների ժամանակ մարդու որոշումները կարող են առաջնորդել երեք հիմնական սկզբունքներ.

1. **Հեղեղանքը կարևորող սկզբունք:** Այս սկզբունքի էությունն այն է, որ մարդը որոշում կայացնելիս հաշվի է առնում այն հանգամանքը, թե որքանով է որոշումն օգտակար և ընդունելի մարդկանց մեծ մասի համար:
2. **Կանոնները կարևորող սկզբունք:** Այս մտտեցման էությունն այն է, որ մարդը որոշում կայացնելիս հաշվի է առնում որոշման համապատասխանությունը բարոյական կանոններին: Օրինակ, եթե մարդու համար ընդունելի է «մի՛ ստիր» պատգամը, ապա որոշում կայացնելիս նա պետք է առաջնորդվի այդ կանոնով՝ անկախ հետևանքներից:
3. **Բարոյականության ուկե կանոնը** «Կարվիր ուրիշի հետ այնպես, ինչպես կուզեիր, որ քեզ հետ վարվեին» կարևորող սկզբունք: Այս մտտեցման էությունն այն է, որ որոշումներ կայացնելիս մարդը պետք է փորձի իրեն «դնել ուրիշի վիճակի մեջ»:

Բարոյագիտության մեջ փորձ է արվել դասակարգել երկընտրանքները: Ըստ տարածված դասակարգումներից մեկի՝ կա բարոյական երկընտրանքի 4 տարատեսակ (տե՛ս գծապատկերը):

ՄԱՍՉԱԳՐԱՆԵՐ

Ընթերցե՛ք ստորև ներկայացվող իրավիճակը և պատասխանե՛ք հաջորդող հարցերին:

Արմինեն և Մարգարիտը համադասարանցի ընկերուհիներ են: Ամեն կիրակի նրանք գնում են այգի՝ զբոսնելու: Հերթական շաբաթ օրը Արմինեն զանգահարում է Մարգարիտին՝ հաջորդ օրվա համար պայմանավորվելու նպատակով: Բայց Մարգարիտն ասում է, որ սոնային գործեր կան և չի կարող գալ այգի: Արմինեն շատ տխրում է, քանի որ նրանք առաջին անգամ խախտելու են ավանդույթը: Կիրակի օրը Արմինեն որոշում է միայնակ գնալ այգի: Այգում նա նկատում է Մարգարիտին մեկ այլ դասընկերուհու հետ զբոսնելիս:

Բախվող արժեքները.
Երկարաժամկե՞տ, թե՞ կարճաժամկետ
 Ընտրանք 1. Լավագույն ելքը այս պահի համար:
 Ընտրանք 2. Լավագույն ելքը ապագայի համար:

Բախվող արժեքները.
ճշմարտություն՞, թե՞ կողմնապահություն
 Ընտրանք 1. Լինել ազնիվ այլ մարդու նկատմամբ:
 Ընտրանք 2. Լինել կողմնապահ մտերիմ մարդու նկատմամբ:

ԵՐԿԸՆՏՐԱՆՔԻ ՉՈՐՍ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ

Բախվող արժեքները.
Արդարամտություն՞, թե՞ խղճահարություն
 Ընտրանք 1. Ենթարկվել օրենքին, քանի որ այն արդար է:
 Ընտրանք 2. Շրջանցել օրենքը՝ ելնելով խղճահարությունից:

Բախվող արժեքները.
Անհա՞տ, թե՞ համայնք
 Ընտրանք 1. Ի՞նչն է ճշմարիտ անհատի կամ մի քանի հոգու համար:
 Ընտրանք 2. Ի՞նչն է ճշմարիտ մեծ խմբի համար:

Արմինեն շատ եհասարակված է և իրեն խաբված է զգում: Արմինեն մտածում է՝ արդյո՞ք ճիշտ կլինի, եթե հակադրվի Մարգարիտին:

ՀՄՏԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՆ ՀԱՄԱՐ

1. Երկրներանքի ո՞ր տարատեսակն է այս իրավիճակում:
2. Այս իրավիճակում *նշե՞ք* երկու *նիշյու* մտրեցումները.
 - ա. *Տվյալ իրավիճակում մի կողմից կարևոր է ... արժեքը:*
 - բ. *Տվյալ իրավիճակում մյուս կողմից կարևոր է ... արժեքը:*

Այժմ իրավիճակը դիտարկենք երեք հիմնական սկզբունքների տեսանկյունից:

Հնդեանքը կարևորող սկզբունք

- Եթե Արմինեն հակադրվի Մարգարիտին, Չեր կարծիքով, ի՞նչ կլինի:
- Եթե Արմինեն ոչ մի քայլ չձեռնարկի, Չեր կարծիքով, ի՞նչ կլինի:
- Տվյալ իրավիճակում ո՞րն է այն քայլը, որն առավել ընդունելի է իրավիճակում ներգրավված մարդկանց համար:

Կանոնները կարևորող սկզբունք

- Տվյալ իրավիճակում Արմինեն ի՞նչ կանոններով կարող է առաջնորդվել: Թվարկե՛ք մի քանի կանոն:
- Տվյալ իրավիճակում ո՞րն է լավագույն կանոնը:

Քարոչականության ոսկե կանոնի սկզբունք

- Եթե Դուք լինեիք Մարգարիտի փոխարեն, ինչպե՞ս կվարվեիք:
- Եթե Դուք լինեիք Արմինեի փոխարեն, ինչպե՞ս կվարվեիք:

Քարոչական հարցերում որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները

1. **Օրինականություն:** Երկընտրանքների պարագայում անհրաժեշտ է հարցնել. «Արդյո՞ք իմ որոշումն օրինական է»: Եթե որևէ լուծում հակադիր է օրենքին, ապա այն ընդունելի չէ:

2. **Ներքին ձայն:** Հաճախ որևէ որոշման մասին մտածելուց առաջ մենք ունենում ենք ներքին զգացողություն, որը մեզ հուշում է ճիշտ ճանապարհը:

3. **«Առաջին էջի» գործոնը:** Որոշումներ կայացնելիս հաճախ անհրաժեշտ է առաջնորդվել այն մտայնությանը, թե ինչ կլինի, եթե մեր որոշումը տպագրվի թերթի առաջին էջում: Ի՞նչ կմտածեն հարազատները, քարեկամները, ուսուցիչները, եթե Ձեր որոշման մասին կարդան թերթում:

4. **Գերաշին գործոն:** Յուրաքանչյուր մարդու համար կան հարգված կերպարներ, որոնց մենք ուզում ենք նմանվել: Որոշումներ կայացնելիս կարող է օգտակար լինել հետևյալ հարցադրումը. «Եթե իմ փոխարեն լինեիր նա, ի՞նչ որոշում կկայացներ, ինչպե՞ս կվարվեր»:

ԹԵՄԱ 4. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԱՄ 11. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հասարակագիտություն» առարկայի 8-րդ դասարանի դասընթացից Ձեզ ծանոթ են «ազատություն» և «պատասխանատվություն» հասկացությունները: Այդ հասկացությունները շատ կարևոր են ման բարոյագիտական տեսություններում: Միայն ազատ մարդը կարող է պատասխանատվություն կրել իր գործողությունների համար: Անազատ մարդը միշտ փորձելու է պատասխանատվությունից խուսափել՝ պատճառները տեսնելով իրենից դուրս: Այսպիսով՝ ազատության մասին մեր մտածելակերպից է կախված այն հարցի պատասխանը, թե արդյոք մենք կարող ենք ձևավորել բարոյական նորմեր, դրսևորել բարոյական վարքագիծ և պատասխանատվություն կրել մեր վարքագծի համար:

Փիլիսոփաները մշտապես բանավիճել են այն հարցի շուրջ, թե արդյոք մարդն ազատ է իր գործողություններում: Հայտնի է, որ մարդը բնության մասնիկն է և ենթարկվում է բնության օրենքներին: Բացի այդ, մարդը ենթարկվում է նաև հասարակական և իրավական նորմերին: Այդքանով հանդերձ, արդյո՞ք մարդը կարող է ազատ լինել: Հիմնվելով այս իրողությունների վրա՝ մի շարք փիլիսոփաներ, որոնց ուսմունքը հայտնի է «դեպերմինիզմ» անունով, կարծում են, որ այս աշխարհում ամեն ինչ ունի իր պատճառը կամ պատճառները: Այդ պատճառները գտնվում են անհատից դուրս: Հետևաբար, մենք չենք կարող մարդկանցից պահանջել որոշակի վարքագիծ, երբ վերջինիս վրա ազդող գործոնները մարդու հսկողությունից դուրս են: Օրինակ, եթե մենք ընդունենք այն տեսակետը, որ մարդն իր էությանը էգոիստ է և միշտ հետապնդում է իր շահերը, ապա չենք կարող մարդուց բարոյական պատասխանատվություն պահանջել էգոիստ լինելու համար: Պատճառն այն է, որ մարդը չունի կամքի ազատություն՝ էգոիստ լինելու կամ չլինելու: Եթե չկա ընտրության ազատություն, ապա չի կարող լինել նաև պատասխանատվություն: Դետերմինիզմի սկզբունքով առաջնորդելու դեպքում մենք չենք կարող մարդկանց մեղադրել, գովաբանել, խրախուսել իրենց հաջողությունների համ ձախտողումների համար: Մա էլ իր հերթին կնշանակի, որ մարդը բարոյական պատասխանատվություն չի կրի իր արարքների համար:

- ♦ Հիշեք իրավիճակներ, երբ մարդիկ բարոյական պատասխանատվությունից խուսափելու համար իրենց պահվածքի պատճառները տեսել են իրենցից դուրս:

Դետերմինիզմի հակադիր տեսակետի կողմնակիցները պնդում են, որ աշխարհում կա նաև ազատություն: Ի տարբերություն դետերմինիստների՝ շատ փի-

լիտփաներ կարծում են, որ կան բաներ, որոնք անելու կամ չանելու հարցերում մարդն ազատ է:

♦ **Հիշեք իրավիճակներ, երբ Դուք ազատորեն որոշել եք կատարել այս կամ այն բայը:**

«Ազատություն» հասկացությունը շատ դժվար է սահմանել: Հաճախ ազատություն ասելով հասկանում են ամենաթողություն: Իրական ազատությունը գոյություն ունի միայն սահմանափակումների գիտակցման պարագայում: Օրինակ՝ մարդու ֆիզիկական սահմանափակումները: Մենք որքան էլ ազատ լինենք, չենք կարող ցատկել 30 մետր, քանի որ մեր ֆիզիկական հնարավորությունները սահմանափակ են: Նույն տրամաբանությամբ մեզանից յուրաքանչյուրն ունի որոշակի խառնվածք (ակտիվ կամ պասիվ, դյուրագրգիռ կամ հանգիստ), որը մեզ սահմանափակում է մեր գործողություններում: Պատահական չէ, որ խոսվում է ազատության սահմանների մասին. «Իմ ազատությունն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է ուրիշի ազատությունը»: Ակնհայտ է, որ կան շատ բաներ, որոնք մեզանից կախված չեն, որոնք փոխելը մեր ուժերից վեր է:

Ազատությունն ինքնաբուխ և կամավոր գործողությունների ամբողջություն է: Ինքնաբուխ գործողություն ասելով հասկանում ենք մարդու այն գործողությունը, որը բխում է հենց իրենից: Բայց ինքնաբուխ լինելը դեռևս բավարար չէ գործողությունն ազատ համարելու համար: Օրինակ՝ մարդը կարող է ինքնաբուխ (սեփական ձեռքով), բայց ոչ կամավոր, պարտադրաբար ստորագրել մի փաստաթղթի տակ՝ պատանդի վիճակում հայտնված իր ընտանիքի անդամներին փրկելու համար: Այսինքն՝ ազատ գործողությունը պետք է միաժամանակ լինի ինքնաբուխ և կամավոր:

♦ **Համաձայն եք այս մտտեցման հետ:**

Ստորև բերվում են մի քանի դատողություններ: Յուրաքանչյուրի համար արտահայտե՛ք Ձեր կարծիքը՝ պատասխանելով «այո» կամ «ոչ»:

Ես կարող եմ ազատորեն ընտրել...

1. Լինել արդարամիտ մարդ:
2. Լինել լավ ընկեր:
3. Լինել լավագույնը դպրոցում:
4. Մուտ խոսել, երբ դա օգտակար է:
5. Արտագրել ստուգողական աշխատանքի ժամանակ:
6. Կոպիտ վարվել դասընկերոջս հետ:
7. Լինել աշխարհի ամենահարուստ մարդը:
8. Լինել աշխարհի լավագույն ծանրամարտիկը:
9. Կառավարել աշխարհը:

Ազատությունը ենթադրում է մաս ընտրության հնարավորություն: Մենք չենք կարող ազատ լինել, եթե չունենք այլընտրանքներ: Երբ մարդն ընտրում է ինչ-որ բան՝ ասելով, որ «չեմ կարող այլ կերպ» կամ «չեմ տեսնում այլ տարբերակներ», ապա նա չի ընտրում:

Բարոյագիտության տեսանկյունից շատ կարևոր է նպատակի և միջոցների ընտրության խնդիրը: Բարոյագիտական մտքի պատմության մեջ ձևավորվել է երկու տեսակետ նպատակի և միջոցների ընտրության հարցում:

Առաջին տեսակետի կողմնակիցները կարևորում են նպատակի դերը: Եթե նպատակը վեհ է, ապա ցանկացած միջոց արդարացված է դրան հասնելու համար: Նպատակն արդարացնում է միջոցները: Պատկերացրե՛ք այսպիսի վիճակ: Որոշ մարդիկ ունեն չար նպատակներ, որոնց հասնելու համար դիմում են ցանկացած միջոցի: Մարդկանց մյուս խումբն ունի բարի նպատակ և չարին հաղթելու ու բարի նպատակն իրագործելու համար նույնպես պատրաստ է ցանկացած միջոցի (խորամանկություն, սուտ, մատնություն, բռնություն) դիմել: Այս տեսակետի կողմնակիցները մեծանունը համարում են ընդունելի՝ կարծելով, որ եթե բարի նպատակ ունեցող մարդիկ դիմեն միայն բարոյական միջոցների, ապա երբեք չեն կարող հաջողության հասնել: Բայց փորձը ցույց է տալիս, որ անբարոյական միջոցներով երբեք հնարավոր չէ հասնել բարոյական նպատակների: Որպես կանոն, անբարոյական միջոցների օգտագործումն ի վերջո հանգեցնում է անբարոյական նպատակի:

Երկրորդ տեսակետի կողմնակիցները, հիմնվելով վերջին դատողության վրա, պնդում են, որ բարոյական նպատակների կարելի է հասնել միայն բարոյական միջոցներով: «Ինչ ցանես, այն էլ կհնձես», - ասում է ժողովրդական առածը: Երբեք հնարավոր չէ մատնությունը, սուտը, բռնությունն օգտագործելով հասնել բարի նպատակների:

♦ **Արտահայտե՛ք Ձեր դիրքորոշումը վերոնշյալ երկու տեսակետների վերաբերյալ:**

Այսպիսով՝ ազատությունը և պատասխանատվությունն ունեն կարևոր բարոյագիտական արժեք: Ազատությունը ծնում է պատասխանատվություն, իսկ պատասխանատվությունն ուղղորդում է ազատությանը: Որպես ամփոփում հիշե՛ք նետնյալը.

1. Եթե մենք ազատ ենք մեր ընտրության մեջ, ապա մենք պատասխանատու ենք մեր արարքների համար: Նման դեպքում մեզ կարող են մեղադրել կամ քաջալերել մեր արարքների համար:

2. Եթե մեր գործողություններն անբողոքյա՞մբ պայմանավորված են մեզանց դուրս գտնվող գործոններով, ապա մենք չենք կարող խոսել արարքի բարոյական լինելու մասին: Նման դեպքում մեզ չեն կարող մեղադրել կամ խրախուսել:

ՀԱՐՅԵՐ ԱՏՕՐԵՒՄ ՀԱՄԱՐ

1. Հիշե՛ք Ձեր կյանքից օրինակներ, երբ Դուք ազատորեն արտահայտել եք Ձեր կամքը կամ հակառակը, համարել եք, որ այդ իրավիճակում Ձեզանից ոչինչ կախված չէ:
2. Արդյո՞ք մարդը պատասխանատու է իր բնավորության համար:
3. Արդյո՞ք մարդը կրում է բարոյական պատասխանատվություն, երբ իր գործողություններն ինքնաբերի են, քայց պարբադրված:

ԳԱՍ 12. ԽՐԱԽՈՒՄՈՒՄ ԵՎ ՊԱՏԻԺ

Բարոյագիտության հիմնական հարցերից մեկը արդարությունն է, որի մասին Դուք սովորել եք 8-րդ դասարանի «Հասարակագիտություն» դասընթացում:

Խրախուսում

Արդարության ապահովման կարևորագույն միջոցներից մեկը խրախուսումն է: Կա մարդկանց խրախուսելու չորս եղանակ:

Մարդկանց կարելի է խրախուսել:

1. **հավասարապես՝ անկախ նրանց կարողություններից և արժանիքներից,**
2. **ըստ ընդունակությունների,**
3. **ըստ կարիքների,**
4. **ըստ արժանիքների:**

Ներկայացնենք յուրաքանչյուր եղանակն առանձին-առանձին:

1. Բոլորին պեսք է խրախուսել հավասար՝ անկախ կարողություններից և արժանիքներից:

ԸՆԹԵՐՑԵՔ ԱՌԱԿԸ

Մի տանուտեք առավոտյան դուրս եկավ իր այգու համար մշակներ վարձելու: Եվ մշակների օրավարձը մեկ դահեկան սահմանելով՝ նրանց ուղարկեց իր այգին: Եվ ժամը երեքին մոտ դուրս եկավ, ուրիշների տեսավ, որ հրապարակում պարապ կանգնել էին: Նրանց էլ ասաց. «Դուք էլ գնացե՛ք այգին, և ինչ որ արժան է, կտամ ձեզ»: Նրանք էլ գնացին, և դարձյալ ժամը վեցին և իննին դուրս գալով՝ նույն կերպ վարվեց: Եվ ժամը տասնմեկին մոտ էլ դուրս գալով՝ ուրիշները գտավ պարապ կանգնած և ասաց նրանց. «Ինչո՞ւ եք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»: Նրան ասացին. «Որովհետև ոչ ոք մեզ չվարձեց»: Նրանց ասաց. «Դուք էլ գնացե՛ք այգին, և ինչի որ արժանի ե՛ք, կստանա՛ք»: Եվ երբ իրիկուն եղավ, այգու տերն իր տան վերակացուին ասաց. «Մշակներին կանչիր և նրանց վարձը տուր՝ հետիններից սկսած մինչև առաջինները»: Եվ ժամը տասնմեկինները գալով մի-մի դահեկան առան: Առաջիններն էլ եկան և կարծեցին, թե ավելին կառնեն, և նրանք էլ մի-մի դահեկան առան: Բայց երբ առան, տանտիրոջից տրտնջում էին և ասում. «Այդ հետինները մեկ ժամ աշխատեցին, և դրանց մեզ հավասարեցրիր»: Նա էլ պատասխանեց նրանցից մեկին. «Ընկե՛ք, ես չեմ զրկում ձեզ. չե՞ որ դու ինձ հետ մի դահեկանի համաձայնեցիր: Քոնը առ և գնա, բայց ես ուզում եմ, որ այս հետինին տամ, ինչպես ձեզ: Կամ մի՞թե ես իշխանություն չունեմ տնօրինելու իմ ունեցվածքը, կամ թե քո աչքը չար է, որ ես բարերար եմ»:

Ըստ Աստվածաշնչի

♦ **Մեկնաբանե՛ք առակի իմաստը: Արդյո՞ք արդար վարվե՞ց տանտերը:**

Շատ իրավիճակներում մարդկանց հավասար խրախուսելը ցանկալի է: Բայց խնդիրն այն է, որ ոչ միշտ է դա արդար, քանի որ ի բնե մարդիկ անհավասար են: Բացի այդ, հնարավորությունների սահմանափակությունը դրդում է մարդկանց գտնել խրախուսման տարբերակված ձևեր:

XVIII դարի փիլիսոփա Դեյվիդ Հյումը կարծում էր, որ արդար չի լինի, եթե մարդիկ հավասարապես խրախուսվեն, քանի որ ի բնե մարդիկ անհավասար են:

2. Մարդկանց պետք է խրախուսել ըստ ընդունակությունների:

Շատերը կարծում են, որ մարդկանց պետք է խրախուսել ըստ իրենց ընդունակությունների: Պետք է տարբերակել բնատուր և ձեռքբերովի ընդունակություններ: Շատ մարդիկ ունեն բնատուր ընդունակություններ և սահմանափակվում են դրանցով:

♦ **Արդյո՞ք արժե խրախուսել այն մարդկանց, ովքեր բավարարվում են միայն բնատուր ընդունակություններով:**

Ի տարբերություն բնատուր ընդունակությունների՝ ձեռքբերովի ընդունակությունները մարդուց պահանջում են լրացուցիչ ջանքեր, ժամանակ:

♦ **Նշե՛ք ձեռքբերովի ունակություններ, որոնք կարևոր են ժամանակակից հասարակարգում:**

3. Մարդկանց պետք է խրախուսել ըստ կարիքների:

Կան տեսակետներ, որ այն մարդիկ, ովքեր շատ կարիքներ ունեն, պետք է խրախուսվեն: Տարբերակում են մասնավոր և հանրային կարիքներ: Օրինակ՝ մասնավոր կարիք է ընտանիքի աղքատությունը:

♦ **Նշե՛ք, թե ինչ առավելություններ և թերություններ ունի խրախուսման այս եղանակը:**

Մարդկանց կարելի է խրախուսել նաև ըստ հանրային կարիքի: Օրինակ՝ ցանկացած հասարակությունում բժշկի աշխատանքը հանրային կարիք է: Որակյալ բժիշկներ ունենալը մարդկանց առողջության և երկարակեցության նախապայմաններից է: Հետևաբար, բժիշկներին պետք է խրախուսել, քանի որ նրանց ծառայություններից օգտվում է ամբողջ հասարակությունը:

4. Մարդկանց պետք է խրախուսել ըստ արժանիքների:

Հյումի կարծիքով՝ հնարավոր չէ արդարության հասնել՝ խրախուսելով մարդկանց արժանիքները, քանի որ մարդիկ երբեք համաձայնության չեն գա այն հարցում, թե ինչ է նշանակում լինել արժանի:

♦ **Համաձա՞յն եք Հյումի տեսակետի հետ:**

Շատ դեպքերում արժանի լինել նշանակում է ավելի շատ ջանքեր գործադրել: Մեկ այլ դեպքում արժանի լինել նշանակում է ավելի լավ արդյունքների հասնել:

Պատիժ

Կա պատժին ներկայացվող շորս պահանջ.

1. Այն պետք է լինի տհաճ:
2. Այն պետք է գործադրվի հիմնավորված:
3. Այն պետք է գործադրվի իրավասու անհատի կամ մարմնի կողմից:
4. Այն պետք է գործադրվի կանոնների և նորմերի համաձայն:

Կան հիմնավոր պատճառներ, որ օրենքի վրա հիմնվող պատիժն ավելի բարոյական է: Նախ, եթե պատիժն իրականացվում է օրենքի միջոցով, ապա հարցը փակվում է: Նույնը չի կարելի ասել վրիժառուության և վեճերի մասին, որոնք կարող են շրթաշարք շարունակվել: Մյուս պատճառն էլ այն է, որ օրենքով իրականացվող պատիժն ավելի անաչառ կարող է լինել, քան անհատի կողմից իրականացվող պատիժը:

Կա պատժի երկու մոտեցում. ըստ արժանվույն և օգտապաշտական: Ըստ արժանվույն մոտեցումը ենթադրում է, որ մարդուն պետք է պատժել ըստ նրա կատարած զանցանքի կամ հանցանքի ծանրության: Օգտապաշտական մոտեցումը կարևորում է ոչ թե արժանի պատժի հանգամանքը, այլ այն, թե տվյալ պատիժը որքանով ապագայում կօգնի, որ մարդն այլևս չղիմի նման քայլի: Այսպիսով, եթե առաջին մոտեցումն առաջնորդվում է մարդու արդեն կատարած քայլերով, ապա օգտապաշտական մոտեցումն ավելի շատ նտահոգված է մարդու ապագա գործողություններով:

♦ Արտահայտե՛ք Ձեր դիրքորոշումը պատժի երկու մոտեցումների վերաբերյալ:

ՀՄՅԵՐ ԱՏՈՐԵԼՈՒ ՀՄՄՐ

1. Նշե՛ք իրավիճակներ, երբ մարդկանց պետք է հավասարապես խրախուսել:
2. Դպրոցում կա հնարավորություն կրթաբոլակներ հարկազանելու: Արդյոք դրանք պետք է հարկազանել լավ սովորողների՞ն, թե՞ սոցիալապես անապահովներին:
3. Բացադրի՛ք խրախուսման, պատժի և արդարության առնչությունը:

ԸՆԹՅԱԳԻՐՆԵՐ

Ընթերցե՛ք ստորև նշվող դատողությունները: Նշե՛ք, թե խրախուսման ո՞ր եղանակն է կիրառված տվյալ օրինակում:

- ✎ 1. Գիտական կոչում ունեցող մասնագետներն ավելի բարձր են վճարվում, քան չունեցողները:
- ✎ 2. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին ավելի բարձր կենսաբոլակ է տրվում, քան չմասնակցած թոշակառուներին:
- ✎ 3. Շատ գուլերի հեղինակ դարձած ֆուտբոլիստին ավելի բարձր աշխատավարձ է տրվում:
- ✎ 4. Բժշկական համալսարանի ուսանողներն ավելի բարձր կրթաբոլակ են ստանում:

ԴՄՄ 13-14. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարոյական կատարելագործում

Բարոյականության հիմնախնդիրներից մեկը մարդու կատարելագործումն է: Հասարակության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը մարդու անընդհատ և շարունակական կատարելագործումն է: Մարդը կարող է կատարելագործվել տարբեր առումներով: Մենք կարող ենք կատարելագործել մեր ֆիզիկական կարողությունները՝ զբաղվելով սպորտով: Մենք կարող ենք կատարելագործել մեր մտավոր կարողությունները՝ զբաղվելով ինքնակրթությամբ: Մենք կարող ենք կատարելագործել մեր մասնագիտական կարողությունները՝ մասնակցելով տարբեր դասընթացների: Շատ ավելի դժվար է բարոյական կատարելագործման հասնելը, քանի որ այս դեպքում մենք գործ ունենք մարդու հոգևոր աշխարհի, քննադրության գծերի, վարքագծի փոփոխության հետ:

Կատարելագործման հասնելու համար մարդը նախ պետք է համարձակություն ունենա ճանաչելու իրեն: Ինչպես նշում էր հին հույն փիլիսոփա Թալեսը՝ ամենադժվարին գործն ինքնաճանաչողությունն է: Ինքնաճանաչողությունը մարդուն հնարավորություն է ընձեռում գիտակցելու սեփական անկատարությունը: «Սեփական անկատարության գիտակցումը մեզ մոտեցնում է կատարելության», - ասում են փիլիսոփաները: Բարոյական կատարելագործումը ենթադրում է երկու փոխկապակցված պատկերացումների առկայություն. **կատարելությունը որպես իդեալ և կատարելությունը որպես իդեալին հասնելու գործընթաց:**

♦ **Նշեք Ձեզ համար կարևոր մի իդեալ, ներկայացրեք, թե ինչու է այն Ձեզ համար կարևոր, և ինչ եք անում Ձեր իդեալին հասնելու համար:**

Բարոյական կատարելագործման հարցի շուրջ ձևավորվել են տարբեր մոտեցումներ: Դեռևս Հին աշխարհում տարածված էր այն մոտեցումը, որ բարոյական կատարելագործումը չափավոր ապրելակերպն է: Ցանկությունների և պահանջ-մտնքների չափավորումը դիտարկվում էր որպես կատարելագործման ուղիներից մեկը: Մասնավորապես, Արիստոտելի համար կատարյալ մարդը ինքնասահմանափակող և ընտրված ողջամիտ նպատակին համահունչ ապրող էակ է:

Մեկ այլ հայտնի փիլիսոփա Կանտը համարում էր, որ կատարելության ճանապարհը բարոյական պարտքի կատարյալ իրականացումն է:

Բարոյագիտական որոշ մոտեցումներ բարոյական կատարելության ճանապարհը տեսնում էին ինքնաբավ ապրելակերպի մեջ: Համաձայն այս մոտեցման՝ կատարելությունն նշանակում է լիակատար անկախություն հանգամանքներից, կրքերից: Որպես իդեալ այս դեպքում դիտարկվում է մարդու ներքին ազատությունը, մարդու հրաժարումը վայելքներից:

Կան նաև տեսակետներ այն մասին, որ մարդու կատարելագործումն անհնարին է: Օրինակ՝ XX դարի հայտնի գեղանկարիչ Մալվադոր Դալին ասում էր. «Մի՛

վախեցեք կատարելությունից, քանի որ երբեք չեք հասնի դրան: Բացի այդ, կատարելության մեջ ոչ մի լավ բան չկա»:

Մյուս կողմից, ռուս հայտնի գրող Մաքսիմ Գորկին ասում էր. «Կյանքի իմաստը մարդու կատարելագործման մեջ է»:

♦ **Արտահայտեք Ձեր դիրքորոշումը վերջին երկու տեսակետների վերաբերյալ:**

Կատարելագործման համար անհրաժեշտ են հետևյալ քայլերը.

1. ինքնասահմանափակում և անճանական կարգուկանոն,
2. պարտքի կատարում,
3. ներքին ազատություն,
4. ընտրված իդեալի հետևողական իրականացում:

Առաքինություններ



Մալվադոր Գալի
(1904-1989)



Մաքսիմ Գորկի
(1868-1936)

Առաքինությունը հունարենից թարգմանաբար նշանակում է կատարելություն:

Առաքինությունները հուշում են մարդուն, թե ինչպիսին պետք է լինի ճիշտ վարքագիծ դրսևորելու համար: Առաքինությունը մարդու ներքին կարգուկանոնն է:

«Առաքինություն» բառն օգտագործվում է երկու իմաստով: **Առաջին**, երբ առաքինությունն օգտագործում ենք եզակի թվով, ապա այն ընկալվում է որպես բարոյական հասկացության հոմանիշ: Օրինակ, երբ մենք ասում ենք «Արմենը առաքինի մարդ է», նկատի ենք ունենում, որ նա բարոյական մարդ է: **Երկրորդ**, երբ «առաքինություն» հասկացությունն օգտագործում ենք հոգնակի թվով, ապա նկատի ենք ունենում մարդուն բնորոշ դրական հատկանիշներ: Այս դեպքում ստացվում է, որ միևնույն մարդը կարող է ունենալ ինչպես առաքինի հատկանիշներ (առաքինություններ), այնպես էլ արատավոր հատկանիշներ:

Բայց առաքինությունները չի կարելի դիտարկել որպես մարդու սովորական հատկանիշներ: Դրանք մարդու պատրաստակամությունն են՝ գործելու բարոյական սկզբունքներով: Առաքինություններով օժտված մարդուն բնորոշ են արժանապատվությունն ու հպարտությունը:

Շատ փիլիսոփաներ փորձել են դասակարգել առաքինությունները: Մասնավորապես, շատ տարածված է առաքինությունները մտքի և բնավորության առաքինությունների բաժանելը: Մտքի առաքինությունները համարվում են սովորելու արդյունք, իսկ բնավորության

առաքինությունները՝ սովորության, վարքագծի: Ինչպես մարդիկ երաժիշտ են դառնում փորձերի արդյունքում, այնպես էլ արդար են դառնում արդար գործելով:

Բարոյագիտության մեջ տարբերակում են **հիմնարար առաքինություններ** (չափավորություն, արիություն, իմաստություն և արդարություն) և **քրիստոնեական առաքինություններ** (հույս, հավատ, սեր): Հիմնարար առաքինությունները ձևակերպվել են Հին Հունաստանում, և դրանք բովանդակությունից պարզ է դառնում, որ դրանք բնորոշ են իմաստունի կերպարին, որն էլ համարվում էր այդ շրջանի իդեալը: Քրիստոնեական առաքինություններն ունեն ընդգծված կամային ուղղվածություն: Այստեղ կարևորը Աստուծոն հավատալն է, սիրելը և նրա պարզևած փրկության վրա հույս դնելը:

Ուստի փիլիսոփա Վլադիմիր Մոլոժյովը, անդրադառնալով հիմնարար և քրիստոնեական առաքինությունների հարցին, նշել է, որ դրանք բացարձակ չեն, և կարևոր է հաշվի առնել այն իրավիճակները, որոնցում դրանք կիրառվում են: Օրինակ՝ չափավորությունն առաքինություն չէ այն դեպքում, երբ պետք է պայքարել ճշմարտության համար, բայց առաքինություն է, երբ առնչվում է մարդու պահանջմունքներին: Նույն ձևով հավատը չի կարող առաքինություն համարվել, եթե ուղղված է անարժան մեկին:

Առաքինությունների հարցին անդրադարձել են նաև հայ փիլիսոփաները: Համրահայտ փիլիսոփա Դավիթ Անհաղթը մարդու հոգին բաժանում էր երեք մասի՝ բանական, կամային (ցասմական) և ցանկական: Դրանցից յուրաքանչյուրն իր որոշակի առաքինությունն ունի: Դրանք են, ըստ Անհաղթի, **խոհականություն, արիություն, ողջախոհություն և արդարություն**: Հոգու բանական մասն օժտված է խոհականությամբ, կամային մասը՝ արիությամբ, ցանկական մասը՝ ողջախոհությամբ: Ինչ վերաբերում է արդարությանը, ապա Անհաղթն այն հավասարապես տարածում է հոգու բոլոր մասերի վրա, որպեսզի յուրաքանչյուրն ունենա իր իրանից: Անհաղթի կարծիքով՝ արդարությունն առաջնակարգ առաքինություն է:

Իսկ XIV-XV դարերի հայ փիլիսոփա Մատթեոս Ջուղայեցին այն կարծիքին էր, որ հասարակության և անհատի կատարելագործման ուղին բարոյական առաքինությունների ձեռքբերման միջոցով է հնարավոր: Նա առաքինությունները բաժանում էր երեք խմբի՝ ձեռքբերովի, բնածին և ի վերուստ տրված: Ի վերուստ տրված առաքինություններով օժտված են միայն ընտրյալ մարդիկ:

Մատթեոս Ջուղայեցին ասում էր. «Կատարյալ առաքինությունը սեփական չափն իմանալն է»:

ԱՄԱՋԱՎՈՐՆԵՐ

➤ 1. Առաջարկեք առաքինությունների Ձեր ցանկը:

ԹԵՄԱ 5. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ

ԳԱՍ 15. ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱ

Ինչպես կյանքի այլ ոլորտներում, այնպես էլ գործարարության մեջ գործում են բարոյականության կանոնները: Բարոյագիտության մեջ այդ ոլորտը կոչվում է գործարար (բիզնես) բարոյականություն: Դիտարկենք գործարարության մի քանի խնդիրներ, որոնք ունեն բարոյական կողմ: Դրանք են գովազդը, բնապահպանական խնդիրները, խտրականությունը:

Գովազդ

Ցանկացած բիզնեսի կարևորագույն բաղադրիչը գովազդն է: Գովազդի միջոցով արտադրանքը նպաստավոր նկարագրությամբ ներկայացվում է հանրությանը: Կա գովազդի երկու մոտեցում: Առաջինը «ամեն ինչ բույլատրելի է» սկզբունքն է, երկրորդն այն է, որ ապրանքը պետք է ներկայացվի ազնվորեն և փաստերի վրա հիմնված:

«Ամեն ինչ բույլատրելի է» մոտեցումը հիմնվում է այն թեզի վրա, որ գովազդը չի պարտադրում մարդուն գնել տվյալ ապրանքը, ուրեմն սպառողներն իրենք են որոշում ինչ գնել: Սակայն հասկանալի է, որ ոչ միշտ են սպառողները ստուգում գովազդի տվյալները, և հենց այս հանգամանքն էլ վճռորոշ դեր է խաղում:

Ազնիվ մոտեցման կողմնակիցները համարում են, որ ապրանքների գովազդը պետք է հիմնված լինի փաստերի վրա: Դիշտ է՝ արտադրողներն ազատ են իրենց ապրանքը ներկայացնելու հարցում, բայց դա չպետք է արվի խաբեության միջոցով:

Բիզնես և շրջակա միջավայր

Գործարար էթիկայի հիմնական հարցերից մեկն առնչվում է շրջակա միջավայրի պահպանմանը: Վերջին տասնամյակներին մարդկությունը սկսեց անխնա շահագործել շրջակա միջավայրը, ինչի արդյունքում ի հայտ եկան բնապահպանական լուրջ հիմնախնդիրներ:

Գործարարության առաջնայնությունը: Կա տեսակետ, որ բիզնեսը ոչ մի մեղք չունի բնապահպանական հիմնախնդիրների առաջացման գործում: Գործարարներն ընդամենը փորձում են սպառողներին տալ այն, ինչի կարիքն ունեն նրանք: Այս տեսակետի համաձայն, եթե բնապահպանների կարծիքին առաջնայնություն տրվի, ապա ապագայում բիզնեսը կոչնչանա: Բնապահպանական խնդիր-

ները պետք է լուծել ոչ թե սահմանափակումների միջոցով, այլ գլխառության աստիճանական զարգացման շնորհիվ: Բիզնեսը բնապահպանական խնդիրների առաջացման հիմնական պատասխանատունն է:

Բնապահպանության առաջնայնությունը: Հակադիր տեսակետի համաձայն՝ վերջին տասնամյակներում բնության այնպիսի անխնա շահագործում է տեղի ունեցել, որ անհապաղ պետք է դադարեցնել բոլոր այն ձեռնարկությունների աշխատանքը, որոնք վնասում են մարդկանց առողջությունը և շրջակա միջավայրը: Բնապահպանները տվյալ իրավիճակի հիմնական մեղավոր են համարում գործարարներին՝ նրանցից պահանջելով իրենց շահույթներից փոխհատուցել պատճառված վնասները: Գործարարները մեղավոր են այն առումով, որ գովազդի միջոցով մարդկանց մոտ ձևավորել են առանց հետևանքների մասին մտածելու ամեն ինչ սպասելու հոգեբանություն: Գործարարներին առաջարկվում է վճարել նման հոգեբանությունը վերացնելու համար:

Խտրականության խնդիրը գործարարության մեջ

Քարոյական մյուս հարցը, որն առկա է գործարարության մեջ, կապված է այն խտրականության հետ, որը տեղի ունի աշխատողներին աշխատանքի ընդունելու, պաշտոնական առաջխաղացման և աշխատանքից ազատման հարցերում: Այդ խտրականությունը հաճախ իրականացվում է հաշմանդամների, կանանց, ֆոքրամասնությունների, տարեց մարդկանց նկատմամբ: Խտրականության հարցում կան երկու հակադիր մոտեցումներ:

Խտրականությանը կողմ տեսակետ: Այս տեսակետի համաձայն՝ յուրաքանչյուր գործարար, ձեռնարկություն ինքն է որոշում աշխատանքի ընդունման կարգը և սկզբունքները: Եթե գործատուն ցանկանում է աշխատանքի ընդունել միայն կանանց, ապա դա նրա խնդիրն է:

Խտրականությանը դեմ տեսակետ: Աշխատանքի ընդունման հարցում խտրականությունը մարդու իրավունքների խախտում է: Եթե մարդուն աշխատանքի ընդունելու հիմքում ոչ թե մարդու մասնագիտական հմտություններն են, այլ ռասայական, սեռային, տարիքային գործոնները, ապա դա իրոք բարոյական տեսանկյունից անընդունելի է:

Վերջին շրջանում տնտեսության գլոբալացման արդյունքում քննարկումների առարկա է դարձել այն հարցը, թե ինչ բարոյականություն է գործելու միջազգային բիզնեսի ոլորտում: Միջազգային ընկերությունները արդյո՞ք պետք է ներդրումներ անեն այն երկրներում, որոնց բարոյական նորմերը տարբեր են:

ԸՆԹԵՐՑԵՔ ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՊԱՏԱՍԻԱՆԵՔ ՀԱՋՈՐԳՈՂ ՀԱՐՑԵՐԻՆ

«Քիմոգրադ» *Ֆադաբը շատ փոքր էր, երբ 10 տարի առաջ հայտնի ընկերություններից մեկը որոշեց իր էիմիական գործարաններից մեկը բացել այս ֆադաբում: Գործարանի բացումից հետո ֆադաբի բնակչությունը շեշտակիորեն աճեց:*

Ներկայումս ֆաղափ բնակչության մեծ մասն աշխատում է այդ գործարանում: Խնդիրն այն է, որ այդ գործարանի արտանետումներն աղտոտում են օդը և հարևան գետը: Կառավարությունը գործարանի տնօրենին և ֆաղափապետին տեղեկացնում է, որ այդ աղտոտումը կարն ժամանակում պետք է վերացվի: Գործարանի տնօրենը ֆաղափապետին տեղեկացնում է, որ այդ խնդիրը լուծելու համար գործարանը պետք է 1.5 մլն դոլար գումար ծախսի: Նման պայմանի դեպքում ընկերության ղեկավարությունը կփակի գործարանը, քանի որ ֆինանսական տեսակյունից այդ ծախսը ձեռնտու չէ:

- Ի՞նչ հետևանքներ կունենա գործարանի փակումը:
- Ի՞նչ կարող է անել քաղաքապետը սովյալ իրավիճակում:
- Արդյո՞ք ճիշտ էր կառավարության որոշումը:
- Արդյո՞ք արդարացի է վարվում գործարանի տնօրինությունը՝ ցանկանալով փակել գործարանը:

ՀԱՐՅԵՐ ՄՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Արդյո՞ք համապեղելի են քարոյականությունն ու գործարարությունը:
2. Եթե քախվում են քարոյական նորմերն ու գործարար շահերը, սապա ո՞րն է առաջնային: Պապասխանը հիմնավորիք:
3. Արգահայրերք Ձեր դիրքորոշումը գովազդի նրկու մուրեցումների վերաբերյալ:

ԳԱՍ 16. ԿԵՆԳԱՆԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ

Մինչ այժմ մենք խոսում էինք այն մասին, թե ինչպես են մարդիկ վերաբերվում միմյանց: Բայց, մարդուց բացի, Երկրագնդի վրա կան նաև կենդանիներ: Հետևաբար, հարց է առաջանում, թե արդյոք բարոյական նորմերը տարածվում են նաև այլ կենդանիների հետ հարաբերությունների վրա: Շատ բարոյագետներ այն կարծիքին են, որ բարոյականությունը բնորոշ է միայն մարդուն: Բայց վերջին շրջանում բարոյագետները խոսում են այն մասին, որ ցանկացած կենդանի էակ արժանի է բարոյական վերաբերմունքի: Նրանք կարծում են, որ բարոյական վերաբերմունք կարող է դրսևորվել այն էակի հանդեպ, որն ունի հոգի, բանականություն, զգացմունքներ: Հետազոտություններն ապացուցել են, որ կենդանիների մոտ առկա են զգացմունքներ (տխրություն, ուրախություն), բանականության տարրեր (օրինակ՝ գորիլյաների և շիմպանզեների մոտ): Այս համատեքստում կենդանիների իրավունքի հարցը դիտարկվում է որպես բարոյական հիմնախնդիր:

Կենդանիների օգտագործումը փորձարկումների նպատակով

Քննարկե՛ք հետևյալ իրավիճակը

Մի ձեռնարկություն, որը մասնագիտացած է կոսմետիկայի արտադրության գործում, օգտագործում է ճագարներին իր արտադրանքի ազդեցությունը մարդու վրա փորձարկելու նպատակով: Նյութի մեծ չափաբաժիններ ներարկվում են ճագարների աչքերի մեջ: Փորձարկումը ցավոտ է, կենդանիներին ցավազրկող չի ներարկվում: Նյութի ազդեցությունն ավելի ակնհայտ ստուգելու նպատակով այն ներարկվում է մեծ քանակությամբ, ինչը շատ հաճախ լրջորեն վնասում է կենդանիներին:

- Արդյո՞ք նման փորձարկումը բարոյական է:
- Եթե փորձարկման ժամանակ կենդանիներին ներարկելն ցավազրկողներ, ապա արդյո՞ք փորձարկումը կլինե՞ր բարոյական:
- Արդյո՞ք բարոյական կլինե՞ր, եթե նյութը փորձարկվեր կամավոր մարդկանց վրա:
- Արդյո՞ք կարծում եք, որ եթե փորձարկումները կատարվում են որոշակի հիվանդությունների բուժումը գտնելու նպատակով, ապա կենդանիների վրա փորձարկումներ անելը բարոյական է:

Ակնհայտ է, որ կենդանիների վրա կատարվող փորձարկումների արդյունքում գիտության մեջ բազմաթիվ բացահայտումներ են կատարվել:

◆ Նշե՛ք մի քանի հայտնագործություններ, որոնք կատարվել են կենդանիների վրա կատարված փորձարկումների արդյունքում:

Փորձարկումների կողմնակիցները նշում են, որ եթե դրանք չարվեն կենդանիների վրա, ապա գիտնականները ստիպված կլինե՞ին փորձարկումների նպատակով օգտագործել բացառապես մարդկանց: Եվ քանի որ դա շատ դժվար կլինե՞ր իրականացնել, ապա գիտական շատ հայտնագործություններ դեռևս կատարված չէին լինի: Բացի այդ, մարդն ավելի արժեքավոր է, քան կենդանիները: Հետևաբար, ավելի ճիշտ կլինի կենդանիներին օգտագործել փորձարկումների նպատակով: Եթե կան կենդանիներ, որոնց ոչ ոք չի խնամում, ապա ինչո՞ւ այդ կենդանիներին չօգտագործել հոգուտ մարդու:

◆ Փորձե՛ք նշել այլ փաստարկներ այս տեսակետի օգտին:

Փորձարկումների ընդդիմախոսները նշում են, որ կենդանիները նույնպես ունեն ցավի զգացում: Հետևաբար, անբարոյական է նրանց ցավ պատճառելը, առանց նրանց համուն գիտության և բժշկության զարգացման: Կենդանիների իրավունքների պաշտպաններն առաջարկում են գտնել այլ ձևեր գիտության զարգացման ապահովելու համար:

◆ Վերոնշյալ երկու մտտեցումների հիման վրա ձևակերպե՛ք չափավոր տեսակետ:

Կենդանիների սպանությունը

Կենդանիների իրավունքներին առնչվող մյուս հարցը նրանց սպանելու խնդիրն է: Կենդանիների սպանության կողմնակիցները պնդում են, որ դա հնարավորություն է տալիս հսկողության տակ պահել կենդանիների աճը: Եթե հնարավորություն չտրվի սպանել կենդանիներին, ապա նրանք կաճեն, կհայտնվեն քաղաքներում ու գյուղերում՝ խոչընդոտելով մարդու բնականոն կյանքը: Կենդանիների սպանությունը պետք է թույլատրվի նաև այն պատճառով, որ նրանց մաշկը, մորթին օգտագործում են հագուստ, կոշիկ, պայուսակ պատրաստելու նպատակներով: Իհարկե, այդ ամենը կարելի է պատրաստել նաև արհեստական նյութերից, բայց վերջիններս առողջարար չեն:

Կենդանիներին սպանելու ընդդիմախոսները կարծում են, որ եթե մարդը չմիջամտի կենդանական աշխարհի կյանքին, ապա վերջիններս կարող են ինքնակարգավորման միջոցով մարդուն ազատել շատ սպառնալիքներից: Ոչնչացնելով շատ կենդանիների՝ մարդը խախտում է կենդանիների բնական ինքնակարգավորման մեխանիզմը:

- ◆ Այս երկու հակադիր տեսակետները հաշվի առնելով՝ առաջարկե՛ք չափավոր մոտեցում:

ՀԱՐՅԵՐ ՄՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Իրավունքները վերաբերում են միայն մարդկա՞նց, թե՞ նաև կենդանիներին:
2. Արդյո՞ք կենդանիներն ունեն ապրելու և ազատ շինելու իրավունք:
3. Արդյո՞ք կենդանիները պետք է ունենան իրավունքներ միայն այն պայմանում, որ ունեն ցավի զգացում:
4. Մարդը կենդանիներին օգտագործում է սննդի, գիտական հետազոտությունների և զվարճանքի (որս) նպատակներով: Բարոյական արեսանկյունից դրանք համարժե՞ք են, թե՞ ոչ:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՉԵՐ

ԳԱՍ 1. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԳԻՐՆԵՐԸ

Ճանաչի՛ր ինքդ քեզ...

Դերիյան Կամարի արչանագրություն

Պարանի՝ բարեկամներ, մենք չեզ հեղ սկսում ենք ծանոթանալ «հոգեբանության» գիտության հիմունքներին, ինչը կօգնի մանաչելու (վերափոխելու և կայարեփոխելու) ինքներդ չեզ, հասկանալու չեզ շրջապատող մարդկանց և ճիշտ կառուցելու չեզ հարաբերությունները նրանց հեղ:

ԻՆՉ Է ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ՈՐՈՆԸ ԵՆ ՆՐԱ ԽՆԳԻՐՆԵՐԸ: Հետաքրքրությունն իր և շրջապատի նկատմամբ ուղեկցել է մարդուն իր գոյության առաջին իսկ օրից.

- Ո՞վ եմ ես:
- Ինչպե՞ս եմ մտածում:
- Ի՞նչ եմ ցանկանում և ինչի՞ եմ ձգտում:
- Որո՞նք են իմ կյանքի նպատակները:
- Ինչո՞ւ են մարդիկ այսքան տարբեր միմյանցից:

Այսօր էլ յուրաքանչյուր մարդ առօրյա դիտումների միջոցով հետևում է ուրիշների վարքագծին ու փորձում գտնել դրանց պատճառները, խորհում է իր կենսաբանական գծվարությունների մասին և որոնում դրանց հաղթահարման ուղիներ:

Ինքներդ էլ խորհել եք, թե ինչու է այս աշխարհն այսպես արարված, ինչու չեզ երբեք չեն հասկանում, ինչու են մարդիկ սիրում կամ սիրոն, ինչու լավն ու բարին մարդկանց համար փարբեր են, ինչու են մարդիկ վախենում կամ համարբեր են առաջ գնում հանուն որևէ գաղափարի: Այս ինչու-ները շատ են, և դուք ինքներդ կարող եք ավելացնել...

Անա այս և նման շատ այլ հետաքրքիր հարցերի է պատասխանում «հոգեբանություն» գիտությունը:

Հոգեբանությունը հետազոտության առավել տարածված բնագավառներից է:

Չնայած իր արդիականությանն ու պահանջվածությանը՝ հոգեբանությունը՝ որպես ինքնուրույն գիտաճյուղ, բավականին ուշ է ձևավորվել և այսօր էլ ներկայանում է որպես բազմակողմանի զարգացող գիտություն:

Օտար լեզուներից շատերում «հոգեբանություն» գիտությունը կոչվում է «փսիխոլոգիա»: Այս բառը հունական ծագում ունի: Հին հունարենում «փսյուխե» նշանակել է «հոգի», իսկ «լոգոս»՝ «խոսք, բան», այլ խոսքով՝ ասելիք, գիտություն¹: Այս բառերի թարգմանությունն արդեն հուշում է հոգեբանության առավել ընդհանրական և համառոտ սահմանումը, հոգեբանություն, այսինքն՝ բան (խոսք) հոգու մասին:

Այսպիսով՝ **հոգեբանությունը գիտություն է, որն ուսումնասիրում է մարդու հոգեկան կյանքը, նրա ներաշխարհը:**

Հոգեբանության խնդիրն է մի կողմից ուսումնասիրել. ա) մարդու ներաշխարհում ընթացող երևույթները, հոգեկան կյանքի կոնկրետ փաստերն ու տվյալները, բ) վարքն ու գործունեությունը, այլ մարդկանց հետ ունեցած հարաբերություններում դրսևորվող հոգեկան երևույթները, մյուս կողմից էլ բացահայտել վերջիններիս ձևավորման և դրսևորման օրինաչափություններն ու մեխանիզմները:

Տարիքային զարգացմանն ու հասունացմանը զուգընթաց, հարկապես սկսած դեռահասության և պատանեկության տարիքից, սեփական ներաշխարհի նկատմամբ մարդու հետաքրքրությունը գնալով աճում է:

ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄ ԵՎ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ: Մեզանից մոտ երկու հազար տարի առաջ հայտնի մտածողներն ու փիլիսոփաները (Պլատոն, Արիստոտել, Դեմոկրիտ, Էպիկուր և այլք) մարդկանց հուզող վերը նշված հարցերը, մարդու կյանքում հանդիպող բոլոր անհասկանալի երևույթները փորձում էին բացատրել *հոգու* գոյությամբ: Այս ժամանակաշրջանը համարվում է հոգեբանության զարգացման **առաջին փուլը**, երբ հոգեբանությունը բնութագրվում էր որպես գիտություն հոգու մասին:


Այսպես, օրինակ, հին հույն փիլիսոփա *Պլատոնի* կարծիքով՝ հոգին աստվածային սկիզբ ունի: Այն ժամանակվոր ապաստան է գտնում մարդու մարմնի մեջ և ղեկավարում է նրա ողջ կյանքը: Հոգին անմարմին ու անհասանելի է: Երբ մարդը մահանում է, հոգին լքում է նրան՝ ապաստան գտնելով այլ աշխարհում: Իսկ ահա *Դեմոկրիտը* կարծում էր, թե հոգին նյութական է, որը գոյություն ունի և փոփոխվում է միևնույն բնական պատճառների հետևանքով, որոնք հատուկ են ամբողջ տիեզերքին:

Առավել հետաքրքիր են հույն հայտնի փիլիսոփա *Արիստոտելի* մտածելակերպը: Հոգեբանական մտքի զարգացման պատմության մեջ նրան է պատկանում մի շարք կարևոր հարցերում առաջինը լինելու պատիվը:

Արիստոտելը հոգեբանության առաջին դասագրքի հեղինակն է: Ծավալուն այդ աշխատությունը կոչվում է «*Հոգու մասին*»: Այս գրքում Արիստոտելը հոգե-


¹ «Լոգոս» բառը ձեզ ծանոթ է շատ այլ գիտություններից, որոնց անունները գրեթե բոլորն էլ հունական ծագում ունեն, ասենք «գեոլոգիա» – երկրաբանություն, «աստրոլոգիա» – աստղագիտություն և այլն:

քանությունը համարում է գիտելիքների յուրահատուկ քննազավառ և մարդկային մտքի պատմության մեջ առաջին անգամ առաջ է քաշում հոգու և մարմնի անքաժանելիության գաղափարը: Նրա կարծիքով՝ յուրաքանչյուր կենդանի օրգանիզմ ունի հոգի, որն էլ նրան կյանք է հաղորդում: Ուշագրավ է նաև Արիստոտելի այն միտքը, ըստ որի մարդկանց հոգիները, ի տարբերություն բույսերի ու կենդանիների հոգիների, մտածող են ու խելամիտ:



Արիստոտել
(մ.թ.ա. 384-322)

Կռեսու հնագույն ժամանակներից հոգու և հոգեկան կյանքի մասին հեղափոխիչ և ուշագրավ մտքեր են աբրահամյան նաև հայ ակնաձուլոր միաձողներն ու գիրուականները (Դավիթ Անհաղթ, Մխիթար Գոշ, Սմբատ Սյախապետ, Մխիթար Սեբաստացի, Ղազարոս Աղայան):



Դավիթ Անհաղթ
(V-VI դդ.)

Հոգեբանության զարգացման **երկրորդ փուլը** սկսվում է XVII դարից: Այս նոր փուլն ընդհանրապես գիտության զարգացման մեջ նշանավորվում է քնական գիտությունների զարգացմամբ, ինչը չէր կարող չազդել նաև հոգեբանության վրա: Այս փուլում հոգեբանությունը սկսեցին սահմանել որպես **գիրություն գիրակցության մասին**: Եվ կարծում էին, որ գիտակցությունն իր մեջ ընդգրկում է մարդու ցանկություններն ու պատկերացումները, զգալու և մտածելու ընդունակությունը, որը կարելի է ուսումնասիրել **ինքնադիտման մեթոդի** օգնությամբ (եթե մարդը դիտում է ինքն իրեն և նկարագրում հավաքագրված փաստերը):

Այս փուլում հատկապես հիշարժան է 1879 **բվակաձև**, երբ գերմանացի հոգեբան Վ Վունդթը ստեղծեց առաջին փորձարարական հոգեբանական լաբորատորիան:



Վ Վունդթ
(1832-1920)

Զարգացման **երրորդ փուլում**, որն ընդգրկում է XX դարը, հոգեբանությունը սկսեցին դիտարկել արդեն որպես **գիրություն վարքի մասին**. գիտություն, որը կոչված էր կարգավորելու ու կառավարելու մարդու վարքը և դրանով իսկ լուծելու նրա կյանքում առաջացող բազմաթիվ խնդիրները¹: Այս ժամանակաշրջանի հոգեբանները գտնում էին, որ մարդու գիտակցության մեջ ամփոփված ներհոգեկան երևույթներն ու սպրումները

¹ Նրանց կարծիքով՝ վարքի բոլոր ձևերը մարդը սովորում է:

խիստ անհատական են, ուստի չեն կարող գիտական հետազոտության օբյեկտ դառնալ: Փոխարենը հոգեբանությունը պետք է ուսումնասիրի մարդու վարքը, այսինքն՝ նրա արարքներն ու արտաքին աշխարհի գրգռիչներին նրա հակազդումները:

XX դարի երկրորդ տասնամյակում Ջ. Ուոքսոնը հիմնավորում է *վարքաբանություն* (բիհեյվիորիզմ¹) հոգեբանական նոր ուղղությունը: Վարքաբանությունը ինքնադիտումից ավելի կարևորում էր դիտումը: Ահա թե ինչու այն խնդիր էր դնում կազմակերպել գիտափորձեր և դիտել, նկարագրել մարդու տեսանելի վարքը, այսինքն՝ այն ամենը, ինչը կարելի է անմիջականորեն տեսնել:

Ուսումնասիրելով մարդու վարքի արտաքին դրսևորումները՝ վարքաբանությունը, սակայն, անտեսում էր վարքի վրա ներքին գործոնների ազդեցությունը, շարժառիթները, դրդապատճառները, ուշադրությունը, հույզերն ու զգացմունքները:

Հոգեբանության զարգացման ժամանակակից *չորրորդ փուլը* համարում են *գիտական հոգեբանության ձևավորման ժամանակաշրջան*: Նրա ձևավորման ու զարգացման համար, շատ մասնագետների կարծիքով, հող նախապատրաստեց ձեզ արդեն ծանոթ գերմանացի հայտնի հոգեբան Վ. Վունդտը: Գիտական հոգեբանությունն ուսումնասիրում է մարդու հոգեկան աշխարհի, գիտակցության, վարքի ու գործունեության զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները², փաստերը, ինչպես նաև դրանց դրսևորման մեխանիզմները: Այսինքն՝ ոչ միայն այն, թե ինչ է անում մարդը կոնկրետ պարագաներում, այլև այն, թե ինչու, ինչի պատճառով, ինչ նպատակով է մարդն այդպես վարվում, և ինչպես կարելի է ազդել դրանց պատճառները վերացնելու վրա և այլն:

«Հոգեբանության հիմքում ընկած են հազարամյակների մարդկային կենսափորձը, հարյուրամյակների փիլիսոփայական մտորումները և միայն րասնամյակների նշգրիտ փորձարարական գիտությունը»: (Ս. Լ. Ռուբինշտեյն, 1935 թ.)

ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ԿՅԱՆՔԻ ՀԵՏ: Ինչպես տեսանք, հոգեբանությունը գիտություն է մարդու մասին: Ուրեմն այն չի կարող սերտ կապ չունենալ կյանքի հետ: Հետևաբար, հոգեբանական գիտելիքների ձեռքբերման առաջին և լավագույն աղբյուրը ձեր ապրած կյանքն է: Ապրելով՝ դուք ճանաչում եք ինքներդ ձեզ ու շրջապատողներին, կարգավորում ձեր հարաբերությունները շրջապատի հետ: Որպես ապացույց եկե՛ք փորձենք մտովի հետևել ձեր կյանքի ամենատևալուրակյան օրերից մեկին, դիտարկել և գրառել որոշ պատահիկներ:

Առավոտյան դասատենյակ մտնելով՝ սովորականի պես անմիջապես նսրեցիր Տիգրանի կողքին և զրույցի բռնվեցիր: Դա հասկանալի է. չէ՞ որ նա քո լավագույն ընկերն է: Տիգրանը քոլորից լավ է հասկանում քեզ, մտնում քո դրության մեջ, կիսում քո ուրախությունն ու փխրությունը:

Դասն սկսվում է: Դու սկզբիվորեն մասնակցում ես քննարկմանը, քանի որ հոգե-

1 Անգլերեն behaviour (բիհեյվիոր) «վարք» բառից:

2 Գիտության մեջ օբյեկտիվ օրինաչափություն են համարվում այն օրինաչափությունները, որոնց գոյություն ունեն օբյեկտիվորեն՝ անկախ մեր կամքից ու վերաբերմունքից:

հարազատ քննա է՝ սիրո և հավատարմության մասին: «Չպիտք է մոռանալը, որ աղփակներն այլ կերպ են մտածում, քանի որ...», - լավում է քո չայնը: Դու դատողություններ ես անում հակառակ սեռի հետ փոխհարաբերությունների շուրջ:

Հաջորդ ժամին շարադրություն եք գրում ձեր փարփում ամենից շատ հուզող քննաչի շուրջ: «Ես ընկրել եմ բժշկի մասնագիտությունը, որովհետև ես միաժամանակ հարող եմ և՛ սառնասիրտ լինել, և՛ հոգաբար», - գրում ես շարադրությանը մեջ փոքրիկ հիմնավորել քո ընկրությունը: Նշանակում է, ճանաչելով քեզ, դու կարողանում ես փաստարկներ բերել հոգուր մասնագիտության քո ընկրության:

Դասամիջոցին հասցնում ես մեկ-երկու հաճելի բնութագրումներ գրել Անուշի «Կարծիքների փերրում». «...եւ գնահատում եմ քո նրբանկարությունն ու ընկերներին օգնելու պարտապակասությունը»: Այսինքն՝ դու ճանաչում ու գնահատում ես նաև շրջապարողներին:

Տանն ես: «Այսօր համակարգչով գրադիլու համար ազատ ժամանակ շատ կուենամ. ընդամենը մեկ քանասարեղծություն ունեմ սովորելու: Իսկ ես անգիր հեշտ եմ սովորում և նյութը լավ եմ մտապահում», - մտածում ես դու: Սա նշանակում է, որ ոչ միայն պարկերացում ունես ճանաչողական գործընթացների մասին, այլև կարողանում ես դրանք որակել:

Ընթրիքին հայրիկը խիստ մտազբաղ է երևում: «Ավելի լավ է նրա աչքին օրնամ...», - որոշում ես դու: Այսինքն՝ կարողանում ես կռահել նաև մարդկանց քրամադրությունը և նրանց հետ շինման առավել հարմար ժամանակը:

«...Ընթրանիքում բոլորն իրավունք ունեն մասնակցելու ընթրանեկան հարցերի լուծմանը, ես իմ երեխաներին անպայման...»: Սրանք վերջին մտքերն էին, որ հասցրի մտածել քննելուց առաջ: Ընթրանեկան հարցերի ու փոխհարաբերությունների վերաբերյալ ես դու ունես քո ուրույն մտրեցումը:

Վերը նշված իրավիճակներն ու հարցերը, որոնցից յուրովի գլուխ էիք հանում, քրականում գիտական հոգեբանության ուսումնասիրության հարցեր են: Գիտական հոգեբանությունն էապես տարբերվում է կենցաղային հոգեբանությունից: Հիմնական տարբերությունը նրանց կողմից փաստերի ու սովյալների ձեռքբերման եղանակի մեջ է:

Կենցաղային հոգեբանությունը չնավորվում է կոնկրետ մարդկանց առօրյա կյանքի դիտարկումների միջոցով: Որպես կանոն, դա մարդկանց սահմանափակ շրջանակ է, որոնց մենք անշամբ ճանաչում ենք կամ որոնց կյանքի պարմությունը լսել ենք: Հեյրեարար, կենցաղային հոգեբանական գիտելիքները պայմանավորված են կոնկրետ իրավիճակներով ու կոնկրետ մարդկանցով և դրանով իսկ քիչ ընդհանրացված են և իրադրային: Միևնուր գիտական հոգեբանությունն իր գիտելիքները չենք է բերում գիտափորշարարական ճանապարհով, կոնկրետ հոգեկան երևույթի իմաստավորումը կարարվում է՝ հիմնվելով բազմաթիվ մարդկանց մոտ և բազմաթիվ պայմաններում, իրավիճակներում նրա դրսևորման առանձնահատկությունների վրա: Եվ դրանով իսկ գիտական հոգեբանությունն աչքի է ընկնում ընդհանրացման բարձր մակարդակով: Այսինքն՝ գիտական հոգեբանության մեջ նկարագրվող, մարդու ներաշխարհին և վարքին վերաբերող բոլոր օրինաչափությունները (հենց քառն ինքն էլ նշանակում է, որ դրանք օրինաչափ են բոլորի համար) հանդիպում են մարդկանց մեծամասնության մոտ:

Այդուհանդերձ, գիտական հոգեբանությունը հիմնվում է իրական կյանքի և առօրյա հոգեբանական փորձի վրա, նրանից դուրս բերում և ձևակերպում իր խնդիրները, իրականացնում լայնածավալ հետազոտություններ, այնուհետև ձևավորված գիտելիքները ներդրվում են կյանք ու «փորձարկվում»:

Այսպիսով՝ դուք հոգեբանական քննյթի բազմաթիվ գիտելիքներ ունեք, որոնց շնորհիվ էլ ապրում եք մարդկային միջավայրում: Եվ դա բնական է, քանզի հոգեբանությունը մարդկային կյանքի արքայացույցն է:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԿՐԱՆՔՆԵՐ

1. Ժամանակագրական կարգով ներկայացրե՞ք և մեկնաբանե՞ք հոգեբանության զարգացման փուլերը:
2. Մրասնե՞ք այն մասին, թե ինչ դեր ունեն հոգեբանությունը և հոգեբանական գիտելիքները ձեր առօրյա կյանքում:

**ԴԱՍ 2. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ:
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ
ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ**

Անհմանալի՞ են մարդկային հոգու գաղտնիքները: Տեսնենք:

♦ Փակե՞ք դասագիրքը, ծառ նկարե՞ք:

Իսկ այժմ ուսուցչի օգնությամբ ծանոթացե՞ք քննադի պատասխանների հետ:

Կեցցե՞ք: Դուք կարողացա՞ք բախանցել ձեր ներաշխարհի գաղտնիքների մեջ և ինչ-որ շահով բավարարեցի՞ք սեփական ես-ի մասին ձեր չթուլացող հեղափոխությունը: Եվ, իհարկե, կշահեցի՞ք, որ այսպեղ խոսելու ենք հոգեբանության հեղափոխության մեթոդների մասին:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Ցանկացած գիտություն զարգանալու համար իր հետազոտության առարկայի մասին փաստեր է հավաքում և ուսումնասիրում: Իսկ ինչպե՞ս: Այն միջոցները, այն հուսալի գործիքները, որոնց օգնությամբ որևէ գիտություն ձեռք է բերում, բացահայտում և ուսումնասիրում այդ փաստերը, կոչվում են հետազոտության մեթոդներ¹:

Մարդու հոգեկան կյանքն ուսումնասիրելու՝ հոգեկան երևույթները դիտելու և վերլուծելու համար հոգեբանները, XIX դարի երկրորդ կեսից սկսած, բազմաթիվ մեթոդներ են ստեղծել, որոնք կարելի է բաժանել երկու խոշոր խմբի՝ *հիմնական մեթոդներ (դիպրոս, գիպրաիորչ)* և *օժանդակ մեթոդներ (քեսպեր, հարցաքերիքիկներ, զրույց, մարդու գործունեության արդյունքների վերլուծություն և այլն)*:

¹ «Մեթոդ» բառը հունական ծագում ունի և թարգմանաբար նշանակում է նպատակին հասնելու միջոց, եղանակ, ուղի:

ԳԻՏՈՒՄ: Դիտումը մարդու վարքի, հոգեկան դրսևորումների քնկարծումն ու գրանցումն է նրա կենսագործունեության բնական տարրեր պայմաններում: Այսինքն՝ հետազոտվող մարդիկ ինչ-որ իրավիճակներում իրենց սովորական վարքն են դրսևորում, իսկ հոգեբանը դիտում և գրանցում է դրանք:

Ի տարբերություն ատորյա դիտումների, հոգեբանական դիտումը չի սահմանափակվում երևույթների միայն արտաքին կողմի նկարագրությամբ և դիտվող փաստերի գրանցմամբ, այլև բացահայտում է դրանց ներքին հոգեբանական բնույթը, բացատրում պատճառները:

Հոգեբանական դիտման ժամանակ ամենից առաջ ձևակերպվում է դիտման նպատակը, այսինքն՝ հետազոտողը պարզում է, թե ինչ է ցանկանում դիտել և ինչ նպատակով: Օրինակ՝ բացահայտել նախադպրոցականի խոսքի զարգացման առանձնահատկությունները կամ դեռահասների փոխհարաբերությունների բնույթը մեծահասակների հետ: Այնուհետև մշակվում է նրա իրագործման պլանը՝ նշելով այն ժամանակահատվածը, որի ընթացքում անհրաժեշտ է դիտումներ կատարել: Դիտման արդյունքները մանրամասնորեն գրանցվում են հատուկ օրագրում:

Գոյություն ունի դիտման երկու հիմնական տեսակ՝ *օբյեկտիվ դիտում* և *ինքնադիտում*՝ ներհայեցողություն¹ (ինտրոսպեկցիա): Օբյեկտիվ դիտման ժամանակ դիտվում և նկարագրվում են ուրիշի գործողությունները, իսկ ինքնադիտման ժամանակ մարդը դիտում և գնահատում է սեփական վարքն ու հոգեվիճակները:

Ուշագրավ է, որ մանկիկության փարիզում երեխայի հոգեկանի ուսումնասիրման հիմնական մեթոդն օբյեկտիվ դիտումն է:

Մարդկանց գործունեության բնականությունը պահպանելու նպատակով հոգեբանները հաճախ կիրառում են դիտման մեթոդի մեկ այլ տարբերակ՝ *ընդգրկված կամ մասնակցող դիտում*: Այս դեպքում դիտորդն անձամբ մասնակցում է այդ գործունեությանը: Օրինակ՝ երեխաների փոխհարաբերությունները խաղի ժամանակ ուսումնասիրելու նպատակով հետազոտողն ինքն էլ մասնակցում է խաղին:

ԳԻՏԱՓՈՐՉ: Ինչպես նկատեցիք, դիտումը հիմնականում *պասիվ մեթոդ է*, չի ենթադրում դիտորդի մասնակցությունն ու միջամտությունը տվյալ գործունեությանը, ինչի շնորհիվ էլ ապահովվում է ուսումնասիրվող գործունեության բնականությունը: Իսկ անհա գիտափորձն *ակտիվ մեթոդ է*: Այստեղ հետազոտողն ինքն է տեղծում հատուկ պայմաններ՝ իրեն հետաքրքրող հոգեբանական երևույթը «առջ բերելու և հետազոտելու (ներգործելու, փոփոխության ենթարկելու) համար»:

Գիտափորձերը լինում են *բնական* և *լաբորատոր*: Լաբորատոր գիտափորձն

¹ «Եր(ս)» և «հայել»․ «նայել» բառերից, այսինքն՝ մարդը նայում է իր ներսը դիտելու համար սեփական ներաշխարհը:



Ա. Լազուրսի
(1874-1917)

առաջին անգամ ուսումնասիրել է Վ. Վունդտը, իսկ քնական գիտափորձը՝ Ա. Լազուրսկին:

Լաբորայորի գիտափորձն անցկացվում է հատուկ լաբորատոր սենյակներում: Լաբորատոր գիտափորձի ժամանակ ցանկացած հոգեբանական փաստ կարելի է ուսումնասիրել *մի քանի անգամ* և *նշարկորեն*, քանի որ հատուկ սարքեր են կիրառվում: Սակայն այն միտքը, որ իրեն հետազոտում են, և որ ինքը հատուկ ուշադրության կենտրոնում է գտնվում (ինչո՞ւ չէ, նաև լաբորատորիան իր սարքավորումներով ու լուսավորմամբ), հաճախ ազդում է հետազոտվող մարդու հոգեվիճակի վրա, նա կարող է լարվել, կաշկանդվել:

Այս ուղղությանը հոգեբաններն աշխատում են և նախապես փորձում են հեղազոտվողների մեջ դրական հուզական վիճակ ստեղծել և համելի պայմաններ սպահովել:

Բնական գիտափորձի դեպքում հետազոտությունները կատարվում են սովորական, բնական պայմաններում, գիտափորձի պայմանները հնարավորինս մոտեցվում են փորձարկվողի առօրյա գործունեության (ուսուցում, խաղ, աշխատանք) պայմաններին:



Շակ Գիաժի
(1896-1980)

Շվեյցարացի հայրնի հոգեբան Շակ Գիաժեն երեխաների մտածողության առանձնահատկությունները հեղազոտելու և քացահայտելու նպատակով մի շարք հեղափոխական գիտափորձեր է կազմակերպել: Ներկայացնենք դրանցից մեկը: Պարկերացրեք մեծ քառակուսի սեղանի որի վրա դրված է որևէ լեռնային տեսարանի մակերես: Այն բոլոր չորս կողմերից լուսանկարում են: Բնականաբար, լուսանկարները տարբեր են լինում. մի կողմից երևում է միայն մի լեռը, մյուս կողմից՝ մյուսը, և այլն: Ապա մակերեսի դիմաց նստեցնում են հնգանյա աղջնակի, նրան տալիս լուսանկարները, իսկ սեղանի մյուս ծայրին նստեցնում են նույն տարիքի մեկ այլ աղջնակի: Փորձարկվող աղջկան խնդրում են ընտրել չորս նկարներից այն մեկը, որը լուսանկարվել է իր հասակակիցի նստած կողմից: Այդ կողմում էլ նստեցնում են հասակակիցին, փորձարկվող աղջիկը միշտ ընտրում է միևնույն լուսանկարը՝ այն, որը

լուսանկարվել է սեղանի՝ իր նստած կողմից:

Երեխայի կարծիքով՝ բոլոր մարդիկ, որտեղ էլ նստած լինեն, մակերեսը տեսնում են այնպես, ինչպես ինքը: Նա չի կարողանում մտածել ուրիշ մարդու տեսանկյունից:

Յուրաքանչյուր գիտափորձ ունենում է գիտական վարկած կամ ենթադրություն, որն էլ ասարացուցվում կամ հերքվում է գիտափորձի ընթացքում:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ: Զրույցը ևս հոգեբանական պրակտիկայում լայնորեն կիրառվող մեթոդներից է: Այն հիմնված է հետաքրքրող հարցի վերաբերյալ

երկկողմանի կամ բազմակողմանի քննարկման վրա: Հոգեբանական գրույցն անցկացնելու համար նախ պետք է որոշել, թե որն է գրույցի նպատակը:

Հոգեբանը կարող է նպատակ դնել պարզելու, օրինակ, չե՞ր ընտանեկան վիճակը, կոնֆլիկտները դպրոցում, մասնագիտական հակումները, հեղափոխությունները, վերաբերմունքը դպրոցի, համադասարանցիների, մարդկանց, քառյակի և իրավական նորմերի, ապագայի և, ընդհանուր առմամբ, կյանքի նկատմամբ:

Ելնելով նպատակից՝ հոգեբանը կազմում է գրույցի պլանը, ձևակերպում այն հարցերը, որոնց շուրջ պետք է ծավալվի գրույցը: Ջրույցի արդյունքները, հետազոտվողի պատասխաններն ու մեկնաբանությունները, նրա ողջ վարքագիծն ու պահվածքը մանրամասնորեն գրանցվում են:

ԹԵՄԱՏԵՐ: Թեստերը՝ հանձնարարականներ են, որոնք տրվում են մաթեմատիկական խնդիրների, երկրաչափական պատկերների, նշանների և գրավոր հարցերի շարադրանքի տեսքով: Թեստերը մեզ հնարավորություն են տալիս կարճ ժամանակահատվածում միանգամից շատ նյութ, տվյալներ հավաքել մեծաքանակ խմբերի մասին: Թեստերն օգնում են մեզ պարզելու անձի մեջ այս կամ այն ընդունակությունների, կարողությունների, անձնային որակների առկայությունը, նրանց անհատական տարբերությունները, մտավոր զարգացման մակարդակը, ապագա կարողությունների մակարդակը և մասնագիտական պիտանիությունը և այլն:

Առաջին թեստը արեղծել են ֆրանսիացի հոգեբաններ Բիսեն և Սիմոնը (1905 թ.): Վերջիններս առաջարկել են մտավոր կարողությունների չափման թեստ, որը հեղափոխում կոչվեց նրանց անուններով:

ՎԱՐՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ մարդու վարքի ու գործունեության արդյունքներն օգտագործվում են որպես հոգեկանի վերաբերյալ տվյալներ հավաքելու միջոց: Հաճախ դրան անդրադառնում են այն ժամանակ, երբ արարք կատարողը բացակայում է կամ դեռևս հայտնի չէ (օրինակ՝ սովորողների տեսրերի, քրթապանակների ուսումնասիրումը, մանկան հոգեբանության մեջ նկարների ուսումնասիրումը): Վարքի և գործունեության արդյունքների վերլուծության մեթոդն ունի մի քանի տարատեսակներ՝ կոնկրետ վարքի, գործունեության վերլուծություն, նկարների, ապլիկացիաների վերլուծություն, ձեռագրի վերլուծություն և այլն:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՎՎԱԾՆԵՐԸ: Ժամանակակից հոգեբանությունը գիտելիքների բնագավառ է, որն ընդգրկում է մի շարք առանձին գիտական ճյուղեր և գիտական ուղղություններ: Հետևաբար, դրանք որոշակի սկզբունքներով տարանջատելու և դասակարգելու անհրաժեշտություն է առաջանում:

1 Անգլերեն test փորձարկում բառից:

Հոգեբանության բնագավառները դասակարգվում են՝

<p>1) Ըստ կոնկրետ գործունեության</p>	<p>Աշխարհների հոգեբանություն, ինժեներային հոգեբանություն, մանկավարժական հոգեբանություն, բժշկական հոգեբանություն, իրավաբանական հոգեբանություն, գինվորական հոգեբանություն և այլն: Հոգեբանության այս ճյուղերն ուսումնասիրում են մարդկային գործունեության կոնկրետ տեսակների հոգեբանական օրինաչափությունները:</p>
<p>2) Ըստ հոգեկանի զարգացման</p>	<ul style="list-style-type: none"> ● <i>Տարիքային հոգեբանություն</i>, ուսումնասիրում է հոգեկանի զարգացման շարժընթացն ու առանձնահատկությունները մանկության, պատանեկության, երիտասարդության, հասունության և ծերության ժամանակաշրջաններում: ● <i>Հարուկ հոգեբանություն</i>, ուսումնասիրում է զարգացման տարաբնույթ շեղումներով, հատուկ կարիքներով մարդկանց հոգեբանական առանձնահատկությունները: ● <i>Համեմատական հոգեբանություն</i>, ուսումնասիրում է կենդանիների հոգեկան կյանքն ու վարքը, կատարում մարդու և կենդանիների հոգեկան կյանքի համեմատական ուսումնասիրություն:
<p>3) Ըստ մարդու և հասարակության հարաբերությունների</p>	<p>Այսպիսի մոտեցմամբ տարանջատվող հոգեբանական բնագավառները միավորվում են <i>սոցիալական հոգեբանություն</i> անվան տակ՝ անձի հոգեբանություն, փոքր և մեծ խմբերի հոգեբանություն, միջանձնային հարաբերությունների հոգեբանություն, էթնոհոգեբանություն և այլն:</p>

Հոգեբանության բնագավառների այս բազմազանության մեջ հարկ է հիշատակել նաև *ընդհանուր հոգեբանությունը*, որը, չնայած հոգեբանության առանձին ճյուղ չէ, սակայն հատուկ անվանում է առավել ընդհանուր հոգեբանական օրինաչափությունները բնութագրելու համար:

ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ: Հոգեբանությունը ժամանակակից գիտությունների համակարգում կենտրոնական տեղ է գրավում:

Բոլոր գիտությունները, տեխնիկան, մշակույթը մարդկային գործունեության արդյունք են: Այս պատճառով էլ հոգեբանությունն առնչվում է գիտության, տեխնիկայի, մշակույթի տարբեր բնագավառների հետ:

Հոգեբանությունը սերտորեն առնչվում է հասարակական գիտությունների և, ամենից առաջ, *փիլիսոփայության* հետ: Հայտնի է, որ փիլիսոփայությունն ուսումնասիրում է մարդուն ամբողջապես, դիալեկտիկական այն կապերն ու օրինաչափությունները, որոնցում ձևավորվում և ընթանում է նրա զարգացումը: Հո-

գերանությունն օգտվում է այդ օրենքներից մարդու աշխարհայացքն ու մտածելակերպը ձևավորելու համար:

Ինչպես հիշում եք նախորդ դասից, հոգեբանական առաջին գաղափարներն ու մտքերը շեղակերպել են հենց իրենք՝ փիլիսոփաները: Այսինքն՝ հոգեբանությունը ոչ միայն կապված է փիլիսոփայության հետ, այլև սկիզբ է առնում փիլիսոփայությունից:

Բավականին նկատելի է հոգեբանության կապը *կենսաբանական գիտությունների* և հատկապես ֆիզիոլոգիայի հետ, որն ուսումնասիրում է նյարդային համակարգը, գլխուղեղի աշխատանքը: Յուրաքանչյուր հոգեկան գործընթաց ունի իր ֆիզիոլոգիական մեխանիզմը, և ցանկացած հոգեկան փոփոխություն տեղի է ունենում այս կամ այն ֆիզիոլոգիական մեխանիզմի առկայության դեպքում, հետևաբար, վերջիններիս իմացումն անչափ անհրաժեշտ է:

Այդ մասին ավելի մանրամասն կխոսվի հաջորդ դասին:

Առանց հոգեբանության գրեթե անհնար է պատկերացնել *մանկավարժական գիտության* գոյությունը: Ինչպես գիտենք, մանկավարժությունը զբաղվում է աճող և զարգացող մարդու դաստիարակության և կրթության հիմնախնդիրներով, իսկ հոգեբանությունը բացահայտում է ուսուցման և դաստիարակության հոգեբանական մեխանիզմները:

Հոգեբանությունը համագործակցում է նաև բազմաթիվ այլ գիտությունների հետ (*գենետիկա, սոցիոլոգիա, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա* և այլն):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳԻՐԱՆՔՆԵՐ

1. Հեղազոտության ինչպիսի՞ մեթոդներ են կիրառվում հոգեբանության մեջ: Դրանցից որո՞նք են չեզ ծանոթ:
2. Հոգեբանության ո՞ր բնագավառը չեզ հեղաբրբրից և ինչո՞ւ:
3. Կարո՞ղ եք կապ գտնել հոգեբանության և դպրոցում չեթ ուսումնասիրած առարկաների միջև: Բերե՛ք օրինակներ:

ԹԵՄԱ 2. ՀՈԳԵԿԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԳԱՍ 3. ՀՈԳԵԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՅՈՒՈՒՄ

*Մարդու ուղեղը բնության ամենակապարյալ
սրնդծագործությունն է:*

Ա. Ա. Վախա

ՀՈԳԵԿԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Նախորդ քննարկում դուք իմացաք, որ հոգեբանությունը գիտություն է մարդու ներաշխարհի, նրա հոգեկանի մասին: Այժմ մանրամասնենք, թե ինչ ենք հասկանում «հոգեկան» ասելով:

Մարդու հոգեկանը ձևավորվում ու զարգանում է արտաքին աշխարհի հետ շփման ընթացքում, հատկապես խաղի, ուսուցման և աշխատանքի ժամանակ: Հոգեկանի զարգացումը սոցիալական պայմանավորվածություն ունի, այն զարգանում է հասարակության մեջ արժեքների յուրացման գործընթացում:

Անձի հոգեկանը բարձրագույն մատերիայի՝ *ուղեղի հատկությունն է*, որի շնորհիվ մարդն ակտիվորեն արտացոլում է շրջապատող աշխարհը, առարկաներն ու երևույթները, գլխուղեղում ստեղծում դրանց պատկերները, որոնց միջոցով էլ կարգավորում է իր վարքն ու գործունեությունը: Ուստի **հոգեկանը օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ արտացոլումն է հոգեկան փարթեր երևույթների փնտրով:**

Հոգեկանը մարդու ներաշխարհն է, որը ձևավորվում ու զարգանում է մարդու և արտաքին աշխարհի փոխազդեցության գործընթացում, այդ աշխարհը մանաշխու, առարկաների և երևույթների ներթափույց կապերը քացահայտելու և վերափոխելու ժամանակ:

Մարդու հոգեկանի, ներաշխարհի բովանդակությունն են կազմում ուշադրությունը, զգայություններն ու ընկալումները, հիշողությունը, մտածողությունն ու խոսքը, երևակայությունը, հույզերն ու զգացմունքները, կամքը, դիքորոշումներն ու պահանջմունքները, հետաքրքրությունները, ընդունակությունները և այլն:

Հոգեկանը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով: Հոգեկանի կարևորագույն առանձնահատկությունն *արտացոլումն է:* Հոգեբանական արտացոլումը՝

1. հնարավորություն է տալիս ճիշտ արտացոլել շրջապատող իրականությունը.
2. իրականացվում է անձի ակտիվ գործունեության ընթացքում.
3. խորանում և կատարելագործվում է.
4. քեկվում է մարդու անհատականության միջով.
5. կրում է առաջանցիկ բնույթ (օրինակ՝ ձեռքը կրակի մեջ շենք մտցնում, քանի որ նախապես գիտենք, որ կրակն այն կայրի):

Հոգեբանական արտացոլումը հայելային չէ, պասիվ չէ, այն ուղեկցվում է փնտրտուքներով, ընտրությանը և հանդիսանում է մարդու գործունեության անհրաժեշտ կողմերից մեկը:

Մարդու հոգեկանը ոչ միայն արտացոլող, այլ նաև *սպրման* բնութագիր ունի: Ապրման միջոցով մարդն իր *վերաբերմունքն է* արտահայտում արտացոլվող առարկաների և երևույթների նկատմամբ:

Հոգեկանի մյուս առանձնահատկությունն *ինքնասարգացումն է*, երբ մարդը ճանաչում է ինքն իրեն, որի արդյունքում ձևավորվում է անձի ինքնագիտակցությունը և ինքնագնահատականը:

Հոգեկանը կատարում է երկու կարևոր գործառույթ. ա) *արյւացում*, բ) *մարդու վարքի ու գործունեության կարգավորում և կառավարում*:

Իրականության ճիշտ արտացոլումը մեզ հնարավորություն է տալիս հասկանալու երևույթների և իրերի էությունը, ղեկավարելու մեր վարքը:

Մարդու հոգեկանն ունի որոշակի կառուցվածք: Հոգեբանության մեջ առանձնացվում են հոգեկան երևույթների երեք հիմնական ձևեր.

1. Հոգեկան գործընթացներ: Սա նշանակում է իրականության շարժուն արտացոլումը հոգեկան երևույթների՝ մտածողության, երևակայության, ընկալման, հիշողության և այլ ձևերով: Հոգեկան գործընթացները բաժանվում են երկու խմբի՝ *ճանաչողական* (իմացական) և *հուզականային*:

Ճանաչողական (իմացական) գործընթացներն են մարդու զգայությունները, ընկալումը, հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը, խոսքը: Դրանց միջոցով մարդը ճանաչում (իմանում) է արտաքին աշխարհն ու սեփական ներաշխարհը: Հուզականային գործընթացներն են մարդու հույզերն ու զգացմունքները և կամքը:

Ցանկացած հոգեկան գործընթաց ունի սկիզբ, զարգացում և վերջ: Յուրաքանչյուր հոգեկան գործընթացի վերջը կապված է մեկ այլ գործընթացի սկզբի հետ, այստեղից էլ դրսևորվում է հոգեկանի անընդհատականությունը:

2. Հոգեկան վիճակներ ասելով հասկանում ենք հոգեկան գործընթացների հետևանքով առաջ եկած հարաբերականորեն կայուն վիճակները, որոնցով բնութագրվում է անձի հոգեկան ակտիվությունը կոնկրետ ժամանակահատվածում: Հոգեկան վիճակները կարող են դրսևորվել իմացական գործընթացների, հուզական գործընթացների և այլ գործոնների ազդեցությամբ: Կախված իրադրությունից՝ հոգեկան վիճակները ենթակա են փոփոխման: Օրինակ՝ երեխան արցունքն աչքերին կարող է լիաթոք ծիծաղել:

3. Հոգեկան հարկությունները կայուն կառուցվածքներ են, որոնք ապահովում են տվյալ մարդուն տիպական գործունեության ու վարքի որոշակի որակական և քանակական մակարդակ: Հոգեկան հատկություններից են անձի ուղղվածությունը, խառնվածքը, ընդունակությունները, բնավորությունը:

Ուղեղն ու հոգեկանը: Ինչպես իմացաբ, հոգեկանը ուղեղի հատկություն է: Օրգանիզմի հոգեկան գործունեությունն իրագործվում է ուղեղի հատուկ կառույցների միջոցով: Դրանցից մի քանիսն ընկալում են ազդեցությունները, մյուսները

դրանք ազդանշանների են ձևավոխում, կազմում են վարքի սլանը և վերահսկում այն, երրորդները վարքին եռանդ և արագություն են հաղորդում, չորրորդները գործի են դնում սկանները և այլն: Այդ ամբողջ բարդ աշխատանքը հնարավորություն է տալիս մարդուն ակտիվորեն կողմնորոշվել շրջապատում և մշտապես լուծել կենսական խնդիրներ:

Օրգանական աշխարհի էվոլյուցիայի ընթացքում, ամեռբայից մինչև մարդը, վարքի ֆիզիոլոգիական մեխանիզմներն անընդհատ բարդացել և տարբերակվել են՝ դրա շնորհիվ դառնալով ավելի հարմարված և օպերատիվ:

- ♦ **Որպեսզի լավ պատկերացնեք մարդու հոգեկանը, ընդհանրացված ձևով վերհիշեք «Կենսաբանություն, մարդ» դասընթացից նյարդային համակարգի կառուցվածքն ու գործունեության առանձնահատկությունները:**

Հոգեկանի ռեֆլեկտոր բնույթը: 1863 թվականին Ի. Մ. Սեչենովը «Գլխուղեղի ռեֆլեքսներ» աշխատության մեջ հանգեց այն եզրակացության, որ գիտակցական և անգիտակցական բոլոր գործողություններն ըստ ծագման ռեֆլեքսներ են: Անգամ մարդու մեջ ծագած մտքերը Սեչենովն անվանում է ռեֆլեքսներ: Հետագայում Ի. Սեչենովի տեսակետները զարգացրեց Ի. Պավլովը՝ ստեղծելով պայմանական ռեֆլեքսների մասին ուսմունքը, որը հոգեկանի ֆիզիոլոգիական հիմքն է:

ՀԱՐՅԵՐ ԵՒ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են մարդու հոգեկանի կարևորագույն առանձնահատկությունները:
2. Ի՞նչ էր հասկանում հոգեբանական արտացոլում ստելով, և որո՞նք են նրա առանձնահատկությունները:
3. Թվարկիք և քացալրեք հոգեկան երևույթների հիմնական շեները:

ՃԱՆԱԶԻՐ ԻՆՔԳՔԵՉ

- Մարդու գլխուղեղը բաղկացած է մոտ 100 միլիարդ նյարդային բջիջներից՝ նեյրոններից:
- Մեծ կիսագնդերի կեղևը կազմող 14 միլիարդ նեյրոններից արդյունավետ գործում են միայն 700 միլիոնը, այսինքն՝ մոտ 5%-ը: Ի՞նչ է վկայում այս փաստը:

ԳԱՍ 4. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ: ՀՈԳԵԿԱՆԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ: Բարձրագույն նյարդային գործունեությունը գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում ընթացող, միմյանց հետ փոխադարձաբար կապված բազմաթիվ նյարդային գործընթացների ամբողջությունն է:

«Բարձրագույն նյարդային գործունեություն» հասկացությունն առաջարկվել է Է. Պ. Պավլովի կողմից: Հասուն տարիքի մարդու և երեխայի բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիան հիմնված է կենտրոնական նյարդային համակարգի բարձրագույն բաժինների, ֆիզիոլոգիական գործունեության օբյեկտիվ օրինաչափությունների վրա: Պավլովը մշակեց հետազոտման հոգեբանական օբյեկտիվ եղանակ, որի հիմքում ընկած էր «նեֆլեքսի» կենտրոնական նյարդային համակարգի միջոցով իրականացվող հակազդման պատկերացումը:

Բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայում «նեֆլեքսներն» ընդունված է բաժանել 2 խմբի՝ ոչ պայմանական (բնածին) և պայմանական (ձեռքբերովի):

Ոչ պայմանական «նեֆլեքսները» բնածին են և դրսևորվում են ծնված պահից: Դրանք են՝ ծծելու, կուլ տալու, քրտնարտադրության, հազի, փռշտոցի, աչքը քարքշելու և այլ «նեֆլեքսները»: Ոչ պայմանական «նեֆլեքսների» «նեֆլեկտոր» աղեղները ծնվելու պահին արդեն պատրաստ են: Դրանք անընդհատ, օրինաչափ կերպով ծագում են համապատասխան գրգռիչների ազդեցության տակ. գրգռիչներ, որոնք ազդում են որոշակի ընկալիչների վրա: Թքարտադրության «նեֆլեքսը» ծագում է բերանի խոռոչի գրգռման, փռշտոցը՝ քթի մաշկի գրգռման, կուլ տալը՝ լեզվի արմատի գրգռման ժամանակ և այլն:

Ոչ պայմանական «նեֆլեքսների» տեսակներն են՝ սննդային, պաշտպանական, սեռական, կողմնորոշիչ: Օրինակ՝ ծննդատան մանկական սենյակում բոլոր նորածինների գլուխներն ուղղված են պատուհանի կողմը՝ դեպի լույսը: Սա մարդու առաջին կողմնորոշման «նեֆլեքսներից» մեկն է:

Եթե արտաքին միջավայրը չփոփոխվեր, ապա ոչ պայմանական «նեֆլեքսները» բավարար կլինեին օրգանիզմի գոյատևման համար: Սակայն մեզ շրջապատող միջավայրն այնպես բարդ ու փոփոխական է, որ միայն ոչ պայմանական «նեֆլեքսների» օգնությամբ հարմարվելն ու գոյատևելն անհնար է:

Թքագեղձերն ուսումնասիրելիս Է. Պ. Պավլովը հանդիպեց մի երևույթի, որն ուներ «նեֆլեքսի» բոլոր գծերը, բայց ուներ նաև էական տարբերիչ գծեր. թքագեղձի խոզակով շան թքագալտությունը սկսվում էր ոչ միայն սնունդը քերական ընկնելուց, այլև «պրիկիթով» լցված ամանի տեսքից և այն ծառայողի քայլերի ձայնից, որը նրան միշտ վերակրում էր: Այդ դիրքումը ծառայեց «նեֆլեքսների» նոր տեսակի՝ պայմանական «նեֆլեքսների» հայրնագործմանը:

Արտաքին աշխարհից օրգանիզմի վրա ընկնող գրգռիչների մեծ մասն առաջ է

բերում միայն պայմանական կողմնորոշիչ ռեֆլեքս՝ չազդելով օրգանիզմի ֆիզիոլոգիական գործունեության վրա: Օրգանիզմի բնականոն գործունեության վրա էապես չազդող գրգռիչը չեզոք գործոն է: Եթե վերջինս շատ անգամ համընկնում է կենսաբանորեն առավել կարևոր գործունեության (սնունդ, պաշտպանական հակազդում, սեռական ռեֆլեքս) հետ, ապա դադարում է չեզոք լինելուց: Կեղևային և ենթակեղևային դրդման օջախների միջև ստեղծվում է ժամանակավոր նյարդային կապող ուղի, որով ընթանում են որևէ օրգանի, օրգանների համակարգի կամ ամբողջ օրգանիզմի գործունեությունն առաջ բերող գրգռումները: Գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի գործունեությունն անվանվում է *պայմանական ռեֆլեքսային գործունեություն*, իսկ նոր գոյացող ռեֆլեքսները՝ *պայմանական ռեֆլեքսներ*:

Պայմանական ռեֆլեքսի գոյացումն ուղեկցվում է պայմանական գրգռման կենտրոնի և ոչ պայմանական ռեֆլեքսն ամրապնդող կենտրոնի միջև ժամանակավոր նյարդային կապի ստեղծմամբ: Ժամանակավոր նյարդային կապը չափազանց կարևոր է արտաքին միջավայրի հետ օրգանիզմի լայն ու բազմազան փոխազդեցության համար: Կեղևային ժամանակավոր կայուն նյարդակապի ստեղծման անհրաժեշտ նախապայման է չեզոք, պայմանական գործոնի և ոչ պայմանական գրգռիչի համընկնումն ըստ ժամանակի: Ընդ որում՝ պայմանական գործոնը պետք է նախորդի ոչ պայմանականին: Կարևոր նախապայման է նաև պայմանական գրգռիչի բավարար ուժը և ոչ պայմանական գրգռիչով ամրապնդելու քանակությունը: Այսպիսի պայմաններում ստեղծվում է կայուն պայմանական ռեֆլեքս: Պայմանական ռեֆլեքսի ստեղծման անհրաժեշտ նախապայման է նաև գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի գործում, արթուն վիճակը: Պայմանական ռեֆլեքսը դժվար է մշակվում կյանքի ամենավաղ ժամանակաշրջաններում և գերհոգնածության դեպքում: Հետագա դասերի ընթացքում դուք կիմանաք, որ հիշողության մեխանիզմներից մեկն էլ պայմանական ռեֆլեքսներն են:

Ժամանակավոր նյարդային կապերի գոյացումն ու մեծ կիսագնդերի կեղևի պայմանական-ռեֆլեկտոր գործունեությունն արտահայտում են ֆիզիոլոգիական երևույթների միայն այն կողմը, որն իր ծագումով պարտական է գլխուղեղի կեղևում դրդման երևույթի զարգացմանը: Մյուս կողմը դրսևորվում է նյարդային գործունեության արգելակման մեջ: Այս կողմն ունի առաջինից ոչ պակաս նշանակություն, քանի որ արգելակման շնորհիվ բացառվում է դրդման նոր օջախների ստեղծումը, կանխվում է ժամանակավոր կապերի գոյացումը և դրդման երևույթների բախումը: Արգելակման շնորհիվ ստեղծվում է որոշակի պայմանական ռեֆլեքսի լրիվ դրսևորման հնարավորություն: Իր կենսական կարևորությամբ կեղևային արգելակման երևույթն ունի դրդման երևույթից ոչ պակաս նշանակություն: Օրինակ՝ շարժումները ճիշտ ժամանակին արգելակելը վտանգ դեպքում պահպանում է մարդու կյանքը, մաշկային անոթալայնիչ նյարդերի արգելակումը կանխում է ջերմության ավելորդ կորուստը, իսկ մարտդակյան գեղձերի հյուսվածատան գործունեության արգելակումը պակասեցնում է մարտդա-

կան հյուսիսի կորուստը: Դրոման և արգելական երևույթները մշտապես գտնվում են փոխադարձ կապի մեջ: Նրանք կազմում են մարդու բարձրագույն նյարդային գործունեության նյութական հիմքը:

ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱՎՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ: Մարդու հոգեկան ակտիվությունն ընդգրկում է նրա հոգեկան գործունեության բոլոր ձևերը և բնութագրվում է տարբեր մակարդակներով:

Հոգեկան ակտիվության առաջին և կարևորագույն մակարդակը *գիտակցությունն* է: Այն իրականության արտացոլման բարձրագույն մակարդակն է և հատուկ է միայն մարդուն: Նշենք, որ գիտակցությունը ոչ միայն արտաքին աշխարհի արտացոլում է, այլև մարդու ներաշխարհի արտացոլում և ապրում է:

Գիտակցությունը շրջապատող աշխարհի մասին մարդու ունեցած գիտելիքների ամբողջությունն է: Իսկ այդ գիտելիքները մարդը ձեռք է բերում հոգեկան գործընթացների միջոցով: Ուստի բոլոր հոգեկան գործընթացները գիտակցության կառուցվածքի մեջ են մտնում (զգայություններ, ընկալումներ, հիշողություն, մտածողություն, երևակայություն): Գիտակցության կառուցվածքի մեջ են մտնում նաև մարդու հույզերն ու զգացմունքները, նրա վերաբերմունքը շրջապատող աշխարհի երևույթների և մարդկանց հանդեպ:

Գիտակցությունն ապահովում է մարդու նպատակադրված, նպատակաուղղված վարքն ու գործունեությունը: Իսկ սա նշանակում է, որ մարդը նախապես, մինչև գործելն իր առջև նպատակներ է դնում, գնահատում և ընտրում է նպատակին հասնելու գործողությունները, հաշվի է առնում գործողությունների իրականացման պայմանները, կամային ճիգեր է գործադրում իր նպատակներին հասնելու համար:

Գիտակցության բարձրագույն դրսևորումը *ինքնագիտակցությունն* է, որի միջոցով մարդը կարողանում է ճանաչել և գնահատել ինքն իրեն: Մարդու ինքնագիտակցությունը ձևավորվում է ծնվելուց հետո և զարգանում կյանքի ընթացքում:

♦ **Փորձք պատասխանել «ո՞վ եմ ես» հարցին, նկարագրել ք ձեզ:**

Ձեր պատասխաններում ինքնինդ կհայրնաբերեք ինչպես հոգեկան հարկությունների (ընկերասեր, շիվոդ, պարոսանանաչ, ազնիվ) նկարագրություններ, այնպես էլ ֆիզիկական գծերի (բարձրահասակ, սևահեր, սևայա) նկարագրություններ և ավելին՝ դրանց րոպող զնահապականներ, օրինակ՝ «Ես շիվոդ եմ, ընկերասեր, և ջա ինչ դուր է գալիս»:

Հոգեկան ակտիվության մյուս մակարդակը *ենթագիտակցությունն* է: Հայտնի է, որ մարդու հոգեկան կյանքը բազմաբովանդակ է, և նրա հոգեկանում պահպանվում է առեղի տեղեկատվություն: Հոգեկան կյանքի այդ հարստությունը պայմանավորված է նաև մարդու ենթագիտակցությամբ: Այդ եզրույթն առաջին անգամ օգտագործել է գերմանացի գիտնական Է. Պլատները 1776 թվականին, իսկ ավելի ուշ այն պատկերավոր նկարագրել է Գ. Ֆեխները՝ սառցալեռան (այսօրվա) երևացող մասը համեմատելով գիտակցության, իսկ ավելի ծավալուն, խորատուգված մասը՝ ենթագիտակցության հետ: Ենթագիտակցականի բովանդա-

կությունն անսպառ է, քանի որ տվյալ հարցի վերաբերյալ լրացուցիչ հարցադրումներ կատարելիս մարդիկ միշտ ստանում են ավելի շատ նյութ, քան ունեին սկզբում՝ խոսակցությունից առաջ: Ենթագիտակցության մեջ կուտակվում են կյանքի ընթացքում մարդու ստացած տպավորությունները և այնտեղից անհրաժեշտության դեպքում քափանցում գիտակցության մեջ: Պատկերների, մտքերի, փաստերի, իրադարձությունների զգալի մասը կարծես թե անհայտ է տվյալ անձին, բայց նա դա արտահայտելու իրական հնարավորություններ ունի:

Հոգեկան ակտիվության ստորին մակարդակը կոչվում է *անգիտակցական*։ Այն ընդգրկում է մարդուն ժառանգաբար փոխանցված հոգեկան հատկությունների և բովանդակությունների միասնությունը: Անգիտակցական հոգեկանի բազմաթիվ դրսևորումներին իր աշխատանքներում անդրադարձել է ավստրիացի հոգեբույժ և հոգեբան Չ. Ֆրոյդը:

Արթուն ժամանակ մարդու հոգեկան ակտիվությունը հիմնականում գիտակցական է, իսկ քնած վիճակում՝ ենթագիտակցական և անգիտակցական:

ՀՈՐՅԵՐ ԵՎ ԿՈՍՉԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Նկարագրե՛ք և մեկնաբանե՛ք պայմանական և ոչ պայմանական ռեֆլեքսները:*
2. *Բնութագրե՛ք և համեմատե՛ք հոգեկանի ակտիվության մակարդակները:*
3. *Սովորաբար գրնում էր, որ ինչքան էլ անգիտ լինի մարդը, այնուամենայնիվ, նա ունի անհամեմատ ավելի շատ գիտելիքներ, քան ինքը գիտե այդ մասին: Ինչպե՞ս կբացատրենք այս երևույթը:*

ԹԵՄԱ 3. ՀՈԳԵԿԱՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ

ԴԱՍ 5. ՀՈԳԵԿԱՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԻ ՀԻՄՆԱՆՆԵՂԻՐԸ ԱՐԳԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ


Դուք արդեն որոշակի պարկերացում ունեք հոգեկանի, նրա կառուցվածքի ու գործառնությունների մասին: Այժմ քննարկենք այն հարցը, թե ինչից է կախված հոգեկանի զարգացումը: Կարելի՞ է արդյոք մարդ դառնալ՝ չունենալով մարդկային ուղեղ, կամ կարելի՞ է արդյոք մարդ դառնալ մարդկային հասարակությունից դուրս:

XIX դարում հոգեկանի զարգացման ընթացքի վերաբերյալ ձևավորվել ու զարգացել են երկու իրար հակադիր հոգեբանական ուղղություններ՝ կենսագենետիկական և սոցիոգենետիկական:

Կենսագենետիկական ուղղության ներկայացուցիչները պնդում են, որ հոգեկանի զարգացումը պայմանավորված է բացառապես կենսաբանական գործոնով՝ ժառանգականությամբ: Նրանց կարծիքով՝ երեխայի մեջ, ինչպես սերմերի մեջ, ի ծննդ գտնվում են ապագա մարդու բոլոր հատկությունները: Հասարակությունն այն շատ թե քիչ արգավանդ հողն է, ուր ծլում են սերմերը և դառնում փուխ:

Դրան հակառակ՝ սոցիոգենետիկական ուղղության ներկայացուցիչներն էլ կարևորում և առաջին պլան են մղում սոցիալական միջավայրը, մարդկային հասարակությունը իր բազմաբնույթ ներգործություններով:

Սոցիոգենետիկական ուղղության ակունքները սկիզբ են առնում XVII դարից: Անգլիացի հայտնի մտածող Ջոն Լոկի կարծիքով՝ մարդու հոգեկանում չեն կարող լինել քնածին գաղափարներ, այդ ամենը ձևավորվում է կյանքի ընթացքում՝ շնորհիվ փորձի և զգայական ընկալման: Այսօրնայից էլ նա ձևակերպում է իր հայտնի «*tabula rasa*» (մաշտիկի վրա սպիտակ) տեսությունը, ըստ որի, երբ մարդը ծնվում է, նրա հոգին մաքուր է այնպես, ինչպես մաքուր փափարակը. կյանքի ընթացքում արդեն փորձն ու զգայություններն են գրում այդ փափարակի վրա իրենց առաջին գրերը:



Ջիզմունդ Իրոյո
(1856-1939)

Խորհրդային հոգեբանական դպրոցը, կարևորելով սոցիալական գործոնը, հատկապես շեշտադրում էր ուսուցման ու դաստիարակության դերը: Երեխային մարդ է դարձնում շփումը մարդկանց հետ, որոնք նրան են հաղորդում մախորդ սերունդների փորձը: Հոգեբան Ա. Ն. Լեոնտևը, «պատասխանելով» կենսագենե-



Ա. Ն. Լեհանյան
(1903-1979)

տիկական ուղղության ներկայացուցիչներին, նշում էր, որ երեխան այն հողն է, որի մեջ հասարակությունը ցանում է մարդկային հատկություններ: Այն ամենը, ինչ մարդկանց մեջ իսկական մարդկային է, ոչ թե հասունանում է, այլ յուրացվում:

Սակայն միևնույնը չէ՞, թե ինչպես կենդանաբանվեն մարդու զարգացման պարամետրերը, կարող էք հարցնել դուք: Չէ՞ որ ինչպես էլ այն որոշվի, յուրաքանչյուր նորմալ երեխա ի վերջո դառնում է մարդ, չեղք է թերում անհրաժեշտ հոգեկան հատկություններ:

Պատահական չէ, որ հոգեկանի զարգացման շարժիչ ուժերի, նրանց հարաբերակցության հարցը հոգեբանության մեջ դիտարկվում է որպես հիմնախնդիր: Եվ ոչ միայն այն պատճառով, որ առ այսօր դեռևս վիճելի է

և գիտական տարածայնությունների ու բազմաթիվ մասնագիտական բանավեճերի տեղիք է տալիս: Խնդիրն այն է, որ պատճառների բացատրությունից են կախված զարգացման կառավարման, ուղղորդման, նրա ընթացքի վրա գիտակցական ներգործման հնարավորությունները:

Եթե հոգեկանի զարգացումը ներկայացվում է որպես բնածին բնագոյների դրսևորում, ապա երեխայի զարգացմանը միջամտելը, նրա բնական դրսևորումները ճնշելը պարզապես անիմաստ է դառնում, և նույնքան անիմաստ՝ երեխայի արարքների պատասխանատվությունը նրա վրա դնելը:

Միանգամայն այլ դիրքորոշում է բխում այն փաստից, որ հոգեկանի զարգացման աղբյուրը հասարակական փորձն է: Հասարակական փորձի փոխանցման հիմնական միջոցն ուսուցումն ու դաստիարակությունն են: Այսինքն՝ զարգացումը հնարավոր է նպատակաուղղված կերպով ուղղորդել, կառավարել:

Ինչ խոսք, մարդու զարգացումը ոչնչից չի սկսվում. մարդը ծնվում է որպես կենսաբանական էակ, նրա օրգանիզմը մարդկային օրգանիզմ է, իսկ ուղեղը՝ մարդկային ուղեղ: Անհատը ծնվելով իր հետ բերում է կենսաբանական հատկությունների և ֆիզիոլոգիական մեխանիզմների որոշակի ամբողջություն, որն էլ հանդես է գալիս որպես հոգեկան զարգացման նախադրյալ: Սակայն այդ նախադրյալներն իրագործվում են որոշակի հասարակության մեջ, զարգանում կրթության ու դաստիարակության, անհատի սոցիալական գործունեության շնորհիվ:

Պարզունակ կլիներ, եթե պարկերացնեիք, որ կենսաբանական հատկությունները և մեխանիզմները միայն զարգացման սկզբնական փուլում են իրենց գործառույթն իրականացնում, որից հեկոտ անհեկոտանում են: Օրգանիզմի զարգացումը անընդհատ, շարունակական գործընթաց է, և այդ հատկություններն ու մեխանիզմները միշտ էլ հոգեկան զարգացման համար ընդհանուր նախադրյալների դեր են կատարում. իհարկե, հոգեկան զարգացման փարբեր փուլերում՝ փարբեր չեույ:

Այսպիսով՝ մարդու մեջ կենսաբանական ժառանգորդմանը հաջորդում է սոցիալական ժառանգորդումը: Մարդկային ուղեղը, մարդկային ընդունակություններն առանց մարդկային կյանքի պայմանների, առանց սոցիալական ներգործությունների չեն կարող զարգանալ: Մարդ (անձնավորություն) դառնալու համար անհրաժեշտ են և՛ ուղեղի որոշակի կառուցվածք, և՛ կյանքի որոշակի պայմաններ, և՛ համապատասխան դաստիարակություն: Եվ թե որքան է նրանցից յուրաքանչյուրի չափաբաժինը մարդու զարգացման գործում, խիստ վիճահարույց է և բավականին բարդ:

ՀԵՏԱԲԲԻՐ Է ԻՄՄՆԱԼ

1920 թվականին հնդիկ վանական Ռ. Մինգհը տեղեկություն է ստանում, որ մի գյուղի մոտ գայլերի ռմակում նկատել են երկու խորհրդավոր էակներ: Նրանց հաջողվում է բռնել, դրանք երկու աղջիկներ էին. մեկը՝ 5-6 տարեկան, մյուսը՝ 3: Մինգհը աղջիկներին իր հեյտ է տանում և փորձում է դաստիարակել: Մակայն աղջիկներից կրտսերը՝ Անելան, մեկ տարի ապրելուց հետո մահանում է՝ այդպես էլ չսովորելով մարդկային վարքագիծ, իսկ ավագը՝ Կամալան, ապրում է մինչև 15 տարեկան: 9 տարվա ընթացքում հիմնականում հաջողվում է նրանից վերացնել գայլային սովորույթները, բայց ոչ ամբողջապես: Նա մեծ դժվարությամբ սկսում է նաև խոսել՝ օգտագործելով միայն 30 բառ, և միայն կյանքի վերջում է սկսում յուրացնել քերականությունը:

ՀՈԳԵԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ: Այժմ մանրամասները հոգեկանի զարգացման կենսաբանական և սոցիալական գործոնները:

Կենսաբանական գործոն: Այն ամենից առաջ ենթադրում է ժառանգականությունը: Ժառանգականությունը հաջորդների՝ իրենց նախորդներին, այսինքն՝ ծնողներին, կենսաբանորեն նմանվելու վերարտադրությունն է: Այն որոշակի պայմաններում օրգանիզմի գոյատևման և զարգացման ընդունակությունն է, որը ծնողներից զավակներին է փոխանցվում հատուկ ֆիզիկա-կենսաքիմիական կազմավորումների (ԴՆԹ, ՌՆԹ) տեսքով:

Ժառանգականությունը առաջին հերթին տեղեկույթ է մարդու պատմական ճանաչողի մասին, և երկրորդ՝ անհատական զարգացման ծրագիր: Ժառանգական գործոնն ապահովում է *տեսակային ծրագիր*: Սրա շնորհիվ է, որ «բանական մարդ» տեսակը տիրապետում է ուղղաձիգ քայլքին, հողաբաշխ խոսքին և ձեռքի նիվերսալ շարժումներին: Մյուս կողմից էլ ժառանգականությունն *անհատականացնում է* մեր զարգացումը, մեզ է ներկայացնում հսկայական բազմաձևություն, որը որոշում է մեր անհատական հատկանիշների, անհատական զարգացման ծրագիրը, ընդ որում՝ յուրաքանչյուր մարդ յուրահատուկ ժառանգական, գենետիկային գիտափորձ է, որը երբեք չի կրկնվում:

Հոգեբանության մեջ չկա միասնական կարծիք այն հարցի վերաբերյալ, թե ինչ է ժառանգականությամբ փոխանցվում: Որպես կանոն, հոգեբանների մեծա-

մասնությունը շեշտում է երկու հիմնական պահ՝ *խառնվածքը* և *ընդունակությունների նախադրյալները*:

Յուրաքանչյուր երեխայի բնորոշ է բարձրագույն նյարդային համակարգի յուրահատուկ գործունեություն, որով էլ պայմանավորվում է նրա խառնվածքի տիպը: Այդ պատճառով էլ անչափ կարևոր է ուսուցման և դաստիարակության գործում հաշվի առնել վերոնշյալը: Ընդունակությունների նախադրյալները որոշակի յուրահատկություն են հաղորդում ընդունակությունների զարգացմանը՝ արագացնելով կամ, ընդհակառակը, դանդաղեցնելով դրանց դրսևորումն ու զարգացումը: Իհարկե, սա չի նշանակում, որ նախադրյալները միշտ են նպաստում ընդունակությունների զարգացմանը: Անչափ կարևոր է հաշվի առնել, թե ինչպիսի պայմաններ են ստեղծվում վերջիններիս դրսևորման և իրականացման համար:

Այս տեսակետից պարունության ընթացքում քազում համնարներ ու փաղանդներ չեն քացահայրվել՝ չունենալով զարգացման համար անհրաժեշտ պայմաններ:

Սոցիալական գործոն: Սոցիալական գործոնը ենթադրում է *սոցիալական միջավայրը, ուսուցումն ու դաստիարակությունը*:

Սոցիալական միջավայրը լայն առումով այն հասարակությունն է, որտեղ մեծանում է երեխան: Սոցիալական միջավայրի մեջ են ընդգրկվում նաև այդ հասարակության մեջ տիրապետող գաղափարախոսությունը, ավանդույթները, գիտության ու մշակույթի զարգացման ընթացքը, կրոնական ուղղությունները: Սոցիալական և մշակութային զարգացման մակարդակով էլ պայմանավորվում է տվյալ հասարակության մեջ ընդունված կրթության և դաստիարակության համակարգը: Նեղ առումով սոցիալական միջավայր ասելով ամենից առաջ ենթադրում ենք երեխայի ընտանիքը և առաջին հերթին ծնողներին, այնուհետև՝ մոտ հարազատներին, մանկապարտեզի և դպրոցի դաստիարակներին և ուսուցիչներին: Տարիքի ավելացմանը զուգընթաց երեխաների համար որոշակի կարևորություն է ձեռք բերում հասակակիցների խումբը, իսկ դեռահասության և վաղ պատանեկության շրջանում՝ գանազան սոցիալական խմբերը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԵՈՍՉՐԿՐԱՆՔՆԵՐ

1. Բերեք օրինակներ և դիպքեր կյանքից, ինչպես նաև ժողովրդական ինստրուկցիաներ, սասցվածքներ և թևավոր խոսքեր, որտեղ շոշափվում են մարդու կյանքում սոցիալական և կենսաբանական գործոնների ունեցած դերն ու նշանակությունը:
2. Փորձեք բնութագրել չեզ. նշեք, թե ծնողներից և անմիջական հարազատներից ինչպիսի հատկանիշներ եք ժառանգել, ինչպես են դրանք արտահայտվում, և ինչ հատկանիշներ եք ավելի ուշ չեռք բերել շրջապարտող միջավայրի ներգործության շնորհիվ:

ՀԵՏԻՔՐԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Երբ 1519 թվականին 67 փարեկանում վախճանվեց Լեոնարդո դա Վինչին, նրա արյունակից եղբայր Բարտոլոմեոսն որոշեց աշխարհին նվիրել հայրնի նկարչի, քանդակագործի, ինժեների, մրաժողի միջոց պարգևներ: Որպես իրեն կին նա ընտրեց երիտասարդ մի գեղջկուհու, որը մեծացել էր նույն գյուղում, և որի կենսագրությունը մոտ էր Լեոնարդոյի մոր կենսագրությանը: Երանք որդի են ունենում՝ Պիեռոն: Ծնողները նրան խնամում և դաստիարակում են Տոսկանայի այն նույն փեղանքում՝ Պիզայի և Ֆլորենցիայի մեջտեղում, որպես անցել էր Լեոնարդոյի մանկությունը: Ծուրով պարզվում է, որ բնությունը Պիեռոյին շոսյորեն օժտել է գեղարվեստական ընդունակություններով: 12 փարեկանում նրան ուղարկում են Ֆլորենցիա՝ հայրնի նկարիչների մոտ ուսանելու: Համաչայն այդ ժամանակաշրջանի արվեստի առաջնակարգ պատմագետ Չորջո Վազարիի՝ պարանի Պիեռոն «համընդհանուր հիացմունք էր առաջացնում... և ուսուցման հիմզ փարիների ընթացքում այնպիսի հաջողությունների հասավ գեղանկարչության մեջ, որոնց ուրիշներին քախք էր փնտակվում հասնել երեկ քե իրենց կյանքի ավարտին...»: Ծայրերը Պիեռոյին անվանում էին երկրորդ Լեոնարդո: Մական 23 փարեկանում Պիեռոն թոքախորից մահանում է, և անհնարին է դառնում կշահել, քե ինչ բարչունքներ նա կարող էր նվաճել, չնայած, համաչայն վկայությունների, Պիեռոյի աշխատանքները հաճախ ընդունվել են որպես հանճարեղ Միքելանջելոյի կրավներ: Հնարավոր չէ նաև վարստորեն խոսել այն մասին, քե որքանով էր Պիեռոյի հանճարը պարտական ժառանգականությանը, և որքանով՝ այն միջավայրին, որում նա ապրում էր: Միջին հաշվով հարազատ եղբայրների գեները համընկնում են 50%-ով, իսկ Բարտոլոմեոսն և Լեոնարդոն եղբայրներ էին միայն հայրական գծով, և նրանց ընդհանրությունը կարող էր լինել 25%: Պիեռոյի և Լեոնարդոյի մայրերը, անենայն հավանականությանը, մոտ հարազատական կապեր չունեին, սակայն չի բացառվում, որ նրանք ունեցել են ընդհանուր նախնիներ և, հետևաբար, ընդհանուր գեներ, քանի որ նրանք ապրել են նույն փոքրիկ գյուղում: Մյուս կողմից չի կարելի ժխտել նաև միջավայրի ուժեղ ներգործությունը: Պարանի Պիեռոն, անկասկած, գիրեր իր հոշակավոր հորեղբոր մասին, և նրա հայրն էլ ոչինչ չէր խնայում, որպեսզի փղան կարողանար համեմատվել փղանդավոր հարազատի հետ:

ԹԵՄԱ 4. ԱՆՁ

ԴԱՍ 6. ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՆՀԱՏ, ԱՆՁ (ԱՆՉՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ), ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Նախորդ դասի յուրացումը չեզ կօզնի պարկեղացնել և հասկանալ անչի հոգեբանական բնութագիրը: Դրա համար նախ հարկավոր է զանազանել «մարդ», «անհատ», «անձ» և «անհատականություն» հասկացությունները:



Բ. Գ. Անանի
(1907-1972)

Ուշագրավ է, որ դրանց պարզաբանումը, ի քիվս հոգեբանական բազմաթիվ այլ հիմնահիմնդիրների, տվել է հայագրի անվանի հոգեբան Բ. Գ. Անանիք:

Առօրյա կյանքում մենք հաճախ ենք օգտագործում այդ հասկացությունները հիմնականում որպես հոմանիշներ, նույնիմաստ բառեր: Սակայն հոգեբանության մեջ դրանք տարբեր բնութագրեր ունեն:

Նախ «մարդ» հասկացությունն առավել ընդհանրական է և իր մեջ ամփոփում է «անհատ», «անձ» (անձնավորություն) և «անհատականություն» հասկացությունները:

Անհատ ասելով մենք հասկանում ենք մարդկային ցեղին պատկանալու փաստը: Այս տեսակետից բոլոր մարդիկ անհատներ են: Այն կենսաբանական օրգանիզմ է, որն իր մեջ կրում է մարդկային տեսակի ժառանգական հատկությունները: Անհատ է և՛ նորածինը, և՛ հասուն մարդը, անհատ է և՛ նախնադարյան մարդը, և՛ քաղաքակիրթ աշխարհի կրթված բնակիչը: Անհատն իր հետ բերում է անձնավորություն դառնալու բոլոր նախադրյալները:

Աշխարհ գալով որպես անհատ՝ մարդը ձեռք է բերում յուրահատուկ սոցիալական որակ, դառնում է *անձնավորություն*: Սակայն եթե նա չտարի սոցիալական (մարդկային) միջավայրում, անձնավորություն դառնալ չի կարող: Եվ հիմնական պայմանն այստեղ հասարակական-պատմական փորձին տիրապետելն է, որն իրականացնում է ավագ սերունդը: Փորձե՛ք մեկ լուպե պատկերացնել, թե ինչ իրավիճակ կատեղծվի, եթե ավագ սերունդը փորձը չփոխանցի կրտսեր սերնդին:


Սակայն ճիշտ չի լինի անձին (անձնավորությանը) դիտարկել որպես միայն սոցիալական միջավայրի պասիվ արդյունք և նրա մեջ չտեսնել ակտիվ գործչին: Չէ՞ որ անձի կողմից մարդկային փորձի յուրացման գործընթացն իրագործվում է նրա ներաշխարհի միջոցով: Անձը դրսևորում է վերաբերմունք այն ամենի նկատմամբ, ինչ ինքն է կատարում, և ինչ կատարվում է իր հետ և իր շուրջը: Սոցիալա-

Կան միջավայրում անձը (պերսոնա¹) կատարում է բազմաթիվ դերեր, ստանձնում է պարտականություններ ու իրավունքներ, կարգավորում և վերահսկում է իր վարքը և պատասխանատվություն է կրում իր արարքների համար:

Այսպիսով՝ *անձ* (անձնավորություն) է համարվում մարդկային փորձի ակտիվ արացման շնորհիվ հոգեկան զարգացման որոշակի մակարդակի հասած մարդ²:

Անձի կառուցվածքում կարևոր նշանակություն ունի դրոպայատճառների համակարգը: *Դրոպայատճառները* անձին գործունեության մղող ներքին ուժերն են, որոնք կապված են որոշակի պահանջմունքների բավարարման հետ: Այսինքն՝ դրոպայատճառն այն է, թե ինչու և ինչպես է մարդն ուզում հասնել իր նպատակին: Դրոպայատճառները կարող են լինել *զիպակցված* (հետաքրքրություններ, պահանջմունքներ, դիրքորոշումներ, համոզմունքներ) և *չզիպակցված* (մղումներ):

Պահանջմունքների աստիճանակարգն ըստ ամերիկացի հոգեբան Ա. Մալոուի



Անհատականությունը մարդկանց միմյանցից տարբերվելու հնարավորությունն է: Այն թույլ է տալիս ձեզ, օրինակ, տարբերվել ձեր ընկերներից, համադասարանցիներից, մնացած մարդկանցից: Այն անձի հոգեբանական առանձնահատկությունների անկրկնելի միացություն է, որի մեջ մտնում են բնավորությունը, խառնվածքը, ձևավորված ընդունակությունները: Այնպես, ինչպես միևնույն ծառի վրա չկա երկու նույնանման տերև, չկա նաև հոգեբանական առանձնահատկությունների միևնույն ամբողջությունն ունեցող երկու մարդ: Մարդու անձնավորությունն անկրկնելի է իր անհատականության մեջ:

1 Լատիներեն «persona» (պերսոնա)՝ դիմակ բառից:

2 Գոյություն ունեն «անձ» հասկացության սահմանման բազմաթիվ այլ տարբերակներ:

Այսպիսով՝ փորձենք բանաձևել՝

մարդ = անհատ + անձ + անհատականություն,

որտեղ մարդ ծնվում են, անձ դառնում են, անհատականությունը՝ պաշտպանում:

Անձի սոցիալականացումը և նրա զարգացման շրջաբաժանումը: Դուք արդեն համոզվեցիք, որ մարդու ծնունդը դեռևս չի նշանակում անձի ծնունդ: Դրա համար նա դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, հասունանալու և մարդկային փորձը յուրացնելու: Անհատից անձի վերափոխվելու այդ բարդ գործընթացը եզերանության մեջ անվանում ենք **սոցիալականացում:**

Անձի ձևավորման գործընթացը հասկանալու համար հարկ է պատկերացում կազմել հոգեկան զարգացման փուլերի մասին: Հոգեբանության մեջ այս հիմնախնդրով զբաղվել են շատ հոգեբաններ (Է. Էրիքսոն, Ս. Հոլլ, Կ. Յունգ, Լ. Վիգոտսկի, Դ. Էլկոնին, Գ. Կրայլ և այլք): Համադրելով նրանց մտածումները՝ անձի զարգացման փուլերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

Մինչձննդյան փուլ ներարգանդային կյանքի 7-9 ամիսներ	Մանկիկություն (նորածնություն և բուն մանկիկություն) ծնված օրվանից մինչև 1 տարեկան	Վաղ մանկություն 1-3 տարեկան	Նախադպրոցական մանկություն 3-6 տարեկան	Դպրոցական շրջան (կրտսեր դպրոցական տարիք, դեռահասություն, վաղ պատանեկություն) 6-17 տարեկան
Բուն պատանեկություն 17-20 տարեկան	Երիտասարդություն 21-35 տարեկան	Հասունություն 35-45 տարեկան	Միջին տարիք 45-65 տարեկան	Ծերություն 65 տարեկանից հետո.

♦ **Դուք հավանաբար հիշում եք մարդու կյանքի շրջաբաժանման այլ ձևեր «Կենսաբանություն, մարդ» առարկայից:**

Այստեղ հոգեկան զարգացումը դիտարկվում է ըստ տարիքային շրջանների Ընդ որում՝ յուրաքանչյուր տարիքային շրջան ունի իրեն հատուկ հոգեբանական, նաև ֆիզիոլոգիական բնութագիր՝ հոգեկան գործընթացների և հատկությունների մակարդակ, շրջապատող աշխարհն ու մարդկանց ընկալելու յուրահատկություններ ու հնարավորություններ: Այսինքն՝ սոցիալական էակ, հասարակության անդամ դառնալու համար մարդը յուրաքանչյուր տարիքային շրջանում ձեռք է բերում որոշակի կենսափորձ՝ գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ. և անցնում զարգացման մյուս տարիքային շրջան: Արդյունքում անհատը, ձեռք բերելով հասարակական պատմական փորձ, դառնում է անձ: Այս տեսակետից մարդու սոցիալականացումը կամ, այլ կերպ, անձնավորվելու ողջ ընթացքը կարելի է բաժանել երկու հիմնական շրջանի:

Առաջինը վաղ սոցիալականացման շրջանն է, որում ընդգրկված եք նաև ժողովրդ, պատանի բարեկամներ: Այս շրջանում ծնավորվող անձը հիմնականում յուրացնում է մարդկային փորձը և հանդես է գալիս որպես արտաքին կազմակերպված ներգործությունների օբյեկտ, նրան նպատակաուղղված ձևով կրթում ու դաստիարակում են մեծահասակները: Անչափ կարևոր է, թե ուժքեր և ինչպես են նրա վրա ներգործում, կրթում ու դաստիարակում: Գրանով պայմանավորված՝ անձը կարող է լինել կայուն, հավասարակշռված, հասարակությանը պիտանի և եակատակը՝ իր բնույթով ու գաղափարներով, վարքով ու բարքով հասարակությանը ոչ պիտանի:

Դուք ինքներդ էլ չեք շրջապարից կարող եք բերել փաստեր, թե ինչպես ծնողական, մանկավարժական բարչիթողությունը, անվարքերությունը խեղաթյուրում են անող ու չեավորվող երեխային, նրան դրողում հակահասարակական արարքների և եակատակը՝ հոգաբար և ուշադիր, կազմակերպված ու հեղեղակական ներգործությունը կարող է վերափոխել շեղվող վարքով երեխային:

Երկրորդ շրջանում, որն ընդգրկում է երիտասարդությունը և նրանից հետո ընկած ժամանակահատվածը, մարդն արդեն իր ձեռք բերածն ու սովորածը փոխանցում է հաջորդ՝ կրտսեր սերնդին:

Մակայն նշենք, որ պատմահասարակական փորձի յուրացման ու փոխանցման արժույթը այնքան էլ հարթ ու խաղաղ չի ընթանում, նրանում առաջանում են սեռականների միջև հարաբերությունների քաղցածրիվ հիմնախնդիրներ: Ընդ որում՝ զբաղվելով պատմականորեն չզգվում են հին ժամանակներից մինչև մեր օրերը: Քիչ չեն օրինակները, երբ այսօր էլ մեծահասակները, ծնողները մեղադրում են երիտասարդությանն ամբարտաճանության, կամակորության, իրենց խորհուրդները չսեղու և վատարեղու մեջ, իսկ երիտասարդներն էլ նրանց՝ ժամանակից հեղ մնալու և իրենց ծախանալու մեջ:

«Մարտավորվ եմ նայում մեր երիտասարդությանը. ի՞նչ ապագա է սպասում մեզ: Մեծի նկատմամբ ոչ մի հարգանք չունեն, չեն սիրում աշխարհել, անհոգ են և ամբարտաճական: Ուսման նկատմամբ անարբեր են, անգոր, վայելքների մեջ՝ գորավոր: Երե այսպես շարունակվի, մեր հասարակությանը կործանում է սպասում»:

Մտրավորապես այսպիսի բովանդակությանը գրառումներ, մտքեր են մեզ հասել և՛ հին եգիպտական արչանագրություններից, և՛ հին հունական, և՛ միջնադարյան մրածողներից: Այսօր էլ շարերը կատրոագրեն այս մտքերի գակ:

Առօրյա կյանքում «դեր», «դերասան» բառերն այնքան էլ միանշանակ չեն օգտագործվում: Հաճախ մարդիկ բացասական երանգ են տեսնում նրանց մեջ:

«Նա խարում է ինչ, դերասանություն է անում»: «Ի՞նչ վարպետորեն էր կարգավորում իր դերը, քիչ մնաց համոզեր»: *«Բավական է, իջի՛ր քեմից»:* *Նման արտահայտություններ հաճախ կարելի է լսել դեռահասների, պատանիների գրույցներում:*

Մինչդեռ «Աշխարհը բեմ է, մարդիկ՝ դերասան» շեքսպիրյան հայտնի ձևակերպումը հոգեբանական տեսանկյունից ենթադրում է, որ անձն իր կյանքի շեքսպիրյան կատարում է քաղցածրիվ սոցիալական դերեր: Այն որոշակի սոցիալական իրավիճակներում անձի սոցիալական գործողությունների ամբողջություն է,

նրանից ակնկալվող (կամ նրան վերագրվող) հավանության արժանացած վարչապահանձուշային (կանոնակարգված) ձև, որի օգնությամբ անձը գրավում է որոշակի դիրք հասարակական հարաբերություններում:

Դպրոցում, օրինակ, դուք կարարում եք աշակերտի դերը, ճանապարհորդության ժամանակ, իսկ նույն ժամանակ, փակելով փակարկը՝ արդարև կամ առջև, եղբոր կամ քրոջ դերերը ենթարկվում դրանց համար նախատեսված կանոններին:

Սոցիալական դերը ենթադրում է համապատասխան սոցիալական վարքագիծ, որոշակի պարտականությունների և իրավունքների հարաբերակցություն: Կախված այն բանից, թե մարդն ինչ հասարակական հարաբերությունների մեջ է մտնում, ինչ սոցիալական դեր ունի և ընդհանրապես ինչպիսի դաստիարակություն ու արժեքային համակարգ ունի, նա կարող է կամ լիարժեք կատարել իր դերային պարտականությունները, կամ թերանալ՝ օգտվել միայն իրավունքների մոռանալով պարտականությունները:

♦ **Համադասարանցիներով բնարկիչ նման դեպքերի օրինակներ, որոնց դուք առնչվել եք առօրյա կյանքում:**

Վաղ պատանեկության բնութագիրը: Մարդու կյանքի յուրաքանչյուր շրջանում շարք հետաքրքիր է: Բայց քանի որ դուք գտնվում եք պատանեկության փուլում, այժմ տրեղեկություններ կարանաբ պատանեկության տարիքի և չեզ անհանգստացնող մի շարք հարցերի մասին:

Վաղ պատանեկությունն ընդգրկում է ավագ դպրոցական տարիքը՝ 15-17 տարեկան: Այս տարիքում դպրոցականները ֆիզիկապես հասունանում են, ձեռք են բերում գաղափարական և հոգևոր այն աստիճանը, որը բավարար է ինքնուրույն կյանքի, դպրոցն ավարտելուց հետո բուհում սովորելու և արտադրական աշխատանքի համար:

Ունենալով ինքնուրույն կյանքի մերձավոր հեռանկար՝ ավագ դպրոցականները ձգտում են որոշել իրենց կյանքի, ապագա գործունեության կոնկրետ պատկերը, ընտրել ապագա մասնագիտություն, որի հետ կապված ձևավորվում և կայունանում են մասնագիտական հետաքրքրությունները: Նրանք սկսում են լրջորեն զբաղվել իրենց մասնագիտության ձեռքբերման հարցերով: Մյուսով պայմանավորված՝ աճում է նրանց գիտակցական վերաբերմունքն ուսման նկատմամբ, այն ձեռք է բերում անմիջական կենսական իմաստ: Բարձր դասարանցիները հստակ գիտակցում են, որ ապագա մասնագիտություն ձեռք բերելու համար անհրաժեշտ պայման է գիտելիքների, հմտությունների, կարողությունների պաշարը: Այստեղ կարևորվում է նաև ինքնուսուցումը:

Այս տարիքի հատկանշական դրսևորումներից է *ինքնագիտակցության* բուռն զարգացումը: Պատանին ցանկանում է իմանալ, թե ով է ինքը, ինչի է ինքն ընդունակ, և ինչպիսին է իր սոցիալական արժեքը: Պատանին փորձում է իրեն ճանաչել ինքնադիտման՝ ներհայեցողության միջոցով: Այս տարիքին բնորոշ է խորհրդածությունը սեփական ես-ի մասին, որի դրսևորումներից են ինտիմ բովանդակությամբ օրագրերը, գեղարվեստական երկերի, ֆիլմերի հերոսների հետ համե-

ավելի, այլ մարդկանց ներաշխարհի նկատմամբ հետաքրքրության աճը: Այս առիթի երեխաները խոր տագնապ են ապրում, երբեմն մեկուսանում են, հիասթափվում, ձեռք են բերում որոշակի բարոյություններ: *Սակայն պարտանեկան փարիզի դժվարություններն անի և զարգացման դժվարություններ են և բնորոշ են այդ առիթի բոլոր անչանց:*

Կա պատանիների ինքնագնահատման երկու եղանակ: Առաջինը սեփական վակնությունների մակարդակի համեմատումն է ձեռք բերված արդյունքների հետ: Սակայն պատանու կենսափորձի պակասն այդպիսի ստուգումը դժվարին է դարձնում: Երկրորդ եղանակը սոցիալական համեմատությունն է, իր մասին այլ-այլ կարծիքների համադրումը:

Նույնիսկ հասուն մարդու ինքնագիտակցությունը զուրկ չէ հակասություններից, և ոչ բոլոր ինքնագնահատականներն են համարժեք: Պատանեկան հաստատում այդ խնդիրն ավելի է բարդանում: Պատանիները հաճախ են ունենում իրանցից բարձր կամ ցածր ինքնագնահատման մակարդակ:

Այս տարիքը բուռն եռանդի, խանդավառության, խիզախումների, ռոմանտիզմի երանգավորված ձգտումների տարիք է:

♦ **Գեղարվեստական գրականությունից, ֆիլմերից աշխատե՛ք հիշել նմանատիպ կերպարներ:**

Որակական փոփոխություններ են տեղի ունենում պատանիների հուզական ցանքում, ավելի խոր, տևական և գիտակցական են դառնում նրանց զգացմունքները: Դպրոցականների բարեկամական և ընկերական հարաբերություններն այժմ են ընկնում ավելի սկզբունքայնությամբ, կազմակերպվածությամբ ու հաստատությամբ: Նոր երանգ է ստանում հատկապես պատանի տղաների ու աղջիկների փոխադարձ սերն ու ընկերությունը...

♦ **Շարունակե՛ք ինքներդ: Բնութագրե՛ք ձեզ երեք խորհրդանշական բնութագրիչներով: Գրե՛ք ձեզ դիպուկ բնութագրող որևէ կեղծամուն, նկարե՛ք ձեզ բնորոշող որևէ պարզ խորհրդանիշ, ձևակերպե՛ք ձեր կյանքի ուղենիշը (դեֆի)՝ համատու, սակայն պատկերավոր: Կարևոր է, որ այդ երեք բաղադրիչները միասնական ամբողջություն արտահայտեն: Օրինակներ**

1. Կեղծամունը՝ Ամենագետ, խորհրդանիշը՝ գլոբուս, կյանքի ուղենիշը՝ հասնել և նվաճել:

2. Կեղծամունը՝ Ռոմեո, խորհրդանիշը՝ կապույտ աչքեր, կյանքի ուղենիշը՝ ամեն ինչ համուն սիրո:

Ներկայացրե՛ք միմյանց ձեր բնութագրումները և ըստ այդմ բնորոշե՛ք ձեր ընկերներին:

ՀՅՐՅԵՐ ԵՎ ԱՄՍՉԱԿՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ հատկություններ պետք է ունենա մարդկային անհարև անչ կոչվելու համար:
2. Թվարկե՛ք չե՛ր սոցիալական դերերը, առանջնացրե՛ք մեկ-երկուսը, վերջիններս ներկայացրե՛ք պարտականությունների և իրավունքների տեսանկյունից:
3. Բերե՛ք ծնողների և չե՛ր միջև անհամաձայնության կոնկրետ օրինակներ:

ԹԵՄԱ 5. ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԹԸՆԹԱՅՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒՄ

ԴԱՄ 7. ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄ

Տեսողությունը չի կարող ընկալել այն, ինչ տեսանելի չէ լսողությունը չի կարող ընկալել ձայնը, եթե չի գրկնվում նրա աղբյուրին հարկ եղած շափով մտրիկ

Դավիթ Անհաղթ

ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Զգայությունը պարզագույն իմացական գործընթաց է, որի միջոցով մարդը պատկերացում է կազմում արտաքին աշխարհի առարկաների և երևույթների *առանձին հատկությունների* մասին: Զգայությունները հնարավորություն են տալիս իմանալու նաև մարդու մարմնի ներքին վիճակների, տարածության մեջ մարմնի դիրքի, շարժումների և այլնի մասին:

Այդուհանդերձ, իմացությունը սկսվում է զգայություններից: Դրանք այն միակ ուղիներն են, որոնց միջոցով արտաքին աշխարհը թափանցում է մարդկային գիտակցություն: Հետևաբար, զգայություններն աշխարհի ճանաչման *առաջին և ամենակարևոր աստիճանն են:*

Զգայություններն առաջանում են զգայարանների գործունեության շնորհիվ: Մարդու զգայարաններն ընտրում, կուտակում և ուղեղին են հասցնում բազմապիսի տեղեկատվություն, որի շնորհիվ էլ տեղի է ունենում համապատասխան արտացոլում, մարդն ունենում է համապատասխան զգայություններ:

Զգայությունների հիմքում ընկած է վերլուծիչի ակտիվ աշխատանքը: Վերլուծիչը կազմված է երեք բաժիններից՝ ընկալիչից կամ ծայրամասային օրգանից, որի մեջ որոշակի գրգռիչների ներգործությամբ գրգռ է առաջանում, հաղորդիչ նյարդից, որն այդ գրգռը նյարդերով հաղորդում է մեծ կիսագնդերի կեղևի համապատասխան գոտի, որն էլ վերլուծիչի երրորդ բաղադրիչն է: Այսպիսով՝ ընկալիչները, նյարդերը և կեղևի որոշակի գոտին կազմում են մի միասնական ամբողջություն, որն ապահովում է օրգանիզմի կողմից գրգռների ընկալումը և զանազանումը: Երբ վնասվում է վերլուծիչի երեք մասերից որևէ մեկը, օրգանիզմը կորցնում է գրգռները զանազանելու ընդունակությունը:

Այսպիսով՝ *զգայությունը պարզագույն հոգեկան գործընթաց է, որը հնարավորություն է տալիս մարդուն արկայացուցելու ինչպես նյութական աշխարհի առարկաների և երևույթների առանձին հատկանիշները, այնպես էլ ներքին օրգաններից եկող ազդանշանները, երբ գրգռիչն անմիջականորեն ազդում է համապատասխան ընկալիչների վրա, և մարդն ակտիվ փոխաներգործության մեջ է մտնում դրանց հետ:*

Գոյություն ունեն զգայությունների հետևյալ հիմնական տեսակները՝ տեսողական, լսողական, շոշափելիքի, հոտառական և համի:

Զգայությունները լինում են՝

1. Էքստերոցեպտիվ զգայություններ, որոնք մարդուն փեղեկություն են փայլաբան մարմնից դուրս գտնվող երևույթների ու գործընթացների մասին՝ նրան կապելով արտաքին աշխարհի հետ: Էքստերոցեպտիվ զգայությունները լինում են կոնյուկտիվային և դիսյուլսիային: Կոնյուկտիվային են, երբ գրգռիչները հայվում են մարմնին, ազդում մարմնի մակերեսի կամ մաշկի մեջ գտնվող ընկալիչների վրա (շոշափելիքի, համի), և դիսյուլսիային, երբ գրգռիչներն ազդում են զգայարանների (ընկալիչների) վրա որոշակի փարածությունից (փետողական, լսողական): Հոտառական զգայությունները միջանկյալ փեղ են գրավում այս երկուսի միջև:

2. Ինտերոցեպտիվ զգայություններ, որոնք առաջանում են մարդու ներքին օրգաններում գտնվող ընկալիչների վրա գրգռիչների ազդեցությունից (կշիռային, քաղցի, ծարավի):

3. Պրոպրիոցեպտիվ զգայություններն առաջ են գալիս, երբ գրգռվում են մկաններում և հողակապերում գտնվող հալոսկ փեսակի ընկալիչները, որոնք ուղեղին փեղյակ են պահում մարմնի փարքեր մասերի՝ փարածության մեջ գրաված դիրքի մասին:

♦ **Կենդանաբանության դասընթացից մտաբերե՛ք, թե ինչպես է ընթացել զգայարանների էվոլյուցիան կենդանական աշխարհում:**

♦ **«Կենսաբանություն, մարդ» դասընթացից հիշե՛ք, թե ինչպես է ձևակերպվում «ադապտացիա» հասկացությունը, մեկնաբանե՛ք նրա տեսակները:**

Որպեսզի համոզվե՛նք, թե ինչպիսի դեր ունեն զգայություններն իմացական գործունեության մեջ, դիմե՛նք փորձի:

Ուսուցիչը սովորողներից մի քանիսին առաջարկում է փակել աչքերը, իսկ մյուսներին՝ ուշադիր հետևել: Ուսուցիչը փորձարկվողների ձեռքի արտաքին կողմին, այնուհետև արհեստաբար է դնում քանակի կամ փոքր իրեր և ասեն մի հայտնից հետո հարցնում է «Ի՞նչ կարող ես ասել հավող առարկայի մասին»: Փորձարկվողների մեջ առաջանում են առանցիկ մաշկային զգայություններ, որոնք քավարար չեն նաև աչքի առարկան, որովհետև արտացոլում են առարկայի մի քանի հատկություններ:

Այնուհետև ուսուցիչն առաջարկում է շոշափել փվյալ առարկան: Մեծ մասամբ փորձարկվողները շոշափելուց հետո նաև աչքում են առարկան:

♦ **Ինչո՞ւ: Բացատրե՛ք այս երևույթը:**

ԸՆԿԱԼՈՒՄ: Շրջապատող աշխարհի մասին մարդը գիտելիքներ է ձեռք բերում ոչ միայն զգայությունների, այլև ընկալումների միջոցով: Արտացոլման այդ երկու ձևերն էլ զգայական իմացության միասնական գործընթացի օղակներն են: Դրանք փոխկապակցված են, քայց ունեն նաև իրենց առանձնահատկությունները: Եթե զգայությունների շնորհիվ մարդը գիտելիքներ է ստանում առարկայի առանձին հատկությունների մասին, ապա ընկալումը տալիս է առարկայի կամ երևույթի ամբողջական պատկերը: **Ընկալումը առարկաների և երևույթների ամբողջական պատկերների արտացոլումն է մարդու հոգեկանում՝ զգայարան-**

ների վրա դրանց անմիջական ներգործության շնորհիվ: Առանց զգայությունների ընկալումն անհնար է: Սակայն զգայություններից բացի, ընկալման մեջ մտնում է նաև մարդու կենսավորձը գիտելիքների և պատկերացումների ձևով: Մինևույն ստեղծագործությունը տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում ավելին՝ մարդն իր կյանքի տարրեր ժամանակաշրջաններում նույն ստեղծագործությունն ընթերցելիս տարբեր մեկնաբանություններ է տալիս: Օրինակ՝ Նարեկացու «Մատյան ողբերգության», Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» համաշխարհային հնչեղություն ունեցող արժեքները:




♦ **Կարո՞ղ եք ձեր կյանքից բերել նմանատիպ օրինակներ:**

Ընկալման գործընթացն ընթանում է մտածողության, խոսքի, զգացմունքների, կամքի հետ կապի մեջ:

Ընկալման առանձնահատկություններն են.

1. **Ապերոցեսայիա:** Այն ընկալման գործընթացի և դրա արդյունքների կախվածությունն է մարդու անցյալի փորձից, գիտելիքներից, դիրքորոշումից, հոգեվիճակից:
2. **Անբողջականություն և կառուցվածքայնություն:** Ամեն մի լիարժեք ընկալում արտացոլյիլող առարկայի ամբողջական պատկերն է, մինևույն ժամանակ այն հոգեբանական կառուցվածք է՝ կազմված որոշ բովույր արրերից:
3. **Հասարակունություն:** Այն ընկալման պայմանների փոփոխության դեպքում մարդու հոգեկանում առարկայի պատկերի անփոփոխությունն է:
4. **Իմաստավորվածություն:** Այն ընկալման ընթացքում մտածողության և խոսքի օգտագործումն է առարկայի պատկերը հասկանալու համար:
5. **Ընկրականություն:** Այն ուշադրությունը հատկապես որոշակի առարկաների վրա կենտրոնացնելու և դրանք առավել հստակ ընկալելու երևույթն է, որը պայմանավորված է անձի ներքին դրդապարճառներով և հեղափոխություններով:
6. **Առարկայականություն:** Օբյեկտիվացման հոգեկան գործընթացի միջոցով ընկալողը վստահ է, որ համապարասխան առարկան այդ իրադրության մեջ իսկապես գոյություն ունի:

ՊԱՏՐԱՆՔՆԵՐ: Պատրանքը արտաքին աշխարհի առարկաների և երևույթների աղճատված արտացոլման տեսակներից մեկն է: Պատրանքները հայուցինացիաներից տարբերվում են նրանով, որ այս դեպքում ընկալվող օբյեկտներն իսկապես կան և գտնվում են մարդու առջև: Պատրանքներն անմիջապես դրսևորվում են ընկալման գործընթացում: Կան տեսողական, շոշափելիքի, լսողական, հոտառական և այլ պատրանքներ: Սակայն կան նաև ճանաչման, հիշողության, դատողությունների պատրանքներ: Որոշ պատրանքներ (միրաժ, ջրով լի բաժակի մեջ գդալի բեկված լինելը) պայմանավորված են ֆիզիկական պատճառներով, մյուսները (տեսողական պատրանքների խուսքը)՝ ֆիզիոլոգիական և հոգեբանական պատճառներով, որոնք կապված են վերլուծիչի կառուցվածքի և աշխատանքի յուրահատկությունների հետ:



«Երկարողու» պատրանքը, բվում է, քն անրքի հաղվածն ավելի երկար է

«Մյաքի» պատրանքը, ստորին հաղվածն ավելի կարճ է բվում


ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՊՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան զգայությունների ու ընկալման միջև:
2. Լսելով երաժշտություն՝ մարդն ըմբռնում է ոչ քն առանչին հնչյունների, այլ ամբողջ մեղեդին: Ըմբռնման ո՞ր հատկությունն է դրսևորվում:
3. Մարդն ակնարարորեն կարող է ճանաչել ցանկացած պատկեր: Օրինակ՝ քառակուսին, անկախ այն բանից՝ մեծ է, քն փոքր, ուղղահայաց է, քն անկյան փակ, սեռով է նկարված սպիտակ խոնի վրա, քն հակառակը, բոլոր դիպքերում ըմբռնվում է արագ: Ըմբռնման ի՞նչ օրինաչափությունից է կախված մարդու վերը նկարագրված ընդունակությունը:

ԱՏՈՒԳԵՔ ՈՒ ՄԱՐԶԵՔ ԶԵՐ ԸՆԿԱԼՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ա) Ի՞նչ է պագկերված նկարում, մեկնարանի ք



բ) Հաշվե՛ք, քն բանի խորանարդ կա

ԳԱՍ 8. ՈՒՇԱԿՐՈՒԹՅՈՒՆ: ՎԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

...Ուշադրությունը հենց այն դուռն է, որի միջոցով անցնում է այն ամենը, ինչը մեր հոգեկանի մեջ է քափանցում արտաքին աշխարհից:

Կ. Գ. Ուշինսկի

ՈՒՇԱԿՐՈՒԹՅՈՒՆ: Միավոր ժամանակի ընթացքում մարդու վրա ազդում են տարբեր գրգռիչներ, և մեր գիտակցությունն ի վիճակի չէ առավելագույն հստակությամբ յուրացնելու դրանք: Շրջապատող բոլոր առարկաներից և երևույթներից մարդը առանձնացնում է միայն նրանք, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում կամ համապատասխանում են նրա պահանջմունքներին, կյանքի պլաններին: Մարդկային ցանկացած գործունեություն պահանջում է օբյեկտի առանձնացում և նրա վրա կենտրոնացում: Հոգեկան երևույթների մեջ ուշադրությունը հատուկ տեղ է գրավում. դա ինքնուրույն հոգեկան գործընթաց չէ և անհատի հատկությունների թվին չի պատկանում: Միաժամանակ ուշադրությունը միշտ ներառվում է մարդու գործունեության ու իմացական գործընթացների մեջ և արտահայտում է անձի հետաքրքրություններն ու ուղղվածությունը: Ուշադրության առաջացման համար անհրաժեշտ է առանձնացնել օբյեկտը, կենտրոնանալ նրա վրա և վերանալ այլ գրգռիչներից: Ուշադրության օբյեկտ կարող է լինել ինչպես արտաքին աշխարհի առարկան, որին ուղղված է մարդու իմացական գործունեությունը, այնպես էլ ներաշխարհը, երբ մարդը խորասուզված է իր մտքերի, ապրումների մեջ կամ վերլուծում է ինչպես իր, այնպես էլ ուրիշների վարքն ու գործունեությունը:

Ուշադրությունը մարդու հոգեկան գործունեության ուղղվածությունն և կենտրոնացվածությունն է դեպի որոշակի առարկաները, երևույթները, որոնք անձի համար ունեն նշանակություն:

Ուշադրության առանձնահատկությունները.

1. **Կենտրոնացում:** Արտահայտում է ուշադրության կենտրոնացվածության աստիճանը րվյալ առարկայի վրա: Այն վառ դրսևորվում է, երբ վիրաբույժը վիրահատում է, սովորողը դաս է լսում:

2. **Ծավալ:** Արտահայտում է առարկաների, օբյեկտների այն քանակը, որոնք միաժամանակ կարող են ընդգրկված լինել ուշադրության ոլորտում և ընկալվել: Հետաքրքիր է, որ աղջիկների ուշադրության ծավալն ավելի մեծ է, քան պատանիների:

3. **Տեղափոխելիություն:** Մարդը գիտակցաբար իր ուշադրությունը մի օբյեկտից փոխափոխում է մեկ այլ օբյեկտի վրա: Օրինակ, երբ սովորողը դաս է կարդում և համառոտագրում:

4. **Քաշիում:** Միաժամանակ մի քանի օբյեկտներ ուշադրության ոլորտում պահելու և մի քանի գործ կատարելու հնարավորությունն է: Օրինակ, երբ վարորդը միաժամանակ վարում է մեքենան, հեղուկ է երթևեկության կանոններին, գրուցում: Դա հնարավոր է իրականացնել, եթե որոշ գործողություններ ավտոմատացված են:

5. **Կայունություն:** Արտահայտում է օբյեկտի վրա ուշադրության կենտրոնացվածության փոփոխությունը:

6. **Ցրվածություն:** Ուշադրությունը փոփոխություն որևէ օբյեկտի վրա կենտրոնացնելու անկարողությունն է: Անհետաքրքիր դասի արդյունքում Ձեր մեջ նույնպես կարող է ցրվածություն առաջանալ:

ՍՏՈՒԳԵՔ ՈՒ ՄԱՐՁԵՔ ՁԵՐ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Դուք պետք է միաժամանակ կատարեք երկու գործողություն՝ գումարեք երկու հնգանիշ թիվ և արտասանեք որևէ բանասարեղծություն: Միայն երի թիվը և գործողության կատարման արագությունը փոխալ փորձի կարևոր ցուցանիշներն են: Ելնելով ուշադրության առանջնահատկություններից՝ արդյունքները մեկնաբանեք:

բ) Անման կարգով արագ գրեք 1-25 թվերը, մաքրով ցոյց փվեք յուրաքանչյուր թիվը և այնուհետև համեմատեք այդ գործողությունների վրա ծախսված ժամանակները:

3	17	21	8	4
10	6	15	25	13
24	20	1	9	22
19	12	7	14	16
2	18	23	11	5


5	21	23	4	25
11	2	7	13	20
24	17	19	6	18
9	1	12	8	14
16	10	3	15	22

21	11	1	19	24
2	20	18	5	10
4	13	25	16	7
17	6	14	9	12
22	3	8	15	23

2	13	1	8	20
17	6	25	7	17
22	18	3	15	19
10	5	12	24	16
14	23	4	9	21

14	9	2	21	23
22	7	16	5	10
4	25	11	18	3
20	6	23	8	19
15	24	1	17	12

գ) Գրեք վերևի և ներքևի պարկերների հիմնական տարբերությունները:



Ուշադրության ցեղանիւնները

1. **Արդարքին:** Մարդու հոգեկան գործունեության ուղղվածությունն է դեպի արտաքին աշխարհի առարկաները: Օրինակ, երբ հանդիսատեսը համակ ուշադրությանը հետևում է դերասանի խաղին:

2. **Ներքին:** Մարդու հոգեկան գործունեության ուղղվածությունն է դեպի սեփական ներաշխարհի բովանդակությունը: Օրինակ, երբ քնելուց առաջ մարդը խորհում է իր ապագայի մասին:

3. **Ոչ կամածին:** Մարդն ինքնաբերաբար, իր կամքից անկախ ուշադրություն է դարձնում որևէ երևույթի վրա: Օրինակ, երբ դասարանում բոլորը լարված ունկնդրում են դասը, հանկարծ միջանցքից լսվում են վեճի բարձր ձայներ, սովորողներն իրենց ուշադրությունն ուղղում են ձայնի կողմը:

4. **Կամածին:** Մարդը, ունենալով կոնկրետ նպատակ, կամքի լարումով հոգեկան գործունեությունն ուղղում է որևէ առարկայի կամ երևույթի վրա: Օրինակ, երբ վարորդը մեքենան վարելիս հետևում է երթևեկության կանոններին:

5. **Հեղկամածին:** Ծնվում է որպես կամածին ուշադրություն, ապա հետաքրքրության առաջացման շնորհիվ դառնում ոչ կամածին: Օրինակ, երբ Ձեր ծննդյան տարեդարձն է, և Դուք շատ ցանկալի հյուրեր ունեք: Միևնույն ժամանակ վաղը Դուք քննության եք, և Ձեր սենյակում պարապում եք: Սկզբում Ձեր ուշադրությունն անընդհատ շեղվում է. մեկ ուշադրություն եք դարձնում մյուս սենյակից լսվող ուրախ ձայներին ու խոսակցությանը, մեկ այն թեմային, որը Դուք ուսումնասիրում եք, բայց չեք կարողանում կենտրոնանալ և մտապահել նյութը: Սակայն կիրառելով կամային ճիգեր և դնելով հստակ նպատակ, թեմայում գտնում եք հետաքրքրություն և անկախ Ձեզանից տարվում նրանով՝ մոռանալով հյուրերին: Տվյալ դեպքում ուշադրությունը կամածինից դարձավ հետկամածին:

Հիշողությունը բացակայության հաղթահարումն է

Պ Ժանե

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ: Այսօր երևի թե անհնար է պարկերացնել մեր կյանքն առանց հեռուարացույցի, համացանցի... Ձեր հայրն ամեն օր դիպրում է լրատվական ծրագրեր, ընթերցում մամուլը, Ձեր եղբայրը փարված է նամակահիշեր հավաքելով, նա այդ բնագավառի մասին շարքան գիրք, իսկ մայրդ և քույրդ սիրում են մրցել փոխանակել արվեստի մասին: Վերջապես, անընդհատ ուսուցման արդյունքում Դուք չեք եք թերում նորանոր գիրքելիքներ, հմտություններ և կարողություններ: Եվ սրանց շնորհիվ էլ չեմափորվում է անհատի կենսամիտրը: Այս բոլոր փեղեկարվությունը պահպանվում է անձի հոգեկանում հիշողության փեղեկով: **Մարդկային հիշողության ծագումը հին հույները կապում էին Պրոմեթեոսի անվան հեղ:** Պարզվում է, որ այդ երկրասարդը մարդկությանը նվիրել էր ոչ միայն կրակը:

Հիշողությունը մարդու անձի, նրա ես-ի և ինքնագիտակցության ամբողջականության և անընդհատության հիմքն է: Հիշողությունն ընկած է անձի բոլոր հոգեկան գործընթացների հիմքում:

Մի պահ պատկերացրեք, թե ինչ կլինի, եթե մարդը հիշողություն չունենա, ինչպես մերածի, կերեակայի, կրկնալի... Աշխարհն առանց հիշողության: Երևի թե ամենափառ երեակայությունն անգամ ի վիճակի չէ նկարագրելու րվյալ իրադրության իրական պատկերը: Մակայն աղպիսի փորձ նախաշեննել է կոլումբիացի գրող Գ. Մարկեսն իր հանրահայտ «Հարյուր րարվա մենություն» վեպում: Ընթերցի՛ր:

Այն ամենը, ինչը մարդն ընկալում է, անհետ չի կորչում: Ուղեղի մեծ կիսագնդերի կեղևում պահպանվում են գրգռման գործընթացների հետքերը: Դրանք գրգռման կրկնակի առաջացման հնարավորություն են տալիս նաև այն ժամանակ, երբ այն առաջացնող գրգռիչը բացակայում է: Դրա շնորհիվ մարդը կարողանում է մտապահել, իսկ հետագայում վերարտադրել յուրացրած գիտելիքները: Ինչպես ընկալումը, այնպես էլ հիշողությունը նույնպես արտացոլման գործընթաց է, բայց այս դեպքում արտացոլվում է ոչ միայն այն, ինչն անմիջականորեն ներգործում է տվյալ պահին, այլ նաև այն, ինչը տեղի է ունեցել անցյալում:

Հիշողությունն ընկալվածը (գիտելիքներ, կարողություններ, տեղեկատվություն) հոգեկանում մրատպահելու, պահպանելու և հեպագայում վերարտադրելու ընդունակությունն է:

Հիշողության գործընթացներն են մտապահումը, պահպանումը, վերարտադրումը և մոռացումը: Այս գործընթացները փոխադարձորեն կապված են միմյանց հետ: Հիշողությունը բնութագրելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործունեության բնույթը և առանձնահատկությունները, նյութի սերտման նպատակը, այսինքն՝ այն, թե նյութը սերտելիս մարդն ինչ դրդապատճառներից է ելնում: Պարզվել է, որ սերտվող նյութի պահպանումը մեծապես կախված է անձնավորության դիրքորոշումից, մասնագիտական կողմնորոշումից, հուզականային հատկություններից:

Երկու ուսանող պարրասարվում են քննության: Երկուսն էլ ունեն նման մրավոր հարողություններ և պարապում են հավասար ժամանակահատվածում: Մեկն անընդհատ շեշտում է, որ առարկան մարշիլ է, և ինքը կարող է այն հեշտությանը տրացնել, իսկ մյուսը պնդում է, որ այն շար դժվար է և իրեն անհասանելի:

♦ **Ձեր կարծիքով՝ վերը նշված դիրքորոշումներից որի՞ դեպքում ուսանողը հաջողությանը կհանձնի քննությունը:**

Ըստ գործունեության նպատակի՝ մտապահումը և ընդհանրապես հիշողությունը կարող են լինել կամաժին և ոչ կամաժին: Ժամանակային առումով հիշողությունը և մտապահումը կարող են լինել կարճատև, երկարատև և օպերատիվ: Մրատպահվող նյութի բնույթից ելնելով՝ տարբերում են հիշողության շարժողական, հուզական, պատկերային և բառատրամաբանական տեսակները:

Կամաժին հիշողության դեպքում մարդը գիրակցաբար իր առջև նպատակ է զնում, ճիգեր գործադրում մտապահելու որոշակի տեղեկատվություն: Օրինակ՝ աշակերտը կամաժին ձևով հիշում է սահմանումներ, բանաձևեր և այլն: Չնայած դրան՝ մարդը տեղեկատվության ճնշող մեծամասնությունը հիշում է իր կամքից անկախ, առանց գիտակցական մոտադրության և ջանքերի: Այդպիսի մտապա-

հունը և վերարտադրությունը, որտեղ բացակայում է հատուկ նպատակը, կոչվում է *ոչ կամածին* հիշողություն:

Վերջին ժամանակներում հիշողության հարցերով զբաղվող գիտնականները մեծ ուշադրություն են դարձնում նրա տեսականության վրա: Առանձնապես կարևոր է այն գործընթացների ուսումնասիրությունը, որոնք տեղի են ունենում մտապահման սկզբնական փուլում, երբ զբոսիչի հետքերը դեռ չեն ամրապնդվել: Դրանք հեշտությամբ մոռացվում են: Այդ գործընթացներն ստացել են *կարճաբևե հիշողություն* անվանումը: Օրինակ՝ տեղեկագրքից իմանալով անհրաժեշտ հեռախոսահամարը, մենք առանց դժվարության հիշում ենք այդ վեց թվերը, սակայն ի պատասխան հեռախոսի «զբաղված է» ազդանշանի, մենք ի վիճակի չենք կրկին հավաքելու այդ նույն համարը: Ի տարբերություն կարճատև հիշողության՝ *երկարաբևե հիշողությունը* մարդուց պահանջում է բազմակի կրկնություններ և վերարտադրություն: Հիշողության այս երկու տեսակներից բացի, կա նաև *օպերատիվ հիշողություն*, որն ապահովում է տվյալ պահին իրականացվող գործունեության միջանկյալ արդյունքների մտապահումը և օգտագործումը: Բարդ գործողության իրականացումը մարդուց պահանջում է միջանկյալ արդյունքների մտապահում հետագա գործողությունների մեջ օգտագործելու նպատակով: Այդ պատճառով օպերատիվ հիշողությունն իր բնույթով տարբեր է հիշողության կարճատև և երկարատև տեսակներից:

Շարժողական հիշողությունը շարժումների և շարժողական համակարգերի (քայլել, վագել, գրել, խոսել) մտապահումն ու վերարտադրությունն է: *Հուզական հիշողությունը* հույզերի ու հուզական վիճակների մտապահումն ու վերարտադրությունն է: Մարդը սովորաբար հիշում է ոչ թե առանձին հույզեր, այլ դրանցով հագեցված պատկերների մի խումբ: *Բառատրամաբանական հիշողությունը* բառերի, հասկացությունների ձևով արտահայտված տեղեկատվության մտապահումն ու վերարտադրումն է: *Պարկերավոր հիշողության* դեպքում տեղեկատվությունը մտապահվում ու վերարտադրվում է մտապատկերների միջոցով (տեսողական, լսողական, հոտառական և այլն): *Օրինակ չեզանից ունակ կարող են դասանյութը մրապահել և վերարտադրել լսելով ուսուցչի խոսքը, բացարրությունը (լսողական մրապարկեր), ունակ անպայման պետք է կարդան դասագրքում շարադրվածը (լսողական մրապարկեր) և այլն:*

Մոռացումը հիշողության կարևոր գործընթացներից է: Մոռացված նյութը հիշելու համար մարդն իրականացնում է կրկնման, ճանաչման, մտաբերման և այլ գործողություններ: Ամենից առաջ մոռացվում են նյութի երկրորդական և ոչ էական մասերը: Նյութի կայուն նշանակություն ունեցող մասը, ձուլվելով համապատասխան գիտելիքների հետ, օգտագործվում է մարդու հետագա գործունեության մեջ: Մոռացման գործընթացում գործում են պրոակտիվ (նախաակտիվ) և ռետրոակտիվ (հետակտիվ) արգելակումներ: Պրոակտիվ արգելակում ասելով հասկանում ենք նախորդ գործունեության բացասական ազդեցությունը հետագա գործունեության ընթացքի վրա: Ռետրոակտիվ արգելակում ասելով, ընդհակառակը, հասկանում ենք հետագա գործունեության բացասական ազդեցությունը նախորդ գործունեության արդյունքների վրա:

ՕԳՏՎԵՔ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՅՍ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ.

1. Սովորեք իմանալու և հիշելու ցանկությամբ:
2. Նպատակադրվեք հիշելու երկար ժամանակ:
3. Իմաստավորեք, հասկանալով սովորեք:
4. Սկսեք կրկնել նախքան նյութի մոտացումը:
5. Սովորեք և կրկնեք փոքր միավորներով:
6. Արդյունավետ է սովորել յոթ օրում մեկական ժամ, քան մեկ օրվա մեջ 7 ժամ:
7. Մաթեմատիկայից հետո սովորեք պատմություն, ֆիզիկայից հետո՝ գրականություն, հիշողությունը սիրում է բազմազանություն:
8. Սովորելու ընթացքում կազմեք պլան, գրաֆիկներ, աղյուսակներ:
9. Եթե առաջադրանք եք ստացել երեքշաբթի, իսկ պետք է պատասխանել հինգշաբթի, ապա մի սպասեք չորեքշաբթի օրվան, այլ սովորեք անմիջապես, իսկ նախաշեմին կրկնեք:
10. Երբեմն օգտագործեք հիշողությունը բարելավելու արհեստական հնարներ՝ «Մենմոտեխնիկա» (օգտվեք գրականությունից և համացանցից):

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է ուշադրությունը, ի՞նչ դեր ունի այն մարդու կյանքում:
2. Ուշադրության ո՞ր տեսակն է դրսևորվում, երբ սովորողը՝
 - կլանված դիպրում է արվեստի արեղծագործությունը,
 - ցանկանում է առավել ճշրությանը հաշվարկ անել:
3. Ընչո՞ւ է պայմանավորված դասի ժամանակ սովորողների անուշադրությունը:
4. Մեկական փորձից էլնելով՝ ճշե՞ք այն հնարները, որոնց միջոցով ցանկանում եք ուշադիր լսել դասը: Զննարկե՞ք ուսուցչի հետ:
5. Ի՞նչ է հիշողությունը և ի՞նչ դեր ունի այն մարդու կյանքում:
6. Գծե՞ք և լրացրե՞ք աղյուսակը:



ՄՏՈՒԳԵՔ ՈՒ ՄԱՐԶԵՔ ՉԵՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Թեստ I. 40 վրկ-ում աշխատեք մտապահել հետևյալ բառերը և նրանց հերթական համարները: Փակեք բերքը և գրեք այդ բառերն իրենց հերթական համարներով:

- | | |
|-----------------|---------------------|
| 1. ուկրաինացի | 11. կարագ |
| 2. տնտեսություն | 12. բուրբ |
| 3. կերակուր | 13. քիվածք |
| 4. դաջվածք | 14. արամաքամություն |
| 5. մեյրոն | 15. հատատում |
| 6. սեր | 16. քայ |
| 7. մկրատ | 17. սկիզբ |
| 8. պիքո | 18. մակաբույժ |
| 9. կավ | 19. մոմ |
| 10. քառարան | 20. քալ |

Մտապահման արդյունավետությունը Դուք կարող եք հաշվել հետևյալ բանաձևով.


$$\text{Ելիշտ վերաբարտարվող բառերի քանակը} \times 100 = \% \text{ ներկայացված բառերի քանակը}$$

Թեստ II. Կատարե՛ք նույնը հետևյալ թվերի և նրանց հերթական համարների հետ:

- | | | |
|-------|--------|--------|
| 1. 43 | 8. 44 | 15. 47 |
| 2. 57 | 9. 96 | 16. 6 |
| 3. 12 | 10. 7 | 17. 78 |
| 4. 33 | 11. 37 | 18. 61 |
| 5. 81 | 12. 18 | 19. 83 |
| 6. 72 | 13. 86 | 20. 73 |
| 7. 15 | 14. 56 | |

Ելիշտ պատասխանների տոկոսը հաշվարկե՛ք վերևի թեստի բանաձևով:

Թեստ III. 10 վրկ ուշադիր դիտե՛ք պատկերները և հետո աշխատե՛ք գծիկ դրանք նույն հերթականությամբ կամ վերաբարտարել հերթական համարը և պատկերի անունը:



$$\text{Ելիշտ պատասխանների քանակը} \times 100 = \% \text{ քառակուսիների քանակը}$$

Թեստ IV. 60 վրկ կարգացե՛ք տեքստը: Այնուհետև ընդգծված և համարակարգված են 10 գլխավոր մտքերը: Աշխատե՛ք վերաբարտարել այն՝ պահպանելով ցուցադրվող հերթականությունը:

*** 1912 թ. Առյուծաբան օվկիանոսում տեղի ունեցավ վթար: Հսկայական «Տիգրանիկ» մարդասպար շոգենավը, որը առաջին չվերթով Եվրոպայից գնում էր Ամերիկա, քամեր նառախուղում բախվեց լողացող ստոցն սրին՝ այսբերգին (1), ստանալով խոշոր վնասվածք՝ սկսեց խորրակվել (2): «Իջեցնել փրկանավակները», - հրամայեց կապիտանը: Բայց փրկանավակների քանակը քիչ էր (3): Երանք կարող էին բավարարել ուղևորների միայն կեսին: «Կանայք և երեխաները՝ ղեպի ելք, խիկ պղանարդիկ բող հագնեն փրկասպար գոպիները (4)», - լսվեց երկրորդ հրամանը: Տղանարդիկ լուռ հեռացան նավաելքից: Շոգենավը դանդաղ իջնում էր սև սառը ջրի խորքը (5): Կանայք և երեխաները մեկը մյուսի հետևից հեռանում էին խորտակվող նավից: Ահա վերջապես նավը ուզում էր լքել նաև վերջին փրկանավը (6): Եվ համկարծ ելքին գողգոթալով մտրեցավ ինչ-որ հասպափոր, որի ղեմքը վահից այլայլվել էր (7): Հրճաեղով կամանց և երեխաներին՝ նա փողի կապուկները դեմ տվեց նավատիներին և փորձում էր ներխուժել ստոցն այն էլ գերբեռնված փրկանավը (8): Լսվեց կրակոց. կապիտանն էր կրակում արբճանակից (9): Վախկոտը մեռած ընկավ շոգենավի վրա (10), և ոչ ոք չնայեց նրա կողմը: Ելիշտ վերաբարտարվող մտքերի քանակը $\times 100 = \%$ ընդգրկված տեքստերի քանակը

Չորս թևերի պարասխանները գունարկով և արացվածը քաժանկով չորսի՝ Դուք կիմանա՞ք Չեր մկրատահման միջին արդյունավետությունը՝ Չեր հերթյալ այլուսակի.

- 90-100% - գերազանց արդյունք
- 70-90% - շատ լավ
- 50-70% - լավ
- 30-50% - բավարար
- 10-30% - վատ
- 0-10% - շատ վատ

Մեկ շաբաթ հետո նորից կատարեք հետևյալ թեստերը՝ առանց բերքին նայելու: Աշխատե՛ք հիշողությանը վերաբարտարել և՛ բառերը, և՛ թվերը, և՛ նկարները, և՛ տեքստը, հակառակ դեպքում Դուք չեք կարողանա իմանալ, թե Չեր հիշողությունը ստացված ինֆորմացիան որքանով կարող է պահպանել:

ՃԱՆԱԶԻՐ ԻՆՔՂ ՔԵՉ

1. Համառայն փարբեր փոխյւնների մարդու հիշողության ծավալը կազմում է 1 500 000-ից մինչև 10 24 ըիք (անգլերեն *Ba` binari-երկակի* և *digit* – նշան, տեղիկույրի (*ինֆորմացիա*) չափման միավոր):
2. Գիրություն գարգաւանանք գուպերայ, սովորողների հիշողության ծավալը փարբերարի մեծանում է: Ըար 3ՈՒՆԵՄԿԾ-ի փոխյւնների՝ 1937 թվականի համեմար 1967 թվականին այն անկ է 270-300%-ով: Պարկերպարք, թե ներկայումս 2իր հիշողության ծավալն որրան է:

ԳԱՍ 9. ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍԱԸ

Ապրել նշանակում է մրածել:

Վոյրեր

ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ: Իմացական գործընթացների մեջ, որոնց օգնությամբ մարդն արտացոլում է արտաքին աշխարհն ու ինքն իրեն, թերևս ամենաբարդը մտածողությունն է: Եթե ընկալման ընթացքում մարդն արտացոլում է առանձին և կոնկրետ առարկաներ, երբ նրանք անմիջականորեն ներգործում են զգայարանների վրա, ապա մտածողության շնորհիվ նա արտացոլում է առարկաների և երևույթների այն կողմերն ու օրինաչափությունները, որոնք մատչելի չեն անմիջական զգայական արտացոլման համար: Այսինքն՝ մարդն իրականության մասին պատկերացում կազմում է ոչ միայն զգայության և ընկալման շնորհիվ, այլ նաև միջնորդավորված իմացության ձևով: Այս տեսակետից նախ և առաջ *մրածողությունը միջնորդավորված իմացություն* է: Այսպիսի իմացության մարդը դիմում է.

1. Երբ անմիջական իմացություն հնարավոր չէ մեր վերլուծիչների ոչ լիարժեքության կամ բացակայության պատճառով: Օրինակ՝ մենք չենք կարող ըմբռնել ուլտրաձայները:

2. Երբ անմիջական իմացությունը սկզբունքորեն հնարավոր է, սակայն ժամանակակից պայմաններում այն բացառվում է: Օրինակ՝ պատմության, հնագիտության օբյեկտների ուսումնասիրման դեպքում:

3. Երբ անմիջական իմացությունը հնարավոր է, սակայն ռացիոնալ չէ: Օրինակ՝ աստղի հեռավորությունը կարելի է չափել տարբեր ձևերով:

Մրածողությունը չրջապարող միջավայրի առարկաների և երևույթների հարաբերությունների և կապերի իմացությունն է (արտացոլումն է): Այն հնարավորություն է տալիս հասկանալու նյութական աշխարհի և մարդու հոգեկանի օրինաչափությունները, թաքնված պատճառահետևանքային կապերը:

Մրածողությունն իրականության ընդհանրացված իմացությունն է: Օրինակ՝ մտածողության միջոցով մարդն իմանում է մետաղների, գազերի, երկրաչափա-

կան պատկերների ընդհանուր և էական հատկությունների մասին: Այսպիսով, **մրաժողությունը շրջապատող աշխարհի միջնորդավորված և ընդհանրացված իմացություն է: Մրաժողությունն էապես նորի որոնման, հայրնագործման գործընթաց է:**

Անիլի գյուրից և կրակի սանձահարումից մինչև արտնի միջուկի ճեղքումը և կրնավորումը՝ մարդկային մրաժողության արդյունք են... Այս գործընթացը շարունակական է, և Դուք էլ կարող եք մասնակիցը լինել նորանոր հայրնագործությունների:

Մտածողությունը ծագում է այնտեղ, որտեղ կա լուծման ենթակա խնդիր, հիմնահարց, և բոլոր հայտնագործություններն արդյունք են մարդուն հուզող կոնկրետ հիմնախնդիրների:

Ամեն անգամ, երբ Դուք լուծում եք մաթեմատիկական, կենսաբանական, քիմիական որևէ նոր խնդիր կամ կենցաղային որոշակի հարցերում ցանկանում եք կողմնորոշվել, անպայման «դիմում եք» մրաժողությանը:

Մրաժողությունը սերտ կապված է խոսքի հետ: Մարդը մտածում է հասկացությունների, դատողությունների և մտահանգումների միջոցով: Մրաժողությունը խոսքի մեջ արտահայտվում է այնպես, ինչպես բովանդակությունն իր ձևի մեջ:

Մտածողությունը դասակարգվում է հետևյալ հիմնական տեսակների.

1. Ակնառու-գործնական մտածողությունն իրագործվում է առարկաների հետ կոնկրետ, շոշափելի գործողություններ կատարելու ընթացքում: Մինչև 3 տարեկանը ներառյալ մտածողությունը հիմնականում ակնառու-գործնական է: Երեխան իրեն հետաքրքրող առարկաները վերլուծում և համադրում է, երբ ձեռքերով այդ առարկայի կամ նրա մասերի հետ գործողություններ է կատարում: Օրինակ՝ երեխան կտտրում է իր խաղալիքը պարզելու համար, քե «ինչ կա այնտեղ»:

2. Ակնառու-պատկերավոր մտածողությունն իրագործվում է մտապատկերների հետ կատարվող գործողությունների միջոցով: Մտածողության այս տեսակը առաջանում է հիմնականում նախադպրոցականների մոտ, նրանք մտածում են ակնառու պատկերներով և հասկացությունների դեռևս չեն տիրապետում:

♦ **Ուսուցչի հետ քննարկեք Չեզ արդեն ծանոթ շվեյցարացի հոգեբան Ժ. Պիամեի փորձերը:**

3. Խոսքային պրամաբանական մտածողությունն ընթանում է խոսքի, լեզվի պարտադիր մասնակցությամբ, այսինքն՝ վերացական հասկացությունների և դատողությունների ձևով: Այն զարգանում է երեխաների գործնական և ակնառու զգայական փորձի հիման վրա դպրոցական հասակում:

♦ **8-րդ դասարանի «Հասարակագիտություն» դասընթացից եկեք հիշենք մտածական գործառնությունները.**

Վերլուծության ընթացքում ուսումնասիրվող երևույթի կամ առարկայի պատկերը մտքովի բաժանվում է մասերի, քաղաղրիչների:

Համադրությունն օբյեկտի առանձին մասերի և հատկությունների միավորումն է մեկ ամբողջության մեջ, նրա հատկությունների համակարգի սրբեղծումը:

Համեմատության հիմնական նպատակն առարկաների կամ երևույթների միջև նմանությունների և տարբերությունների հայտնաբերումն է:
Ընդհանրացումն այն երևույթն է, երբ ուսումնասիրվող առարկաների մեջ հայտնաբերելով ընդհանուր գծեր՝ դրանք մտքում միավորում են:
Վերացարկման օգնությամբ առանջնացվում է առարկայի որոշակի հատկանիշը և մտովի վերանում մյուսներից:

Դուք գիտեք նաև, որ մարդկանց տրամաբանական մտածողությունն ընթանում է հասկացություններով, դատողություններով և մտահանգմամբ:

Մարդիկ տարբերվում են իրենց մտածողության ամիստական առանձնահատկություններով.


1. Մտածողության ինքնուրույնությունը բնութագրվում է նրանով, որ մարդն ունակ է առաջադրելու նոր խնդիրներ և գտնելու դրանց լուծման ուղիները՝ յուրացնելով և ստեղծագործաբար կիրառելով մարդկության կուտակած փորձը:

2. Մտքի լայնությունը թույլ է տալիս գտնել կապեր գիտելիքների և երևույթների տարբեր, առաջին հայացքից իրարից շատ հեռու բնագավառների միջև:

3. Մտքի խորությունն արտահայտվում է բարդ հարցերի մեջ խորանալու, այնուհետ խնդիր տեսնելու կարողությամբ:

4. Մտքի ճկունությունը թույլ է տալիս հաշվի առնել իրադրությունների փոփոխությունները և փոխել գործողությունների սկզբնական պլանը:

5. Մտքի արագությունը դրսևորվում է իրադրության մեջ արագ կողմնորոշվելու, լավ մտածելու և ճիշտ որոշում ընդունելու կարողությամբ:



Խոսքը բանականության ամենամեծ դրսևորումն է:

Ա. Ա. Վակս

ԽՈՍԲԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒՄ:

Մարդիկ միշտ ապրել և ապրում են հասարակության մեջ: Մարդկանց հասարակական կյանքը և կոլեկտիվ աշխատանքն առաջացնում են մշտապես միմյանց հետ հաղորդակցվելու անհրաժեշտություն, ինչը լիակատար ձևով իրականացվում է խոսքի օգնությամբ: Մարդիկ խոսքի շնորհիվ մտքեր և գիտելիքներ են փոխանակում միմյանց հետ, իրար պատմում են իրենց ապրումների և իղձերի մասին: Մովորաբար մենք մտածում ենք բառերով, որոնք միայն հազվագյուտ դեպքում են բարձրաձայն արտասանվում:

Այն մտովի կատարվող կամ ներքին խոսակցություն է: Խոսքը մեզ օգնում է նաև ընկալման և դիտումների ժամանակ: Նյութի մասին խոսքային արտահայտությունը, որը մենք ձգտում ենք մտապահել, միշտ օգնում է մեզ և կազմակերպում է մտապահման գործընթացը: Խոսքը նպաստում է նաև կամային գործընթացների հաջող ընթացքին: Պարզորոշ դրված և ձևակերպված խնդիրը հեշտացնում է

մարդու կամային գործողությունը և օգնում պլանավորելու նրա գործունեությունն ամբողջությամբ վերցրած: Խոսքը սերտորեն կապված է զգացմունքների հետ: Մարդը բառերի օգնությամբ արտահայտում է իր զգացմունքները, ինչպես նաև խոսքը կարող է զգացմունքներ առաջացնել այլ մարդկանց մեջ:

Մարդկանց հաղորդակցման առավել ընդհանրական միջոցն է լեզուն, որի օգնությամբ մարդը կողմորում է տեղեկույթը, փոխանցում և ստանում նոր տեղեկատվություն: **Լեզուն պայմական զարգացման ընթացքում մշակված հաղորդակցման միջոցների համակարգ է:** Տիրապետելով լեզվին՝ երեխան անսահման ընդլայնում է սեփական ճանաչողական գործունեության շրջանակները: Կուտակելով բառապաշար, յուրացնելով մայրենի լեզվի գործնական շարահյուսությունը՝ երեխան սկսում է այն օգտագործել որպես հաղորդակցության գործիք: **Խոսքը հաղորդակցման գործընթացն է, որն իրացվում է լեզվի միջոցով:** Բառերի միջոցով կատարվում է երևույթների, իրադարձությունների իմաստավորում: Մարդու լեզուն և բանականությունն իրարից անբաժան են:

Խոսքի միջոցով իրականացվող հաղորդակցումը կոչվում է *վերբալ*: Սկզբում, իհարկե, եղել է ոչ թե «բառը», այլ առարկաների, երևույթների «իմաստը», «դրոպատոմառը» կամ «պատկերը»: Մակայն որպեսզի դրանք դառնային հասկանալի, կարիք առաջացավ արտահայտելու բառերի միջոցով: Ներկայումս մարդը հիմնականում հաղորդակցվում է խոսքի միջոցով:

Վերբալ հաղորդակցությունը կազմված է երկու կարևոր բաղադրիչներից. այն ինչն ասվում է, և այն, թե ինչպես է դա ասվում: Արդյունավետ խոսքային հաղորդակցման համար անհրաժեշտ է ունենալ տեղեկատվություն, որը պետք է փոխանցել: Վերբալ հաղորդակցման ընթացքում օգտագործվում են խոսքի հետևյալ տեսակները՝ բանավոր և գրավոր:

1. Բանավոր հաղորդակցում: Բանավոր խոսքը սովորական խոսակցական խոսք է, որից մենք օգտվում ենք մարդկանց հետ անմիջական հաղորդակցման ժամանակ: Խոսքի այս տեսակը, կախված լինելով հաղորդակցման կոնկրետ պայմաններից, կարող է լինել կամ երկխոսություն, կամ մենախոսություն: Երկխոսության գործընթացում, որը տեղի է ունենում երկու կամ մի քանի գրուցակիցների միջև խոսակցության ձևով, մարդն առաջադրում է հարցեր և պատասխանում է նրանց, հավանություն տալիս կամ առարկում, օրինակ՝ գրույցը, բանավեճը և այլն: Մենախոսական խոսքը մեծ տեղ է գրավում մարդկանց հաղորդակցման գործընթացում. այն դրսևորվում է բանավոր և գրավոր ելույթներում: Խոսքի մենախոսական ձևերին են պատկանում դասախոսությունները, զեկուցումները, ելույթները, հայտարարությունները:

2. Գրավոր հաղորդակցում: Կյանքի ընթացքում մարդիկ օգտագործում են նաև հաղորդակցման գրավոր ձևը, օրինակ՝ դիմում, նամակ, երկտող գրելիս, էլեկտրոնային փոստով հաղորդագրություն ուղարկելիս: Խոսքի այս տեսակը երևան է եկել բանավոր խոսքից հետո: Մարդկային մշակույթի արշալույսին մարդիկ պահանջ են զգացել որոշակի իրադարձությունների մասին տեղեկույթն ամրապնդելու և սերունդներին փոխանցելու: Այն նույնպես ունեցել է իր զարգացումը:

◆ Հանրագիտարանից կարդացե՛ք իդեոգրաֆիկ խոսքի և հիերոգլիֆների մասին:

Գրավոր խոսքն ընկալողի վրա ներգործելու ոչ մի միջոց չունի, բացի բառերից ու նախադասությունը կարգավորող կետադրական նշաններից: Գրավոր խոսքն աղղված է լայն շրջանի ընթերցողներին: Դարերի խորքից մեզ է հասել Կորյունի, Ագաթանգեղոսի, Խորենացու, Նարեկացու, Քուչակի և այլոց խոսքը:

◆ Ինքներդ էլ կարող եք այդ շարքը լրացնել:

Այն նաև մարդու առջև բացում է համաշխարհային մշակույթի հետ հաղորդակցվելու լայն հորիզոններ:

Մարդիկ հիմնականում, առանց գիտակցության ջանքերի, առաքում և ստանում են նաև ոչ վերբալ (ոչ խոսքային) հաղորդակցում՝ ժեստերի, դիմախաղի, քայլվածքի, հայացքի, ձայնի հնչերանգի, լացի, ծիծաղի, մարմնական շարժումների և այլնի միջոցով:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է մտածողությունը, և ի՞նչ պայմաններում է այն զարգանում:
2. Թվարկիչ մտածողության տեսակներն ու մեկնաբանե՛ք հիմնական գործողությունները:

ՍՏՈՒԳԵՔ ՈՒ ՍԱՐՁԵՔ ՉԵՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ա) Հին ժամանակներից մեզ է հասել հերևյալ ինդիքը: Կրեպեի բնակիչ Էպիմեհիդը սասց, որ կրեպացիները սրախոս են: Քանի որ Էպիմեհիդը կրեպացի էր, ուստի նա ևս սրախոս էր: Հերևաբար, նրա սասածը ստոր էր, այսինքն՝ Կրեպեի բնակիչները սրախոսներ չեն: Բայց այս սրբահայտությունները հակասում են առաջինին: Ինչպե՞ս վարվել:

բ) Հայրնի է, որ «չկան կանոններ առանց բացատրությունների»: Նշված նախադասությունը ևս կանոն է առանց բացատրյալ: Հերևաբար, այս դատողությունը ևս ունի իր բացատրությունը: Գրե՛ք դատողության մեջ տեղ գրած հնարավոր սխալը:

Հաշվի առնելով մտածողության անհատական առանձնահատկությունները՝ կատարե՛ք ինքնավերլուծություն:

ԲԱՅԱՀԱՅՏԵՔ ՉԵՐ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարե՛ք հերևյալ վարժությունները:

ա) Վարժությունը կատարվում է զույգերով: Կանգնեք մեջք մեջքի և գրուցեք միմյանց հետ: Դասարանին ներկայացրե՛ք ձեր փրկավորությունները, զգացողությունները: Հե՛ջր էր արդյոք այդ ձևով շփվելը, հարկապես ո՞ր քննաների շուրջ գրուցելիս էիք դժվարանում: **Քննարկե՛ք:**

բ) Այնուհետև կանգնեք դեմ դիմաց, նայեք միմյանց աչքերին և ոչ մի բան մի ասեք: Փորձեք կռահել, թե ի՞նչ է մտածում և զգում Ձեր ընկերը:

Դասարանին ներկայացրեք, թե ինչ էիք զգում և պարզեք, թե որքանով էին միշտ Ձեր կռահումները: Պարզեք նաև, թե որքան կարող էք այդպես կանգնած մնալ՝ ոչ մի բան չասելով: **Քննարկե՛ք:**

գ) Իսկ այժմ, նայելով միմյանց աչքերին, գրուցեք, փեղեկույթը փոխանցեք բացառապես չայնի միջոցով՝ առանց շարժումների (ժեստերի): Ուշադրություն դարձրե՛ք չայնի հնչողությանը, մեղեդայնությանը, առողանությանը:

Այս վարժանքը կարարեք փարբեր աշակերտների հետ և գրանցեք նրանց անհատական առանձնահատկությունները: Քննարկե՛ք:

ԴԱՍ 10. ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ: ԿԱՄՔ

Երևակայությունը արդասավորի նախապայմանն է

Գեմարենե

ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ: Օբյեկտիվ իրականության արտացոլման ժամանակ մարդը ոչ միայն ընկալում է այն ամենը, ինչը տվյալ պահին ներգործում է զգայական օբյեկտների վրա, այլև գլխուղեղում կարող է ակտիվացնել անցյալի ներգործության հետքերը, ինչպես նաև ստեղծել նոր պատկերներ: Որևէ նոր բանի ստեղծման գործընթացն սկսվում է մտովի պատկերացումից և տեղի է ունենում առավելապես պատկերավոր ձևով: Երևակայական պատկերների մեջ նորովի են համադրվում հիշողության մտապատկերներն ու աշխարհի մասին մարդու գիտելիքները:

Երևակայությունը մտապատկերների հետ կապարվող այնպիսի գործողություն է, որի արդյունքում սրացվում են դրանց նոր համակցություններ:

Երևակայության առաջացման սկզբնական ձևն այն է, երբ պատկերները, իդեալներն առաջանում են առանց մեր հատուկ ջանքերի: Օրինակ՝ դիտելով քափառող ամպերի կտորները՝ մենք դրանք շատ հաճախ պատկերացնում ենք մարդու դեմքի կամ կենդանու տեսքով: Այս դեպքում երևակայական պատկերները մեր մեջ առաջանում են ոչ կամածին ձևով: Այդպիսի երևակայությունը կոչվում է *ոչ կամածին*: Մակայն լինում են դեպքեր, երբ նոր պատկերները կամ մտքերը մարդու մեջ առաջանում են հատուկ ջանքերի շնորհիվ: Այդպիսի դեպքերում ասում են, որ մարդու հոգեկանում նոր համակցությունների առաջացումն արդյունք է *կամածին* երևակայության:

Երևակայության բնութագրիչներ են ինքնուրույնությունը, ստեղծագործականությունը, ինքնատիպությունը: Այդ առումով հոգեբանության մեջ տարբերում են երևակայության երկու տեսակ՝ վերարտադրական և ստեղծագործական: *Վերարտադրական երևակայությունը* ծավալվում և զարգանում է նկարագրությունների, պատմվածքների, սխեմաների, գծագրերի հիման վրա: Օրինակ, երբ սովո-

րողը բանաստեղծություն է արտասանում կամ քարտեզի վրա ցուցադրում: Այս դեպքում մարդն ամբողջացնում և լրացնում է եղած ելակետային նյութը: Վերարտադրող երևակայությունը տվյալ մարդու համար ինչ-որ նորի պատկերացումն է՝ հենվելով այդ նորի բառային նկարագրության կամ պայմանական սխեմաների վրա: Երևակայության այս տեսակը լայնորեն օգտագործվում է մարդու գործունեության տարբեր տեսակներում, այդ թվում՝ ուսուցման մեջ:

Սրեղծագործական երևակայությունը, ի տարբերություն վերարտադրական երևակայության, ենթադրում է նոր պատկերների, իրերի, մեքենաների, գիտական օրինաչափությունների, արվեստի գործերի ստեղծում, որոնք չունեն իրենց նմանները: Ստեղծագործական երևակայության շնորհիվ մարդկանց հաջողվում է առաջին անգամ ստեղծել ինքնատիպ պատկերներ, որոնք իրագործվում են հասարակական նշանակություն ունեցող նյութական արդյունքներում: Երևակայության այս տեսակը կարևոր դեր է կատարում մարդկանց ստեղծագործական գործունեության մեջ:

Երևակայությունն ընթանում է շնորհիվ համադրման հետևյալ եղանակների.


1. Ազլյուտիմացիա (կցականություն): Այս դեպքում մարդն ամենապարբերակներով համադրում է կյանքում չմիացվող առարկաներից, առանձին հարկություններից կազմավորված մտապարկերներ և սրեղծում համակցվող մտապարկերներ: Այսպես են սրեղծվել ջրահարսի, կենդանիների և այլ մտապարկերները:

2. Հիպերբոլիզացիա (շափազանցում): Այս ձևին բնորոշ է ոչ միայն առարկայի մեծացումը կամ փոքրացումը, այլև առարկայի մասերի թվական փոփոխությունը և բեղաշարժը: Օրինակ՝ յոթգլխանի փիշապ, հնդկական դիցաբանության մեջ՝ բազմաչեռք ասրված և այլն:

3. Մրում: Այս դեպքում մարդն առանձնացնում է առարկայի, ամբողջի ինչ-որ մասը և այն դարձնում փրկապարտ: Օրինակ՝ ծաղրանկարներում, երբ ընդգծվում է բնութագրող հատվածը:

4. Տիպականացում: Այս դեպքում մարդն առանձնացնում է էականը, որը կրկնվում է մի շարք մարդկանց մեջ, միանման փաստերում: Տիպականացման դրական կերպարներում կենդրոնացվում են լույսի շրջապարի մարդկանց տիպական գծերը:

♦ **Երևակայության համադրման ո՞ր եղանակներն են առկա ներքոհիշյալ պատկերներում**



ԿԱՄՔ: Մարդը որպես ակտիվ էակ ոչ միայն ընկալում է արտաքին աշխարհը, այլ նաև ներգործում նրա վրա, փոփոխում շրջակա միջավայրն իր նպատակներից և կարիքներից ելնելով: Այդ դեպքում մարդն իր առջև դնում է գիտակցված նպատակներ: Երբեմն նպատակին հասնելը դժվարություն չի ներկայացնում և մատչելի է, սակայն առավել հաճախ նպատակի իրագործումը կապված է մեծ դժվարությունների և արգելքների հաղթահարման հետ: Այդպիսի դժվարությունները և արգելքները լինում են արտաքին կամ ներքին: Արտաքին արգելքները կախված չեն մարդուց, սրանք բնական արգելքներ են: Ներքին արգելքները կախված են միայն տվյալ անհատից, դա նաև չցանկանալն է կատարել այն, ինչն անհրաժեշտ է:

Մարդու կամքը դրսևորվում է բոլոր այն դեպքերում, երբ նա իր նպատակներին հասնելու համար կարողանում է հաղթահարել ծագած արգելքներն ու խոչընդոտները, ունակ է դեկավարել սեփական վարքը և ենթարկել սեփական գործունեությունը որոշակի խնդիրների: Արգելքներ և դժվարություններ հաղթահարելը պահանջում է կամային ջանքեր, այն յուրահատուկ նյարդահոգեկան լարվածություն է, որն ունակ է համախմբելու մարդու ֆիզիկական, ինտելեկտուալ և բարոյական ուժերն ու հնարավորությունները: Կամքը մարդու ակտիվության հատուկ ձև է, այն դրսևորվում է մարդու գործունեության բոլոր ձևերում: **Կամքը մարդու կողմից իր վարքի և գործունեության գիտակցական կառավարումն է ներքին և արտաքին դժվարությունների հաղթահարման միջոցով:**

Կամային գործողությունները լինում են պարզ և բարդ: Պարզ գործողության դեպքում մարդն առանց դժվարության հասնում է իր նպատակին: Այն դեպքերում, երբ մարդը կատարում է պարզ կամային գործողություն, որի մեջ նպատակը բավականաչափ պարզ է և նրան հասնելու ուղիները ծանոթ են ու սովորական, նրա գործողությունը կատարվում է աննշան կամային ջանքերի գործադրմամբ: Մարդը ծարավը հագեցնելու համար սեղանի վրայից վերցնում է ջրով լի բաժակը: Դա պարզագույն կամային գործողություն է, որին ուղեկցում են աննշան կամային ջանքերը: Բարդ կամային գործողությունն իրականացվում է մի քանի փուլերով.

1. նպատակի գիտակցում և դրան հասնելու ձգտում,
2. նպատակին հասնելու մի շարք ուղիների որոնում,
3. այդ ուղիները հաստատող կամ մերժող դրդապատճառների առաջացում,
4. դրդապատճառների պայքար,
5. հնարավորություններից մեկի ընդունումը որպես լուծում,
6. ընդունված որոշման իրագործում,
7. որոշման իրականացման և դրված նպատակին հասնելու գործընթացում արտաքին արգելքների հաղթահարում:

Պարզվում է, որ մարդկության կողմից սրեղծված բոլոր արժեքների հերևում բաքնված են որոշակի անհատականությունների մեծ կամք: Այսօր էլ Դուք կանգնած եք կյանքի շեմին, և Ձեր սպագան մեծ չափով կախված է այսօրվա կամային որսնորումներից: Դասարհարակեք Ձեր մեջ կամային վեհ հատկություններ, անընդհատ անխագծեք արդարացված նպատակներ և նվանեք այն: Այդ դեպքում երջանկությունն և հաջողությունները միշտ կուղեկցեն Ձեզ:

Մարդու կամային հատկություններից են նպատակատողվածությունը, վճռականությունը, զսպվածությունը, ինքնուրույնությունը, համատությունը, հաստատակամությունը, ինքնատիրապետումը, կարգապահությունը և այլն: Պետք է նշել, որ ոչ բոլոր պարագաներում կարելի է ձևավորել կամային ցանկացած հատկանիշ, օրինակ՝ համատություն չի կարելի ձևավորել կարճատև գործի մեջ: Այստեղ անհրաժեշտ է այնպիսի գործ, որի իրականացումը երկար ժամանակ է պահանջում: Չսպվածությունը երևան է գալիս հուզական և ֆիզիկական լարվածության ժամանակ: Այդ որակների ձևավորումը կապված է նաև գործունեության յուրահատկությունների հետ:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է երևակայությունը, և ի՞նչ դեր ունի այն մարդու կյանքում:
2. Երևակայության ո՞ր տեսակներն են ավելի ակտիվացնում մարդու միտքն ու գործունեությունը:
3. Ձեր կարծիքով՝ ի՞նչը կնպաստի երևակայության զարգացմանը:
4. Ի՞նչ է կամքը, և ի՞նչ դեր ունի այն մարդու կյանքում:
5. Քննարկեք Ձեր կյանքից դեպքեր, երբ կամքի շնորհիվ հասել եք որոշակի հաջողությունների: (Քննարկումն առավել արդյունավետ կլինի, եթե հիշեք նաև պայմանության և գրականության դասերից, ՁԼՄ-ներից, կինոնկարներից Ձեզ ծանոթ անվանի մարդկանց, գրական, պատմական հերոսների, ովքեր ունեցել են մեծ կամք:)
6. Համեմատեք իմացական գործընթացները, կառուցեք իմացական գործընթացների ստրիհանակարգ:

ԹԵՄԱ 6. ՀՈՒՅՁԵՐ ԵՎ ՉԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ

ԴԱՍ 11. ՀՈՒՅՁԵՐՆ ՈՒ ՉԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՐԳՈՒ ԿՅԱՆՔՈՒՄ

Չգացմունքներն ու հույզերը մարդու հոգու գունապնակն են:

Կարոտ

ՉԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ: *Չգացմունքները մարդու շրջապատի առարկաների, իրերի նկատմամբ ունեցած կենսական հարաբերությունների արտացոլումն են:* Դրանք այն հարաբերությունների արտացոլումն են, որոնք անհրաժեշտորեն առաջանում են կենսական պահանջմունքներ ունեցող անձնավորության և այդ պահանջմունքները բավարարելու ներքին հնարավորություն ունեցող առարկաների միջև: Չգացմունքները թափանցում, գունազարդում են մարդու հոգեկան կյանքի բոլոր կողմերը՝ զգայությունները, ըմբռնումները, մտապատկերները, մտքերը, երևակայությունը: Մարդը տարբեր ձևով է վերաբերվում իրական աշխարհի առարկաներին և երևույթներին: Տարբերում են զգացմունքների չորս հիմնական որակներ.



1. Դրական զգացմունքներ: Դրանք ցույց են տալիս, թե ինչն է բավարարել արթնացող պահանջմունքը: Օրինակ՝ սննդի պահանջմունքի բավարարումն առաջացնում է հաճույք:
2. Բացասական զգացմունքներ: Դրանք ցույց են տալիս, թե ինչն է խանգարում, խոչընդոտում արթնացող պահանջմունքը:
3. Երկվալենտ զգացմունքներ: Այս դեպքում հաճույքը և տառապանքը ոչ միայն ձուլվում և վերածվում են մեկը մյուսի, այլև այդ գոյակցությունը կազմում է ապրվող զգացմունքի որակական բնութագրերից մեկը: Օրինակ՝ խանդի դեպքում սերն ու ատելությունը յուրօրինակ ձևով միավորված են լինում:

4. Մշուշապատ կողմնորոշման հարաբերություններ: Չգացմունքների օբյեկտի նկատմամբ սուբյեկտի այս տիպի հուզական վերաբերմունքը սովորաբար կարճատև հուզական ռեակցիայի անորոշությունն է, որը կառված է նրանում կողմնորոշվելու հետ: Մարդը, կյանքի ընթացքում նոր առարկայի հանդիպելով, հաճախ հուզվում է, ըմբռնման ընթացքում տվյալ առարկան առանձնացնում է շրջապատող միջավայրից և ապրում է զարմանքի, տարակուսանքի, հետաքրքրության զգացմունքներ: Երբեմն այդպիսի ապրումների հիմքում ընկած է «ի՞նչ է սա» ռեֆլեքսը:



Ուշադրություն դարչրեք՝ ինչ զգացմունքներ են արտահայտված գեղարվեստի գրոյագործոցներում

Մարդու մեջ գոյություն ունեն զգացմունքների այրման հետևյալ ձևերը.

- **Հույզեր:** Հույզը որևէ զգացմունքի անմիջական ապրումն է: Հույզ է, օրինակ, ոչ թե երաժշտության նկատմամբ ունեցած սերը, այլ հաճույքի, հիացումի վիճակը: Որոշ դեպքերում հույզերը դառնում են գործողությունների դրդիչներ, մեծացնում մկանների և օրգանիզմի ուժերի լարումը: Ուրախությունից մարդը պատրաստ է «լեռներ շուռ տալ»: Այլ դեպքերում հույզերը բնորոշվում են պառիպությանը, ուժեղ զգացում ունենալով՝ մարդը պարփակվում է իր մեջ, ինքնամփոփ դառնում:
- **Հուզական փոռ:** Տարբեր տեսակի զգայությունների հետ առաջ եկող հուզական վիճակները կոչվում են հուզական տոն: Օրինակ՝ ցավը աչքի է ընկնում հստակորեն արտահայտված զգայական տհաճ երանգով: Որոշ մարդկանց մոտ հուզական տոնն ընդունում է իդեոսինկրեզիայի հիվանդագին դրսևորում (իդեոսինկրեզիան որևէ գրգռիչի նկատմամբ գերզգայունակությունն է): Օրինակ՝ ձեզանից ոմանք չեն կարողանում ձեռք տալ դեղձին կամ օճառին...
- **Աֆեկյուններ:** Մրանք ուժեղ, բուռն քափով ընթացող և համեմատաբար կարճատև հուզական ապրումներ են, որոնց դեպքում խիստ թուլանում կամ չքանում է կամային ինքնավերահսկողությունը: Լինում է ֆիզիոլոգիական և ախտաբանական բնույթի: Շատ զգացմունքներ կարող են ընթանալ աֆեկտի ձևով, օրինակ՝ աֆեկտի հիացական դեպքեր կարելի է նկատել հատկապես ծանր ողբ ունկնդրողների մոտ:
- **Տրամադրություն:** Սա անձի ընդհանուր, մեղմ և տևական հուզական վիճակն է, որը որոշակի ժամանակահատվածում բնորոշ երանգ է հաղորդում նրա գործունեությանն ու մյուս հոգեկան գործընթացներին:
- **Մթնոլորտ:** Սա հոգեֆիզիոլոգիական լարվածության վիճակ է, առաջանում է այն ժամանակ, երբ մարդը ստիպված է լինում հարմարվել քարոզ, անընդհատ փոփոխվող կենսական պայմաններին կամ լուծել իր համար մեծ նշա-

նակություն ունեցող, խոր իմաստ պարունակող անձնային բարդ խնդիրներ: Սթրեսը կարող է անձի վրա ունենալ ինչպես ակտիվացնող, այնպես էլ քայքայիչ ազդեցություն: Սթրեսի զարգացման մեջ տարբերում են երեք հիմնական փուլ՝ տագնապայնության, դիմադրության, հյուծման:

ԲԱՐՉՐԱԿԱՐԳ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ: Դրանք մարդու ամենաբարդ ու բազմատեսակ դրսևորումներ ունեցող զգացմունքներն են, որոնք անձի սոցիալականացման, ստավոր և բարոյական զարգացման ընթացքում քանի գնում, ավելի խոր ու տարբերակված են դառնում: Բնորոշ են միայն մարդուն: Բարձրակարգ զգացմունքների մեջ մտնում են.

1. *Պրաքսիկ զգացմունքները:* Դրանք աշխատանքային, խաղային կամ որևէ այլ տեսակի գործունեության ընթացքի և արդյունքի հետ կապված զգացմունքներն են (բավարարվածություն, հրճվանք, հափշտակվածություն, մոլեգնություն որևէ գործունեության մեջ):

2. *Բարոյական զգացմունքները* կազմում են բարոյական նորմերի ու կանոնների մի համակարգ, որի օգնությամբ կարգավորվում են մարդկային հարաբերություններն ու վարքը: Դրանցից են պարտքի, ընկերասիրության, հայրենասիրության, սիրո, ատելության, ցավակցության, համակրանքի և այլ զգացմունքները:

3. *Բանական զգացմունքներն* առաջանում են իմացական գործունեության ընթացքում՝ ցույց տալով մարդու վերաբերմունքն այդ ընթացքի հաջող կամ անհաջող լինելու, ինչպես նաև ստացված արդյունքի նկատմամբ: Օրինակ՝ խնդիրներ լուծելիս առաջ եկող զգացմունքները՝ հետաքրքրասիրությունը, զարմանքը, տարակույսը, ոգեշնչումը և այլն:

4. *Գեղագիտական զգացմունքներն* առաջանում են արվեստի, բնության հետ շփվելիս, գեղեցիկն ու տգեղը, ներդաշնակն ու աններդաշնակն ընկալելիս:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է հույզերի և զգացմունքների դերը մարդու կյանքում:
2. Նկարագրե՛ք հույզերի տեսակները:
3. Թվարկե՛ք բարձրակարգ զգացմունքները և մեկնաբանե՛ք:
4. Ուսուցչի օգնությամբ կարարե՛ք «Հույզերի անիվ» վարժությունը: Զննարկե՛ք:

ԹԵՄԱ 7. ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԽԱՌՆՎԱԾՔ ԵՎ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ: ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԱՍ 12. ԽԱՌՆՎԱԾՔ

Մարդը գեղեցիկ է իր վարքի գունագեղությամբ:

Յիցևրոն

ԽԱՌՆՎԱԾՔ: Մեր կյանքում երբեմն անհրաժեշտություն է առաջանում որևէ անձնավորության բնութագրել, և խառնվածքը դիտվում է որպես անձնավորությանը բնութագրող հոգեբանական առանձնահատկություններից մեկը: Երբ դիտում ենք սովորողների վարքը, օրինակ՝ դասամիջոցներին, ապա նկատում ենք, որ նրանք իրար հետ զրուցելիս տարբեր ակտիվություն են ցուցաբերում. ոմանք կրակոտ են, արագաշարժ, մյուսները շուտ բորբոքվում են, երրորդները կարծես քե անտարբեր են, իսկ չորրորդները՝ խիստ հուզական: Այս առանձնահատկությունները դրսևորվում են գործունեության մեջ և նրանց վարքին տալիս են յուրահատուկ գունավորում:

Այսպիսով՝ **խառնվածքը մարդու հոգեկան անհատական այնպիսի հատկանիշների գույքորդումն է, որոնք որոշում են մարդու հոգեկան գործունեության շարժընթացը, երկար ժամանակահատվածում դրսևորվում են հարաբերականորեն կայուն չևով:**

Գիտնականներին վաղուց էր հետաքրքրում, թե ինչու են տարբեր մարդիկ տարբեր ձևով պատասխանում միևնույն գրգռիչներին, տարբեր ձևով վարվում միևնույն կենսական իրադրություններում: Միևնույն ժամանակ տարբեր մարդկանց վարքի արտահայտման արտաքին ձևերի մեջ կարելի է գտնել ընդհանրություն: Հին հույն բժիշկ Հիպոկրատը (մ.թ.ա. IV դար) կարծում էր, որ յուրաքանչյուր մարդու առանձնահատկությունները որոշվում են օրգանիզմի հեղուկների (լորձ, մաղձ, արյուն) գերակշռությամբ և դրանց խառնուրդով: Դրանից ելնելով՝ նա տարբերում էր խառնվածքի չորս տիպ՝ սանգվինիկ (օրգանիզմում գերակշռում է արյունը), ֆլեգմատիկ (գերակշռում է լորձը), խոլերիկ (գերակշռում է դեղին թաղձը), մելանխոլիկ (գերակշռում է սև մաղձը):

Հետագա գիտական հետազոտությունները չիաստատեցին այս ենթադրությունները, սակայն պահպանվեցին խառնվածքների անունները, և մարդկանց բաժանեցին չորս հիմնական խմբերի:

Խառնվածքների ուսումնասիրությունը գիտական հիմքի վրա դրեցին Ի. Պ. Պավլովի հետազոտությունները: Այստեղ խառնվածքի տիպերի հիմքում դրվեց

նյարդային համակարգի հարկությունների հարաբերակցությունը: Ինչպես գիտենք, մարդու բարձրագույն նյարդային գործունեությունը բարդ է և կազմում է նրա հոգեկան երևույթների նյութական հիմքը: Գոյություն ունեն կենդանիների և մարդկանց բարձրագույն նյարդային գործունեության որոշակի անհատական առանձնահատկություններ, որոնք արտահայտվում են պայմանական ռեֆլեքսների գոյացման և ամրապնդման տարբեր արագությամբ, պայմանական արգելակման մշակման, պայմանական ռեֆլեքսների վերամշակման ոչ միատեսակ արագությամբ: Այժմ ծանոթանանք խառնվածքի չորս տիպերին.



1. *Սանգվինիկ* կամ *շարժուն* տիպ: Նյարդային համակարգության ընդհանուր տիպը՝ ուժեղ հավասարակշռված շարժուն: Աչքի են ընկնում արագ, գործունյա, համառ, վճռական, դրոման ու արգելակման շարժուն պրոցեսներով: Արագ հարմարվում են նոր պայմաններին: Նրանց զգացմունքները, տրամադրությունները, հետաքրքրությունները և ձգտումները շուտ փոփոխվում են: Երբ նրանց մեջ բացակայում են լուրջ նպատակները, ապա ստեղծագործական գործունեությունը դրսևորվում է մակերեսային ձևով:

Այս տիպին պատկանող երեխաները լինում են աշխույժ, կենսունակ: Նրանք առանձնակի դժվարություններ չեն պատճառում իրենց ուսուցիչներին և ծնողներին: Այս երեխաների համար բնորոշ է նաև այն, որ նրանք խոսում են բարձր, սակայն արագ և սահուն, ունեն հարուստ բառապաշար: Նրանց միմիկան արտահայտիչ է, խելացի, խոսքի կուլտուրան և մտավոր ընդունակությունները՝ բարձր: Նրանք ճիշտ են կողմնորոշվում դպրոցում, ընտանիքում և այլուր: Նրանք լինում են հանգիստ, զուսպ, աշխատասեր, դժվարությունների առաջ համարձակ և վճռական:

Սանգվինիկ խառնվածք են ունեցիչ Ֆրանսիայի կայսր Նապոլեոնը, ռուս գրող Մ. Յու. Լերմոնովը:



2. *Ֆլեգմատիկ* կամ *հանգիստ*: Նյարդային համակարգության ընդհանուր տիպը՝ ուժեղ հավասարակշռված իներտ: Սառնարյուն, դանդաղաշարժ, համբերատար, զուսպ, քիչ հաղորդակցվող, դրոման ու արգելակման իներտ գործընթացներով անձինք են: Ի. Պ. Պավլովի բնորոշմամբ՝ ֆլեգմատիկը հանգիստ, մշտապես հանդարտ ու աշխատասեր մարդ է: Կախված պայմաններից՝ մի դեպքում նրանց մեջ ծագում են դրական գծեր՝ զսպվածություն, խորաբափանցություն, մի այլ դեպքում՝ ծուլություն և կամազրկություն:

Այս տիպի երեխաների դրական ու բացասական ռեֆլեքսներն ավելի դանդաղ են առաջանում, քան նախորդ տիպինը: Խոսքը

քանդաղ է, հանգիստ, առանց խիստ արտահայտված հուզումների: Երեխաները, քրպես կանոն, աչքի են ընկնում հանգիստ բնավորությամբ, աշխատասիրությամբ, ջանասիրությամբ, լավ վարքով և կարգապահությամբ: Եթե նրանք հանդիպում են դժվար իրադրության, հեշտությամբ հաղթահարում են: Ոչ հազվադեպ այդ երեխաները լավ են սովորում և մեծ ընդունակություններ են ցուցաբերում: Տրված հանձնարարությունները կատարում են դանդաղ, բայց բարեխղճորեն:

Ֆլեգմատիկ խառնվածք են ունեցել ոռու գորավար Մ. Վ. Կուլոզովը, առակագիր Ի. Ա. Կոխլովը:

3. *Խոլերիկ* կամ *անզուսպ* տիպ: Նյարդային համակարգության ընդհանուր տիպը՝ ուժեղ անհավասարակշռված շարժուն՝ չափազանց դյուրագրգիռ, անհավասարակշռված, չափի զգացում չունեցող, համառ, հաղորդակցվող, որդման երևույթների գերիշխումով: Բնորոշ են բարձր զրգոելիությունը և մեծ զգացմունքայնությունը: Այն մեծ չափով կախված է նաև անձի ուղղվածությունից: Հասարակական հետաքրքրությամբ անձանց մոտ այն արտահայտվում է նախաձեռնողականությամբ, սկզբունքայնությամբ: Այնտեղ, որտեղ չկա հոգեկան կյանքի հարստություն, այս խառնվածքը հաճախ արտահայտվում է բացասական դրսևորումներով՝ զրգովածության և աֆեկտների ձևով:



Այսպիսի երեխաները շատ շարժուն են, չափից դուրս դյուրագրգիռ: Ի պատասխան ցավային զրգոման՝ կարող են տալ ընդհանուր, անզուսպ, երկար ժամանակ չդադարող հակազդում: Արգելակման պրոցեսների թուլության հետևանքով երեխաները վատ են ենթարկվում կարգապահությանը, հեշտությամբ են դառնում իրենց բնագրքների ստրուկը, որոնց հագուրդ տալու համար ոչնչի առաջ կանգ չեն առնում: Այդպիսի երեխաներին անհիմն կերպով անվանում են չարձձի (շփացած): Նրանք դժվար դաստիարակելի են, ուստի ուսուցչից և մանկավարժական կոլեկտիվից պահանջվում է հետևողական և համառ աշխատանք նշված խնդիրները վերացնելու համար:

Խոլերիկ խառնվածք են ունեցել ոռու գորավար Ա. Վ. Սուվորովը, գրող Ա. Ս. Պուշկինը:

4. *Մեղանիտիկ* կամ *թույլ* տիպ: Նյարդային համակարգության ընդհանուր տիպը՝ թույլ, սրանք տրոննջացող են, դժգոհ, քիչ շարժունակ, անվստահ իրենց անձի նկատմամբ, երկչոտ, ամաչկոտ, ունեն դժվարությունները չափազանցնելու հակում և գերզգայուն են: Դրդման և արգելակման պրոցեսները թույլ են արտահայտված: Կյանքի բարենպաստ պայմաններում մեղանիտիկները խոր և բովանդակալից անձնավորություններ են, իսկ անբարենպաստ պայմաններում վերածվում են ինքնամոռի, վախկոտ և տագնապային անձնավորության:

Այս տիպին դասվող երեխաներն ուժեղ ու երկարատև զրգոմունքներն չեն դի-



մանում: Ռեֆլեքսներն արգելակվում են կողմնակի, հատկապես նոր, անսովոր գրգռիչների ազդեցության տակ: Այդպիսի երեխան, ընկնելով նոր իրադրության մեջ, օրինակ՝ առաջին անգամ մանկապարտեզ հաճախելիս կամ անձանոթ մարդկանց շրջապատ ընկնելիս կանգնում է գլուխը կախ, մորը կպած, ոչ մի հարցի չի պատասխանում, իսկ եթե շարունակում են համատորեն կրկնել հարցերը, նա հուզվում է, կարող է անգամ լաց լինել: Պայմանական ռեֆլեքսները դանդաղ են մշակվում, պահանջվում է պայմանական և ոչ պայմանական գրգռիչների մեծ քանակի զուգորդում: Շարժողական

ակտիվությունը թույլ է, անվստահ: Այս տիպին պատկանող երեխան թողնում է վախկոտ, թույլ երեխայի տպավորություն:

Մելանխոլիկ խառնվածք են ունեցել ռուս գրող և Վ Գոգոլը, կոմպոզիտոր Պ. Ի. Չայկովսկին:

Բարձրագույն նյարդային գործունեության յուրաքանչյուր տիպն ունի վարքի բնորոշ գծեր, բայց, այնուամենայնիվ, մարդու վարքագիծը պայմանավորված է նյարդային համակարգի ոչ միայն բնածին հատկություններով, գենոտիպով, այլև այն ազդեցություններով, որոնք կրել և կրում է օրգանիզմը նրա անհատական կյանքի ընթացքում, այլ կերպ ասած՝ նյարդային տիպերի հատկանիշները կախված են նաև դաստիարակությունից և ուսուցումից: Միաժամանակ պետք է նշել, որ բարձրագույն նյարդային գործունեության չորս տիպերը մարդու մեջ մաքուր ձևով շատ հազվադեպ են հանդիպում:

ՃԱՆԱԶԻՐ ԻՆՔՂ ԲԵՉ

Խառնվածքի տիպերը կարելի է որոշել անգլիացի հայտնի հոգեբան Հ.Այզենկիի բնարի միջոցով:

ԱՌԱՋԱՂԻՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս կվարվեն փարբեր խառնվածքի մարդիկ ներքոհիշյալ իրավիճակներում.
 - մարզադաշտում կամ հեռուստացույցով ֆուտբոլային խաղը **դիտողը**, երբ մրցակից բիմի ֆուտբոլիստը գրավում է դարպասը.
 - օրինախախտ **վարորդը**, որին երթևեկության կանոնները խախտելու համար ձանապարհային ոստիկանը կանգնեցնում է:
2. Վերոհիշյալ իրավիճակներում ինչպիսի՞ն կլինի Չեյք պահվածքը: Ըստ այդմ որոշե՞ք խառնվածքի Չեյք տիպը:



3. Ելնելով խառնվածքի հիպոկրապոսան փիլակրից՝ ներքոհիշյալ նկարներում փորձեք քացալրել յուրաքանչյուր անձի վարքագիծը՝ նմոքված գլխարկին փրվող հակազդման դեպքում:



ԴԱՍ 13. ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ: ԲՆԳՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր մարդու բնորոշ է երեք բնավորություն՝ այն, որը նրան վերագրում են, այն, որն ինքն է իրեն վերագրում, և վերջապես այն, ինչը կա իրականում:

Վ. Հյուգո

ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ: Մարդիկ իրարից տարբերվում են ոչ միայն արտաքինով, այլև բնավորությամբ: Երբեմն մենք տուժում ենք մեր բնավորության պատճառով, իսկ երբեմն էլ՝ շահում: Առօրյա խոսակցության ժամանակ հաճախակի ենք օգտագործում «բնավորություն» բառը, քանի որ դիմացիմին գնահատելու չափանիշներից մեկն էլ բնավորությունն է:

Բնավորությունը մարդու կայուն, էական հոգեկան հատկությունների անհայտական զուգակցումն է, որն արտահայտում է նրա վերաբերմունքն իրականության նկատմամբ և դրսևորվում է նրա վարքի և արարքների մեջ:

Բնավորության կառուցվածքում առանձնացնում են բնավորության գծերի մի քանի խմբեր, որոնք արտահայտում են իրականության հանդեպ անձի վերաբերմունքը: Բնավորության գծեր ասելով պետք է հասկանալ մարդու վարքի անհատական սովորական ձևերը, որոնց մեջ իրականացվում է նրա վերաբերմունքը դեպի իրականությունը: Բնավորության գծերի այդպիսի խմբերն են.

1. գործունեության մեջ դրսևորվող բնավորության գծեր, օրինակ՝ աշխատավիրություն, ծուլություն, ձեռներեցություն և այլն.

2. շրջապատի մարդկանց նկատմամբ դրսևորվող բնավորության գծեր, օրինակ՝ մարդասիրություն, հայրենասիրություն, քաղաքավարություն, բռնակալություն, հիշաչարություն, ցինիկություն, բարություն, ազնվություն, անկեղծություն, ստախոսություն, շողքորթություն և այլն.

3. սեփական անձի նկատմամբ դրսևորվող բնավորության գծեր, օրինակ՝ պահանջկոտություն, ինքնաքննադատություն, ինքնագոհություն, պատվասիրություն և այլն.

4. առարկաների նկատմամբ դրսևորվող բնավորության գծեր, օրինակ՝ անտարբերություն, թափթփվածություն, անուշադրություն, մաքրասիրություն և այլն:

Եթե ուշադրություն դարձնեք, դրանց մի մասը բնավորության *դրական*, մի մասն էլ *բացասական* գծեր են:

Բնավորությունը չի ժառանգվում և անձի բնածին որակ չէ: Յուրաքանչյուր մարդու բնավորության գծերը ձևավորվում են նրա կյանքի ընթացքում՝ որոշակի կենսապայմաններում, դաստիարակության, միջավայրի հետ մարդու գործունեակտիվ փոխներգործության ընթացքում: Բնավորությունը պայմանավորված է նաև բարձրագույն նյարդային գործունեության տիպով, և նրա ֆիզիոլոգիական մեխանիզմների ըմբռնման համար կարևոր նշանակություն ունի երկրորդ ազդարարային համակարգությունը:

ՃԱՆԱԶԻՐ ԻՆՔՂ ՔԵՉ

Գերմանացի հոգեբան Է. Շպրանգերն առանց նախնային է բնավորության վեց տեսակի ըստ անձի արժեքային կոյմնորոշումների:

- Տեսաբան, որի մեջ գերակշռում են խնացական հեղաբրբրությունները.
- Տնայնագետ, ով հեղաբրբրվում է օգուտ քերող երկույրներով.
- Գեղագետ՝ սիրում է իր անուրջների ոլորտը:
- Մոցիարական տիպ, որի նպատակն ուրիշներին ծառայելն է.
- Բնաբանագետ՝ հեղաբրբրվում է բաղաբակախոյրամբ.
- Հոգևոր անձ, ով չգիրում է բարձրագույն հոգևոր արժեքների:

Իմ հաջողություններում միայն 1 տոկոսն է հանձարինը, իսկ 99 տոկոսը բաժին է ընկնում քրտնաջան աշխատանքին:

Էդիսոն

ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Միրելի՝ բարեկամ, երևի քե օրվա ընթացքում մշտապես ականաբես ես լինում, քե ինչպես են քեզ շրջապարող մարդիկ անընդհաջ օգտագործում «ընդունակություն» եզրույրը: Սակայն յուրաքանչյուր ոք այն հասկանում է յուրովի: Օրինակ՝ երբեմն ընդունակությունը հանգեցնում են գիտելիքների, կարողությունների, հմտությունների առկայությանը, ինչն այնքան էլ ճիշտ չէ:

Բացի այդ, մեզանից յուրաքանչյուրը գիտի, որ մեր կապարած գործողության որակը, նվաճված բարձունքները մեծ չափով կախված են մեր ընդունակություններից:

Ընդունակություններ ասելով հասկանում ենք անչի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների ամբողջությունը, որն այլ հավասար պայմաններում ապահովում է որևէ գործունեության հարաբերականորեն արագ և անբերի կապարում ու երևան է բերում այդ գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների փորձապեղման շարժընթացի տարբերություններ:

Ընդունակություններն ի հայտ են գալիս գիտելիքների ձեռքբերման գործընթացում և հմտությունների մշակման, կարողությունների ձևավորման ժամանակ, սակայն, ինչպես նշվեց վերևում, դրանք չեն նույնանում այդ բազադրիչներից որևէ մեկին: Ընդունակությունները ձևավորվում և ի հայտ են գալիս գործունեության մեջ: Յուրաքանչյուր մարդ ցուցաբերում է համապատասխան ընդունակություններ գործունեության որևէ տեսակի մեջ: Սակայն միշտ չէ, որ ծագած ընդունակությունները կարող են դառնալ արդյունավետ գործունեության գրավական, քանի որ ընդունակությունը լույս հնարավորություն է: Օրինակ՝ երեխայի մեջ առկա երաժշտական լսողությունը դեռևս չի նշանակում, որ նա տաղանդավոր երաժիշտ կդառնա: Այստեղ անհրաժեշտ են նաև համապատասխան ուսուցում, արհեստավարժ ուսուցիչ, քարենպաստ պայմաններ:

Մարդու ընդունակությունները բաժանվում են երկու խմբի.

1. **Ընդհանուր** է կոչվում մտավոր հատկությունների այն համակարգը, որն ապահովում է մարդու համեմատաբար հեշտ և արդյունավետ գործունեությունը, օրինակ՝ անձի մեծ աշխատունակությունը և աշխատասիրությունը, մտքի բարձր որակները, լավ հիշողությունը, զարգացած երևակայությունը, նուրբ դիտողականությունը:

2. **Հատուկ ընդունակությունները** անձի ձևավորված և կայուն որակների այն համակարգն են, որը նրան օգնում է հասնելու բարձր արդյունավետության գործունեության մի որևէ բնագավառում, օրինակ՝ գրականության, երաժշտության, քեմական արվեստի և այլ ոլորտներում:

Բացի ընդունակությունների այս երկու տեսակից, կա նաև երրորդ խումբը՝ **պրակտիկ գործունեության նկատմամբ եղած ընդունակությունները**: Մրան են վերաբերում կազմակերպչական, մանկավարժական ընդունակությունները:

Երբեմն էլ որոշակի անձանց որակում են **օժտված**: Օժտվածությունը հմարափոքություն է տալիս մարդուն առանձնահատուկ հաջողությամբ իրականացնելու տարբեր տեսակի գործունեություններ:

Ընդունակությունների դրսևորմանը և զարգացմանը նպաստում են անձի գաղափարական ուղղվածությունը, համոզմունքները, դաստիարակվածությունը, կամքը, հրապուրանքը, հետաքրքրասիրությունը դեպի գործունեությունը և, անհնակարևորը, մարդու մեծ աշխատասիրությունն ու աշխատունակությունը:

Դուք գրքերից, դասագրքերից ծանոթ եք, քե նաևաչված և անվանի մարդիկ ինչպիսի աշխատասիրության արդյունքում են հասել խոշոր նվաճումների: Եվ դուք էլ,

որպեսզի իրականացնեք ձեր բարեկամ և բացահայտ երազանքները, պետք է ցուցաբերեք մեծ աշխատասիրություն և փոփոխ կամք: Հիշե՛ք, երբեմն աշխատասիրությունը կարող է փոփոխափուցել որոշ ընդունակությունների բացակայությունը:

Ընդունակությունների զարգացման ամենաբարձր մակարդակներն անվանում են *տաղանդ* և *հանճար*: Տաղանդավոր և հանճարեղ մարդիկ պրակտիկալում, արվեստում, գիտության մեջ հասնում են մեծ և նոր արդյունքների, որոնք հասարակական լուրջ նշանակություն ունեն: Հանճարեղ մարդը ստեղծում է այն ինքնատիպը, որը գիտական հետազոտությունների, արտադրության, արվեստի, գրականության բնագավառներում նոր ուղի է բացում: Տաղանդավոր մարդը նույնպես ստեղծագործում է, ներդնում իր սեփականը, բայց արդեն սահմանված զաղափարների, ուղղությունների, հետազոտությունների միջոցների սահմաններում: Տաղանդավորության և հանճարեղության ձևավորման ամենաբարենպաստ պայմանն անձի բազմակողմանի զարգացումն է: Օրինակ՝ Լեոնարդո դա Վինչին, Գյոթեն, Լոմոնոսովը, Ա. Խաչատրյանը, Վ. Համբարձումյանը, Մ. Սարյանը բազմակողմանի զարգացածության և ստեղծագործական գործունեության մեջ հանճարեղության օրինակներ են: Նպատակալացություն, վճռականություն, քաջություն և ինքնատիրապետում, կայունություն և ինքնուրույնություն ահա կամքի այն որակները, որոնցով օժտված են բոլոր նշանավոր գործիչները մեծատաղանդ մարդիկ:

Քաղաքակրթությունն իր հիմնգիազարանյա պայմանության ընթացքում րվել է մտքավորապես 400 հանճար:

ՀՈՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Ուսուցչի օգնությամբ լրացրե՛ք բնավորության դրական և բացասական գծերի առյուտակը՝ համապատասխան վանդակներում նշումներ կատարելով: Ուշադիր դիտելով առյուտակը՝ խորհե՛ք Ձեր բնավորության գծերի մասին. որո՞նք են նպաստում Ձեր հաջողությանը, իսկ որոնք՝ խոչընդոտում: Ուսուցչի հետ քննարկե՛ք բնավորության բացասական գծերի վերափոխման ուղիները:
2. Ի՞նչ է ընդունակությունը, և ինչպիսի՞ դեր ունի այն մարդու կյանքում:
3. Ընդունակությունների դրսևորման և զարգացման վրա ինչպիսի՞ գործոններ են ազդում:
4. Մեկնաբանե՛ք «օժտվածություն», «տաղանդ» և «հանճար» հասկացությունները:
5. Փորձե՛ք գրելի Ձեր այն ընդունակությունները կամ զուցե մեկը, որոնցով Դուք փարբերվում եք մյուսներից:

ՃԱՆԱԶԻՐ ԻՆՔԴ. ՔԵՉ

Անընդունակ մարդիկ չկան: Բոլորի մեջ էլ առկա են որոշակի ընդունակություններ, որոնք պետք է զարգացնել:

ԹԵՄԱ 8. ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 14. ԸՆՏԱՆԻՔԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ընդհանրապես բնության գլուխգործոցներից մեկն է:

Ի. Մանդրայան

Միրելի՝ բարեկամներ, դուք արդեն տասնվեց տարեկան եք, կյանքի տասնվեց հրաշալի զարուհներ եք սպրել, և դեռ բազում հրաշալի զարուհներ են չեզ սպասում: Այս ընթացքում դուք բավականին փոխվել, անել ու հասունացել եք: Փոփոխություններ են կարարվել ձեր արտաքին տեսքում ու կազմվածքում, փոխվել են նաև ձեր ներաշխարհը, հերաքրքրությունները, ցանկություններն ու պահանջմունքները: Ձեր մտքերում առավել հաճախ գրավիչ ու համակրելի էակի մասին խոհերն են իշխում, ձեր աչքերի առաջ նրա պարկերն է գծագրվում, ականջների մեջ նրա ախորժալուր չայնն է հնչում... Հիմա ձեր ներսում հույզերի ու զգացմունքների խկակալան փոթորիկ է, և դա բնական է:

Այժմ արդեն դուք առավել հաճախ եք մտածում զուգընկերոջ ընտրության, սպասու ընդհանրի ու երջանկության մասին: Հասունացող մարդու տեսանկյունից փորձում եք նաև գնահատել այն ընդհանրը, որտեղ սպրում եք, վերլուծել ձեր ճանաչողական փոփոխարարությունները միմյանց և զավակների հետ:

Ուարի պետք է ընդհանրի և անուանական կյանքի մասին ձեր գիտելիքները խորացնել և հարստացնել հենց այսօր: Դա թույլ կտա ձեզ միշտ կողմնորոշվել և խաղաղ ու երջանիկ ընդհանրական կյանքով սպրել:

ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ: Անուանությունը և ընտանիք կազմելը յուրաքանչյուր մարդու համար կենսական կարևորագույն անհրաժեշտություն են:

Անուանությունը կնոջ և տղամարդու միություն է, սոցիալական կապի հատուկ ձև: Այն ընտանիքի ձևավորման որոշակի և անհրաժեշտ փուլ է: Համաչայն ուսումնասիրությունների՝ մարդկանց անուանության են մղում սիրելու և սիրված լինելու սեռական առողջ հարաբերություններ ունենալու, հրեխաներ ունենալու, նրանց խնամելու, դաստիարակելու և, վերջապես, բարեկեցիկ ու սպասով կյանքով սպրելու ցանկությունները:

Սոցիալական գիտությունների տեսանկյունից ընտանիքը և՛ սոցիալական կառույց է, և՛ սոցիալական խումբ:

Իբրև սոցիալական կառույց այն կայուն հարաբերությունների հատուկ ձև է, որը հիմնված է արյունակցական կապերի և համատեղ կենցաղի վրա, նպատակ ունի բարելավել անհատների վերարտադրության, տնտեսական և հուզական պաշտպանվածության, հասարակական դիրքի պահպանման պահանջները: Ընտանիքում հաստատվում են անդամների իրավունքներն ու պարտականությունները, բաշխվում են դերերը և այլն:

Իբրև սոցիալական խումբ ընտանիքը միավորում է միասնական գործունեությանը ու նպատակներով կապված անհատներին, որոնք առաջնորդվում են նույն արժեքներով և նորմերով, տվյալ սոցիալական խմբին պատկանելու զգացում ունեն և տարբերում են իրենց մյուս խմբերից:

«Ընտանիք» հասկացությանը հատկանշական են հետևյալ բնութագրիչները՝ ա) արյունակցական, ազգակցական կապեր, բ) համարեղ բնակություն (վերջինս փոփոխական է):

Ընտանիքում հարաբերությունները սերյոզ են ու անմիջական: Ընտանիքի անդամները մշտապես կապի մեջ են, տեսնում են իրար, մտքեր ու կարծիքներ փոխանակում, հուզական վիճակներ են ապրում, լավ են ճանաչում, գիտեն միմյանց:

Ընտանիքն իր անդամների համար նաև խիստ կարևոր, ազդեցիկ (ռեֆերենտային) խումբ է: Մարդու համար ռեֆերենտային են այն սոցիալական խմբերը, որոնց նորմերն ու կարծիքները կարևոր են իր համար, և որոնք նա չի կարող հաշվի չառնել: Ընդամենի յուրաքանչյուր անդամ որոշումներ կայացնելիս սովորաբար հաշվի է առնում մյուսների կարծիքը, առաջնորդվում նրանց խորհուրդներով ու գնահատականով, փորձում արդարացնել իր հետ կապված՝ ընտանիքի ակնկալիքներն ու պատասխանները, որևէ արարք կատարելիս նախապես պարկերացնում է, թե ինչ կասեն ընտանիքի անդամները:

Ընտանիքի ավանդական միջուկը ամուսնական զույգն է. այդ միջուկը լրացնում են երեխաները, ազգականները և ամուսինների ծնողները: Ուշագրավ է, որ ընտանիքը միակ խումբն է, որ մեծանում է ոչ թե դրսից՝ շնորհիվ նոր անդամների ներգրավման, այլ ներսից՝ շնորհիվ ծնվող երեխաների:

Այսպիսով՝ **ընտանիքը ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված մարդկանց փոքր սոցիալական խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությանը, փոխադարձ օգնությանը և բարոյական պատասխանատվությանը:**

ԺԱՄՆԱԿԱՆ ԸՆԴՄԱՆԻՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ: Մարդկային բոլոր հին ու նոր հասարակություններում եղել են և կան ընտանիքներ: Դրանք մարդկային կեցության հիմնական շեղերն են, թեև պարունական փոփոխություններ են կրել, և այժմ էլ ընտանիքը հավանաբար իր վերջնական ձևին չի հասել: Մասնագետները ժամանակակից ընտանիքի ավելի քան քառասուն տարատեսակներ են առանջնացնում՝ պայմանավորված ազգային, մշակութային, կրոնական, մասնագիտական և շարք այլ առանջնահատկություններով:

Սովորաբար ընտանիքի տեսակները դասակարգվում են ըստ կառուցվածքի: Առավել ընդունված է տարբերակել ընտանիքի երկու հիմնական տեսակ՝ միջուկային և ընդլայնված:

Միջուկային ընտանիք: Ընտանիքի այս տեսակը կազմված է միայն հիմնական անդամներից՝ ամուսնական զույգից և նրանց զավակներից: Այստեղ գործում են առաջնային՝ սերտ ու անմիջական հարաբերություններ:

Ընդլայնված ընտանիք: Ընտանիքի այս տեսակի կազմում, քացի ամուսիններից և նրանց երեխաներից, մտնում են նաև պապը, տատը և այլ հարազատներ:

Տեղեկված ընտանիքի տարբերակ է նաև, երբ երկու միջուկային ընտանիքներ հարաբերության կամ քույրերի) միասին ապրում են նույն հարկի տակ:

Ժամանակակից ընտանիքի առաջնային ձևը և հիմքը *նահապետական ընտանիքն է*, որին բնորոշ էր հարաբերություններում տղամարդու գերիշխանությունը (դոմինանտություն): Ընտանիքի այս տեսակը ներառում է միևնույն հարկի տակ ապրող մի քանի սերունդ (հայրեր-որդիներ-քոռներ-ծոռներ): Ընտանիքի այս տեսակը որոշ փոփոխություններով այսօր էլ դեռ հանդիպում է: Հասարակության զարգացմանը զուգընթաց ավանդական նահապետական ընտանիքը փոփոխվում է, առաջ է գալիս ժամանակակից ընտանիքը, որին հատուկ են առավել հավասարակշռված ընտանեկան փոխհարաբերություններ, ընտանիքում կանանց առավել ակտիվ դերակատարումը:

«Ընկրանիք» բառը լատիներեն *familia* (անգլերենում՝ *family*, ֆրանսերենում՝ *famille*) բառից է ծագում, որը նշանակել է *տոհմ, ցեղ, ռուսերենում՝* *семья-ն ծագել է «սերմ»* բառից: Հայերենում **ընկրանիք** բառը կազմում են **ընդ**-ը և **տուն**-ը, **գրանիք**-ը, այսինքն՝ հայերեն լեզվամտավորության մեջ **ընկրանիք** են կազմում *մի քան մեջ, մի գրանիքի, մի հարկի փակ ապրող մարդիկ*:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել ընտանիքի չորս հիմնական գործառույթ.

1. *Վերարտադրողական*, երբ ընտանիքում ծնվում են նոր մարդիկ՝ ապահովելով սերնդի վերարտադրությունը և մարդկության գոյությունը:

2. *Տնտեսական*, երբ ընտանիքը՝ որպես տնտեսական միավոր, վաստակում է կենսական միջոցներ և ծախսում՝ ապահովելով իր նյութական բարեկեցությունը: Նախկինում տնտեսական գործառույթը հիմնականում ապահովում էր տղամարդը, իսկ ներկայումս այն բաշխվում է ընտանիքի տարբեր անդամների միջև:

3. *Սոցիալականացման, դաստիարակչական*, որի շնորհիվ երեխան ընկալում է յուրացնում է նախորդ սերունդների փորձը, հասարակության մեջ ընդունված վարքի նորմերն ու կանոնները: Ընտանիքն այն առաջին միջավայրն է, որտեղ աճում և զարգանում է երեխան, ուստի նաև այստեղ են այն առաջին դպրոցն ու ուսուցիչները, որտեղ և ում օգնությամբ նա սովորում է ապրել:

4. *Հաղորդակցական*, երբ ընտանիքի անդամները շփվում են միմյանց հետ, զգացմունքներ, մտքեր և տեղեկություններ են փոխանակում, փոխազդում են նպաստելով միմյանց զարգացմանը, անձնային, հոգեբանական վերափոխումներին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԵՐԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Նախորդ քննաներից դուք արդեն գիտեք, որ սոցիալական խմբերում յուրաքանչյուր անդամ իր դիրքն ու դերն ունի: Քանի որ ընտանիքը նույնպես սոցիալական խումբ է, ուստի նրա ներսում նույնպես դերերի բաշխում է կատարվում: Ընտանիքում տղամարդը կատարում է ամուսնու դեր (կնոջ հետ ունեցած հարաբերություններում) և հոր դեր՝ երեխաների հետ իր հարաբերություններում: Եթե ընտանիքի մեջ մտնում են նաև, օրինակ, տղամարդու ծնողները, ապա նրանց հետ հարաբերություններում նա հան-

դես է գալիս գավակի, որդու դերում: Հասկանալի է, որ մինևույն խմբում նույն անձի տարբեր դերերի բովանդակությունները նույնը լինել չեն կարող: Դրանք տարբեր նորմերի, պատկերացումների, դիրքերի և գործողությունների համակարգեր են:

Յուրաքանչյուր դեր կազմված է *սպասումներից* կամ *ակնկալիքներից*: Եթե որևէ կին ընտանիքի մոր դերն է կատարում, նրանից սպասում են, որ խնամի և գուրգուրի իր գավակներին, զբաղվի նրանց կրթության և դաստիարակության հարցերով, պաշտպանի հնարավոր վտանգներից, վարքի պատշաճ ձևեր սովորեցնի և այլն: Նման սպասումները ձևավորում են ընտանիքի անդամների *պարպականությունները*: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունի նաև *իրավունքներ*: Օրինակ՝ ընտանիքի մայրն իրավունք ունի պահանջելու, որ երեխաները հարգեն իրեն, կատարեն իր պահանջները, օգնեն տնային գործերում, սովորեն և պահպանեն ընտանեկան ու ազգային ավանդույթները և այլն: Դերը ճիշտ կատարելու համար պետք է ունենալ նաև հմտություններ ու գիտելիքներ:

Իր սոցիալական դերը ճիշտ և արդյունավետ է կատարում այն անձը, ով ոչ միայն գիտե իր դերի կառուցվածքը, այսինքն, թե ինչ է իրենից պահանջվում, այլ նաև հոգեբանորեն ընդունում է այդ դերը, ունի այն կատարելու ներքին դրդապատճառներ՝ ցանկություն, հակում, շահագրգռվածություն և այլն: Ի վերջո, տվյալ խմբում սեփական դերը կատարելու համար պետք է նաև ճանաչել ու ընդունել մյուս անդամների դերերը և նրանց հետ դերային հարողորակցության մեջ մտնելու ցանկություն ունենալ:

Տարբեր ազգերի, տարբեր մշակույթների մեջ կան ներընտանեկան դերերի վերաբերյալ յուրահատուկ պատկերացումներ: Սակայն կան նաև ընդհանրություններ ու նմանություններ, որոնք հանդես են գալիս ավանդական պատկերացումների ձևով: Գոյություն ունեն ավանդական պատկերացումներ հոր, մոր, ընտանիքում տղայի, աղջկա և այլ դերերի մասին:

Դուք հաճախ եք լսում. «Հայրն ընտանիքի գլուխն է», «Տղամարդը տան դրսի պատն է, իսկ կինը՝ մերսի», «Կինն ընտանիքի օջախը վառ պահողն է» և նման արտահայտություններ: Դրանք հենց ավանդական դերերի պատկերավոր ձևակերպումներ են մեր լեզվամտածողության մեջ:

♦ **Քննարկեք այս տեսակետները և ձեր մտտեցումներն ու դիրքորոշումները հայտնեք դրանց վերաբերյալ:**

Նոր դարի ու հազարամյակի սկիզբը միայն ժամանակային սահման չէ, այն նաև մարդկային քաղաքակրթության զարգացման նոր փուլ է նշանավորում: Աշխարհը փոխվում է արագընթաց և անկանխատեսելիորեն: Փոխվում են նաև շատ արժեքներ ու ավանդական պատկերացումներ, այդ թվում՝ ընտանեկան դերերի և հարաբերությունների մասին:

Ժամանակակից ընտանիքներում հայրն ավելի շատ հանդես է գալիս որպես մոր գուզընկեր երեխաների դաստիարակության գործում: Փոխվում է նաև մոր դերն ընտանիքում, կանայք սկսում են համատեղել ընտանեկան դերերն աշխատանքային դերերի հետ, ընդգրկվում են աշխատանքային գործունեության այն-

պիսի բնագավառներում, որոնք ավանդաբար տղամարդկանց մենաշնորհն են համարվել: Աստիճանաբար նա սկսում է որոշիչ ձայն ունենալ ընտանեկան հարցերի լուծման գործում:

Ամեն դեպքում, երբ ընտանիքի անդամները կամովին ընդունում և ստանձնում են ընտանեկան դերերը, լինեն դրանք ավանդական, թե ժամանակակից, ապա, ամենայն հավանականությամբ, նրանց սպասում է խաղաղ և երջանիկ ընտանեկան կյանք: Հակառակ պարագայում կարող են ծագել ընտանեկան վեճեր ու անհամաձայնություններ:

Համերաշխ ընտանիքը կարող է ինքը կարգավորել դերային հարաբերությունները, օրինակ՝ նրանք կարող են փոխադարձ համաշայնությամբ որոշակի ժամանակով փոխել դերերը կամ որևէ դեր համարել կարարել: Նման փոփոխամաշայնությունը նույնպես ընտանեկան երջանկության գրավական է:

ՆԵՐՔՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ: Ընտանեկան կյանքը մշտապես հարթ ու սահուն չի: Ամուսինների միջև հնարավոր են նաև վեճեր ու կոնֆլիկտներ, որոնք կարող են ընդգրկել ընտանեկան կյանքի ամենատարբեր ոլորտները՝ հատորակցում, սեռական կյանք, նյութական բարեկեցություն, երեխաների դաստիարակություն, ազատ ժամանակի կազմակերպում, հետաքրքրություններ, վատ սովորություններ (հատկապես մոլությունները՝ բմբաճյութերի, ալկոհոլի, քոֆեինային նկատմամբ) և այլն:

Շատ հոգեբանների կարծիքով՝ ամուսինների միջև վեճերն ու անհամաձայնությունները ծագում են նրանցից որևէ մեկի (կամ երկուսի) որոշակի պահանջմունքների անբավարարվածության հետևանքով:

Ամերիկացի հոգեբան Ու. Ֆ. Հարլին առանձնացնում է տղամարդկանց և կանանց հիմնական հիմնական պահանջմունքներ, որոնց բավարարումն ապահովում է ամուսնության կայունությունը, իսկ անբավարարվածությունը հանգեցնում է կոնֆլիկտի ընդհուպ ամուսնալուծության:

Տղամարդկանց հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում. 1) սեռական բավարարվածություն, 2) հանգստի ուղեկից, 3) հմայիչ կին, 4) փնային տրամաբանության վարում, 5) հիացմունք:

Կանանց հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում. 1) քնքշություն, 2) խոսելու, զրուցելու հնարավորություն, 3) ազնվություն և անկեղծություն, 4) ֆինանսական աջակցություն, 5) ընտանիքին նվիրվածություն:

Ընտանեկան անհամաձայնության և կոնֆլիկտների պատճառ կարող են դառնալ նաև ամուսնական դերերի տարբեր ընկալումները: Օրինակ՝ հայ իրականության մեջ, կնոջ պատկերացմամբ, ամուսինը նույնպես պետք է զբաղվի տան հոգսերով, իսկ տղամարդու պատկերացմամբ՝ ամուսինը բացառապես մտահոգված պիտի լինի ընտանիքի նյութականն ապահովելով:

Ընտանեկան անհամաձայնության պատճառ է նաև պայքարն ընտանիքում իշխանության համար: Այս դեպքում ամուսիններից յուրաքանչյուրը ձգտում է ետանել առավելության և հեղինակության, փորձում է ճնշել դիմացիին, որոշումների կայացման հարցում իր կամքը թելադրել:

Մասնագետների կարծիքով՝ ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառներն են սեռական կամ հոգեբանական անհամարեղելիությունը, նյութական խնդիրները:

Ընտանիքն արժեք է, և չպետք է բույլ տալ, որ վեճերն ու հակասությունները (որ բնական են ցանկացած սոցիալական խմբի համար) հասցնեն ընտանիքը կորստի: Ուստի այստեղ կարևորվում են փոխզիջումը և կոնֆլիկտի պատճառների ու ընթացքի վերլուծությունը, չբավարարված ցանկությունների բացահայտումը, սեփական հույզերի արտահայտումը՝ խուսափելով մեղադրելուց, ինչպես նաև դիմացիմին միմյն վերջ լսելու և ըմբռնելու, ապրումակցելու կարողությունը:

Ընտանեկան կոնֆլիկտից հետո մեծ նշանակություն ունի փոխադարձ ներումը, որը դիմացիմի նկատմամբ սիրո և անշահախնդրության դրսևորում է: Ներելիս մարդը հրաժարվում է դիմացիմի նկատմամբ բացասական մտքերից, հույզերից և վարքային դրսևորումներից՝ խթանելով իր մեջ դրական հույզերն ու վարքը: Այնպիսի բացասական հույզեր, ինչպիսիք են ցասումը, վիրավորանքը, արհամարհանքը, արեղությունն ու քահիժը, նահանջում են, մարդը դադարում է իրեն վիրավորողին դատապարտելուց և հրաժարվում է վերջինիս նկատմամբ հաշիվ-հարդար փեսնելու մտքից, վրեժի դիմելուց:

Ուստի ներումը ներքին անձնային ազատագրում է: Դա միևնույն ժամանակ պայքար է դիմացիմին ազատագրելու համար մեղքի և մեղավորության զգացումից:

Ներման վերաբերյալ բազում հանճարեղ ու յուրօրինակ մտքերի, ասույթների կարող էք հանդիպել բոլոր ժամանակների ակաճավոր մտածողների սրելոծագործություններում: Առօրյա կյանքում ևս մարդիկ հաճախ են անդրադառնում ներման երևույթին, փարբեր մտքեր ու կարծիքներ արտահայտում. «Ներումը բույության նշան է», «Իմ պատվից ցածր է ներողություն խնդրելը», «Ինչ ներելով կարծում է՝ ինչ լավություն է անում», «Ամեն անգամ ներելով մարդուն հնարավորություն չենք փայլիս, որ նա զգա իր սխալները», «Բավական է մարդուն մեկ անգամ ներել, և նա երես է առնում» և այլն:

◆ Քննարկեք այս մտքերը և ձեր մտածելամեթոդներն ու դիրքորոշումները հայտնեք դրանց վերաբերյալ:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԿՈՆԶԵՐՎԱՏՐՆԵՐ

1. Ժամանակակից աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում, այսօր ընդհանրապես հիմնականում միջուկային են: Ինչպիսի՞ առավելություններ և սահմանափակումներ ունի ընդհանրի այս փեսակը:
2. Քննարկեք դերային հարաբերությունները ժամանակակից ընդհանրներում:
3. Քննարկեք ներման երևույթն ընդհանրական փոխհարաբերություններում՝ օգտագործելով այս ոլորտի վերաբերյալ ձեր կենսափորձն ու արդեն չեք բերած գիտելիքները:

ԹԵՄԱ 9. ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔՈՒՄ

ԳԱՄ 15. ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒՐՅՈՒՆ

Կոնֆլիկտը մարդուն հնարավորություն է փայլա փայտապելու, մտածելու, և անշի ինքնագնահատականը մեծանում է, երբ կարողանում է օբյեկտիվ ձևով այն ինքնուրույն լուծել:

Կոռնելիոս

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: *Չեզանից յուրաքանչյուրն իր կյանքում բազմաթիվ անգամ բախվել է կոնֆլիկտների հետ, և յուրաքանչյուրիդ էլ հետաքրքրել է, թե ինչպես կարելի է շրջանցել դրանք, իսկ եթե կոնֆլիկտն անխուսափելի է, ապա ինչպես այն լուծել: Հարկապես այժմ, երբ կանգնած եք «մեծ կյանքի» շեմին, ներանջնային կոնֆլիկտները միշտ էլ անհանգստացնում են ձեզ: Որպեսզի կոնֆլիկտների պարմառով շահանգստաբար և չտրադնապեք, ծանոթացե՛ք կոնֆլիկտների հոգեբանական հիմունքներին:*

Կոնֆլիկտների ուսումնասիրությանը զբաղվում է կոնֆլիկտոլոգիա գիտությունը: Կոնֆլիկտները բարդ և բազմաձև դրսևորումներ ունեցող սոցիալ-հոգեբանական երևույթներ են:

Կոնֆլիկտը հակադարձ միտումների, ձգտումների, դրդապատճառների բախում է, որի հետևանքով անձն ապրում է խնդրահարույց իրավիճակ: *Կոնֆլիկտի կողմնակիցներ* են համարվում այն սուբյեկտները, ովքեր մտնում են փոխհարաբերության մեջ կամ բացահայտ, երբեմն էլ քաքուն հովանավորում են կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերին: *Կոնֆլիկտի առարկան* այն է, ինչի պատճառով կոնֆլիկտն առաջացել է: *Կոնֆլիկտի դրդապարճառներ* են դիտվում ներքին այն ուժերը, որոնք անձանց դրդում են սոցիալական փոխհարաբերության, կոնֆլիկտայնության: Այդ դրդապատճառները հանդես են գալիս պահանջմունքների, հետաքրքրությունների, նպատակների, իդեալների և համոզմունքների տեսքով: *Կոնֆլիկտող կողմերի փեսակետներ* են հանդիսանում այն բաները, որոնց մասին կողմերը հայտնում են իրար բախման կամ բանակցությունների ընթացքում: *Կոնֆլիկտայնությունն* արտահայտվում է անձի՝ կոնֆլիկտային վարք հանդես բերելու, այլ մարդկանց հետ հակասությունների մեջ մտնելու անձի ներքին պատրաստականության մեջ: Երբեմն անձն ինքն է դառնում շրջապատող մարդկանց հետ կոնֆլիկտ հրահրողը, երբեմն նա անապասելիորեն և

նույնիսկ հակառակ իր ցանկության հայտնվում է կոնֆլիկտային իրադրության մեջ: Այնուամենայնիվ, այստեղ կարևորվում է կոնֆլիկտի հոգեբանական կողմը՝ կապված կոնֆլիկտի մասնակից անձանց անձնային առանձնահատկությունների, նրանց միջև փոխհարաբերությունների, հուզական հակազդեցությունների հետ: Անձնավորության կոնֆլիկտայնությունը հոգեբանական (խառնվածք, հավակնությունների մակարդակ, ագրեսիվության մակարդակ, հուզական վիճակ և այլն), սոցիալ-հոգեբանական (սոցիալական դիրքորոշումներ և արժեքներ) և սոցիալական գործոնների (կյանքի և գործունեության պայմաններ, մշակույթի ընդհանուր մակարդակ, պահանջմունքների բավարարման հնարավորություններ) բարդ փոխներգործության արդյունք է: Այն անձնավորությունը, որն աչքի է ընկնում բարձր կոնֆլիկտայնությամբ, միշտ պատրաստ է ընդհարվելու շրջապատող մարդկանց հետ, ինչն էլ հանցագործություն ծնող լուրջ գործոն կարող է հանդիսանալ:

Կոնֆլիկտների ծագման մեջ կարևոր դեր ունեն, այսպես կոչված, կոնֆլիկտաժին գործոնները, այսինքն՝ խոսքը, գործունեությունը (անգործությունը), որոնք հանգեցնում են կոնֆլիկտի ծագմանը և զարգացմանը: Հատկապես վտանգավոր կոնֆլիկտաժին գործոն է խոսքն այն պարզ պատճառով, որ մենք առավել զգայուն ենք ուրիշի, քան մեր խոսքի նկատմամբ: Երբեմն այդ վարքագծով անձը պաշտպանում է իրեն: Առանձնացնում են կոնֆլիկտաժին գործոնների երեք տեսակ. առավելության հասնելու ձգտում, ագրեսիվության դրսևորում, էգոիզմի դրսևորում: Որպեսզի խուսափեք շփման գործընթացում կոնֆլիկտաժին գործոններից, անհրաժեշտ է հասկանալ, որ ցանկացած անզգույշ և ոչ տեղին խոսք կարող է հանգեցնել կոնֆլիկտի, դիմացինի նկատմամբ դրսևորել ապրումակցում, պատկերացնել, թե դիմացինի հոգեկանում քո խոսքերն ու արարքները ինչ մեկնաբանում կստանան:

◆ **Մի առիթով Ֆրոյդն ասել է, որ այն մարդը, ով տվել է առաջին հայտնաբերը, դրել է քաղաքակրթության հիմքը: Ի՞նչ նկատի ունի Ֆրոյդը:**

Տարբերում են կոնֆլիկտի երկու տեսակ. *ներքին*, որն առաջ է գալիս նույն անձի հոգեկանում, նրա երկու կամ մի քանի դրդապատճառների միջև, որոնցից նա պետք է ընտրի միայն մեկը, և *արտաքին*, որը վերաբերում է երկու և ավելի տարբեր անձանց (անհատի և խմբի միջև, միջխմբային և միջպետական) ցանկությունների կամ նպատակների բախմանը՝ դրանց անհամատեղելիության պատճառով: Այն կոնֆլիկտները, որոնք նպաստում են հիմնավորված լուծումներ գտնելուն և փոխհարաբերությունների նորմալ զարգացմանը, կոչվում են *կառուցողական*, իսկ որոնք խոչընդոտում են այդ գործընթացին՝ *ապակառուցողական*:

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԿԱՆՆՈՒՄՆ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ: Գիտնականները պարզել են, որ ծագած կոնֆլիկտները կարելի է ղեկավարել, ինչի համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1. *Կոնֆլիկտի կանխարեսում:* Օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների, մարդ-

կանց փոխգործակցության, ինչպես նաև անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրում:

2. *Կոնֆլիկտի կանխարգելում:* Սա սուրբեկտի կառավարման գործունեության տեսակ է, որն ուղղված է կոնֆլիկտի ծագմանը խոչընդոտելուն: Այն իրականացվում է կանխատեսման հիման վրա: Այստեղ գործունեությունն ուղղվում է կոնֆլիկտոգենի չեզոքացմանը:

3. *Կոնֆլիկտի կարգավորում:* Սա սուրբեկտի այնպիսի գործունեություն է, որն ուղղված է կոնֆլիկտի թուլացմանը, սահմանափակմանը, մարմանը:

4. *Կոնֆլիկտի լուծում:* Սա սուրբեկտի այնպիսի գործունեություն է, որն ուղղված է կոնֆլիկտի ավարտին:

Պարզվել է, որ կոնֆլիկտային իրադրության մեջ մարդը դրսևորում է վարքի երեք մոդել.

Կառուցողական, երբ անձը ձգտում է կոնֆլիկտը հարթել, համագործակցել, նպատակ ունի փնտրելու ընդունելի լուծումներ, աչքի է ընկնում զսպվածությամբ, դիմացինի նկատմամբ բարյացակամությամբ, անկեղծությամբ:

Ապակառուցողական, երբ անձը մշտապես ձգտում է կոնֆլիկտը սրել և չափազանցվել, մրցակցին բացասաբար է վերաբերվում, ցուցաբերում է կասկածամտություն և անվստահություն նրա նկատմամբ, խախտում է շփման նորմերը:

Կոնֆորմիստական, երբ անձը մշտապես պասիվ դիրքում է գտնվում, հակված է զիջման, շատ արագ համոզվում է հակադիր կողմի հետ, խուսափում է սուր հարցերից:

ՄԱՐԳԿԿՅԻՆ ՓՈՆՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ:

Կոնֆլիկտների դեպքում նկատվում են մարդկային փոխհարաբերության հետևյալ ձևերը.

1. *Չիջողականության* դեպքում անձը փորձում է խուսափել կոնֆլիկտից: Այս դեպքում խուսափման պատճառը այլ է, այսինքն՝ անձի ուղղվածությունը սեփական հետաքրքրությունների նկատմամբ ցածր է, իսկ մրցակցինի՝ բարձր: Այսինքն՝ անձը, ընտրելով չիջողականության ռազմավարությունը, զոհաբերում է սեփական հետաքրքրությունները՝ հոգուտ մրցակցի:

2. *Հանդուրժողականության* դեպքում մարդը կոնֆլիկտային իրավիճակում դրսևորում է համբերատարություն, խուսափում է ագրեսիայի վտանգավոր ձևերին դիմելու անհրաժեշտությունից: Այն պայմանավորված է անձի խառնվածքով, պահանջմունքների բավարարվածության մակարդակով, բնավորությամբ և այլն: Հանդուրժողականությունը նաև ուրիշների տեսակետների, համոզմունքների նկատմամբ մարդու հարգալից վերաբերմունքն է:

3. *Կոնֆորմիզմը* հոգեբանական այն երևույթն է, երբ կոնֆլիկտի առկայության դեպքում անձը գիտակցորեն կամ ենթագիտակցորեն ձգտում է ընդունել խմբի տեսակետը, հարմարվում է ուրիշների կարծիքին:

Բացի կոնֆլիկտների մեխանիզմների բացահայտումից, հոգեբանությունը կոնֆլիկտն ուսումնասիրում է նաև մարդկային գործունեության տարբեր բնա-

գավառներում և հարաբերություններում՝ աշխատանքային, գիտահետազոտական կոլեկտիվներում, սպորտում, մանկավարժական գործունեության մեջ, ամուսնական հարաբերություններում և այլ ոլորտներում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՊՈՉԱԿՐԱՆՔՆԵՐ

1. Դուք արդեն գիրեք, քե ինչ բան է կոնֆլիկտը: Մտածե՛ք, քե ինչ կանոններ են անհրաժեշտ մարդկանց մեջ առանց սուր կոնֆլիկտների սպրեյու համար:
2. Դուք չե՞ր անորոշա կյանքում հավանաբար զգացել եք կոնֆլիկտով սպրեյու դժվարությունները: Տեսականորեն որոշե՛ք՝ ե՞րբ չե՞ն լինում կոնֆլիկտներ:
3. Հայրնի են մի շարք կոնֆլիկտածին գործոններ, որոնք վերաբերվում են ա) առաջնայնությանը, բ) ազդեցիկությանը, գ) էզոիզմի դրսևորումներին: Ի՞նչ քայլեր կարելի է ձեռնարկել այս դրսևորումները մասամբ կամ լիովին կանխելու համար:
4. Կան մարդու կոնֆլիկտայնությունը որոշելու շարք եղանակներ: Պարասիսանեք ուսուցչի առաջադրած քնարի հարցերին և նրա օգնությամբ որոշե՛ք՝ կոնֆլիկտային՞ն եք, քե՞ ոչ:
5. Գոյություն ունի կարծիք, որ պարեհրագմները հիմնասխնդիրների լուծման լավագույն միջոցն են: Ինչպիսի՞ կողմ և դեմ փաստարկերի կարող եք հայրնել: Բանավիճե՛ք՝ դրսևորելով հանդուրժողականություն:



Գ. Խանջյան «Վարդանանք»



Հայաստանի և Ադրբեջանի նախագահներ Մ. Սարգսյանը և Ի. Ալիևը արցախյան կոնֆլիկտի խաղաղ լուծման ուղիների որոնման նամասպարհին

ՃԱՆԱԶԻՐ ԻՆՔԴՊՏԵՉ

Ինչոր մարդիկ էլ կարող են օրյեկտիվ չելով լուծել կյանքում հանդիպող բարգարիվ բարդ կոնֆլիկտներ, սակայն դրա համար անհրաժեշտ է ունենալ հիմնադարս գիրեկիրներ և կարողություններ:

ԹԵՄԱ 10. ՀՈԳԵԿԱՆԻ ԽԱԹԱՐՈՒՄՆԵՐ: ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԵՐԵՒԱՆՆԵՐ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 16. ՀՈԳԵԿԱՆԻ ԽԱԹԱՐՈՒՄՆԵՐԻՆ ՈՒ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԱՏՃԱՌՆԵՐԸ

ՄԵԶԻ ՀՈԳԵՆՅԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱԹԱՐՈՒՄՆԵՐ: Պատրանի՝ քարեկամներ, ավարտիկն է մուրեկնում մեր դասընթացը, որի ընթացքում դուք երկար ճանապարհ անցաք այն զարմանահրաշ աշխարհում, որ կոչվում է «մարդու ներաշխարհ», և հեկաքրքիր հայտնագործություններ արեցիք: Համոզված եմ, որ դրանք պակաս կարևոր ու հեկաքրքիր չէին, քան հնագույն ճանապարհորդների կողմից արվածները:

Ձեզ արդեն ծանոթ են մարդու ներաշխարհում ընթացող հոգեկան երևույթները, մարդու մտածելակերպի և վարքագծի մեջ, ինչպես նաև այլ մարդկանց հետ ունեցած հարաբերություններում այդ երևույթների դրսևորման օրենքներն ու օրինակափոխությունները: Մի խոսքով՝ մարդու հոգեկան աշխարհի և փոխհարաբերությունների մասին դուք գիրեք գրեթե այն ամենը, ինչը տեղավորվում է **նորմայի** սահմաններում, այսինքն՝ ընդունելի է հասարակության, շրջապատի կողմից:

Մեզանից յուրաքանչյուրի վարքն ամեն օր գնահատվում և կարգավորվում է ամենատարբեր սոցիալական նորմերի՝ կանոնների, ավանդույթների, սովորույթների միջոցով: Մարդու համար նորմալ վարք է համարվում այն, երբ նա կարողանում է հարմարվել իրեն շրջապատող հասարակության կանոններին, այսինքն՝ նորմալ վարքի ցուցանիշը անձի սոցիալական հարմարման (ադապտացիայի) մակարդակն է: Այդ մակարդակը բնութագրվում է նրանով, թե անհատի արժեքները, նրա առանձնահատկությունները որքանով են համապատասխանում հասարակության պահանջներին և օրենքներին: Իհարկե, մարդուն ներկայացվող ժամանակակից պահանջները չեն սահմանափակվում միայն սոցիալական նորմերի կատարումով: Այն ենթադրում է նաև անձի ինքնաճանաչում, ինքնաիրացում, ինքնակատարելագործում, ինչպես նաև հոգեախտաբանական, տարիքային, սեռադերային և այլ չափանիշներ:

Մակայն մարդու հոգեկանն ունենում է նաև այնպիսի դրսևորումներ, որոնք դուրս գալով համընդհանուր ընդունված օրենքների, նորմայի շրջանակներից՝ ձեռք են բերում հիվանդագին, ախտաբանական բնույթ՝: Այս դեպքում խոսքն ար-

1 Ախտաբանությունը (իուճարեն «պաթոլոգիա» pathos – տառապանք և logos – ուսմունք) գիտություն է, որն ուսումնասիրում է օրգանիզմի հիվանդագին գործընթացներն ու վիճակները:

դեն հոգեկանի *խաթարումների* մասին է: Հոգեկանի խաթարումները, նորմայից շեղումները կարելի է դիտարկել երկու տեսանկյունից.

● *Հոգեկան առողջության նորմայից շեղվող վարք*. հոգեկան գործունեության շեղումներ, որոնք պայմանավորված են ուղեղի հիվանդություններով: Մրանք կոչվում են *հոգեհնյարդային խաթարումներ*: Հոգեբանության մեջ դրանցով զբաղվում է հատուկ բնագավառ՝ ախտաբանական հոգեբանությունը: Այդ շեղումները գտնվում են նաև բժշկական գիտության ուշադրության կենտրոնում:

● *Սոցիալական նորմ կամ մշակութային արժեք խախտող վարք*. հոգեկան գործունեության շեղումներ, որոնք կապված են անձի սոցիալական վարքագծի հետ: Դրանք կոչվում են *անձի սոցիալական խաթարումներ*: Հոգեբանության մեջ դրանցով զբաղվում է առավելապես սոցիալական հոգեբանությունը:

Սոցիալական խաթարումների դեպքում մարդու վարքը տարբերվում է մեծամասնության վարքագծից և հակառակ է գնում տվյալ հասարակության մեջ ընդունված արժեքներին, մոտեցումներին ու սովորույթներին: Այս դեպքում խզվում են փոխհարաբերությունները կոնկրետ անձի և հասարակության միջև:

Սոցիալական խաթարումները, սոցիալական վարքագծի շեղումները դրսևորվում են արարքների կամ հանցագործությունների ձևով: Եթե արարքներն աննշան են, անվանում ենք *օրինախախտ վարք*, իսկ եթե դրանք լուրջ գործողություններ են, և անձը դրա համար ենթարկվում է քրեական պատասխանատվության, անվանում ենք *հանցագործություն*¹: Ընդ որում՝ սոցիալական վարքի շեղումները վտանգավոր են ինչպես ողջ հասարակության, այնպես էլ հենց իր՝ անձի համար: Որքան մեծ է այդ վտանգը, այնքան շեղումը խոր է: Հատկանշական է նաև, որ անձի սոցիալական խաթարումները խանգարում են ոչ միայն անձի կողմից իր հասարակության նորմերի և արժեքների յուրացմանը և դրանց իրագործմանը, այլև մարդու ինքնագարգացմանն ու ինքնադրսևորմանը:

Չանգվածային լրավումիչոցներից պարբերաբար տեղեկանում եք վարքի բազմաթիվ խաթարումների դեպքերի (խարդախություն, սպանություն, գողություն...) որոնց քիվն այսօր, ցավոք, չի նվազում:

♦ **Չեզ ծանոթ կոնկրետ օրինակի վրա քննարկեք, թե այն ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ հասարակության և հենց տվյալ անձի համար:**

Հարկ է սակայն նշել, որ վարքի *նորմա* և *շեղում* հասկացությունները միանշանակ սահմանելը, դրանք հստակ սահմանագատելը խիստ բարդ է, քանի որ դա պայմանավորված է կոնկրետ պատմական ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ գործող գնահատման չափանիշներով:

Օրինակ՝ այն, ինչ հասարակության մեջ ընդունելի է հիմա, մի քանի տասնամյակ կամ մի քանի դար առաջ, կամ այլ ժողովուրդների մոտ կարող էր անընդունելի, աննորմալ, անբարո կամ անօրինական համարվել, և հակառակը, այն, ինչ

¹ Մասնագիտական շրջանակներում գոյություն ունեն սոցիալական վարքի խաթարումների տարբեր ձևակերպումներ, բնութագրումներ՝ ռեիինկվենտ, դևիանտ, շեղվող, ասոցիալ, անոմալ և այլն:

անընդունելի է հիմա, անցյալում կարող էր ճիշտ, օրինական ու ընդունելի համարվել:

Նման օրինակներ շատ կարող եք գտնել մարդկանց իրավունքների, մասնավորապես կանանց և երեխաների իրավունքների, սեռերի փոխհարաբերությունների, սովորույթների ու ավանդույթների, հասարակական «կարելի»-ների և «չի կարելի»-ների փոփոխությունների մեջ:

♦ **Կար կարող եք ինքներդ էլ նման բազմաթիվ օրինակներ գտնել, հարցնել մեծերին, ապա քննարկել դրանք դասարանում:**

ԱՆՃԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱԹԱՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՐՆԵՐԸ: Երբ մարդիկ դադարողություններ են անում ուրիշի վարքի խաթարումների և պայրճառների մասին, որպես կանոն, գերազնահապում են նրա անհնային գծերի ու ներքին դրդապայրճառների նշանակությունը և, ընդհակառակը, քերազնահապում են արտաքին իրադրական գործոնների դերը: Իսկ ահա, երբ խոսքն իրենց, իրենց անցանկալի վարքին ու արարքներին է վերաբերում, մարդիկ առավել համախ գերազնահապում են արտաքին՝ իրենցից դուրս եղած հանգամանքները և քերազնահապում սեփական ներանհնային գործոնը:

♦ **Մտածեք այս մասին:**

Մինչդեռ վարքագծի շեղումը ոչ թե միայն անձնավորության ներքին դրդապատճառների կամ միայն միջավայրի արդյունք է, այլ դրանց փոխներգործության: Արտաքին միջավայրի ցանկացած ներգործություն կարող է հանգեցնել կոնկրետ գործողության միայն այն դեպքում, երբ այդ ներգործությունը մարդու ներսում համապատասխան հող է գտնում, ընդունվում և գնահատվում նրա կողմից: Հետևաբար, անձի սոցիալական խաթարումներն ունեն ինչպես *օբյեկտիվ պայրճառներ*, որոնք պայմանավորված են արտաքին աշխարհով ու ներգործություններով (անբարենպաստ, անլիարժեք, անապահով ընտանիքներ, ընտանեկան կոնֆլիկտներ, մանկավարժական բարձիթողություն և սխալ դաստիարակություն, սոցիալական ծանր պայմաններ կամ շրջապատում գոյություն ունեցող բացասական երևույթներ), այնպես էլ *սուբյեկտիվ պայրճառներ*, որոնք պայմանավորված են կոնկրետ անձով, նրա հոգեկան գործունեությամբ և ուղղվածությամբ (իրավական և բարոյական գիտակցության թերություններ, մարդկային բացասական որակներ, սովորություններ և հետաքրքրություններ, հուզազգացմունքային ոլորտ և այլն):

Վարքի խաթարումներն ունեն չեւավորման և դրսևորման որոշակի շարժընթաց, այսինքն՝ դրանք միանգամից չէ, որ դրսևորվում են: Դրանց ակունքները հաճախ սկսվում են մարդու մանկության շրջանում, որտեղ սկզբում արտահայտվում են «մանկական աննշան զանցանքների ու արարքների» փառով (կամակորոտյուն, ժխտողականություն, բունյր-բողոք, արժեգրկում, վարքի ազդեխիվ դրսևորումներ և այլն) և աստիճանաբար կուրակվելով, ժամանակին չկանխվելով, մեծահասակների կողմից անլրեսվելով՝ կարող են հանգեցնել «փխուր» հետևանքների:

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԵՐԵՒԱՆՆԵՐ ԵՎ ՆԵՐԱՌԱՎԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դուք հավանաբար լսել եք «հայրուկ կարիքներով», «կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող», «ֆիզիկական և հոգեկան զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող» երեխաների, մարդկանց մասին: Ովքե՞ր են նրանք, ինչո՞ւ են դրսևորվում նրանց հայրուկ կարիքները, ինչո՞վ են նրանք հայրուկ, և ի՞նչ հարցեր են ծագում այս կապակցությամբ:

Ի՞նչ նկատի ունենք, երբ ասում ենք «հատուկ»:

«Հատուկ կարիքներով» են այն երեխաները, որոնց զարգացումը «շեղվում է», այսպես կոչված, միջին նորմայից, որն էլ ժամանակի ընթացքում իր ազդեցությունն է թողնում նրանց ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների ու որակների ձևավորման վրա: Չարգացման շեղումները կարող են սկսվել երեխայի ձևավորման և զարգացման ցանկացած փուլում՝ սկսած ամենավաղ՝ սաղմնային շրջանից: Դրանք կարող են լինել տեսանելի կամ անտեսանելի:

Օրինակ՝ սաղմնային կամ շարժվող փարիքում ինչ-որ պարմատով (ասե՛նք՝ մոր կամ երեխայի փարած վիրուսային հիվանդության) կարող է վնասվել սաղմի կամ երեխայի լսողությունը, արդյունքում զարգացման ընթացքում լսողության խանգարումների հետևանքով երեխան ունենում է խոսքի զարգացման դժվարություններ և առանձնահատկություններ: Դրանք արտահայտվում են խոսքի ընկալման խանգարումներով, խոսքային հաղորդակցման ունակություններին չտիրապետելու կամ վաղ տարիքից արտահայտվելու և այլ երևույթներով: Բնականաբար, այս երեխաները հայրուկ ուշադրության, կրթության հայրուկ պայմանների կարիք ունեն:

Ինչպես նկատեցիք, այսօր «հատուկ կարիքներով» են համարվում հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկություններ ունեցող այն անձինք, ովքեր շփվելու, տեղաշարժվելու, սովորելու, սոցիալական միջավայրում հարմարվելու և ինքնուրույն ապրելու համար հատուկ պայմանների կարիք են զգում: Այդպիսիք կարող են լինել տեսողության, լսողության, խոսքի խանգարումներ ունեցող, հենաշարժական համակարգի խախտումներով, մտավոր հետամնաց, հոգեկան զարգացման հապաղումով, հուզականային ոլորտի խանգարումներով երեխաներն ու մարդիկ:

Երեխաները, որոնք առանձնահատուկ, ընդգծված ընդունակություններ ունեն և դրանցով փարբերվում են հասակակիցներից, հաճախ սոցիալական փարբեր խնդիրներ են ունենում ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ: Դրանք արտահայտվում են նրանց հետաքրքրությունների, գործունեության շարժառիթների և շեղերի առանձնահատկություններում, շիման որակների մեջ, կրթադաստիարակչական և էլի շարժառիթներում: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ նման երեխաները նույնպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեն:

Պետք է նշել, որ հատուկ են ինչպես այս երեխաների կարիքները, ապրելու պայմանները, այնպես էլ նրանց խնամելու, կրթելու և դաստիարակելու պահանջները:

Բայց, անկախ մարդկային կարիքների տարբերությունից, առանձնահատկություններից, մենք բոլորս մեզն ենք իրար, քանի որ մարդ ենք, նույն հասարակության անդամներ, ապրում ենք նույն հանրության մեջ և չենք կարող ապրել առանց միմյանց հետ շփվելու և հաղորդակցվելու: Ուստի, բնականաբար, ծագում է հասարակության մեջ հատուկ կարիքներով երեխաների, մարդկանց ներգրավման (ինտեգրացման¹), սոցիալականացման խնդիրը:

Ի՞նչ կարող է անել հասարակությունը.

● Տեղաշարժվելու սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդկանց համար ստեղծել հատուկ պայմաններ քաղաքում, փողոցում, դպրոցում, տարբեր հաստատություններում, օրինակ՝ թեքահարթակներ փողոցների անցումներում, հատուկ մուտքեր (առանց աստիճանների) դպրոցներում, այլ հաստատություններում, վերելակներ մետրոներում, հատուկ ինքնաշարժ սայլակներ և այլն:

● Տեսողության խանգարումներ ունեցող մարդկանց համար՝ ձայնագրված կամ Բրայլի մեթոդով տպագրված գրքեր, գրականություն, որոնք վաճառվեն գրախանութներում, կամ տեքստը ձայնով կարդացող համակարգչային ծրագրեր:

Լուի Բրայլը (1809-1852) ֆրանսիացի մանկավարժ է: Նա երիք տարեկանում կորցրել է տեսողությունը: 1829 թվականին կույրերի համար սրեղծել է ուռուցիկ-կեփավոր տպատառ, որը մինչև այսօր օգտագործվում է ամբողջ աշխարհում:

● Լսողության խանգարումներ ունեցող մարդկանց համար «սուրդոթարգմանություն»² ունեցող ֆիլմեր, մուլտֆիլմեր, լրատվական թողարկումներ և այլն:

Հատուկ կարիքներ ունեցող երեխաների, մարդկանց կրթությունը կազմակերպում են առանձին մասնագիտացված ուսումնական հաստատություններում՝ հատուկ և ներառական ուսուցում իրականացնող դպրոցներում, մանկապարտեզներում, երբեմն էլ հատուկ տիպի մասնագիտացված մանկատներում: Սա, ինչ խոսք, հնարավորություն է տալիս կենտրոնացված մասնագիտական օգնություն ցույց տալ մեզն են երեխաներին, մարդկանց, բայց արդյունքում չի լուծվում նրանց սոցիալականացման, հասարակության մեջ ինտեգրվելու խնդիրը: Ինչո՞ւ էր սա վատ:

Մի կողմից՝ մեզն են մարդիկ մեկուսանում էին հասարակությունից, ինչը խորացնում էր նրանց հատուկ կարիքը, բացի այդ, նրանց համար հետագայում դժվար էր լինում շփվել, հաղորդակցվել և համագործակցել հասարակության մյուս անդամների հետ, բնականաբար, դժվարանում էր նրանց սոցիալականացումը, որպես հասարակության անդամ նրանց գործունեության արդյունավետությունը:

Մյուս կողմից՝ հասարակությունն ինքը, չշփվելով, չհամագործակցելով հատուկ կարիքներ ունեցող մարդկանց հետ, չէր ճանաչում նրանց, զրկվում էր առավել հանդուրժող, մարդասիրական դառնալու հնարավորությունից, նաև կորցնում

1 «Integratio» լատիներեն բառ է, բարձրանաբար նշանակում է ներառում:

2 «Սուրդոթարգմանություն» – թարգմանության ձև լսողության խանգարումներով (խուլ) մարդկանց համար, երբ խոսքը վերարտադրվում է հատուկ ժեստերի, մատների և դիմախաղի միջոցով:

էր իր անդամների ակտիվ, ստեղծագործական աշխատանքով հարստանալու հնարավորությունը:

Առավել հանդուրժող, մարդասիրական հասարակության դրսևորումներից մեկն էլ հատուկ կարիքներով մարդկանց, մասնավորապես, երեխաների սոցիալական ինտեգրացման հնարավորությունների ստեղծումն է այնպես, որ նրանցից յուրաքանչյուրը.

- դառնա և զգա իրեն հասարակության լիիրավ անդամ.

- յուրաքանչյուրն իր հնարավորությունների չափով մասնակցի հասարակական կյանքին.

- իր հնարավորությունների չափով հոգա սեփական կարիքները:

Սոցիալական ինտեգրացիայի իրականացման ձևերից մեկը կրթական ինտեգրացիան է՝ ներառական կրթությունը: Այն դիտարկվում է որպես ֆիզիկական, հոգեկան, հուզական և ճանաչողական զարգացման տարբեր մակարդակ ունեցող երեխաների դաստիարակության և կրթության միասնական մոդել, որտեղ միևնույն կոլեկտիվում կազմակերպվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և նորմալ զարգացող երեխաների համատեղ ուսուցումն ու դաստիարակությունը:

Ներառական կրթությունը նրանց հնարավորություն է տալիս.

- լիարժեք զարգացնել անհատական կարողությունների պաշարները, ձևավորել և ուժեղացնել սեփական արժանապատվությունը,

- ներգրավվել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում,

- ձեռք բերել անկախ ապրելակերպ՝ զարգացման հնարավորությունների և առանձնահատկությունների սահմաններում,

- իրենց ուժերի սահմաններում հասնել կյանքի որոշակի կենսամակարդակի, ամրապնդել և բարելավել կյանքի ու գործունեության պայմանները:

Նման ինտեգրացիան օգնում է ոչ միայն հատուկ կարիքներ ունեցող երեխաներին: Այն կարող է նպաստել նաև մյուս երեխաների մեջ համբերատարության, փոխօգնության, հարգանքի, հանդուրժողականության, մարդասիրական և այլ որակների ձևավորմանը:

Վերը նշված հարցերի վերաբերյալ կան նաև փարակարծություններ, մասնագիտական փարբեր տեսակետներ ու մոտեցումներ:

Իսկ Դո՞ք ինչ կարծիք ունեք: Ի՞նչ էք մտածում ներառական կրթության մասին: Մտածե՞ք, հարցազրույցներ փարեք Ձեր հասակակիցների ու մեծահասակների հետ: Հավաքված նյութերի հիման վրա Ձեր ընկերների և ուսուցիչների հետ դասարանում կազմակերպեք քննարկումներ:

Այսօր շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, իրագործվում է ներառական կրթության մոդելը: Սակայն ներառական կրթությունը ենթադրում է հատուկ ծրագրերի մշակում և ներդրում, հատուկ կարիքով երեխաների ու նրանց հարազատների, հասարակության, անգամ մասնագետների հոգեբանական պատրաստվածություն և գաղափարական զարգացում: Այն պետական աջակցության մեծ կարիք ունի, քանի որ վերջինիս արդյունավետությունը կախված է

հասարակության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց և նրանց հարազատների հոգեբանական պատրաստվածության հարցերի կազմակերպման որակից, այս հարցերի լուսաբանման իմաստով զանգվածային լրատվամիջոցների ակտիվ մասնակցությունից, պետական այլ միջոցառումների կազմակերպումից, անգամ քաղաքաշինական որոշ բարեփոխումներից, որոնց համար լուրջ նյութական ռեսուրսներ են պահանջվում:

Դրան պետք է պատրաստ լինենք և աջակցենք բոլորս:

ԱՌԱՋՈՎՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրե՛ք անձի հոգեկայրության և սոցիալական խաթարումները:
2. Վերլուծե՛ք սոցիալական խաթարումների առաջացման պատճառները որևէ կոնկրետ դեպքի օրինակով:
3. Համադասարանցիներով փորձե՛ք սրելով ներառական կրթության համար իդեալական դպրոցի նախագիծ, նկարեք, նկարագրեք, քննարկեք այն դասարանում: Հաջողված ծրագրերը կարող եք առաջարկել նաև համայնքային իշխանություններին կամ կրթության նախարարությանը: Ի՞նչ իմանա՞ս, գուցե չե՞ր նախագիծն իրականություն դառնա:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍԱ 1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳԱՍ 1. ԻՆՉ Է ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԵԸ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆ: Մարդու տնտեսական գործունեության հիմքում նրա պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունն է: Իրենց պահանջմունքների բավարարման նպատակով մարդիկ կազմակերպում են բարիքների արտադրություն:

Բարիքները մարդու պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ միջոցներն են: Բարիքները լինում են անձնական և արտադրական սպառման: **Անձնական սպառման բարիքներն** օգտագործվում են մարդու պահանջմունքների անմիջական բավարարման համար: Դրանք են՝ սնունդ, հագուստ, բնակարան, ավտոմեքենա, տարբեր տեսակի կրթական, առողջապահական, տրանսպորտային, տուրիստական, հեռահաղորդակցության ծառայություններ և այլն: **Արտադրական սպառման բարիքները** արտադրության մեջ օգտագործվող ռեսուրսներն են: **Ռեսուրսները արտադրական նշանակության միջոցներն են որոնք օգտագործվում են անհրաժեշտ սպառման բարիքներ արտադրելու համար:** Ռեսուրսներ են համարվում մեքենաները, սարքավորումները, մեխանիզմները, տեխնոլոգիաները, գիտելիքները և այլն:

Ըստ արդյունքների սահմանափակության՝ բարիքները լինում են **տնտեսական** և **ոչ տնտեսական**: **Տնտեսական** են կոչվում այն բարիքները, որոնք մարդու պահանջմունքների բավարարման տեսանկյունից սահմանափակ են (սնունդ, հագուստ, բնակարան, ավտոմեքենա և այլն): **Ոչ տնտեսական** են համարվում այն բարիքները, որոնց քանակությունը անսահմանափակ է (արևի էներգիա, բովածին և այլն):

Ռեսուրսները լինում են բնության կողմից տրված (հողը, ընդերքի հարստությունները, անտառները, ջրային պաշարները, բնակլիմայական պայմանները, կենդանական ու բուսական աշխարհը) և մարդու կողմից ստեղծված (սարքավորումները, մեքենաները, մեխանիզմները, շենքերը, կառույցները, գիտատեխնիկական նորույթը, կրթական մակարդակը և այլն):

Մակայն բարիքների արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսները սահմանափակ են: Այդ պատճառով առաջանում է ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրը: **Արդյունավելության բովանդակությունը հետևյալն է. առկա ռեսուրսները պետք է այնպես օգտագործել, որպեսզի դրանց միջոցով հնարավոր լինի արտադրել ավելի որակյալ և մեծ քանակությամբ բարիքներ:** Մարդիկ ձգտում են հնարավորության սահմաններում ռեսուրսներն օգտագործել անկորուստ և խնայողաբար: Այսինքն՝ ռեսուրսների նվազագույն ծախսերով ապահովվում է բարիքների արտադրության ավելի մեծ քանակություն: Մարդու (արտադրողի) այդպիսի վարքագիծը կոչվում է **տնտեսող**: Ելնելով այս տրամաբանությունից՝ կարելի է տալ տնտեսագիտություն առարկայի հետևյալ սահմանումը. **փնտեսագիտությունը՝ որպես գիտություն, ուսումնասիրում է մարդու փնտեսական վարքագիծը սահմանափակ ռեսուրսների օգտագործման պայմաններում:**

Շատ հաճախ արտադրության գործոնները և ռեսուրսները նույնացվում են: Արտադրության գործոններն են **աշխատանքը, կապիտալը, հողը և շեռնարկափորությունը** (դրանց կանդիդատուանք 4-րդ թեմայում):


ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԸ: Ռեսուրսների սահմանափակության հանգամանքը մարդկանց ստիպում է ընտրություն կատարել: Ենթադրենք՝ արտադրվում է ընդամենը երկու բարիք՝ հաց և ավտոմեքենա: Հասարակության անդամների կողմից ներկայացված պահանջարկի միջոցով որոշվում է հացի և ավտոմեքենայի արտադրության հարաբերակցությունը: Բնականաբար, մենք զործ ունենք դրանց արտադրության տարբեր այլընտրանքների հետ: **Դրանից ելնելով՝ գոյություն ունի այն տեսակետը, համաչալն որի՝ փնտեսագիտության խնդիրը բարիքների և ռեսուրսների յավագույն փարքերակի ընտրությունն է:**

Սահմանափակ ռեսուրսներն ունեն իրենց օգտագործման հնարավորությունները (այլընտրանքները): Ենթադրենք՝ սահմանափակ ռեսուրսներն օգտագործվում են միայն հացի արտադրության համար: Բնականաբար, սա ծայրահեղ տարբերակ է, որովհետև հասարակությունն ունի նաև, ենթադրենք՝ ավտոմեքենայի պահանջարկ: Որպեսզի ապահովվի նաև ավտոմեքենայի արտադրություն, հասարակությունը պետք է հրաժարվի հացի որոշակի քանակի արտադրությունից: Այսինքն՝ պետք է փոխի ռեսուրսների օգտագործման այլընտրանքը: **Սահմանափակ ռեսուրսների պայմաններում բարիքների այդպիսի փարքեր համակցությունների արտադրությունն ունի իր սահմանը (հնարավորությունը), որը կոչվում է արտադրական հնարավորությունների կոր:** Այդ ամենը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

Աղյուսակ 1.1

Արտադրանքի տեսակը	Արտադրության այլընտրանքները				
	A	B	C	D	E
հաց (հարյուր տոննա)	10	9	7	4	0
ավտոմեքենա (հատ)	0	1	2	3	4

A տարբերակից B-ին անցնելու դեպքում հասարակությունը 1 միավոր հացը փոխարինում է 1 միավոր ավտոմեքենայով: Հացի արտադրության մեկ միավորի կրճատումը նշանակում է ռեսուրսների մի մասի ուղղում դեպի ավտոմեքենայի արտադրություն: B-ից C-ին անցնելու դեպքում հասարակությունը 2 միավոր հացը փոխարինում է 1 միավոր ավտոմեքենայով և այսպես շարունակ, մինչև E տարբերակը: Դա կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով (տես գծապատկեր 1.1.):



Գծապատկեր 1.1.
Արտադրական հնարավորությունների կորը

Գծապատկեր 1.1-ի A, B, C, D կետերի (որոնք մեր ներկայացրած տարբերակներն են) միացումից ստացվում է **արտադրական հնարավորությունների կորը**: Այդ կորի յուրաքանչյուր կետ ցույց է տալիս հացի և ավտոմեքենայի արտադրության փոխհարաբերության այլընտրանքները: Եթե առկա ռեսուրսները չեն օգտագործվում ար-

դյունավետորեն, ապա հացի և ավտոմեքենայի արտադրության մակարդակը կգտնվի արտադրական հնարավորությունների կորից դեպի ձախ, օրինակ՝ K կետում: Ենթադրենք՝ առկա ռեսուրսների խնայողաբար և անկորուստ օգտագործման դեպքում արտադրվում է 7 միավոր ավտոմեքենա և 2 միավոր հաց: Իսկ եթե դրանք օգտագործվում են ոչ խնայողաբար, ապա արտադրվում է 5 միավոր ավտոմեքենա և 1.5 միավոր հաց, որը համապատասխանում է K կետին: Մյուսույն ժամանակ, եթե նպատակ է դրվում հասնելու M կետի մակարդակին, ապա դա հնարավոր է հացի և ավտոմեքենայի արտադրության մեծացման միջոցով: Դա իրականացվում է ռեսուրսների՝ աշխատանքի, կապիտալի, բնական ռեսուրսների ավելացման և արդյունավետ օգտագործման շնորհիվ: Այս դեպքում արտադրական հնարավորությունների կորը կարող է շարժվել դեպի աջ և հասնել M կետի մակարդակին: Այսինքն՝ տեղի է ունում բարիքների արտադրության ան:

ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՐԺԵՔ: Վերոշարադրյալից պարզ դարձավ, որ գոյություն ունեն արտադրության բազմաթիվ այլընտրանքներ, որոնցից ընտրվում է մեկը: Այստեղից էլ առաջացել է **այլընտրանքային արժեք** հասկացությունը: **Այլընտրանքային արժեքը բարիքի այն քանակությունն է, որի արտադրությունից պետք է հրաժարվել՝ հօգուտ մյուս(ների)ի:** Մեր օրինակում (աղյուսակ 1.1.), եթե անցում է կատարվում A տարբերակից B-ին, մեկ միավոր հացի «զոհաբերման» դիմաց հասարակությունը ստանում է մեկ միավոր ավտոմեքենա: Սա նշանակում է՝ մեկ միավոր ավտոմեքենայի այլընտրանքային արժեքը մեկ միավոր հացն է: B տարբերակից C-ին անցնելու դեպքում 2 միավոր հացի փոխարեն մեկ միավոր ավտոմեքենա է արտադրվում, ուրեմն մեկ միավոր ավտոմեքենայի այլընտրանքային արժեքը 2 միավոր հացն է: C-ից D տարբերակին անցման դեպքում մեկ

միավոր ավտոմեքենայի այլընտրանքային արժեքը հավասար է 3 միավոր հացի, իսկ D-ից E տարբերակին անցման դեպքում՝ 4 միավոր:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՐԱՉԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է բարիքը և ռեսուրսը:
2. Ո՞րն է մարդու փնտրենտոլ վարքագիծը:
3. Ի՞նչ է ուսումնասիրում փնտրեսագիտությունը:
4. Ո՞րն է արտադրական հնարավորությունների կորի փնտրեսագիտական բովանդակությունը:
5. Ի՞նչ է այլընտրանքային արժեքը:
6. Սրտրև ներկայացված աղյուսակի փոխյալների հիման վրա կառուցի՞ք արտադրական հնարավորությունների կորը և, ըստ արտադրության այլընտրանքների, քաջարի՞ք այլընտրանքային արժեքը:

Արտադրանքի տեսակը	Արտադրության այլընտրանքները				
	A	B	C	D	E
կոշիկ (հագար գույգ)	15	12	8	3	0
կոստյում (հագար հատ)	0	2	4	6	8

**ԳԱՍ 2. ՎԵՐԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ:
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ: ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
ԵՎ ԽՆԳԻՐՆԵՐԸ**

ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱՇԽՈՒՄ, ՓՈՒԽՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՌՈՒՄ:
Վերարտադրությունը իրար հեղ փոխկապված արտադրության, բաշխման, ֆոխանակության և սպառման փուլերի միասնությունն է և դրանց անընդհաղ քեկնությունը:

Արտադրությունը ռեսուրսների (աշխատանք, կապիտալ, հող, ձեռնարկատիբություն) միացման գործընթացն է, որի արդյունքում ստեղծվում են մարդու պախանցմունքների քավարարման համար անհրաժեշտ բարիքներ: Ստեղծված բաշխները **քաշխվում են** հասարակության անդամների միջև՝ ըստ նրանց եկամտի քախների: Դա վերարտադրության հաջորդ փուլն է:

Վերարտադրության մյուս կարևոր փուլը ստեղծված արդյունքների **փոխանակությունն** է: Առկա են գործունեության քազմաքիվ ոլորտներ, մարդիկ մասնագիտացել են տարբեր արդյունքների արտադրության մեղ (կոշիկ, հագուստ, ավտոմեքենա, սննդի քազմաքիվ տեսակներ և այլն): Մարդկանց քազմաքիսի պա-

հանջմունքները բավարարելու համար տարբեր արտադրողներ փոխանակում են իրենց արտադրած բարիքները:

Վերաբարտադրության մյուս կարևոր փուլը **սպառումն** է: Սպառումը պահանջմունքի բավարարման գործընթացն է: Բարիքների նկատմամբ պահանջմունքի բավարարումը կատարվում է դրանց օգտագործման կամ սպառման միջոցով:

Այսպիսով՝ **վերաբարտադրությունը բաղկացած է արտադրության, բաշխման, փոխանակության և սպառման փուլերից, որոնք գտնվում են սերտ կապի մեջ:**

ՏՆՏԵՍԱԿԱՆ Աճ: Սահմանափակ ռեսուրսներն օգտագործվում են բազմաթիվ բարիքներ արտադրելու համար: **Որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում) տվյալ երկրում ստեղծված վերջնական սպառման բարիքների ամբողջությունը դրամական արտահայտությամբ կոչվում է համախառն ներքին արդյունք (ՀՆԱ):** Արտադրված բարիքների և մատուցված ծառայությունների քանակության փոփոխության վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմելու համար պետք է տարբերել **անվանական ՀՆԱ-ն իրական ՀՆԱ-ից: Անվանական ՀՆԱ-ն** ստեղծված բարիքների և մատուցված ծառայությունների ամբողջությունն է՝ հաշվարկված ընթացիկ տարվա գներով: Ենթադրենք՝ արտադրվում է միայն երկու բարիք՝ կոշիկ և կոստյում: Եթե նախորդ տարում արտադրվել է 1000 գույգ կոշիկ, որի գինը 50 դոլար է, 100 կոստյում, որի գինը 200 դոլար է, ապա անվանական ՀՆԱ=1000•50+100•200=50000+20000=70000 դոլար: Ենթադրենք՝ ընթացիկ տարում արտադրվել է 800 գույգ կոշիկ, գինը՝ 100 դոլար, 80 կոստյում, գինը՝ 300 դոլար: Այդ դեպքում անվանական ՀՆԱ=800•100+80•300=80000+24000=104000 դոլար: Թեև ընթացիկ տարում ավելի քիչ կոշիկ և կոստյում է արտադրվել, քան նախորդ տարում, սակայն ընթացիկ տարվա անվանական ՀՆԱ-ն մեծ է նախորդ տարվա ՀՆԱ-ից: Այս պարագայում կունենանք թյուր պատկերացում արտադրված բարիքների քանակության և մատուցված ծառայությունների մակարդակի վերաբերյալ: Այդ պատճառով օգտագործվում է **իրական ՀՆԱ** հասկացությունը: **Իրական ՀՆԱ-ն** որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում) վերջնական սպառման բարիքների ամբողջությունն է՝ հաշվարկված բազմապիսի տարվա գներով: Գա այն տարին է, որը հիմք է ընդունվում հաջորդ տարիներին արտադրված բարիքների գները համեմատելու համար: Սա հնարավորություն է տալիս ճիշտ պատկերացում կազմելու բարիքների արտադրության քանակության փոփոխության վերաբերյալ: Օրինակ, եթե բազմապիսի տարում կոշիկի գինը եղել է 40 դոլար, իսկ կոստյումինը՝ 150 դոլար, ապա, ըստ վերևում ներկայացված պայմանական օրինակի, նախորդ տարում իրական ՀՆԱ=1000•40+100•150=40000+15000=55000 դոլար, իսկ ընթացիկ տարում՝ 800•40+80•150=32000+12000=44000 դոլար: Սա նշանակում է՝ թեև անվանական ՀՆԱ-ն աճել է, սակայն իրական ՀՆԱ-ն նվազել է:

Տնտեսական աճն իրական ՀՆԱ-ի մեծության փոփոխությունն է դիտարկվող ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում): Եթե դիտարկվող ժամանակաշրջանում իրական ՀՆԱ-ն եղել է Y_t , իսկ նախորդ տարվանը՝ Y_{t-1} , ապա տն-

տնտեսական աճը բացարձակ արտահայտությամբ կազմել է $Y_t - Y_{t-1}$, իսկ **տնտեսական աճի տեմպը**՝ $\frac{Y_t}{Y_{t-1}} \times 100$: **Տնտեսական հավելվածի** տեմպն ընթացիկ և նախորդ տարիների իրական ՀՆԱ-ի տարբերության հարաբերությունն է նախորդ տարվա իրական ՀՆԱ-ին՝ արտահայտված տոկոսներով: Եթե **տնտեսական հավելվածի տեմպը** նշանակենք Y -ով, ապա՝ $Y = \frac{Y_t - Y_{t-1}}{Y_{t-1}} \times 100 = \frac{\Delta Y_t}{Y_{t-1}} \times 100$:

Օրինակ, եթե ընթացիկ տարում իրական ՀՆԱ-ի մակարդակը 120 մլն դոլար է, նախորդ տարվանը՝ 80 մլն, ապա տնտեսական աճը բացարձակ արտահայտությամբ կազմել է $120 - 80 = 40$ մլն դոլար, տնտեսական աճի տեմպը՝ $\frac{120}{80} \times 100 = 150\%$: իսկ տնտեսական հավելվածի տեմպը՝ $\frac{120 - 80}{80} \times 100 = \frac{40}{80} \times 100 = 50\%$:

Տնտեսական աճի հիմնական գործոններն են՝ 1) աշխատանքային ռեսուրսների, 2) կապիտալի, 3) բնական ռեսուրսների քանակական աճը և որակական քարելավումը, 4) գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների՝ արտադրության մեջ կիրառումը:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ: Բնակչության աճող պահանջմունքները բավարարելու և նորմալ կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ է պարզել տնտեսության հիմնական նպատակները: Դրանք են.

Տնտեսական աճի ապահովումը: Տնտեսական աճի միջոցով է հնարավոր բարելավել մարդկանց աճող պահանջմունքները:

Լրիվ զբաղվածության ապահովումը: Դա նպաստում է աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, և բոլոր աշխատողների համար առեղծված է եկամտի կայուն աղբյուր: Այդ խնդիրը կարող է լուծվել արտադրության ընդլայնման միջոցով, որը հանգեցնում է լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման:

Գների կայունության ապահովումը: Տնտեսությունը զարգանում է կայուն իրավիճակում, դրա կարևոր պայմաններից է գների կայունության ապահովումը: Գների հաճախակի տատանումները բացասաբար են անդրադառնում արտադրողների և սպառողների վարքագծի վրա: Օրինակ, երբ որևէ արտադրանքի գին կարուկ տատանվում է, ապա ինչպես արտադրողը, այնպես էլ սպառողը չեն կարողանում ճիշտ կողմնորոշվել՝ արտադրել, քե՞ ոչ, սպասե՞լ, քե՞ ոչ, և ստեղծվում է տնտեսական անկայուն վիճակ:

Եկամուտների վերաբաշխումը: Մարդկանց եկամուտները տարբեր են: Անապահով ընտանիքի անդամներն ունեն կրթություն ստանալու և տարբեր աշխատություններից օգտվելու խնդիրներ: Դրանք հնարավոր է լուծել եկամուտների վերաբաշխման միջոցով: Չեռնարկություններից, կազմակերպություններից, քաղաքացիներից զանձվող հարկերից ձևավորվում է պետական բյուջեն: Գնաձեռքարկության բյուջեից տրվում են նպաստներ գործազուրկներին, անապահով ընտանիքներին, թոշակառուներին, անաշխատունակներին: Այս ճանապարհով աճող է ունենում **եկամուտների վերաբաշխում:**

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԸ: Ռեսուրսների սահմանափակության պայմաններում գործունեության ճիշտ ընտրություն կատարելու համար տնտեսավարող սուբյեկտները պետք է լուծեն երեք հիմնական խնդիր՝ **ինչ արտադրել, ինչպես արտադրել, ում համար արտադրել:**

Ինչ արտադրելու խնդիր լուծումը կապված է բարիքների տեսակների արտադրության ընտրության հետ: Բարիքների արտադրությունը կախված է դրանց նկատմամբ ձևավորված պահանջարկից: Ցանկացած տնտեսություն, ելնելով առկա պահանջարկի կառուցվածքից, արտադրում է հասարակության համար անհրաժեշտ բարիքներ:

Ինչպես արտադրելու խնդիր լուծումը կապված է բարիքների արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսների և համապատասխան տեխնոլոգիաների ապահովման հետ: Առաջին և երկրորդ խնդիրները փոխկապված են: Ի վերջո, տվյալ տնտեսական համակարգում ձևավորված պահանջարկի բավարարումը պետք է ունենա ռեսուրսային և տեխնոլոգիական անհրաժեշտ ապահովվածություն:

Ում համար արտադրելու խնդիր լուծումը կապված է ստեղծված բարիքները հասարակության տարբեր սոցիալական խմբերի, անհատների և ընտանիքների միջև բաշխման հետ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՎՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են վերարտադրության փուլերը:
2. Ի՞նչ է համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ):
3. Ներկայացրե՛ք անվանական և իրական ՀՆԱ-ի տարբերությունը:
4. Ընթացիկ տարում իրական ՀՆԱ-ն կազմել է 250 մլն դոլար, իսկ նախորդ տարում՝ 200 մլն դոլար: Որքա՞ն են կազմել փոփոխական անը բացարձակ արտահայտությամբ, փոփոխական անի տեմպը և փոփոխական հավելանի տեմպը:
5. Որո՞նք են փոփոխական անի գործոնները:
6. Որո՞նք են փոփոխության նպատակները:
7. Ինչպի՞ս էք պատկերացնում փոփոխության հիմնական խնդիրների փոխառնչությունները:

ԹԵՄԱ 2. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: ԱՐԺԵԶ ԵՎ ՓՈՂ

ԿԱՍ 3. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ԲԱՐԻՔԻ ԱՐԺԵԶԸ

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐԸ:

Շուկայական տնտեսությանը նախորդել է բնատնտեսությունը: Բնատնտեսության հիմնական առանձնահատկությունն այն է, որ առանձին ընտանիքների կամ համայնքների միաժամանակ և՛ բարիքի արտադրողներ էին, և՛ սպառողներ: Այսինքն՝ իրենք արտադրել են, իրենք էլ սպառել, և գրեթե գոյություն չի ունեցել բարիքների փոխանակություն: Բնատնտեսությունը բնորոշ է հասարակության զարգացման նախնական փուլին: Տնտեսության այդ ձևը պահպանվել է հետամնաց և բույլ զարգացած երկրներում: Բնատնտեսությանն աստիճանաբար փոխարինել է շուկայական տնտեսությունը: Շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալներն են.

Առաջին՝ աշխատանքի հասարակական բաժանումը: Եթե արտադրողները մասնագիտանում են որևէ բարիքի արտադրության մեջ, միավոր ժամանակի ընթացքում արտադրվում են ավելի շատ բարիքներ: Աշխատանքի բաժանման պայմաններում արտադրողները փոխանակում են իրենց ստեղծած բարիքները: Այդ գործընթացը սկսվել է հազարամյակներ առաջ և շարունակվում է մինչև օրս:

Երկրորդ՝ բարիքների նկատմամբ սեփականության ձևավորումը: Բարիքի արդյունավետ օգտագործումը պահանջում է դրա նկատմամբ հսկողության հաստատում, որը կարող է իրականացվել սեփականության ձևավորման միջոցով: Սեփականությունը նախ և առաջ մարդկանց կողմից բարիքը *փիրապեպեյու* անհրաժեշտությունն է: *Տիրապեպումը* մարդու տրամադրության տակ բարիքի փաստացի գտնվելն է: Պետք է մարդն ունենա բարիքն *օգտագործելու* հնարավորություն: *Օգտագործումը* բարիքի օգտակար հատկություններից օգտվելն է: Բարիքի տերն ունի նաև այն *փնօրինելու* հնարավորություն: *Տնօրինումը* բարիքի օտարումն է, այսինքն՝ վաճառքը, ժառանգումը, նվիրատվությունը, փոխանակումը և այլն:

Այսպիսով՝ *սեփականությունը բարիքի փիրապեպեյան, օգտագործման և փնօրինման իրական հնարավորությունն է*: Դա կարգավորվում է օրենքով: Համապատասխան օրենքներով սահմանվում է բարիքի՝ սեփականատիրոջը պատկանելը: Հետևաբար՝ սեփականություն հասկացությունն ունի և՛ տնտեսական, և՛ իրավական բովանդակություն:

Պատմականորեն գոյություն ունեն սեփականության հերթյալ չները:

1. Մասնավոր սեփականություն: Մասնավոր սեփականությունը մարդուն պատկանող բարիքներն են: Մեփականության մասնավոր ձևը պատմականորեն համարվել է տիրապետող:

2. Կոլեկտիվ սեփականություն: Կոլեկտիվ սեփականությունը մեկից ավելի անձանց պատկանող բարիքներն են:

3. Պետական սեփականություն: Պետական սեփականությունը պետությանը պատկանող բարիքներն են:

Երրորդ՝ արտադրողների տնտեսական առանձնացվածությունը: Աշխատանքի հասարակական բաժանման արդյունքում, ինչպես արդեն նշել ենք, տեղի է ունենում արտադրության մասնագիտացում, ինչն իր հերթին հանգեցնում է արտադրողների տնտեսական առանձնացման: Այդ հիմքի վրա ձևավորվում են աբհետանոցներ, իսկ հետագայում, երբ ձեռքի աշխատանքին աստիճանաբար փոխարինում են մեքենաները, սարքավորումները, մեխանիզմները, ի հայտ են գալիս տարբեր տեսակի բազմաթիվ ձեռնարկություններ կամ ֆիրմաներ:

Այս նախադրյալների հիմքի վրա է ձևավորվել շուկայական տնտեսակարգը: Վերոշարադրյալից ելնելով՝ կարելի է տալ հետևյալ բնորոշումը. **շուկայական տնտեսությունն արգաստողների և սպառողների միջև չեավորված փոխանակային հարաբերությունների ամբողջությունն է:**

Շուկայական տնտեսության սուբյեկտները:

1) Տնային տնտեսությունը: Տնային տնտեսության ներկայացուցիչները կամ երկրի քաղաքացիները ռեսուրսների (աշխատանք, կապիտալ, բնական ռեսուրսներ) սեփականատերերն են: Նրանք շուկայում առաջարկում են ռեսուրսներ, որոնց միջոցով ստեղծվում են բարիքներ: Տնային տնտեսության ներկայացուցիչները, միաժամանակ, ստեղծված բարիքների վերջնական սպառողներն են:

2) Ֆիրման կամ ձեռնարկությունը: Ֆիրմայի կամ ձեռնարկության միջոցով տեղի է ունենում կապիտալի, աշխատանքի և բնական ռեսուրսի միացման գործընթացը, որի շնորհիվ ստեղծվում է այս կամ այն բարիքը:

3) Պետությունը: Պետությունն իրականացնում է մի շարք կարևոր տնտեսական, քաղաքական, սոցիալական գործառնություններ, որոնց միջոցով ապահովում է հասարակության նորմալ կենսագործունեությունը:

Շուկայական տնտեսության օբյեկտները: Ըստ տնային տնտեսության կողմից ներկայացված ռեսուրսների և ֆիրմայի կողմից ստեղծված բարիքների բնույթի՝ շուկան բաժանվում է համապատասխան մասերի: Դրանք՝ 1) կապիտալի, աշխատանքի, բնական ռեսուրսների, 2) սպառման նշանակության բարիքների (սնունդ, հագուստ, բնակարան և այլն), 3) տարբեր տեսակի ծառայությունների (կենցաղսպասարկման, տրանսպորտային, կրթական, մշակութային, առողջապահական), 4) սպասարկման ոլորտի (ռեստորաններ, հյուրանոցներ, սրճարաններ և այլն) շուկաներն են: Տնային տնտեսության ներկայացրած ռեսուրսները և ֆիրմայի ստեղծած բարիքները համարվում են շուկայի օբյեկտներ:

Բարիքի արժեքը: Արժեքը պայմանավորված է բարիքի սահմանափակության հանգամանքով: Այս կամ այն բարիքի արժեքման հիմքում դրանց սահմանափակությունն է: Հետևապես՝ **արժեքը** մարդու կողմից սահմանափակ բարիքների գնահատականն է: Այս տրամաբանությամբ կարելի է բացատրել նաև «Մմիթի¹ պարադոքսը», որի էությունը հետևյալն է. ինչո՞ւ ջուրը, որն այդքան անհրաժեշտ է մարդուն և ունի ավելի մեծ օգտակարություն, քան ադամանդը, ավելի փոքր արժեք ունի: Դրա բացատրությունը հետևյալն է. թեև ջրի օգտակարության աստիճանը, հասարակական կենսագործունեության տեսանկյունից, մեծ է ադամանդի օգտակարությունից, բայց դրանց արժեքը որոշվում է այդ բարիքի սահմանափակության աստիճանով: Քանի որ ջրի համեմատությամբ ադամանդի պաշարներն ավելի սահմանափակ են, ուստի դրա արժեքն ավելի մեծ է:



Ադամ Սմիթ
(1723-1790)

Աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով բարիքների փոխանակությունը դառնում է անխուսափելի: Բարիքների փոխանակությունը տեղի է ունենում շուկայական տնտեսության սուբյեկտների միջև: Փոխանակության ընթացքում որոշակի քանակությամբ բարիք փոխանակվում է որոշակի քանակությամբ մեկ այլ բարիքի հետ: Բարիքները փոխանակվում են ըստ իրենց **արժեքի**: Օրինակ՝ երկու գույգ կոշիկը փոխանակվում է մեկ կոստյումի հետ: Սա նշանակում է՝ երկու գույգ կոշիկի արժեքը հավասար է մեկ կոստյումի արժեքին:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԵՐԱՋԱԿՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են շուկայական փոփոխության շեփոխման նախադրյալները:
2. Որո՞նք են շուկայական փոփոխության սուբյեկտները և օբյեկտները:
3. Ի՞նչ է սեփականությունը: Որո՞նք են սեփականության շեղերը:
4. Ի՞նչ է բարիքի արժեքը:
5. Ծիրանի 1 կգ սկզբնական շրջանում վաճառվում է 1000 դրամով, այնուհետև դրա արժեքը սկսում է նվազել՝ փերջում հասնելով 200 դրամի: Բացատրե՛ք ծիրանի արժեքի նվազման պատճառը:

¹ Ադամ Սմիթը համարվում է տնտեսագիտության հիմնադիրը:

ԴԱՍ 4. ՓՈՂԸ ԵՎ ԳՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ՓՈՂԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատանքի բաժանման խորացումը և բարիքների արտադրության մասնագիտացումը հանգեցնում են փոխանակալից հարաբերությունների շրջանակների մեծացման: Փոխանակությունը, փաստորեն, ստանում է կանոնավոր և համընդհանուր բնույթ և իրականացվում է հետևյալ ձևով.

$$A = \begin{cases} B \\ C \\ D \\ \text{և այլն} \end{cases} \quad B = \begin{cases} A \\ C \\ D \\ \text{և այլն} \end{cases} \quad C = \begin{cases} A \\ B \\ D \\ \text{և այլն} \end{cases} \quad D = \begin{cases} A \\ C \\ B \\ \text{և այլն} \end{cases}$$

A, B, C, D բարիքները գտնվում են փոխանակության մեջ: Փոխանակության ընթացքում առաջանում են բազմաթիվ դժվարություններ: Օրինակ՝ A բարիքի սեփականատերը ցանկություն ունի այն փոխանակելու B բարիքի հետ, բայց B բարիքի սեփականատերը ոչ թե A բարիքի կարիք ունի, այլ C-ի: Ուստի A բարիքի սեփականատերը պետք է ձեռք բերի C բարիքը, որպեսզի փոխանակի B բարիքի հետ: Սակայն պարզվում է՝ C բարիքի սեփականատերը ոչ թե A բարիքի կարիք ունի, այլ D-ի: Այդ դեպքում A բարիքի սեփականատերը պետք է ձեռք բերի D բարիքը, փոխանակի C-ի հետ, դա էլ՝ B-ի հետ, որպեսզի կարողանա բավարարել դրա նկատմամբ իր պահանջմունքը: A բարիքի սեփականատերը կատարում է հսկայական ծախսեր (տրանսպորտային, ռեսուրսային և հատկապես ժամանակի), որպեսզի կարողանա հասնել իր նպատակին՝ ձեռք բերի B բարիքը: Բարիքների փոխանակության հետ կապված՝ վերը նշված խոչընդոտները հաղթահարելու համար համապատասխան քայլեր են պահանջվում: **Առաջանում է տարբեր բարիքների արժեքների համադրման միասնական չափման միավորի (էտալոնի) ձևավորման անհրաժեշտություն:** Ունենալով տարբեր բարիքների արժեքների մեծությունները՝ արտահայտված այդ չափման միավորով, մարդիկ կարող են ամփոփապես ձեռք բերել իրենց անհրաժեշտ բարիքը՝ կատարելով ընդամենը երկու գործարք: Նախ՝ որևէ անհատ իր բարիքը (կոստյում) փոխանակում է այդ էտալոնի որոշակի քանակության հետ: Դա վաճառքի գործարքն է: Այնուհետև դրա միջոցով գնում է իրեն անհրաժեշտ բարիքը: Դա հնարավորություն է տալիս կրճատելու հսկայական ծախսեր և խնայելու ամենաքանկ ռեսուրսը՝ ժամանակը: Փաստորեն, **բարիքների ամփոփական փոխանակությունը փոխարինվում է միջնորդավորված փոխանակությամբ:**

Այդ էտալոնի կամ չափման միավորի ձևավորումը տեղի է ունենում հետևյալ

կերպ: Փոխանակության խորացման ընթացքում որևէ բարիք (մորթի, հազվագյուտ քարեր, մետաղների տարբեր տեսակներ և այլն) աստիճանաբար առանձնանում է և մյուսների համար դառնում **չափման կամ հաշվարկման միավոր**: Այդ բարիքը համընդհանուր ճանաչում է ստանում և վերածվում չափանմուշի (էտալոնի), որի միջոցով որոշվում են մյուս բարիքների արժեքները: **Համընդհանուր ճանաչում սրացած այդ հաշվարկային միավորը կոչվեց փող**: Այդ ճանապարհով դա դառնում է տարբեր բարիքների միջև փոխանակությունն իրականացնելու միջոց: Փոխանակության շրջանակների ընդլայնմանը զուգընթաց, անհրաժեշտություն է առաջանում **միասնական չափման միավորի (էտալոնի)** դերը ամրակցել **ոսկուն**, ինչն ավելի է հեշտացնում փոխանակության իրականացումը: **Ոսկին դարձավ փարբեր բարիքների արժեքները համադրելու և դրանց փոխանակությունն իրականացնելու չափանմուշ, այսինքն՝ փող: Ուրեմն՝ փողը բարիքների արժեքների չափման միավոր (էտալոն) և համընդհանուր ճանաչման արժանացած փոխանակության միջոց է**:

Փողի կամ չափման նմուշի և փոխանակային միջոցի դերի ամրակցումը ոսկուն պայմանավորված է վերջինիս մի շարք հատկանիշներով.

1. պաշտպանվածությամբ (կոռոզիայի չի ենթարկվում և ռեակցիայի մեջ չի մտնում ոչ մի քիմիական տարրի հետ),
2. դյուրակրությամբ (մեծ արժեքի պարունակությունը փոքր ծավալի մեջ),
3. բաժանելիությամբ (ոսկու ձուլակտորը կարելի է բաժանել տարբեր՝ ավելի փոքր մասերի),
4. հազվագյուտությամբ (բնության մեջ դրա պաշարները քիչ են):

Բնականաբար, ոսկին իր այդ հատկությունների շնորհիվ փոխանակության մյուս միջոցների (մորթի, հազվագյուտ քարեր, մետաղներ և այլն) նկատմամբ անառարկելի առավելություն ունի, ուստի դարձավ միակ ընդունելի **վճարամիջոցը** և համարվեց **փող**:

Ոսկու քանակը, զանգվածը չափում են դրա կշռով: Ոսկու որոշակի քանակությունն ընդունվում է որպես դրա զանգվածի **չափման միավոր**: Այդ **չափման միավորն** էլ համարվում է այն **էտալոնը**, որի միջոցով չափակցվում են տարբեր բարիքների արժեքները:

Ոսկուն զուգընթաց, որպես փող շրջանառվել է նաև արծաթը: Մակայն հետագայում արծաթն աստիճանաբար դուրս է մղվել, և տիրապետող է դարձել ոսկու շրջանառությունը: Տնտեսագիտական գրականության մեջ դա կոչվում է մետաղադրամային շրջանառություն:

Հետագայում ոսկուն փոխարինեց թղթադրամը, և յուրաքանչյուր երկիր ստեղծեց իր դրամական միավորը (դոլար, ֆունտ ստեռլինգ, ռուբլի, դրամ և այլն): Այդ դեպքում բարիքների փոխանակությունն իրականացվում է թղթադրամի միջոցով: Թղթադրամային շրջանառությանն անցնելու հիմնախնդրի պարզաբանմանը կանդրադառնանք թե՛մ 5-ում, որտեղ կքննարկենք փողի էվոլյուցիան:

Փողի միջոցով բարիքների փոխանակությունն իրականացվում է միջնորդավորված ձևով: Եթե մինչև փողի ծագումը բարիքները փոխանակվում էին անմիջապես՝ Ա=Բ, ապա փողի միջոցով այդ նույն փոխանակությունն իրականացվում է հետևյալ ձևով՝ Ա-Փ-Բ (Փ-ն փողն է): Այսինքն՝ նախ Ա բարիքի սեփականատերը այն փոխանակում է փողի հետ, իսկ այնուհետև դրանով ձեռք է բերում Բ բարիքը: Փողի միջոցով Ա բարիքի որոշակի քանակություն փոխանակվում է Բ բարիքի որոշակի քանակության հետ: Ա և Բ բարիքների արժեքները՝ արտահայտված փողով (ոսկով կամ դոլարով), դրանց **գինն է: Գինը բարիքի արժեքի դրամական (փողային) արտահայտությունն է:** Այսինքն՝ **գինը ցույց է տալիս փողի միջոցով վաճառվող բարիքների փոխանակության համամասնությունը:**

Ենթադրենք՝ 1 կգ խնձորի արժեքը՝ փողով արտահայտված, հավասար է 2 գ ոսկու կամ 1 դոլարի: Խնձորի վաճառքից հետո սեփականատերն այդ 2 գ ոսկու կամ 1 դոլարով, ենթադրենք, ձեռք է բերում 1 կգ նարինջ: Եթե 1 կգ խնձորի արժեքը մեծանում է՝ հավասարվելով 4 գ ոսկու կամ 2 դոլարի, ապա նարնջի արժեքի, հետևապես և գնի անփոփոխության դեպքում խնձորի սեփականատերը կարող է գնել 2 կգ նարինջ: Փաստորեն, եթե նախկինում 1 կգ խնձորը փոխանակվում էր 1 կգ նարնջի հետ, ապա խնձորի արժեքի փոփոխության պարագայում 1 կգ խնձորը փոխանակվում է 2 կգ նարնջի հետ: Պարզ է, որ բարիքների արժեքների, հետևապես և փոխանակության համամասնության փոփոխությունն արտահայտվում է դրամական միավորի միջոցով:

ՓՈՂԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ: Փողի՝ որպես միասնական չափման միավորի (ետալոնի), ծագումը գուգակցվում է դրա մի շարք կարևոր գործառույթներով, որոնց միջոցով բարիքների փոխանակությունն արդյունավետ է դառնում:

Փողի գործառույթներն են՝

Առաջին՝ արժեքի չափման գործառույթը: Հենց փողի՝ որպես չափման միավորի ձևավորումը պայմանավորված է տարբեր բարիքների արժեքների չափակցման անհրաժեշտությամբ: Այսինքն՝ բարիքների փոխանակության ժամանակ դրանց արժեքի մեծությունը չափվում է փողի (ոսկու, դոլարի և այլն) որոշակի քանակության միջոցով:

Երկրորդ՝ շրջանառության միջոցի գործառույթը: Փողի այդ գործառույթի միջոցով կատարվում է բարիքների փոխանակություն: Դա կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով՝ Ա-Փ-Բ, որտեղ՝ Ա-ն և Բ-ն տարբեր սպառողական հատկություններ ունեցող բարիքներ են, Փ-ն՝ փողը: Այսինքն՝ որևէ բարիք փոխանակելով փողի (ոսկու, դոլարի և այլն) հետ՝ այնուհետև դրա միջոցով ձեռք է բերվում մեկ այլ բարիք: Արդյունքների փոխանակությունը միջնորդավորված է, և ձևավորվում է մի նոր օղակ՝ **փողի շրջանառությունը:**

Երրորդ՝ վճարման միջոցի գործառույթը: Փողի միջոցով իրականացվում են մարդկանց միջև փոխադարձ վճարումների հետ կապված պարտավորությունները: Այսինքն՝ փողը կատարում է **վճարման միջոցի** դեր:

Պարզվում է՝ ժամանակի և տարածության մեջ բարիքի արտադրությունը, բաշխումը, փոխանակությունը և սպառումը չեն համընկնում: Խնդիրն այն է, որ արտադրվելուց անմիջապես հետո բարիքը չի իրացվում, բայց դրա սեփականատերն իր տարբեր կարիքները բավարարելու համար պետք է կատարի բազմաթիվ գնումներ, որոնք իրականացվում են փողի միջոցով, ինչը դեռևս չունի: Խնդիրը լուծելու համար բարիքների առք ու վաճառքը կատարվում է վճարման հետաձգումով: Այսպես՝ կոշիկը դեռ չի իրացվել, բայց դրա սեփականատերն ունի հացի և այլ մթերքների կարիք: Նա ձեռք է բերում դրանք, բայց վճարումները կատարում է հետագայում՝ կոշիկի իրացման արդյունքում ստացված փողի միջոցով: **Վճարման հեղաշփոխումով իրականացվող բարիքների առք ու վաճառքի հասկոնությունը փողի վճարման միջոցի գործառույթի արտահայտման շեղից է:** Կարող է լինել նաև հակառակը. բարիքը վաճառվում է, բայց արդյունքում ձեռք բերված փողով այլ բարիք գնվում է որոշ ժամանակ հետո: Այսինքն՝ **առաջանում են ազատ դրամական միջոցներ:** Այդ դեպքում ազատ դրամական միջոցները կարող են պարտքով տրվել նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:

Այսպիսով՝ **մարդկանց միջև անհրաժեշտաբար առաջանում են պարտքային պարտավորություններ:**

Չորրորդ՝ խնայողության կամ կուտակման միջոցի գործառույթը: Մարդիկ ապագայի հետ կապված բազմաթիվ խնդիրների լուծման նպատակով իրենց եկամտի մի մասը կուտակում են: Օրինակ՝ նրանք կուտակում են հետագայում ավտոմեքենա, կահույք, բնակարան գնելու, ներդրումներ կատարելու համար: Այսինքն՝ **փողն ունի կուտակման միջոցի գործառույթ:**

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է փողը և ինչպե՞ս է ծագել:
2. Ինչո՞ւ փողի դերն անրագրվից ոսկուն: Ի՞նչ է գինը:
3. Որո՞նք են փողի գործառույթները:
4. Ինչպե՞ս են շեղավորվում ազատ դրամական միջոցները:
5. Նախորդ տարում կոշիկի գինը եղել է 20 դոլար, իսկ կոսպյունիներ՝ 60: Ընթացիկ տարում կոշիկի գինը դարձել է 25, իսկ կոսպյունիներ՝ 50 դոլար: Ի՞նչ համամասնությանը է փոխվել կոշիկի և կոսպյունի փոխանակությունը:

ԹԵՄԱ 3. ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 5. ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ


ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ: Մեզանից յուրաքանչյուրը շուկայում ձեռք է բերում սեփական պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ քարիքներ: Այսինքն՝ ըստ եկամտի չափի և նախասիրությունների՝ մարդիկ քարիքների նկատմամբ ներկայացնում են պահանջարկ:

Պահանջարկը քարիքների այն քանակությունն է, որը ցանկանում են և ի վիճակի են գնելու սպառողներն առկա գների պայմաններում:

Պահանջարկի օրենքը: Դրա բովանդակությունը հետևյալն է. **քարիքի գնի նվազման արդյունքում մեծանում է պահանջարկը, և հակառակը:** Որո՞նք են դրա պատճառները:

1) Այդ օրենքն ամբողջությամբ հիմնված է առողջ դատողության վրա, քանի որ գների նվազման դեպքում սպառողը կարող է ավելացնել գնվող քարիքների քանակությունը:

2) Մահմանային օգտակարության նվազման միտումը: **Քարիքի օգտակարությունը** մարդու այս կամ այն պահանջմունքը բավարարելու հատկությունն է: Քարիքի օգտակարությունը որոշվում է դրա նկատմամբ հագեցվածության աստիճանով: Օրինակ՝ ծարավ մարդն առաջին բաժակ ջուրը գնահատում է ավելի բարձր, քան երկրորդ բաժակը: Դա բացատրվում է հաջորդ բաժակ ջրի սպառման դեպքում դրա նկատմամբ հագեցվածության աստիճանի մեծացմամբ: Բնականաբար, նույն տրամաբանությամբ երրորդ բաժակ ջրի օգտակարությունը փոքր է երկրորդ բաժակ ջրի օգտակարությունից: Քարիքի նկատմամբ հագեցվածության աստիճանի մեծացմանը զուգընթաց, դրա օգտակարությունը նվազում է: Քարիքի



Գծապատկեր 5.1.
Պահանջարկի կորը

վերջին միավորի նկատմամբ հագեցվածության աստիճանը դրա **սահմանային օգտակարությունն է:** Յուրաքանչյուր հաջորդ միավոր քարիքի օգտակարության աստիճանը փոքր է, և սպառողը դրա համար պատրաստ է վճարել ավելի քիչ:

Պահանջարկի և գնի կապը կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով (տես գծապատկեր 5.1.):

P-ն շաքարի գինն է, Q-ն՝ պահանջարկը: Եթե շաքարի 1 կգ գինը 4 դոլար է, ապա դրա նկատմամբ պահանջարկը 1 կգ է, 3 դոլարի դեպքում՝ 2 կգ, իսկ 1 դոլարի դեպքում՝ 4 կգ:

Միացնելով a, b, c, k կետերը՝ կատանանք պահանջարկի կորը (D): Պահանջարկի կորի այդպիսի դիրքը պայմանավորված է պահանջարկի և գնի հակադարձ կախվածությամբ: Փաստորեն, այդ կորը ցույց է տալիս բարիքի պահանջարկի (Q) կախվածությունը դրա գնից (P): Այսինքն՝ զինն անկախ փոփոխական է, իսկ պահանջարկը՝ կախյալ¹:

ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՉ ԳՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ: Պահանջարկի վրա, բացի գնից, ազդում են նաև այլ, այսպես կոչված, ոչ գնային գործոններ: Այդ գործոններն են.

1) Բնակչության եկամտի փոփոխությունը: Պարզ է, եթե մարդկանց եկամուտներն աճում են, ապա նրանք իրենց պահանջումները բավարարելու նպատակով ձգտում են ձեռք բերել ավելի շատ բարիքներ:

2) Սպառողական ճաշակի փոփոխությունը: Սովորաբար մոդայիկ բարիքների նկատմամբ պահանջարկը մեծանում է:

3) Գնորդների թիվը: Շուկայում գնորդների թվի ավելացումը, բնականաբար, մեծացնում է պահանջարկը, և հակառակը: Դա տեղի է ունենում տարբեր կերպ: Այսպես՝ բնակչության թվաքանակի, արտագաղթի, ներգաղթի, կյանքի միջին տևողության աճը կամ նվազումն ազդում են գնորդների թվի վրա:


4) Փոխկապված բարիքների գները: Այդպիսի բարիքները լինում են երկու տեսակ՝ *փոխադարձ փոխարինելի և փոխլրացնող կամ ուղեկցող*: Փոխադարձ փոխարինելի բարիքներ են, օրինակ՝ ձեթը և յուղը, ձուկը և միսը, հյութը և հանքային ջուրը, տարբեր ֆիրմաների ավտոմեքենաները և այլն: Եթե ձեթի գինը բարձրանում է, ապա նվազում է դրա նկատմամբ պահանջարկը, մեծանում է յուղի նկատմամբ պահանջարկը, և հակառակը: Այլ է խնդիրը փոխլրացնող կամ ուղեկցող բարիքների դեպքում: Փոխլրացնող բարիքներ են ավտոմեքենան և բենզինը: Եթե ավտոմեքենայի գնի աճի հետևանքով պահանջարկը նվազում է, ապա դա հանգեցնում է փոխլրացնող բարիքի՝ բենզինի պահանջարկի նվազման:

5) Սպասումները: Մարդկանց ներկա վարքագիծը մեծ չափով կախված է սպազայի վերաբերյալ նրանց կանխատեսումներից կամ սպասումներից: Օրինակ՝ եթե մարդիկ կանխատեսում են, որ սպազայում գների բարձրացման պատճառով կունենան կորուստներ, ապա նրանք ձգտում են այդ բարիքները ձեռք բերել ներկա ժամանակաշրջանում, ինչը մեծացնում է դրանց պահանջարկը:

Վերը նշված գործոնների ազդեցությամբ պահանջարկի կորը տեղաշարժվում է աջ կամ ձախ (տես գծապատկեր 5.2.):

Եթե ոչ գնային գործոնների ազդեցությամբ պահանջարկը մեծանա, ապա կորը կշարժվի դեպի աջ և կունենա D2 դիրքը: Իսկ եթե այդ գործոնների ազդեցությամբ պահանջարկը փոքրանա, ապա կորը կշարժվի դեպի ձախ և կունենա D3 դիրքը: Գծապատկերից պարզ երևում է, որ մինևույն գնի (P1) պայ-

¹ Դուք մաթեմատիկայից գիտեք, որ կորողինատային հարթության ուղղահայաց առանցքը ներկայացնում է կախյալ, իսկ հորիզոնականը՝ անկախ փոփոխականի մեծությունը: Սակայն ավանդաբար տնտեսագետները ուղղահայաց առանցքի միջոցով դիտարկում են անկախ, իսկ հորիզոնական առանցքի միջոցով՝ կախյալ փոփոխականը, և այդ դեպքում կորի դիրքը չի փոխվում:



Պատկեր 5.2. Պահանջարկի կորի փոփոխություն

մասներում առկա են պահանջարկի տարբեր մակարդակներ (Q_3, Q_1, Q_2):

ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԱՌԱՋԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Առաձգականությունը ցույց է տալիս գնի փոփոխության ազդեցության աստիճանը պահանջարկի մեծության վրա: Պահանջարկը համարվում է առաձգական, եթե գնի փոփոխությունը հանգեցնում է պահանջարկի ավելի մեծ փոփոխության: Օրինակ, եթե գինը նվազել է 2%-ով, որի հետևանքով պահանջարկն աճել է 4%-ով, ապա պահանջարկն առաձգական է: Պահանջարկը համարվում է ոչ առաձգական, եթե գնի փոփոխությունը հանգեցնում է պահանջարկի ավելի փոքր փոփոխության: Օրինակ, եթե գինը նվազել է 3%-ով, իսկ պահանջարկն աճել է 1.5%-ով, ապա պահանջարկը ոչ առաձգական է: Եթե գնի և պահանջարկի փոփոխությունները հավասար են, ապա առկա է պահանջարկի միավոր առաձգականություն:

Օրինակ, եթե գինը նվազել է 3%-ով, իսկ պահանջարկն աճել է 1.5%-ով, ապա պահանջարկը ոչ առաձգական է: Եթե գնի և պահանջարկի փոփոխությունները հավասար են, ապա առկա է պահանջարկի միավոր առաձգականություն:


Պահանջարկի առաձգականությունը կարելի է ներկայացնել գործակցի միջոցով: Պահանջարկի առաձգականության գործակիցը՝

$$E_d = \frac{\text{պահանջարկի փոփոխությունը \% -ով}}{\text{գնի փոփոխությունը \% -ով}}$$

Գինը նվազում է, բայց պահանջարկն աճում է: Պարզ է, որ այդ գործակիցը բացասական մեծություն կլինի: Ուստի առաձգականության գործակիցը դիտարկվում է բացարձակ արժեքով:

Օրինակ՝ բանանի 1 կգ գինը 2 դոլար է, և Հայկը գնում է 4 կգ բանան: Բանանի գինը դարձել է 1.9 դոլար, ուստի Հայկը գնում է 4.1 կգ բանան: Այդ դեպքում գինը նվազել է $\frac{2-1.9}{2} \times 100 = \frac{0.1}{2} \times 100 = 5\%$ -ով, իսկ Հայկը սպառումն ավելացրել է $\frac{4.1-4}{4} \times 100 = \frac{0.1}{4} \times 100 = 2.5\%$ -ով: Հետևապես՝ պահանջարկի առաձգականությունը՝ $E_d = \frac{2.5}{5} = 0.5$:

1 Պահանջարկի առաձգականությունը կարելի է ներկայացնել $E_d = \frac{\Delta Q}{Q} \cdot \frac{P}{\Delta P}$ բանաձևի միջոցով, որտեղ՝ ΔQ -ն բարիքի քանակի փոփոխությունն է, Q -ն՝ քանակությունը, P -ն՝ գինը, ΔP -ն՝ գնի փոփոխությունը: E_d -ն դիտարկվում է բացարձակ արժեքով:



Գծապատկեր 5.3. Պահանջարկի առաջգականությունն ըստ գնի

Առաձգական պահանջարկի դեպքում առաձգականության գործակիցը մեծ է մեկից: **Ոչ առաձգական պահանջարկի** դեպքում առաձգականության գործակիցը փոքր է մեկից, իսկ **միավոր առաձգական պահանջարկի** դեպքում հավասար է մեկի:

Պահանջարկի առաձգականության տեսակները կարելի է ներկայացնել գծապատկերների միջոցով (տե՛ս գծապատկեր 5.3.):

Ըստ գծապատկեր 5.3.ա-ի՝ առկա է միավոր առաձգականություն, ըստ 5.3. բ-ի՝ պահանջարկը ոչ առաձգական է, ըստ 5.3.գ-ի՝ պահանջարկը առաձգական է:


ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Ի՞նչ է պահանջարկը: Ո՞րն է պահանջարկի օրենքը:
2. Որո՞նք են պահանջարկի փոփոխության ոչ գնային գործոնները:
3. Ի՞նչ է պահանջարկի առաջգականությունը: Ո՞ր դեպքում է պահանջարկը համարվում առաջգական, միավոր առաջգական և ոչ առաջգական:
4. Ինչպե՞ս է որոշվում պահանջարկի առաջգականության գործակիցը:
5. Բարիքի գինը 10 դրլարից դարձել է 8 դրլար, որի հետևանքով պահանջարկը 20 կգ-ից դարձել է 24 կգ: Ինչպիսի՞ն է պահանջարկի առաջգականությունը:

ԳԱՍ 6. ԱՌԱՋԱՐԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱՐԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ: Առաջարկը բարիքի այն քանակությունն է, որն արտադրողը ցանկանում է և կարող է արտադրել ու ներկայացնել վաճառքի՝ ստիպ գների պայմաններում: Արտադրողի գործունեության հիմնական շարժառիթները կատարված ծախսերի փոխհատուցումն է և եկամտի ապահովումը: Բարիքի գնի բարձրացումը, բնականաբար, հանգեցնում է առաջարկի մեծացման, քանի որ դրա հետևանքով մեծանում է արտադրողի եկամուտը: Պարզ է՝ եթե բարիքի գինը նվազում է, ապա դրա առաջարկը փոքրանում է, որովհետև արտադրողն այլ հավասար պայմաններում ձգտում է իր ռեսուրսներն օգտագործել ավելի եկամտաբեր ոլորտներում: Դա հանգեցնում է տվյալ բարիքի արտադրության կրճատման:

Այսպիսով՝ առկա է ուղղակի կապ բարիքի գնի և առաջարկի միջև: Այսինքն բարիքի գնի բարձրացումը հանգեցնում է դրա առաջարկի մեծացման, իսկ նվազումը՝ փոքրացման: Այս ընդհանուր օրինաչափությունը կազմում է **առաջարկի օրենքի** բովանդակությունը: Գնի և առաջարկի փոխհարաբերակցությունը կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով:



Գծապատկեր 6.1.
Առաջարկի կորը

Գծապատկեր 6.1.-ում ներկայացված առաջարկի կորը (S) ցույց է տալիս գնի (P) փոփոխության ազդեցությունը բարիքի արտադրության կամ առաջարկի (Q) վրա: Գնի աճին զուգընթաց մեծանում է առաջարկը: Այսինքն՝ առաջարկի և գնի միջև կապն ուղղակի է:

ԱՌԱՋԱՐԿԻ ՓՈՓՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶ ՎԵՆՅԻՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԸ: Առաջարկի ոչ գնային գործոններն են՝

1) **Ռեսուրսների գինը:** Եթե ռեսուրսների գները բարձրանում են, ապա արտադրողի ծախսերը մեծանում են, ինչը հանգեցնում է եկամտի փոքրացման, և նա ստիպված կրճատում է տվյալ բարիքի արտադրությունը և իր կապիտալը ներդնում է ավելի եկամտաբեր ոլորտում: Ռեսուրսների գների նվազման դեպքում մեծանում են արտադրողի եկամտի չափերը, և նա ձգտում է ընդլայնել արտադրության չափերը, այսինքն՝ մեծացնել առաջարկը:

2) **Տեխնոլոգիան:** Նոր տեխնոլոգիայի ներդրումը հնարավորություն է տալիս մի կողմից՝ ռեսուրսների (արտադրության գործոնների) արտադրողականության բարձրացման շնորհիվ կրճատելու միավոր բարիքի վրա կատարված ծախսերը, իսկ մյուս կողմից՝ բարելավելու դրա որակը: Միավոր բարիքի ծախսերի կրճատումն ապահովում է եկամտի աճ: Դա հանգեցնում է առաջարկի մեծացման:


3) **Հարկը:** Հարկը արտադրողի համար ծախս է, իսկ պետության համար եկամուտ: Հարկերի ավելացումը նվազեցնում է արտադրողի եկամուտը, և հակառակը: Այդ հանգամանքն ազդում է առաջարկի փոփոխության վրա:

4) Արտաքին ազդեցությունները: Միջազգային շուկայում բարիքների (օրինակ՝ նավթի, գազի, ցորենի և այլն) գների փոփոխությունն անմիջապես ազդում է տվյալ երկրի բարիքների գնի, հետևապես և առաջարկի վրա:

5) Բնական գործոնը: Ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, բնակլիմայական պայմանների կտրուկ փոփոխությունները մեծ ավերածությունների, երբեմն հսկայական մարդկային զոհերի և բարիքների կորստի պատճառ են դառնում: Այդ ամենի հետևանքով նվազում է արտադրության, հետևապես և առաջարկի մակարդակը: Բարենպաստ բնակլիմայական պայմանները նպաստում են արտադրության, հատկապես գյուղատնտեսության զարգացմանը:

Առաջարկի ոչ գնային գործոնների ազդեցությունը կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով (տես գծապատկեր 6.2.):

S_1 -ը առաջարկի կորի նախնական դիրքն է: S_2 և S_3 կորերը ցույց են տալիս առաջարկի կորի տեղաշարժը, որը տեղի է ունեցել վերը նշված ոչ գնային գործոնների ազդեցությամբ:



Գծապատկեր 6.2. Առաջարկի կորի տեղաշարժը


ԱՌԱՋԱՐԿԻ ԱՌԱՋՉԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Առաջարկի առաջգականությունը ցույց է տալիս գնի փոփոխության ազդեցության ապրիճանն առաջարկի մակարդակի վրա: Առաջարկը համարվում է առաձգական, եթե գնի տոկոսային փոփոխությունը հանգեցնում է առաջարկի ավելի մեծ տոկոսային փոփոխության: Օրինակ՝ եթե գինն աճել է 2%-ով, որի հետևանքով առաջարկն աճել է 4%-ով, ապա առաջարկն առաձգական է: Առաջարկը համարվում է ոչ առաձգական, եթե գնի տոկոսային փոփոխությունը հանգեցնում է առաջարկի ավելի փոքր տոկոսային փոփոխության: Եթե գինը աճել է 2%-ով, որի հետևանքով առաջարկն աճել է 1%-ով, ապա առաջարկը ոչ առաձգական է: **Եթե գնի և առաջարկի տոկոսային փոփոխությունները հավասար են, ապա առկա է առաջարկի միավոր առաձգականություն:** Եթե գնի 2% աճն ապահովել է առաջարկի 2% աճ, ապա գործ ունենք միավոր առաձգականության հետ:

Առաջարկի առաձգականությունը կարելի է ներկայացնել գործակցի միջոցով, որը կոչվում է **առաձգականության գործակից:** Մեր պայմանական օրինակում առաջարկի առաձգականության գործակիցն առաջին դեպքում կազմում է $4/2=2$, երկրորդ դեպքում՝ $1/2=0,5$, իսկ երրորդ դեպքում՝ $2/2=1$: Առաջին դեպքում առաջարկն առաձգական է, երկրորդ դեպքում՝ ոչ առաձգական, իսկ երրորդ դեպքում՝ միավոր առաձգականություն: Առաջարկի առաձգականության գործակիցը՝

$$E_s = \frac{\text{առաջարկի փոփոխությունը \% - ուլ}}{\text{գնի փոփոխությունը \% - ուլ}} \quad 1$$

1 Առաջարկի առաձգականությունը կարելի է ներկայացնել $E_s = \frac{\Delta Q}{Q} \cdot \frac{P}{\Delta P}$ բանաձևի միջոցով, որտեղ Q -ն բարիքի առաջարկն է, P -ն՝ գինը, ΔQ -ն առաջարկի փոփոխությունն է, իսկ ΔP -ն՝ գնի:

Es-ը կարող է մեծ լինել մեկից, հավասար լինել մեկի և փոքր լինել մեկից: Եթե $E_s > 1$, ապա առաջարկն առածգական է: Եթե $E_s = 1$, ուրեմն առկա է միավոր առածգականություն: Իսկ եթե $E_s < 1$, ապա առաջարկը ոչ առածգական է: Առաջարկի առածգականության գործակցի մեծությունից կախված՝ առաջարկի կորի դիրքերը տարբեր են (տե՛ս գծապատկեր 6.3.):



Գծապատկեր 6.3.
Առաջարկի առաձգականությունը

S_1 առաջարկի կորի դիրքը ցույց է տալիս, որ գնի և առաջարկի փոփոխությունը հավասարաչափ է, այսինքն՝ $E_s = 1$: S_2 առաջարկի կորի դիրքը ցույց է տալիս, որ մեկ տոկոս գնի աճը հանգեցնում է առաջարկի ավելի մեծ տոկոսային աճի, այսինքն՝ $E_s > 1$: Այդ դեպքում առաջարկն առածգական է: S_3 առաջարկի կորի տեսքը ցույց է տալիս, որ գնի մեկ տոկոս աճի դեպքում առաջարկի աճը փոքր է մեկ տոկոսից, այսինքն՝ $E_s < 1$: Այդ դեպքում առաջարկը ոչ առածգական է:

ՀԱՐՅԵ՛ ԵՎ ԱՌԱՋԱՊԻՐԱՆՔՆԵՐ


1. Ի՞նչ է առաջարկը: Ո՞րն է առաջարկի օրենքը:
2. Որո՞նք են առաջարկի փոփոխության ոչ գնային գործոնները:
3. Ի՞նչ է առաջարկի առաձգականությունը: Ինչպիսի՞ն կարող է լինել առաջարկի առաձգականությունը:
4. Ինչպե՞ս է որոշվում առաջարկի առաձգականության գործակցը:
5. Բարիքի գինը 10 դոլարից դարձել է 15 դոլար, որի հետևանքով առաջարկը 20 կգ-ից դարձել է 25 կգ: Ինչպիսի՞ն է առաջարկի առաձգականությունը:

ԴԱՍ 7. ՀԱՎԱՍՏԱՐԱԿՆՈՒԹՅՈՒՆԵՐ ԲԱՐԻՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԻ ՀԱՎԱՍՏԱՐԱԿՆՈՒԹՅՈՒՆԵՐ: ՀԱՎԱՍՏԱՐԱԿՆՈՒԹՅԱՆ ԳԻՆ: Ցանկացած բարիք սպառողի համար ծառայում է որպես պահանջմունքների բավարարման օբյեկտ՝ իր որոշակի սպառողական հատկություններով, իսկ արտադրողի համար՝ որպես եկամտի աղբյուր: Սպառողը, ըստ բարիքի օգտակարության, որևէ ձևով արձագանքում է առաջարկվող գնին: Եթե գինը նվազում է, ապա պահանջարկը մեծանում է: Դա գծապատկեր 7.1.-ում ներկայացված է պահանջարկի D կորի միջոցով:

Արտադրողի համար ընդունելի է այն գինը, որի դեպքում փոխհատուցվում են իր կատարած ծախսերը, և ապահովվում է եկամուտ: Նրա հիմնական շարժառիթը եկամտի չափերի մեծացումն է: Եթե բարիքի գինը աճում է, ապա առաջարկը

մեծանում է: Գծապատկեր 7.1.-ում դա ներկայացված է առաջարկի S կորի միջոցով: Արտադրողի և սպառողի փոխհարաբերության ընթացքում ձևավորվում է բարիքի հավասարակշռության գինը, որի դեպքում պահանջարկն ու առաջարկը հավասարվում են: Դա գծապատկեր 7.1.-ում համապատասխանում է D և S կորերի հատման F կետին: Փորձենք պայմանական օրինակի միջոցով դիտարկել սպառողի (պահանջարկ ներկայացնողի) և արտադրողի (առաջարկ ներկայացնողի) փոխհարաբերությունը:



Գծապատկեր 7.1.
Պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունը

Աղյուսակ 7.1.

Բարիքի պահանջարկը և առաջարկը

1	2	3	4	5
Հնարավոր տարբերակները	Բարիքի գինը (դոլար)	Բարիքի պահանջարկը (տոննա)	Բարիքի առաջարկը (տոննա)	Բարիքի առաջարկի և պահանջարկի տարբերությունը ± (տոննա)
A	7	10	19	+9
B	6	12	17	+5
C	5	15	15	0
D	4	18	10	-8
E	3	20	3	-17


A տարբերակի դեպքում, եթե բարիքի գինը 7 դոլար է, ապա դրա նկատմամբ պահանջարկը 10 տ է, առաջարկը՝ 19 տ, որի դեպքում շուկայում առկա է 9 տ-ի չիրացված բարիքի ավելցուկ: Այդ դեպքում, բնականաբար, բարիքի գինը նվազում է: Գնի նվազմանը զուգընթաց կմեծանա պահանջարկը: B տարբերակի դեպքում, եթե գինը դարձել է 6 դոլար, ապա դրա նկատմամբ պահանջարկը կկազմի 12 տ, առաջարկը՝ 17 տ, իսկ բարիքի ավելցուկը կամ առաջարկի և պահանջարկի տարբերությունը՝ 5 տ: Սա նշանակում է՝ մրցակցող ֆիրմաները կամ արտադրողները կշարունակեն նվազեցնել գինը՝ դրանով իսկ մեծացնելով պահանջարկը, փոքրացնելով առաջարկը (որովհետև չիրացված բարիքը, որի վրա կատարվել են որոշակի ծախսեր, նրանց համար կորուստ է): C տարբերակի դեպքում գինը 5 դոլար է, իսկ պահանջարկը և առաջարկը հավասար են, և շուկայում ձևավորվում է հավասարակշռության վիճակ:

E տարբերակի դեպքում բարիքի գինը 3 դոլար է, պահանջարկը՝ 20 տ, առաջարկը՝ 3 տ, իսկ առաջարկի և պահանջարկի տարբերությունը կամ բարիքի պա-

կասուրդը (դեֆիցիտը)՝ 17 տ: Այդ դեպքում միմյանց հետ մրցակցում են սպառողները ավելի շատ բարիք ձեռք բերելու համար, որովհետև առկա է դրա պակասուրդ: Այդ պատճառով գինը բարձրանում է, որի դեպքում ունենք D տարբերակը, երբ բարիքի գինը 4 դոլար է, պահանջարկը՝ 18 տ, առաջարկը՝ 10 տ, իսկ պակասուրդը՝ 8 տ: Մակայն որքան էլ որ բարիքի պակասուրդը կրճատվել է՝ 17 տ-ից դառնալով 8 տ, այնուամենայնիվ, շարունակվում է սպառողների ճնշումը, և նրանք պատրաստ են միավոր բարիքի համար վճարել ավելի բարձր գին: Արդյունքում բարիքի գինը դառնում է 5 դոլար, այսինքն՝ գործում է C տարբերակը, երբ պահանջարկը և առաջարկը հավասարվում են: Ընդունված է ասել, որ այդ գնի դեպքում սպառողը և արտադրողը (վաճառողը) գալիս են համաձայնության: Այդ գինը համարվում է **հավասարակշռության գին**: Այսինքն՝ **հավասարակշռության գնի դեպքում բարիքի նկատմամբ պահանջարկը և առաջարկը հավասարվում են**:

Ըստ գծապատկեր 7.1.-ի՝ D պահանջարկի և S առաջարկի կորերը F կետում հատվում են: Այդ կետում պահանջարկը հավասար է առաջարկին, իսկ բարիքի գինը 5 դոլար է: Դա համարվում է **հավասարակշռության գին**: Եթե գինը բարձր է հավասարակշռության գնից, ապա այդ դեպքում առաջանում է բարիքի ավելցուկ, որովհետև պահանջարկը փոքր է առաջարկից: Այդ ավելցուկը արտադրողներին ստիպում է նվազեցնել գինը: Գործընթացը շարունակվում է մինչև գնի այն մակարդակը, երբ առաջարկը և պահանջարկը հավասարվում են: Եթե գինը ցածր է հավասարակշռության գնից, ապա պահանջարկը մեծ է առաջարկից, որի հետևանքով առաջանում է բարիքի պակասուրդ: Այդ պատճառով բարիքի գինը սկսում է աճել: Պարզ է, որ գնի բարձրացմանը զուգընթաց մեծանում է առաջարկը, նվազում՝ պահանջարկը: Գնի բարձրացումը շարունակվում է մինչև այն սահմանը (մեր օրինակում՝ 5 դոլար), երբ պահանջարկը և առաջարկը հավասարվում են:

ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԻ ՈՉ ԳՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՐՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ: Ենթադրենք՝ ըստ վերը նշված պահանջարկի և առաջարկի փոխհարաբերության, ձևավորվել է P₁ հավասարակշռության գինը,



Գծապատկեր 7.2.
Պահանջարկի կորի տեղաշարժը


որը համապատասխանում է բարիքի Q₁ քանակությանը (տե՛ս գծապատկեր 7.2.): Պահանջարկի ոչ գնային գործոնների ազդեցությանը պահանջարկի կորը տեղաշարժվում է աջ կամ ձախ, համապատասխանաբար ընդունում D₃ և D₂ դիրքը և հատում S առաջարկի կորը E₃ և E₂ կետերում: Այդ կետերին համապատասխանում են P₃ և P₂ հավասարակշռության գները, բարիքի Q₃ և Q₂ քանակը: Այսինքն՝ պահանջարկի ոչ գնային գործոնների ազդեցության հետևանքով փոխվում է բարիքների արտադրության քանակը:

նակությունը: Պահանջարկի մեծացումը հանգեցնում է գնի բարձրացման, իսկ փոքրացումը՝ նվազման:

Այժմ դիտարկենք այն դեպքը, երբ պահանջարկը մնում է նույնը, բայց առաջարկի ոչ գնային գործոնների ազդեցության հետևանքով առաջարկի կորը տեղաշարժվում է աջ կամ ձախ (տե՛ս գծապատկեր 7.3.):

P₁-ը հավասարակշռության գինն է, որին համապատասխանում է բարիքի Q₁ քանակությունը: Ոչ գնային գործոնների ազդեցությամբ առաջարկի կորը շարժվում է դեպի աջ կամ ձախ և ընդունում S₃ և S₂ դիրքը և հատում D պահանջարկի կորը E₃ և E₂ կետերում:

Այդ կետերում հավասարակշռության գինը համապատասխանաբար P₃ և P₂ է, իսկ բարիքի քանակությունը՝ Q₃ և Q₂: Առաջարկի մեծացումը հանգեցնում է գնի նվազման, իսկ փոքրացումը՝ բարձրացման:



Գծապատկեր 7.3.
Առաջարկի կորի տեղաշարժը

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է հավասարակշռության գինը:
2. Ե՞րբ է առաջանում բարիքի ավելցուկ և պակասուրդ (դեֆիցիտ):
3. Բացառիկ *p*, *p*_հ ինչ է տեղի ունենում բարիքի ավելցուկի և պակասուրդի դեպքում:
4. Ինչպե՞ս է շեղվում հավասարակշռության գինը:
5. Մեկնաբանե՛ք սրորև ներկայացված աղյուսակի բովանդակությունը և դրա հիմքի վրա ներկայացրե՛ք հավասարակշռության գինը գծապատկերի միջոցով:

1	2	3	4	5
Հնարավոր տարբերակները	Բարիքի գինը (դոլար)	Բարիքի պահանջարկը (տոննա)	Բարիքի առաջարկը (տոննա)	Բարիքի ավելցուկը (+), պակասուրդը (-)
A	10	15	23	+8
B	9	17	21	+4
C	8	19	19	0
D	7	21	17	-4
E	6	23	15	-8

ԹԵՄԱ 4. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ

ԳԱՍ 8. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ: ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՏՈՒՆՈՒՄ: ՀՈՂ ԵՎ ՌԵՆՏԱ

Ա) ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ: Արտադրության գործունեների շարքում առաջնային դերը պատկանում է աշխատանքին: *Աշխատանքը մարդու նպատակահարմար գործունեությունն է, որի ընթացքում սպառվում է նրա աշխատուժը: Աշխատուժը մարդու ֆիզիկական և մտավոր ունակությունների ամբողջությունն է:* Աշխատանքի ընթացքում մարդիկ անընդհատ կատարելագործում են իրենց մասնագիտական հմտությունները, որոնք էլ իրենց հերթին նպաստում են ստեղծվող բարիքների քանակական և որակական աճին: Օրինակ՝ հմուտ դերձակը միավոր ժամանակում արտադրում է ավելի մեծ քանակությամբ և բարձր որակի կոստյում: Այսինքն՝ նրա աշխատանքի արտադրողականությունն ավելի մեծ է: *Աշխատանքի արդարողողականությունը միավոր ժամանակում ստեղծված բարիքների քանակությունն է:*

ԱՇԽԱՏԱՎԱՐԶԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏ: Աշխատանքի շուկայում տնտեսավարող սուբյեկտները վարձում են աշխատողներ (ինժեներ, փակահագործ, շինարար, հացթուխ և այլն)՝ նրանց վճարելով ըստ կատարած աշխատանքի: Վարձու աշխատողի վճարման չափը որոշվում է նրա կողմից ստեղծված բարիքների կամ աշխատած ժամերի քանակով: *Աշխատավարչը կատարված աշխատանքի դիմաց տրվող վճարն է:*

Աշխատավարձը լինում է **անվանական** և **իրական**: *Անվանական աշխատավարչը* դրամի այն քանակությունն է (օրինակ՝ 50000 դրամ, 1000 դոլար, 500 եվրո, 5000 ռուբլի և այլն), որը ստանում է աշխատողն իր կատարած աշխատանքի դիմաց: **Իրական աշխատավարձը** կենսամիջոցների այն քանակությունն է, որը կարող է ձեռք բերել աշխատողն անվանական աշխատավարձով՝ գների և եկամտահարկի առկա մակարդակի պայմաններում: *Իրական աշխատավարչը* կախված է բարիքների գներից, անվանական աշխատավարձից և դրանից գանձվող եկամտահարկից: Առկա է ուղղակի կապ անվանական աշխատավարձի և իրական աշխատավարձի միջև և հակադարձ կապ գների, եկամտահարկի և իրական աշխատավարձի միջև: Այլ հավասար պայմաններում, եթե բարիքների գները բարձրանում են, իրական աշխատավարձը նվազում է, և հակառակը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Դրանք են.

Առաջին՝ վաճառողի (աշխատողի) և գնորդի (ֆիրմայի) փոխհարաբերությունը երկարաժամկետ բնույթ ունի: Ֆիրմայի և վարձու աշխատողի միջև առք ու վաճառքի գործարքը հաստատվում է աշխատանքային պայմանագրի միջոցով: Որևէ մեկը տվյալ ֆիրմայում աշխատում է համեմատաբար երկար ժամկետով: Ի տարբերություն աշխատանքի շուկայի, բարիքների շուկայում առք ու վաճառքը, որպես կանոն, տեղի է ունենում անմիջապես:

Երկրորդ՝ աշխատանքի շուկայի կարգավորման գործում կարևորվում են **ոչ դրամական գործոնները:** Դրանք են՝ աշխատանքի բարդությունը, վարկանիշը, պայմանները, առողջության համար վտանգավոր լինելու հանգամանքը, մասնագիտական որակավորման և հետագա զբաղվածության ապահովման երաշխիքը, բարոյահոգեբանական մթնոլորտը և այլն: Գործունեության ոլորտն ընտրելիս մարդիկ երբեմն հաշվի են առնում ոչ միայն աշխատավարձի չափը, այլև վերոնշյալ գործոնները:

Երրորդ՝ աշխատանքի շուկայի կարգավորման գործում էական է համապատասխան կառույցների գործունեությունը: Դա հատկապես վերաբերում է պետությանը, որն աշխատողների սոցիալական պայմանները բարելավելու համար սահմանում է **նվազագույն աշխատավարձի չափ** և գործազուրկներին տալիս է նպաստ: Մյուս կարևոր կառույցը, որ էականորեն ազդում է աշխատանքի շուկայի վրա, արհմիություններն են: Արհմիությունները կարող են ազդել աշխատավարձի մակարդակի, աշխատանքային օրվա տևողության վրա և այլն:

ԳՈՐԾԱՋՐԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ: Տնտեսությունն ունի անկման և վերելքի փուլեր:

Տնտեսության անկման փուլում կրճատվում են արտադրության չափերը, և ֆիրմաների մի մասը ստիպված կրճատում է աշխատողների թիվը: Դրա հետևանքով որոշ աշխատողներ հայտնվում են գործազուրկի կարգավիճակում: Տնտեսության վերելքի փուլում ֆիրմաներն ընդլայնում են արտադրությունը, ներգրավում են լրացուցիչ աշխատողների: Այդ գործընթացը կրկնվում է որոշակի պարբերականությամբ, որի ժամանակ ձևավորվող գործազուրկությունը կոչվում է **պարբերաշրջանային:**

Գործազրկության հաջորդ տեսակը **հպանցիկ (ֆրիկցիոն)** գործազրկությունն է: Դա կապված է նոր աշխատանք փնտրելու հետ: Խնդիրն այն է, որ երբ որևէ մեկը բնակավայրի փոփոխության պատճառով թողնում է աշխատանքը և հայտնվում գործազուրկի կարգավիճակում, միշտ չէ, որ հեշտությամբ նոր աշխատանք է գտնում:

Գործազրկության մյուս տեսակը **կառուցվածքային** գործազրկությունն է: Պահանջարկի փոփոխության, ինչպես նաև նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման շնորհիվ բարիքների արտադրության կառուցվածքն անընդհատ փոխվում է: Դրա հետևանքով որոշ աշխատողներ հայտնվում են գործազուրկի կարգավիճակում: Մակայն որոշակի ժամանակամիջոցում նրանք կարող են ձեռք բերել անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ և ունենալ համապատասխան աշխատանք:

Հպանցիկ (ֆրիկցիոն) և կառուցվածքային գործազրկությունը միասին կազմում են **բնական գործազրկությունը**:

Բ) ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՏՈԿՈՍ

ԿԱՊԻՏԱԼԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ: Կապիտալը արտադրության միջանկյալ գործոն է: Բնական ռեսուրսները (հողը) և աշխատանքն առաջնային գործոններ են: Կապիտալը՝ որպես միջանկյալ գործոն, նպաստում է բնական և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, այսինքն՝ բարձրացնում է դրանց արտադրողականությունը: *Կապիտալը մարդու սրեղծած միջոցների այն ամբողջությունն է, որն ապահովում է ռեսուրսների արդյունավետ օգտագործում*: Այդ ճանապարհով կապիտալը նպաստում է եկամտի մեծացմանը: Ելնելով դրանից՝ *կապիտալը ներկայացվում է որպես միջոցների ամբողջություն, որը նկամքի հոսք է ապահովում*: Արտադրության համար անհրաժեշտ սարքավորումների, մեքենաների, մեխանիզմների, կառույցների և տեխնոլոգիաների ամբողջությունը *կապիտալ է*:

ՏՈԿՈՍԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԵՎԱՄՈՒՏ: Սեփականատերն իր կապիտալը կարող է տրամադրել որևէ ֆիրմայի կամ ինքն օգտագործել: Ֆիրման նախկինում կապիտալի օգտագործման դիմաց դրա սեփականատիրոջը վարձավճար էր տալիս: Սակայն ֆիրմայի համար շահավետ է կապիտալը սեփականատիրոջից պահանջել ոչ թե նյութաիրային (մեքենա, սարքավորում, մեխանիզմ, կառույց և այլն), այլ փողի ձևով: Պատճառն այն է, որ ֆիրման ավելի լավ է պատկերացնում, թե ինչ ռեսուրսների կարիք ունի, և պարտք վերցնելով փողը՝ ձեռք է բերում անհրաժեշտ սարքավորումներ, մեքենաներ, մեխանիզմներ, շենքեր ու կառույցներ և այլն: Ֆիրման կազմակերպում է արտադրություն և թողարկված բարիքի իրացումից ստացված հասույթի մի մասը հետ է վերադարձնում փողի սեփականատիրոջը: Պարտք վերցված փողի դիմաց տրվող վճարը կոչվում է **տոկոս**, որը կապիտալի սեփականատիրոջ **եկամուտն է**: *Տոկոսը, փաստորեն, կապիտալ գործունի ապահոված եկամուտն է, որը սրանում է դրա սեփականատերը: Այսինքն՝ ցոկոսը գործունային եկամուտ է*:

Եթե կապիտալի սեփականատերն է կազմակերպում արտադրություն, ապա այդ դեպքում տոկոսը ստանում է հենց ինքը:

Գ) ՀՈՂ ԵՎ ՌԵՆՏԱ

ՀՈՂԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ: Հողը բնության պարզն է և գյուղատնտեսական արտադրության հիմնական գործոն: Հողն իր մի շարք առանձնահատկություններով տարբերվում է արտադրության մյուս գործոններից: Դրանք են.

Առաջին՝ հողը սահմանափակ և անփոխարինելի ռեսուրս է: Դրա քանակությունը հնարավոր չէ փոխել:

Երկրորդ՝ հողի հիմնական հատկությունը պայմանավորված է բերրիությամբ: Հողի որակը որոշվում է դրա բերրիությամբ: Բերրի հողատարածություններում միավոր ծախսն ապահովում է ավելի մեծ քանակի գյուղատնտեսական բարիքներ:

Երրորդ՝ հողի բերրիությունը ենթակա է փոփոխության: Դա նվազում է ոչ արդյունավետ ագրոտեխնիկայի կիրառման, քամու, էրոզիայի, ջրի ազդեցության և տարբեր տեսակի աղտոտումների հետևանքով:

Չորրորդ՝ հողը չվերարտադրվող ռեսուրս է: Սովորաբար ռեսուրսները (արտադրության գործոնները) օգտագործվելով սպառվում են, բայց կարող են վերարտադրվել:

Հինգերորդ՝ հողն անշարժ ռեսուրս (գույք) է և հնարավոր չէ տեղափոխել: Եռուկային հողատարածքի մոտիկ կամ հեռու գտնվելն ազդում է գյուղատնտեսական մթերքների արտադրության ծախսերի վրա: Օրինակ՝ եթե հողատարածքը մոտիկ է շուկային, ապա տրանսպորտային ծախսերն ավելի փոքր են: Հետևապես՝ հողի տեղադրվածության համազամանքն ազդում է դրա գնի վրա:

ՈՒՆՏԱՅԻ ԲՈՎՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ունևրան հողի օգտագործման դիմաց արվող վճարն է: Հեփեսպես՝ ռենրան գործոնային եկամուր է: Ռենտայի չափը կախված է հողի բերրիությունից և տեղադրվածությունից: Վարձակալը, օգտագործելով հողը, ստեղծում է բարիք, որի իրացման արդյունքում ստանում է շահույթ: Հետևապես, նա պատրաստակամ է վճարելու դրա օգտագործման դիմաց:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԿՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրեք արտադրության գործոնների բովանդակությունը:
2. Ի՞նչ է աշխատավարչը: Ո՞րն է անվանական և իրական աշխատավարչը:
3. Անվանական աշխատավարչը ամել է 20%-ով, իսկ բարիքների գները՝ 25%-ով: Ինչպե՞ս է փոխվել իրական աշխատավարչը: Դա ներկայացրեք պայմանական օրինակի միջոցով:
2. Որո՞նք են աշխատանքի շուկայի առանձնահատկությունները:
3. Գործազրկության ի՞նչ տեսակներ կան: Ինչպե՞ս են դրանք ստաջանում:
4. Ի՞նչ է րոկոսը:
5. Ենթադրենք՝ Հայկը իր 1000 դոլար դրամական կապիտալը տարեկան 10%-ով փրամադրում է Արմենին, ով դա օգտագործում է կոստյումի արտադրության մեջ: Սակայն Հայկը ամեն փարի չի պահանջում իր հասանելիք եկամուրը, և այդ գումարն օգտագործում է Արմենը, որի համար նույնպես նա րոկոս է վճարում: Որքա՞ն կկազմի Հայկի եկամուրը 5 փարի հեփո:
6. Որո՞նք են հողի՝ որպես արտադրության գործոնի առանձնահատկությունները: Ի՞նչ է ռենրան:

ԳԱՄ 9. ՁԵՈՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀՈՒՅԹ

ՁԵՈՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ: Աշխատանքը, կապիտալը և բնական ռեսուրսները (հողը)՝ որպես արտադրության գործունենք, համակցվում են ձեռնարկատիրական գործունեության միջոցով: Ձեռնարկատիրությանը զբաղվող մարդիկ համարվում են ձեռներեցներ: Նրանք ինքնատիպ սոցիալական խումբ են, և աչքի են ընկնում իրենց առանձնահատուկ ունակություններով: Ձեռներեցի գործունեության կարևոր խթան է համարվում շահույթի ստացումը:

Ձեռնարկատիրական գործունեությունն աչքի է ընկնում մի շարք գծերով: Ձեռնարկատիրությանը բնորոշ է **նորարարությունը:** Դա արտահայտվում է նոր արտադրատեսակի, տեխնիկայի, տեխնոլոգիայի, արտադրության կազմակերպման եղանակների կիրառման միջոցով:

Ձեռնարկատիրությանը բնորոշ է **ռիսկի** դիմելու պատրաստականությունը: **Ռիսկը** այն իրավիճակն է, երբ, իմանալով բոլոր հնարավոր ելքերի հավանականությունը, այնուամենայնիվ, հնարավոր չէ ստույգ կանխատեսել վերջնական արդյունքը: Ելնելով ապագայի մասին կանխատեսումներից՝ ձեռներեցը կատարում է անհրաժեշտ ծախսեր, որոնց արդյունքը ստանում է ապագայում:

Ձեռնարկատիրությանը հատուկ է **ճկունությունը:** Դա ստեղծված իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու ունակությունն է: Եկում են այն գործարարները, ովքեր տիրապետում են անհրաժեշտ տեղեկատվության, ունեն համապատասխան գիտելիքներ և փորձ:

ՁԵՈՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: Ձեռնարկությունը ռեսուրսները վերջնական արդյունքի վերածող արտադրական կազմակերպություն է: **Ձեռնարկությունը րնկրեսական գործունեության սկզբնական օղակն է, որ րեղ րեղի է ունենում արտադրության գործունենրի՝ աշխատանքի, կապիտալի, բնական ռեսուրսների միացման գործընթացը:** Այդ գործընթացի արդյունքում ստեղծվում է այս կամ այն բարիքը:



Ձեռնարկությունը (ֆիրման) ստեղծվում է աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով, երբ առանձին արտադրողներ մասնագիտանում են որևէ բարիքի արտադրության մեջ: Հետագայում աշխատանքի բաժանումը խորանում է, և բարիքի առանձին մասեր ստեղծվում են տարբեք ֆիրմաների կողմից: Օրինակ՝ ավտոմեքենայի մի շարք մասեր ար-

տաղրում են առանձին ֆիրմաներ, իսկ ավտոմեքենան հավաքվում է մեկ այլ ֆիրմայում: Սա նշանակում է՝ աշխատանքի բաժանումը խորանում է, որը հանգեցնում է աշխատանքի արտադրողականության բարձրացման և ռեսուրսների արդյունավետ օգտագործման:

Ֆիրման պետք է լուծի հետևյալ հիմնական խնդիրները.

1. անհրաժեշտ քանակությամբ և որակով բարիքների արտադրության ապահովում,

2. արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերում,

3. արտադրված բարիքների իրացման (վաճառքի) ապահովում:

ՓՈՔՐ, ՄԻՋԻՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: Ֆիրմաները լինում են փոքր, միջին և խոշոր: Փոքր ֆիրմաների հիմնական առավելությունն այն է, որ կարողանում են անմիջապես արձագանքել շուկայական պահանջարկի փոփոխությանը: Օրինակ, եթե որևէ փոքր ֆիրմա արտադրում է հրուշակեղեն, իսկ շուկայում մեծացել է պաղպաղակի պահանջարկը, ապա նա կարող է իր կապիտալն անմիջապես ուղղել դեպի այդ արտադրություն:

Արտադրության բնույթից կախված՝ նպատակահարմար է որոշակի բարիքներ թողարկել միջին չափի ֆիրմաներում, որոնք բավական լուրջ մրցակիցներ են խոշոր ֆիրմաներին: Վերջիններին համեմատությամբ միջին ֆիրմաներն ավելի մեծ ճկունություն են ցուցաբերում շուկայում տեղի ունեցող՝ հատկապես պահանջարկի փոփոխության ժամանակ:

Պարզվում է՝ բարիքների զգալի մասը թողարկվում է խոշոր ֆիրմաներում: Խոշոր ֆիրմաների հիմնական առավելությունն այն է, որ մեծաքանակ արտադրանք թողարկելու դեպքում փոքրանում է բարիքի միավորի ծախսը:

ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ, ՀԱՄՈՒՅԹԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹԸ: Ֆիրմայի կատարած ծախսերը լինում են **հաստատուն (FC)** և **փոփոխուն (VC)**: Հաստատուն են համարվում այն ծախսերը, որոնք բարիքների քանակության կամ արտադրության ծավալի փոփոխության պարագայում չեն փոխվում: Այդ ծախսերի մեջ ներառվում են շենքերի, կառույցների, սարքավորումների, մեքենաների պահպանման ծախսերը, վարձակալական կամ ռենտային վճարները, վարկի կամ փոխառությունների տոկոսավճարները, ապահովագրական և տարբեր տեսակի ծառայությունների համար կատարվող վճարումները:

Սակայն կան ռեսուրսների ծախսեր, որոնք ուղղակիորեն կապված են արտադրության ծավալի փոփոխության հետ: Դրանք կոչվում են **փոփոխուն ծախսեր (VC)**, որոնք, բարիքների արտադրության քանակից կախված, փոփոխվում են: Փոփոխուն են համարվում հումքի, նյութերի, էլեկտրաէներգիայի ձեռքբերման, տրանսպորտային ծառայությունների, աշխատավարձի վճարման հետ կապված ծախսերը:

Համախառն կամ ընդհանուր ծախսը (TC) հաստատուն և փոփոխական ծախսերի գումարն է արտադրության առկա ծավալների պայմաններում:

Միավոր բարիքի հաշվով կատարված ծախսը համարվում է **միջին**, որը հավասար է ընդհանուր ծախսերի և արտադրված բարիքների քանակության հարաբերությանը: Եթե միջին համախառն ծախսը նշանակենք AC -ով, ապա $AC=TC/Q$, որտեղ՝ TC -ն համախառն ծախսն է, իսկ Q -ն՝ արտադրված բարիքների քանակությունը:

Հասույքը (TR) ձեռնարկության կողմից ստեղծված բարիքների վաճառքից ստացված դրամական գումարն է: Այսինքն՝ $TR=Q \cdot P$, որտեղ Q -ն բարիքի քանակությունն է, իսկ P -ն՝ միավոր բարիքի գինը:

Շահույքը (I) հասույթի և համախառն ծախսի տարբերությունն է: Այսինքն՝ $I=TR-TC$: Ձեռնարկատիրության հիմնական նպատակը շահույթի ստացումն է: Դրա համար ձեռնարկությունը նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման ճանապարհով ձգտում է անընդհատ մեծացնել արտադրվող բարիքի քանակը և փոքրացնել դրա միավորի ծախսը՝ այդկերպ ավելացնելով շահույթի չափերը:

ՄՐԳԱԿԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՆԱԸՆՈՐԸ: Մրցակցությունը փարբեր արտադրողների միջև պայքարն է ավելի շար սպառողներ ներգրավելու և եկամուտներ ապահովելու համար: Այդ նպատակին հասնելու համար նրանք ձգտում են կրճատել միավոր արդյունքի ծախսը, ներդնել գիտատեխնիկական առաջադիմության նվաճումներն արտադրության մեջ և այդ ճանապարհով բարելավել բարիքի քանակական և որակական պարամետրերը: Նրանք ավելի խնայողաբար և արդյունավետ են օգտագործում առկա ռեսուրսները, մեծ շահագրգռվածություն են ցուցաբերում նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման գործում, ինչը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը: Մրցակցությունը, այս առումով, դառնում է արտադրության շարժիչ ուժը:

Մրցակցության օրինաչափությունները քննարկելիս պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք՝ **մարդկային գործունը**: Խնդիրն այն է, որ մարդիկ տարբեր են իրենց ունակություններով, ձգտումներով, կրթական մակարդակով, դաստիարակությամբ և այլն: Դա ունի բազմաթիվ պատճառներ՝ ժառանգական, հոգեբանական, սոցիալական, մշակութային, պատմական և այլն: Սա նշանակում է՝ մրցակցության ժամանակ ավելի հմուտները կարողանում են ռեսուրսներն օգտագործեն ավելի արդյունավետորեն և միևնույն բարիքը թողարկել ավելի քիչ ծախսերով, ինչը ապահովում է լրացուցիչ եկամուտ: Նրանք, աստիճանաբար հզորանալով, թույլերին դուրս են մղում մրցակցությունից, և տվյալ բարիքների արտադրությունը կենտրոնանում է նրանց ձեռքում: Այդ ճանապարհով որոշ ֆիրմաներ այս կամ այն բարիքի արտադրության գործում ձեռք են բերում մենաշնորհային կարգավիճակ, և ամբողջ ճյուղի արտադրանքը թողարկվում է մեկ կամ մի քանի ֆիրմաների կողմից: Նման ֆիրմաները կարողանում են իրենց կամքը թելադրել շուկայում, ինչը դրսևորվում է բարիքների նկատմամբ մենաշնորհային բարձր գին սահմանելու միջոցով, որը գերշահույթ

ստանալու հնարավորություն է տալիս: Այս պատճառով պետությունը մեծաշնորհների դեմ պայքարելու համար իրականացնում է որոշակի միջոցառումներ: Օրինակ՝ պետությունը նման ֆիրմաներին արգելում է սահմանել մեծաշնորհային քարձր գին:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԿՐՈՒՄՆԵՐ

1. Որո՞նք են շեռնարկափրակիան գործունեության բնորոշ գծերը:
2. Ներկայացրե՛ք շեռնարկության ընդհանուր բնութագիրը:
3. Որո՞նք են շեռնարկության հիմնական խնդիրները:
4. Որո՞նք են փոքր, միջին և խոշոր գործարարության առանձնահատկությունները:
5. Չեռնարկության ծախսերի ի՞նչ տեսակներ կան: Ո՞րն է շեռնարկության հասույթը:
6. Բացափրե՛ք մրցակցության և մեծաշնորհի բնույթը:
7. Չեռնարկության շենքերի, կառույցների, սարքավորումների, մեքենաների պահպանման ծախսերը՝ կազմել են 50 դոլար, վարչակալական վճարը և վարկի տոկոսավճարը՝ 150 դոլար, ապահովագրական վճարը՝ 60 դոլար, հոսքի և նյութերի ծախսերը՝ 400 դոլար, էլեկտրաէներգիայի ծախսը՝ 40 դոլար, աշխատավարձը՝ 1300 դոլար: Թողարկվել է 100 հատ քարիք, որի մեկ հատի գինը 30 դոլար է: Հաշվե՛ք շեռնարկության հաստատում, փոփոխում, համախառն ծախսերը, հասույթը և շահույթը:
8. Չեռնարկությունը թողարկում է 100 հատ քարիք, որի մեկ հատի գինը 60 դոլար է: Ռեսուրսների խնայողաբար օգտագործման շնորհիվ շեռնարկության միջին ծախսը 50 դոլարից դարձել է 40: Որքա՞ն է կազմել շեռնարկության շահույթի անը:

ԹԵՄԱ 5. ԲԱՆԿԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐԺԵԹՂԹԵՐ

ԴԱՍ 10. ԲԱՆԿԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ: Ինչպես արդեն հայտնի է, տնտեսավարող սուբյեկտների միջև ձևավորվում են պարտքային պարտավորություններ: Մարդկանց՝ միմյանց պարտք տալը դառնում է օրինաչափ: Գրականության մեջ հանդիպում է հետևյալ օրինակը. լոնդոնցի մի ժամագործ, որոշ մարդկանցից պարտքով փող վերցնելով, դա պարտքով տալիս է ուրիշներին: Այդ ճանապարհով նա սկսում է հարստանալ: Մեկից պարտք վերցնելով, ենթադրենք՝ 100 ոսկե դրամ, պարտավորվում է հետ վերադարձնել 5%-ով, որը կկազմի $100+100\cdot 5/100=100+5=105$ ոսկե դրամ: Ժամագործը պարտքով վերցրած 100 ոսկե դրամը տալիս է մեկ ուրիշին 10%-ով: Վերջինս պարտավորվում է նրան վերադարձնել $100+100\cdot 10/100=110$ ոսկե դրամ: Փաստորեն, այդ գործարքի շնորհիվ ժամագործը ձեռք է բերում $110-105=5$ ոսկե դրամի եկամուտ: Այսպիսով, ժամագործն իրականացնում է փողի առք ու վաճառք:

Ժամանակի ընթացքում անընդհատ ընդլայնվում են փողի առք ու վաճառքի շրջանակները, և ստեղծվում է մի կառույց, որի միջոցով որոշակի տոկոսով հավաքագրվում են մարդկանց ազատ դրամական միջոցները կամ խնայողությունները: Այնուհետև այդ միջոցներն ավելի բարձր տոկոսով տրամադրվում են նրանց, ովքեր ունեն դրանց կարիքը: Այդ կառույցը կոչվեց **բանկ**:

Բանկը մի կառույց է, որի միջոցով որոշակի տոկոսով հավաքագրվում են տնային տնտեսության, ձեռնարկությունների ազատ դրամական միջոցները կամ խնայողությունները և ավելի բարձր տոկոսով տրամադրվում գարբեր տնտեսավարող սուբյեկտների:

Բանկերի կողմից որոշակի տոկոսով տրվող պարտքը, որը վերադարձվում է որոշակի ժամկետում, կոչվում է **վարկ**: Այն բանկերը, որոնք զբաղված են ազատ դրամական միջոցների կամ խնայողությունների հավաքագրմամբ և տարբեր տեսակի տնտեսական գործունեության վարկավորմամբ, կոչվում են **առևտրային բանկեր**: Փաստորեն, առևտրային բանկերը հիմնականում զբաղված են փողի առք ու վաճառքով: Ենթադրենք՝ որևէ մեկից բանկը վերցնում է 100 ոսկե դրամ՝ պարտավորվելով նրան այդ գումարը վերադարձնել 6%-ով, այսինքն՝ 106 ոսկե դրամ: Այդ 100 ոսկե դրամը բանկը 10%-ով տրամադրում է մեկ ուրիշին: Փաստորեն, նրանից ստանում է 110 ոսկե դրամ: Այդ երկու մեծությունների՝ 110 և 106 ոսկե դրամների տարբերությունից հանելով բանկի կառարած ծախսերը՝ կառար-

նանք **բանկի եկամուտը (շահույթը)**: Մեր պայմանական օրինակում, եթե բանկի ծախսը 1 ոսկե դրամ է, ապա շահույթը կկազմի $4-1=3$ ոսկե դրամ:

ՓՈՂԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ: Բանկերի ձևավորման արդյունքում հասարակության անդամները նախընտրում են իրենց ազատ դրամական միջոցները կամ խնայողությունները պահել բանկում և դրանց դիմաց ստանալ եկամուտ՝ տոկոսի ձևով: Այդ դեպքում նրանք բանկից պահանջում էին համապատասխան փաստաթուղթ, որտեղ նշված լինի պարտքով տրված գումարի չափը: Փաստորեն, այդ փաստաթուղթը պարտքային պարտավորություն է, այսինքն՝ մուրհակ¹, և կոչվում է **բանկնոտ**: **Բանկնոտը պարտքային պարտավորություն է, որը նրա սեփականափորձն իրավունք է փախս բանկից պահանջելու այնպեղ նշված գումարը:** Եթե որևէ մեկը պարտք էր մեկ ուրիշին, ապա նա կարող էր այդ պարտքը մարել բանկնոտի միջոցով: Վերջինս կարող էր այդ նույն բանկնոտով մարել իր պարտքը մեկ այլ անձի: Այդ ճանապարհով բանկերի կողմից տրված բանկնոտները (մուրհակները) սկսում են ընդլայնել շրջանառությունը, որոնց միջոցով կատարվում են տարբեր վճարումներ: Աստիճանաբար բանկնոտները սկսում են փոխարինել ոսկուն, և մետաղային շրջանառությանը փոխարինում է **թղթադրամային շրջանառությունը**: Բազմաթիվ բանկերից աստիճանաբար առանձնանում է մեկը, որին պետությունը տալիս է շրջանառության համար **միասնական թղթադրամներ** թողարկելու առանձնահատուկ իրավունք: Դա կոչվեց **Կենտրոնական բանկ**:

Թղթադրամային շրջանառության ծագմանը զուգընթաց, յուրաքանչյուր պետություն սահմանում է իր երկրի փողային միավորը (դրամ, դոլար, ռուբլի և այլն): Ոսկու որոշակի քանակությունը՝ որպես բարիքների արժեքների չափման միավոր (էտալոն), դարձավ այս կամ այն երկրի փողային միավորի հիմքը: Տարբեր երկրների փողային միավորները պարունակում էին ոսկու որոշակի քանակություն (օրինակ՝ 0.5, 0.7 գ ոսկի և այլն): Այդ քանակությունը սահմանում էր պետությունը, որը դառնում էր տարբեր բարիքների արժեքների չափակցման էտալոն: Այսինքն՝ չափման միավորի դերը կատարում է թղթադրամը, որը սկզբնական շրջանում ուներ ոսկու համապատասխան ապահովվածություն: Մակայն դրամաշրջանառության զարգացման հետագա ընթացքում հրաժարվեցին ոսկու ստանդարտից:

Բանկերի ձևավորմամբ փողի **կանխիկ** շրջանառությանը զուգընթաց սկսում է գործել **անկանխիկ** շրջանառությունը: Օրինակ, ենթադրենք՝ որևէ մեկն իր խնայած 1000 դոլարը պահում է բանկում և ունի բանկային հաշիվ: Եթե նա ցանկություն ունի գնելու հեռուստացույց, որի գինը 800 դոլար է, ապա այդ գումարը փոխանցում է դրա առևտրով զբաղվող կազմակերպության բանկային հաշվին: Փաստորեն, հեռուստացույցի առք ու վաճառքն իրականացվում է առանց կանխիկ փողի (թղթադրամի և մանրադրամի): Դա էլ հենց **փողի անկանխիկ շրջանառությունն է**, որն իրականացվում է փոխադարձ հաշվանցումների միջոցով:

¹ Մուրհակի բովանդակությանը կանդրադառնանք հաջորդ՝ 11-րդ դասում:

Հետագայում, դրամաշրջանառությունն ավելի արդյունավետ դարձնելու համար, սկսեցին կիրառել փողի այլ ձևեր: Դրանցից ամենատարածվածը բանկային **չեկն** է: Ազատ դրամական միջոցները կամ խնայողությունները տրամադրվում են բանկերին, և բացվում են չեկային հաշիվներ: *Չեկը դրամական փաստաթուղթ է, որը դա տրամադրողի հրամանն է բանկին՝ այնպեղ նշված գումարը ներկայացնողին վճարելու համար:* Օգտագործվում է նաև *պլաստիկ քարտ, որը բանկի կողմից տրված վճարման գործիք է՝ կանխիկ դրամ արանալու կամ անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու համար:*

Փողի ծագման և էվոլյուցիայի տրամաբանական ընթացքից պարզ դարչալ, որ դա հաշվարկային միավոր է կամ չափման նմուշ, որի միջոցով իրականացվում են դրա տարբեր գործառույթները:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՎԺԵՇ ՓՈՂԻ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:
 Բարիքների առքն ու վաճառքն իրականացնելու համար անհրաժեշտ է փողի որոշակի քանակություն: Շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակությունը նախ և առաջ կախված է բարիքների գների մակարդակից և դրանց քանակությունից: Փողի քանակության վրա ազդող մյուս գործոնը դրամական միավորի շրջանառության արագությունն է: Խնդիրն այն է, որ միևնույն դրամական միավորը (ասենք՝ մեկ դոլարը) կատարում է մի շարք գործարքներ: Այսպես, օրինակ՝ մեկ դոլարով որևէ մեկը կարող է գնել A բարիքը: A բարիքի իրացումից հետո դրա սեփականատերը կարող է այդ նույն մեկ դոլարով գնել B բարիքը: B բարիքի իրացումից հետո սեփականատերը նույն մեկ դոլարով կարող է գնել C բարիքը: Փաստորեն, մեկ դոլարով իրականացվեց երեք գործարք, և արդյունքում իրացվեց 3 (A+B+C=3) դոլարի բարիք: Սա նշանակում է՝ մեկ դոլարի կամ դրամական միավորի շրջանառության արագությունը հավասար է 3-ի: Այս օրինակով համոզվում ենք, որ դրամական միավորի շրջանառության արագությունը և շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակությունը գտնվում են հակադարձ կապի մեջ:

Շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակությունը նշանակենք M-ով, դրամական միավորի արագությունը՝ V-ով: Ենթադրենք՝ շուկայում իրացվում է n տեսակի բարիք, յուրաքանչյուրի քանակությունը համապատասխանաբար կազմում է Q₁, Q₂, Q₃, Q₄,...,Q_n, իսկ գինը՝ P₁, P₂, P₃, P₄,...,P_n: Այդ դեպքում շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակությունը, ըստ վերը նշված տրամաբանության, կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով.

$$M = \frac{P_1 \cdot Q_1 + P_2 \cdot Q_2 + P_3 \cdot Q_3 + P_4 \cdot Q_4 + \dots + P_n \cdot Q_n}{V}, \text{ կամ } M = \frac{P \cdot Q}{V}, \text{ որտեղից՝ } M \cdot V = P \cdot Q.$$

Պարզ է, որ $P = \frac{M \cdot Q}{V}$: Սա նշանակում է՝ գների և փողի քանակության միջև առկա է ուղղակի կապ: Եթե այլ հավասար պայմաններում փողի քանակությունը մեծանում է, ապա գները կարող են բարձրանալ: Սա բացատրվում է նրանով, որ

փողի քանակության ավելացումը մեծացնում է պահանջարկը, որի պատճառով գները կարող են բարձրանալ, և հակասակը:

ՓՈՂԻ ԳՆՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ժամանակ առ ժամանակ տեղի է ունենում դրամական միավորի (դոլար, եվրո, ռուբլի, դրամ և այլն) գնողունակության նվազում կամ բարձրացում:

Դրամական միավորի գնողունակությունը դրա միջոցով չեղք բերված բարիքների քանակությունն է:

Եթե 1 կգ նարնջի գինը 2 դոլար է, ապա 4 դոլարով կարելի է գնել 2 կգ նարինջ: Եթե նարնջի գինը դարձել է 1 դոլար, 4 դոլարով կարելի է գնել 4 կգ նարինջ: Սա նշանակում է՝ տեղի է ունեցել դրամական միավորի գնողունակության աճ: Եթե նարնջի գինը դարձել է 4 դոլար, ապա կարելի է գնել 1 կգ նարինջ, այսինքն՝ տեղի է ունեցել դրամական միավորի գնողունակության նվազում:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ: Կենտրոնական բանկի կարևոր գործառնությունն է շրջանառության համար անհրաժեշտ փողի քուղարկումը (էմիսիան): Կենտրոնական բանկը վարկավորում է առևտրային բանկերին: Փաստորեն, **Կենտրոնական բանկի մյուս կարևոր գործառնությունն է առևտրային բանկերի վարկավորումն է:** Այդ միջոցները առևտրային բանկերի միջոցով դրվում են շրջանառության մեջ: Այսինքն՝ **Կենտրոնական բանկի էմիսիոն և առևտրային բանկերի վարկավորման գործառնությունն է միջոցով կարգավորվում է դրամաշրջանառությունը:** Դա **Կենտրոնական բանկի հաջորդ կարևոր գործառնությունն է:** Ինչպես արդեն գիտեք, բարիքի գնի վրա ազդում է մասնաշրջանավոր փողի քանակությունը: Հետևապես, դրամաշրջանառության կարգավորման միջոցով Կենտրոնական բանկն **ապահովում է գների կայունություն:** Փաստորեն, **Կենտրոնական բանկի մյուս կարևոր գործառնությունն է գների կայունության ապահովումն է:**

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌՁԱՎՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է բանկը և ինչպե՞ս է առաջացել: Ո՞րն է բանկի շահույթը:
3. Ինչպե՞ս է տեղի ունեցել փողի էվոլյուցիան:
4. Որո՞նք են բանկի տեսակները:
5. Ինչպե՞ս է որոշվում շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակությունը:
6. Ի՞նչ է փողի գնողունակությունը:
7. Բացատրե՛ք Կենտրոնական բանկի գործառնությունները:
8. Ենթադրենք՝ շրջանառության մեջ գրկվող փողի քանակությունը 300 դոլար է, արտադրվել է 5 տեսակի բարիք, որոնց քանակությունը համապատասխանաբար կազմում է 30, 50, 80, 40, 70 հատ, իսկ յուրաքանչյուրի գինը՝ 4, 6, 3, 10, 2 դոլար: Հաշվե՛ք դրամական միավորի շրջապտույտի արագությունը:

ԳԱՍ 11. ՎԱՐԿԵՐ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐ

ՎԱՐԿԵ ԷՌԻԹՅՈՒՆԸ: Նախորդ դասից պարզ դարձավ, որ տնտեսավարող սուբյեկտների միջև պարտքային պարտավորությունները կարգավորվում են բանկերի կողմից: Մարդիկ իրենց ազատ դրամական միջոցները և խնայողությունները փոխառության են տալիս և դրա դիմաց ստանում են եկամուտ՝ տոկոսի ձևով: Փոխառության տրված դրամական միջոցները կոչվում են **փոխադրվական կապիտալ**: Այդ կապիտալը հավաքագրում են բանկերը և վարկի ձևով տալիս տնտեսավարող սուբյեկտներին: **Վարկը փոխադրվական կապիտալի շարժի չն է:** **Վարկին բնորոշ է վերադարձելիությունը և ժամկետայնությունը:** Վարկը տրվում է տոկոսով, որի չափը կոչվում է **տոկոսադրույք**:

ՎԱՐԿԵ ԳՈՐԾԱՊԱՌՅԹՆԵՐԸ: Վարկի առաջին գործառույթը տնտեսության զարգացման ապահովումն է: Արտադրանքի նկատմամբ պահանջարկի մեծացումը ձեռներեցին դրդում է ընդլայնելու արտադրությունը: Սակայն նա չունի անհրաժեշտ դրամական միջոցներ՝ լրացուցիչ կապիտալ ձեռք բերելու և աշխատողներ վարձելու համար: Ուստի արտադրողը բանկից վարկ է վերցնում և դրա միջոցով ձեռք բերում կապիտալ և վարձու աշխատողներ:

Վարկի երկրորդ գործառույթը ռեսուրսների վերաբաշխումն է: Վարկի միջոցով ռեսուրսներն ուղղվում են արտադրության այն ոլորտներ, որտեղ դրանք ապահովում են ավելի մեծ եկամուտներ: Այս ճանապարհով տեղի է ունենում ռեսուրսների բաշխում արտադրության տարբեր ոլորտների միջև:

Վարկի երրորդ գործառույթը դրամաշրջանառության բարելավումն է: Մարդիկ իրենց ազատ դրամական միջոցները կամ խնայողությունները տրամադրում են բանկերին, իսկ վերջիններս դրանք վարկի ձևով արագորեն մտցնում են շրջանառության մեջ և ապահովում բարիքների առք ու վաճառքը: Մյուս պահ պատկերացնենք՝ մարդիկ իրենց խնայողությունները պահում են տանը՝ հետագայում օգտագործելու նպատակով: Սա նշանակում է՝ հարստության մի մասը սառեցվում է և չի օգտագործվում: Այնինչ, երբ խնայողությունները բանկերի միջոցով մտնում են շրջանառության մեջ, նպաստում են բարիքների առք ու վաճառքին: Այս ճանապարհով խնայված դրամական միջոցները ներդրվում են արտադրության մեջ:

Վարկի տեսակները: Վարկերը լինում են երկու տեսակ՝ **առևտրային** և **բանկային**: Առևտրային վարկը պայմանագրային հիմունքներով վաճառողի տրամադրած վարկն է գնորդին: Առևտրային վարկը տրվում է պայմանագրում նշված բարիքի վաճառքի դիմաց՝ վճարման հետաձգման պայմանով: Օրինակ, որևէ ձեռնարկություն մյուսից կարող է ձեռք բերել անհրաժեշտ ռեսուրսներ, իսկ վճարումը կատարել հետագայում: Շատ դեպքերում առևտրային վարկը ձևակերպվում է մուրհակներով, այսինքն՝ ձեռնարկությունը պարտքի դիմաց տալիս է մուրհակ, որն ունի մարման ժամկետ (մուրհակի բովանդակությանը կանոնադրանք առաջիկա շարադրանքում):

Քանկային վարկը տրվում է քանկերի կողմից, որը կարող է օգտագործվել տարբեր նպատակներով: Եթե վարկը տրվել է ձեռնարկությանը, ապա օգտագործվում է լրացուցիչ ռեսուրսներ ձեռք բերելու համար: Եթե վարկը տրվել է որևէ անհատ քաղաքացու, ապա կարող է օգտագործվել բնակարան, ավտոմեքենա, կահույք կամ այլ երկարատև օգտագործման սպառողական նշանակություն ունեցող քարիք գնելու համար:

Քանկային վարկը լինում է **կարճաժամկետ** (մինչև մեկ տարվա մարման ժամկետով), **միջնաժամկետ** (1-ից 5 տարի) և **երկարաժամկետ** (5 տարուց ավելի):

Տնտեսավարող սուբյեկտների դրամական միջոցները կամ կապիտալը կարող են օգտագործվել նաև արժեթղթեր ձեռք բերելու միջոցով:

ԱՐԺԵԹՂԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ: **Արժեքուղրը գույքային (այդ թվում՝ դրամական միջոցների նկատմամբ) իրավունքներ՝ հաստատող փաստաթուղթ է:** Արժեթղթի հիմնական դերը բացատրելու նպատակով անդրադառնանք դրա տեսակներին: Դրանք են.

Քաժնետոմսը: **Քաժնեկրոնսը արժեքուղթ է, որը փորձն իրավունք է փայխ սրանալու բաժնեփրական ընկերության եկամտի իր մասը և մասնակցելու բաժնեփրական ընկերության կառավարմանը:** Նախ և առաջ պարզենք, թե ինչպես է առաջացել բաժնետիրական ընկերությունը: Խոշոր ներդրումներ պահանջող տնտեսական գործունեությունը չի կարող իրականացվել առանձին ձեռնարկատիրոջ միջոցներով: Այդպիսի օրինակներ են երկաթուղիների կառուցումը, խոշոր քիմիական և մեքենաշինական, ծանր արդյունաբերության արտադրությունները և այլն: Այդ դեպքում մի քանի սեփականատերեր միավորում են իրենց կապիտալները և ստեղծում բաժնետիրական ընկերություն: Պարզ է, որ բաժնետիրական ընկերության մեջ մտնող սեփականատերերի (փայատերերի) կապիտալների չափերը տարբեր են: Քաժնետիրական ընկերության յուրաքանչյուր անդամ, ըստ իր կապիտալի (բաժնեմասի) չափի, տնօրինում է որոշակի քանակի բաժնետոմս: Բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է ձայնի իրավունք:

Բաժնետոմսն ունի իր անվանական արժեքը: **Անվանական արժեքը բաժնեկրոնսի վրա նշված գումարի չափն է:** Օրինակ՝ եթե բաժնետիրական ընկերության որևէ անդամի մասնակցության չափը 1000 դոլար է, իսկ բաժնետոմսի անվանական արժեքը 100 դոլար, ապա նա տնօրինում է 10 բաժնետոմս: **Քոլոր բաժնեկրոնսերի անվանական արժեքների գումարը կազմում է բաժնեփրական ընկերության կանոնադրական կապիտալը:** Փաստորեն, կանոնադրական կապիտալը բաժնետիրական ընկերության բոլոր մասնակիցների կապիտալների գումարն է:

Շահարածին (դիվիդենդ): Բաժնետիրական ընկերությունը ծավալում է որոշակի գործունեություն և ապահովում համապատասխան եկամուտ, որը կոչվում է **շահույք:** Բաշխան ենթակա շահույթը բաժանվում է բաժնետիրական ընկերու-

1 Գույքային իրավունքներն առաջին հերթին արտահայտվում են արժեթղթերով և դրամական միջոցներով:

թյան անդամների միջև՝ ըստ նրանց կապիտալի (բաժնետնասի) չափի կամ բաժնետոմսերի քանակի: Ենթադրենք՝ վերը նշված մեր պայմանական օրինակում բաժնետիրական ընկերության բաշխման ենթակա շահույթը կազմել է 100 դոլար: Սա նշանակում է՝ յուրաքանչյուր բաժնետոմսի դիմաց ստացվելիք եկամտի չափը՝ $100:100=1$ դոլար: Այդ 1 դոլարը կոչվում է **շահաբաժին**: Այսինքն՝ *շահաբաժինը բաժնետոմսի դիմաց ստացվելիք եկամուտն է*: Եթե բաժնետիրական ընկերության որևէ մասնակից տնօրինում է 10 բաժնետոմս, ապա նրա եկամտի չափը՝ $10 \cdot 1=10$ դոլար: Այս սկզբունքով բաժնետիրական ընկերության բաշխման ենթակա շահույթը բաժանվում է դրա մասնակիցների միջև:

Վերահսկիչ ծրար: Բաժնետիրական ընկերությունը ղեկավարում է այն անձը կամ մարդկանց խումբը, որոնց ձեռքում է գտնվում վերահսկիչ ծրարը: *Վերահսկիչ ծրարը որևէ մասնակցի կողմից տնօրինվող բաժնետոմսերի քանակության ամենամեծ տեսակարար կշիռն է*: Օրինակ, եթե որևէ մեկը տնօրինում է բաժնետոմսերի 10%-ը, որը, մյուսների համեմատությամբ, ամենամեծ տեսակարար կշիռն է կազմում, ապա նա է ղեկավարում բաժնետիրական ընկերությունը:

Բաժնետոմսի գինը (կուրսը): Բաժնետոմսը ենթակա է առք ու վաճառքի: *Բաժնետոմսի վաճառքի միջոցով դրա սեփականատերը շահաբաժին ստանալու իրավունքը փոխանցում է մեկ ուրիշին*: Բնականաբար, դրա սեփականատերը այն պետք է վաճառի այնպիսի գնով, որ ստացված գումարը որևէ ոլորտում ներդնելով կամ փոխառության տարով, ապահովի շահաբաժնի նվազագույն չափը: Բաժնետոմսի գինը որոշելիս դրա սեփականատիրոջ համար հիմք է ծառայում շահաբաժնի և տոկոսադրույքի չափը: Եթե շահաբաժնի մեծությունը նշանակենք D-ով, տոկոսադրույքը՝ r-ով, բաժնետոմսի գինը՝ P-ով, ապա՝ $P=(D/r) \cdot 100$: Օրինակ՝ եթե շահաբաժինը կազմում է 10 դոլար, իսկ տոկոսադրույքը՝ 2%, ապա բաժնետոմսի գինը՝ $P=(10/2) \cdot 100=500$ դոլար: Բաժնետոմսի նախկին սեփականատերը այդ 500 դոլարը ներդնելով բանկում՝ կապահովի $500 \cdot 2/100=10$ դոլար եկամուտ, որը հավասար է շահաբաժնի մեծությանը:

Բաժնետոմսերի առք ու վաճառքի միջոցով կապիտալը հոսում է արտադրության այն ոլորտը, որի բարիքների նկատմամբ պահանջարկն ավելի մեծ է: Օրինակ՝ եթե մեծացել է համակարգչի նկատմամբ պահանջարկը, ապա գործունեության այդ ոլորտը դառնում է շահութաբեր: Բնականաբար, կապիտալի սեփականատերերը ցանկանում են գնել այդ ֆիրմայի բաժնետոմսերը՝ ավելի մեծ եկամուտ ստանալու ակնկալիքով: Փաստորեն, տեղի է ունենում կապիտալի հոսք ոլորտից մյուսը: Սա նպաստում է համակարգչի արտադրության ընդլայնմանը, որը տեղի է ունենում ոչ միայն կապիտալի հոսքի, այլև լրացուցիչ աշխատանքային ռեսուրսների ընդգրկման միջոցով: Այսինքն՝ բաժնետոմսերի առք ու վաճառքը նպաստում է ռեսուրսների արդյունավետ բաշխմանը արտադրության տարբեր ոլորտների միջև:

Բաժնետոմսի տեսակները: Բաժնետոմսը կարող է լինել **սովորական** և **արտոնյալ**: Սովորական բաժնետոմսը սեփականատիրոջը տալիս է ձայնի իրավունք, իսկ նրա շահաբաժնի չափը կախված է բաժնետիրական ընկերության

բաշխման ենթակա շահույթի մեծությունից: Արտոնյալ բաժնետոմսը ձայնի իրավունք չի տալիս, սակայն դրա սեփականատիրոջն ապահովում է երաշխավորված եկամուտ՝ անկախ բաժնետիրական ընկերության բաշխման ենթակա շահույթի չափից:

Պարտատոմսը: Պարտապտոմսը թողարկվող ժամկետային և պարզբային արժեքուղթ է: Պարտատոմս կարող է թողարկել պետությունը, բաժնետիրական ընկերությունը, մասնավոր ձեռնարկությունը: Պարտատոմսում նշված են պարտքի մարման ժամկետը և տոկոսի չափը: Օրինակ, եթե պարտատոմսում նշված գումարի մեծությունը 1000 դոլար է, իսկ տոկոսի չափը՝ 3, ապա մարման ժամկետը (դիցուք՝ մեկ տարի) լրանալուց հետո վերադարձվում է $1000 \cdot 3 / 100 + 1000 = 30 + 1000 = 1030$ դոլար:

Պետական պարտատոմսերը սովորաբար թողարկվում են այն ժամանակ, երբ պետական բյուջեի եկամուտները չեն բավարարում կատարելու բազմաթիվ վճարումներ: Այդ դեպքում պետությունը պարտատոմսերի միջոցով պարտք է վերցնում տնտեսավարող սուբյեկտներից՝ հետագայում որոշակի տոկոսով վերադարձնելու պայմանով:

Մուրհակը: Մուրհակը ժամկետային դրամական պարզավորություն բովանդակող արժեքուղթ է: Ինչպես այդքան հայտնի է, տնտեսավարող սուբյեկտների միջև պարտքային հարաբերություններն օրինաչափ են: Եթե բարիքի գնման ժամանակ գնորդը չունի անհրաժեշտ դրամական միջոցներ, ապա սուր ու վաճառքը ձեռնարկվում է մուրհակով, որը հնարավորություն է տալիս այնտեղ նշված գումարը ժամանակին վերադարձնելու:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԿՐԻՆԵՐԵՐ

1. Ի՞նչ է վարկը: Որո՞նք են վարկի գործառնությունները և փեսակները:
2. Ի՞նչ է արժեքուղթը:
3. Ներկայացրե՛ք բաժնետոմսի, վերահսկիչ ծրարի և շահաբաժնի բովանդակությունը: Ինչպե՞ս է որոշվում բաժնետոմսի գինը:
4. Ի՞նչ է պարտապտոմսը և մուրհակը:
5. Պարտապտոմսեր չեղք են բերում նաև չհոններեցները՝ իրենց շահույթների հաշվին: Կարո՞ղ եք բացատրել, թե որոնք են չհոններեցների կողմից պարտապտոմսերի չեղքբերման դրական և բացասական հետևանքները:
6. Ենթադրենք՝ բաժնետոմսի շահաբաժինը կազմում է 25 դոլար, իսկ բանկի փոկոսը՝ 5: Հաշվե՛ք բաժնետոմսի գինը:

ԹԵՄԱ 6. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԳԱՍ 12. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Շուկայական տնտեսության առավելություններն են.

Առաջին՝ հնարավորության սահմաններում ապահովում է ռեսուրսների արդյունավետ օգտագործում: Արտադրողների միջև մրցակցությունը ստիպում է ռեսուրսներն օգտագործել առավելագույն արդյունավետությամբ, որպեսզի միավոր քարիքի արտադրության ծախսերի կրճատման ճանապարհով ապահովվեն շահույթի ավելի մեծ չափեր:

Երկրորդ՝ պայմանների փոփոխության դեպքում ապահովում է ավելի մեծ մկունություն: Մարդկանց պահանջումներն և կառուցվածքը, հետևապես և պահանջարկն անընդհատ փոխվում է: Ազատ մրցակցային շուկայի պայմաններում արտադրողներն անմիջապես արձագանքում են պահանջարկի փոփոխությանը և թողարկում համապատասխան քարիքներ:

Երրորդ՝ խթանում է գիտափնիսկական առաջադիմությունը: Արտադրողների միջև մրցակցությունը ստիպում է նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի կիրառման միջոցով նվազեցնել միավոր քարիքի արտադրության ծախսերը, բարելավել դրա որակը և ավելացնել քանակը: Այդ հանգամանքը անհրաժեշտ պահանջարկ է ձևավորում գիտական նորությունների նկատմամբ և խթանում դրանց ներդրումը արտադրության մեջ:

Չորրորդ՝ բարիքի և ծառայության որակի բարձրացման խթանումը: Արտադրողների միջև մրցակցությունը ստիպում է նրանց անընդհատ բարելավել բարիքի որակը: Հակառակ դեպքում նրանք կարող են դուրս մղվել մրցակցությունից:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Շուկայական տնտեսության թերություններն են.

Առաջին՝ արտաքին ազդեցությունների ոչ արդյունավետ կարգավորումը: Արտաքին ազդեցությունը կարող է լինել բացասական և դրական: Օրինակ՝ շրջակա միջավայրի աղտոտումը բացասաբար է անդրադառնում մարդկանց առողջության վրա, որի պատճառով նրանք ստիպված են լրացուցիչ ծախսեր կատարել՝ կապված դեղորայքի ձեռքբերման, բժշկական ծառայությունների համար անհրաժեշտ վճարումների հետ և այլն: Դրական արտաքին ազդեցության դեպքում (օրինակ՝ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը, կանաչապատումը, ոռոգման ցանցերի ստեղծումը, վնասատուների դեմ պայքարը և այլն)

անհրաժեշտ օգտակարություն է ապահովվում հասարակության բոլոր անդամների համար:

Երկրորդ՝ չի ապահովում հասարակական բարիքների նկատմամբ մարդկանց պահանջմունքների բավարարումը: Հասարակական բարիք են համարվում՝ ա) ազգային անվտանգության համակարգի ձևավորումը, բ) քաղաքացիների իրավունքների և գ) հասարակական կարգի պաշտպանությունը, դ) տարբեր տեսակի ծառայությունների ապահովումը (առողջապահություն, կրթություն, գիտություն, ճանապարհների կառուցում, փողոցների լուսավորում և այլն):

Երրորդ՝ չի ապահովում տեղեկագրության ձեռքբերման համաշափություն: Տնտեսավարող սուբյեկտների մի մասն ունի անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու հնարավորություն, իսկ մյուսները՝ ոչ: Այդ հանգամանքը սպասվելիք իրադարձությունների գնահատման առումով անորոշ իրավիճակ է ստեղծում: Առաջանում է ռիսկը նվազեցնելու **ապահովագրման** եղանակի կիրառման անհրաժեշտություն: **Ապահովագրումն այնպիսի գործընթաց է, որը հնարավորություն է տալիս որոշակի սահմաններում նվազագույնի հասցնելու կամ փոխհատուցելու ռիսկի հետ կապված հնարավոր կորուստները:** Այդ նպատակով ստեղծվում են ապահովագրական ընկերություններ: Ապահովագրական ընկերությանը տրվող վճարներից հավաքված գումարն օգտագործվում է անցանկալի դեպքերի հետ կապված կորուստները փոխհատուցելու նպատակով: Օրինակ՝ բժշկական, գույքի ապահովագրությունը և այլն:

Գոյություն ունեն մաս **չապահովագրվող** ռիսկեր: Չապահովագրվող ռիսկեր են համարվում համընդհանուր բնապահպանական և միջուկային աղետները, երկրաշարժը, ցունամիները և այլն: Բնականաբար, որևէ ապահովագրական ընկերություն չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել՝ նման ռիսկերը ապահովագրելու: Չապահովագրվող բնույթ ունի մաս ձեռնարկատիրական ռիսկը:

Չորրորդ՝ սոցիալական հիմնախնդիրների առկայությունը: Դրանք կապված են սոցիալապես անապահով ընտանիքների, թոշակառուների, անաշխատունակների նվազագույն կենսապայմանների ապահովման հետ:

Հինգերորդ՝ մենաշնորհների առկայությունը: Խոշոր մենաշնորհների (մոնոպոլիաների) ձևավորումը թուլացնում է մրցակցությունը և խոչընդոտում ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Շուկայական տնտեսության թերությունները փորձում են հաղթահարել պետության տնտեսական գործառույթների միջոցով, որոնք պահանջում են հսկայական ծախսեր: Այդ ծախսերը կատարվում են հասարակության անդամներից գանձվող հարկերի և այլ վճարումների հաշվին: Փաստորեն, գոյություն ունի գործունեության երկու հատված՝ **շուկայական և պետական:**

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ: Պետության հիմնական տնտեսական գործառույթներն են.

Առաջին՝ հասարակական բարիքների արտադրությունը: Հասարակական բարիքների արտադրությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝ ա) համա-

պատասխան օրենքների ընդունում և իրագործում, բ) երկրի ներսում կարգուկանոնի հաստատում, որը հիմնականում իրագործվում է ներքին գործերի մարմինների և դատախարակական համակարգի գործունեության միջոցով, գ) ազգային անվտանգության և պաշտպանության համակարգի ձևավորում, դ) բազմաթիվ ծառայությունների մատուցում (ճանապարհների շինարարություն, փողոցների լուսավորում, տարբեր տեսակի մշակութային, մարզական և այլ միջոցառումների իրականացում):

Երկրորդ՝ արտաքին բացասական ազդեցությունների նվազեցմանն ու դրականի խրախուսմանն ուղղված գործունեությունը: Արտաքին բացասական ազդեցությունների վերացման գործում պետական միջամտությունը կատարվում է երկու եղանակով՝ վարչական և տնտեսական: Վարչական մեթոդներով պետությունը պատժամիջոցներ է կիրառում այն տնտեսական գործունեության նկատմամբ, որի արդյունքները վտանգավոր են շրջակա միջավայրի համար: Բացի այդ, սահմանվում է նորմատիվ, ըստ որի՝ սահմանափակվում են վնասակար նյութերի արտանետումները շրջակա միջավայր: Պետությունը արտաքին բացասական ազդեցությունների դեմ պայքարի գործում կիրառում է նաև տնտեսական լծակ: Դրա հիմնական ձևերից է ադտոտման հարկի կիրառումը, որի միջոցով փոխհատուցվում են դրանցով պայմանավորված կորուստները:

Արտաքին դրական ազդեցությունների խրախուսման նպատակով պետությունը դրամական օժանդակություն է տրամադրում առողջապահության, կրթության, գիտության ոլորտներին, տարբեր տեսակի բարեգործական ծրագրերին և այլն: Այդ բնագավառներում կատարված ներդրումները մեծ չափով նպաստում են տնտեսության զարգացմանը: Բացի այդ, պետությունը կատարում է ծախսեր վարակիչ հիվանդությունների, վնասատուների դեմ պայքարելու, կանաչապատման, ոռոգման ցանցերի ստեղծման համար և այլն:

Երրորդ՝ տեղեկատվության անհամաչափության հաղթահարումը: Տեղեկատվության անհամաչափության հաղթահարման նպատակով պետությունն իր կառույցների միջոցով որոշակի հստակ տեղեկատվություն է ապահովում սպասվող ինֆլյացիայի, տոկոսադրույքի փոփոխության, ապահովագրման ենթակա ռիսկերի վերաբերյալ: Մյուս կողմից՝ պետությունը վերահսկողություն է սահմանում բարիքների որակի նկատմամբ և պատժամիջոցներ կիրառում անորակ բարիքների արտադրության, կեղծ տեղեկատվության տարածման դեպքում:

Չորրորդ՝ եկամուտների վերաբաշխումը: Մրցակցային շուկան եկամուտների հավասարություն չի կարող ապահովել: Սակայն առկա են բազմաթիվ սոցիալական խնդիրներ (անաշխատունակների, թոշակառուների, գործազուրկների, անապահով և բազմանդամ ընտանիքների նվազագույն կենսաապահովման պայմանների ստեղծում և այլն), որոնց լուծման համար անհրաժեշտ է կատարել եկամուտների վերաբաշխում՝ «հարուստներից դեպի աղքատները»:

Հինգերորդ՝ հիմնարար (ֆունդամենտալ) հեղազոգությունների իրականացումը: Կան գիտական գործունեության այնպիսի բնագավառներ, որոնք ունեն

ռազմավարական նշանակություն և չեն կարող կարգավորվել մրցակցային շուկայի պահանջարկի և առաջարկի փոխհարաբերության միջոցով: Դրանց շարքին են դասվում տիեզերագնացությունը, միջուկային էներգիայի ստացումը և օգտագործումը, հիմնարար գիտությունների զարգացումը և այլն: Այդ ոլորտները գործում են պետության հովանավորությամբ:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԿՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են շուկայական րևութասության առավելությունները և բերությունները:
2. Ո՞րն է ապահովագրվող և չապահովագրվող ռիսկը:
3. Որո՞նք են պետության հիմնական րևութասական գործառույթները:
4. Արտադրության ընդլայնման և նոր տեսակի արտադրանքի բողարկման շնորհիվ տվյալ երկրում ապահովվել է րևութասական և զբաղվածության աճ: Սակայն պարզվել է, որ դրան զուգընթաց մեծացել է շրջակա միջավայրի աղտոտվածության ապրիմանը, որի հետևանքով պետությունը սահմանել է աղտոտման հարկ: Դա ինչպե՞ս է ազդում այդ արտադրանքի բողարկման վրա:

ԳԱՍ 13. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ: ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԸ: ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Պետության կողմից իրականացվող բազմաթիվ գործառույթներ հսկայական ծախսեր են պահանջում: Այդ ծախսերը կատարելու համար պետությունը տնային տնտեսության ներկայացուցիչներից և ձեռնարկություններից հավաքագրում է աներաժեշտ դրամական միջոցներ: Այս ճանապարհով ձևավորվում է պետական բյուջեն: **Պեպական բյուջեն համապետական ֆինանսական միջոցների հաշիվն է, որտեղ նշված են դրանց չեղարման աղբյուրները և օգտագործման ուղղությունները որոշակի ժամանակահատվածում** (սովորաբար մեկ տարում): Պետական բյուջեն հաստատում է օրենսդիր մարմինը (Ազգային ժողով), իսկ դրա կատարումն իրականացվում է գործադիր մարմնի (Կառավարություն) կողմից: Պետական բյուջեն բաղկացած է **եկամուտների և ծախսերի** մասից:

Պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրներն են ձեռնարկությունների, բնակչության տարբեր խավերի պարտադիր հարկային և ոչ հարկային վճարումներից ստացվող միջոցները:

ՀԱՐԿԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով ստացվող պարտադիր անհատույց և նախապես սահմանված վճար է:

Հարկման սուբյեկտը իրավաբանական և ֆիզիկական անձն է, ով վճարում է օրենսդրությամբ սահմանված հարկերը:

Հարկման օբյեկտ են համարվում տարբեր տեսակի եկամուտները (աշխատավարձ, տոկոս, ռենտա, շահույթ), ունեցվածքը, բնական ռեսուրսները և այլն:

Հարկային միավորը հարկման ենթակա օբյեկտի այն մեծությունն է, որի նկատմամբ սահմանվում է հարկման դրույքաչափը: Եթե հարկման օբյեկտը աշխատավարձն է, ապա հարկման միավորը դրա չափն է, իսկ հողի դեպքում՝ դրա չափը հա-ով և այլն:

Հարկի դրույքաչափը հարկային միավորի նկատմամբ սահմանված մեծությունն է՝ տոկոսներով կամ բացարձակ գումարով, որը պարտադիր գանձվում է պետության կողմից: Օրինակ՝ աշխատավարձի նկատմամբ կարող է սահմանվել 20% եկամտահարկ, իսկ մեկ հա հողատարածքի նկատմամբ, ենթադրենք՝ 1000 դրամ վճար և այլն:

ՀԱՐԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ: Ըստ հարկման եղանակի՝ հարկերը լինում են **ուղղակի և անուղղակի:** **Ուղղակի հարկը սահմանվում է գույքի (ունեցվածքի) և եկամտի նկատմամբ:** Ուղղակի հարկի տեսակներ են եկամտահարկը, գույքահարկը, շահութահարկը, հողի հարկը և այլն: **Անուղղակի հարկը գանձվում է բարիքների վաճառքից ու ծառայություններից՝ հարկման դրույքաչափ սահմանելու միջոցով:** Անուղղակի հարկի տեսակներից են **ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և մարսատուրքը:** Ենթադրենք՝ բարիքը վաճառվում է 100 դոլարով: Այդ բարիքի գնի և դրա պատրաստման համար ձեռք բերված հումքի, նյութերի, վառելիքի, էլեկտրաէներգիայի ծախսերի տարբերությունը կազմում է **ավելացված արժեքը:** Ենթադրենք՝ այդ ծախսերը կազմել են 30 դոլար: Մեր պայմանական օրինակում **ավելացված արժեքը՝** $100 - 30 = 70$ դոլար: Ենթադրենք՝ պետությունը սահմանել է 20% ավելացված արժեքի հարկ: Սա նշանակում է 70 դոլարի 20%-ը, այսինքն՝ $70 \cdot 20 / 100 = 14$ դոլարը փոխանցվում է պետական բյուջե: 14 դոլարը ավելացված արժեքի հարկն է: **Ակցիզային հարկը** գանձվում է ոգելից լամպներից, ծխախոտից, նավթամթերքից, զարդեղենից: Այդ դեպքում հարկման դրույքաչափը սահմանվում է վերը նշված բարիքների նկատմամբ՝ չափման բնախրային միավորներով: Օրինակ՝ գարեջրի 1 լիտրի համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանված է 70 դրամ, ծխախոտի 1 կիլոգրամի համար՝ 1500 դրամ, իսկ նավթամթերքների 1 տոննայի համար՝ 27000 դրամ: **Մարսատուրքը** սահմանվում է ներմուծվող և արտահանվող բարիքների նկատմամբ:

ՏՈՒՐՔԻ ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆԸ: **Տուրքերը պետական փարքեր ծառայությունների դիմաց տրվող վճարներն են:** Դրանք գանձվում են նոտարական գործողությունների, անձնագրի տրման և գրանցման, ամուսնության, ամուսնալուծության, անվան, ազգանվան և հայրանվան փոփոխությունների հետ կապված տարբեր փաստաթղթեր տալու դեպքում և այլն:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Պետական բյուջեի ծախսերն են՝ **1. Պետական ապարարի ծախսերը:** Պետական ապարատը ներառում է օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ամբողջ համակարգը: Այդ համակարգն ընդգրկում է բազմաթիվ նախարարություններ, վարչություններ, դատարաններ և այլն: **2. Պաշտպանության ծախսերը:** **3. Սոցիալական ծախսերը:** Դրանք ընդգրկում են կրթության, գիտության, առողջապահու-

քյան, սոցիալապես անապահով խավերի ապահովության նպատակով կատարվող ծախսերը: **4. Տնտեսության զարգացման ծախսերը:** Տնտեսական անհրաժեշտությունից ելնելով՝ պետությունն իր միջոցների հաշվին կարող է ֆինանսավորել տնտեսության զարգացման որոշ բնագավառներ, որոնք համապետական նշանակություն ունեն: Օրինակ՝ տրանսպորտ, հաղորդակցություն, հիմնարար (ֆունդամենտալ) հետազոտություններ և այլն: **5. Այլ ծախսեր (պահուստային ֆոնդերի ձևավորում և այլն):**

ԲՅՈՒՋԵԻ ՊԵՏԱՍՈՒՐԳԸ (ԳԵՅԻՑԻՏԸ): Եթե բյուջեի ծախսերը գերազանցում են եկամուտները, ապա առաջանում է պակասուրդ: Իսկ եթե բյուջեի եկամուտները գերազանցում են ծախսերը, ապա առաջանում է հավելուրդ: Եթե բյուջեի եկամտային մասը չի ապահովվում, ապա համապետական նշանակություն ունեցող որոշ միջոցառումներ (պետական ապարատի պահպանման, սոցիալական, պաշտպանության, տնտեսության զարգացման ծախսեր, պահուստային ֆոնդերի ձևավորում և այլն) հնարավոր չէ իրականացնել: Բյուջեի պակասուրդը նվազեցնելու համար պետությունը դիմում է մի շարք քայլերի:

Բյուջեի պակասուրդը նվազեցնելու նպատակով պետությունը կարող է պարզապես **կրճատել բյուջեից կապարվող ծախսերը:** Մա ծայրահեղ դեպքերում է կիրառվում: Բյուջեի ծախսերի կրճատումը բացասաբար է անդրադառնում կենսականորեն անհրաժեշտ ոլորտների (պաշտպանություն, կրթություն, գիտություն, սոցիալական պաշտպանություն և այլն) նորմալ գործունեության վրա: Էտեռապես՝ բյուջեի պակասուրդի ֆինանսավորման (ծածկման) իրական ուղին **տնտեսության զարգացումն է և այդ հիմքի վրա հասարակության բոլոր անդամների եկամուտների մեծացումը:** Եկամուտների աճի դեպքում մեծանում են քաղաքացիներից և ձեռնարկություններից զանձվող հարկերի, հետևապես՝ պետական բյուջեի եկամտի չափերը:

Եթե դրանք շոշափելի արդյունք չեն տալիս, ապա պետությունը դիմում է բյուջեի պակասուրդի ֆինանսավորման այլ քայլերի: Դրանցից առաջինը փողի **էմիսիան (քողարկումն) է:** Այսինքն՝ պետությունը դիմում է «փող տպելու մեքենայի» օգնությանը՝ այդ ճանապարհով կատարելով բյուջեով նախատեսված միջոցառումները: Դրա հետևանքով մեծանում է շրջանառվող փողի քանակությունը, ինչը կարող է հանգեցնել բարիքների գների բարձրացման և դրամական միավորի գնողունակության նվազման: Դա բացասաբար է անդրադառնում ազգաբնակչության կենսամակարդակի վրա: Այդ պատճառով դա բյուջեի պակասուրդի ֆինանսավորման անընդունելի եղանակ է համարվում:

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման մյուս աղբյուրը **պարպասյունների քողարկումն է:** Այս ճանապարհով պետությունը պարտք է վերցնում քաղաքացիներից և ձեռնարկություններից, արտասահմանյան երկրներից և կազմակերպություններից՝ հետագայում որոշակի տոկոսադրույքով վերադարձնելու պայմանով:

ՊԵՏԼԿԱՆ ՊԱՐՏՔ: Պեպական պարտքը սովորաբար երկրի տնտեսավարող սուբյեկտներին և արտասահմանյան երկրներին կամ կազմակերպություններին ունեցած պարտքն է: Պետական պարտքը լինում է **ներքին** և **արտաքին**: Պետության պարտքը սովորաբար երկրի քաղաքացիներին կոչվում է **ներքին** (օրինակ՝ պետական պարտատոմսերի բողարկման դեպքում ձևավորվում է ներքին պարտք), իսկ արտասահմանյան երկրներին և կազմակերպություններին՝ **արտաքին**: Արտաքին պարտքը ձևավորվում է արտասահմանյան երկրների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների (օրինակ՝ Միջազգային արժույթային ֆոնդի, Համաշխարհային բանկի և այլն) կողմից տրվող վարկերի դեպքում: Դրանք ունեն իրենց մարման ժամկետը և տոկոսադրույքը: Պետությունը պարտավոր է ասիմանված ժամկետում մարել պարտքը: Դրական է, երբ պարտքով ներգրավված միջոցներն օգտագործվում են նորագույն տեխնոլոգիաներ ներմուծելու, անհրաժեշտ ռեսուրսներ ձեռք բերելու, տնտեսության տարբեր ոլորտների զարգացումը ֆինանսավորելու, տնտեսության կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու և համապետական նշանակության այլ խնդիրներ լուծելու նպատակով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՍՈՉԱԳՐԱՆԲՆԵՐ

1. Ներկայացրե՛ք պեպական բյուջեի բովանդակությունը: Որո՞նք են պեպական բյուջեի եկամուտների աղբյուրները և ծախսերի ուղղությունները:
2. Ներկայացրե՛ք հարկի և փոստի բովանդակությունը:
3. Ո՞րն է հարկման օբյեկտը և սուբյեկտը, հարկային միավորը և դրույքաչափը:
4. Բացատրե՛ք ուղղակի և անուղղակի հարկերի բովանդակությունը:
5. Ի՞նչ է բյուջեի պակասուրդը, որո՞նք են դրա ֆինանսավորման աղբյուրները:
6. Բացատրե՛ք պեպական պարտքի առաջացման պայմանները: Ի՞նչ է ներքին և արտաքին պարտքը:
7. Բարիքը վանառվում է 200 դոլարով: Դրա արտադրության համար չեղք բերված միջոցների ծախսերի գումարը կազմել է 50 դոլար: Ավելացված արժեքի հարկը 20% է: Հաշվե՛ք ավելացված արժեքի հարկի չափը:

ԹԵՄԱ 7. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՇԻԱԼԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԱՄ 14. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԳԲԱՆՑ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ: Բնակչության եկամտի հիմնական աղբյուր են համարվում գործունային եկամուտները: Արտադրության գործունեների սեփականատերերը դրանց օգտագործման արդյունքում ձեռք են բերում եկամուտներ աշխատավարձի, տոկոսի, ռենտայի և շահույթի ձևով: Այսինքն՝ եկամուտները բաշխվում են ըստ գործունեների:

Արտադրության գործունեների սեփականատերերի եկամուտների մի մասը հարկման միջոցով փոխանցվում է պետական բյուջե: Գրա մի մասը տարբեր տեսակի նպաստների, կենսաթոշակների և օգնությունների ձևով տրվում է հասարակության որոշակի անդամներին, որոնք կոչվում են **տրանսֆերտ** վճարումներ: Խոսքը հիմնականում սոցիալապես անապահով և բազմանդամ ընտանիքներին, գործազուրկներին, անաշխատունակներին տրվող նպաստների մասին է: Այդ ձևով տեղի է ունենում եկամուտների վերաբաշխում: Այսինքն՝ բնակչության վերջնական եկամտի մեծությունը ձևավորվում է գործունային եկամուտների վերաբաշխման միջոցով: Այստեղից էլ առաջացել է **փնօրինվող եկամուտը** հասկացությունը: Սուբյեկտի **փնօրինվող եկամուտը** արտադրության գործունեներից ստացված եկամուտների և տարբեր տեսակի հարկային և այլ վճարումների տարբերությունն է՝ ավելացրած ստացվելիք տրանսֆերտ վճարումները: Պարզ է, որ հասարակության անդամների եկամուտների չափերը տարբեր են:

Տնօրինվող եկամտի մի մասը սպառվում է, իսկ մյուս մասը՝ խնայվում: Խնայված միջոցներն օգտագործվում են ներդրումներ կատարելու համար: Այդ միջոցներով են ձեռնարկություններն իրականացնում նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրումներ: Դա մեծ չափով նպաստում է արտադրության ընդլայնմանը և զարգացմանը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՐՆԵՐԸ: Բնակչության եկամուտների անհավասարությունն օրինաչափ է և հնարավոր չէ վերացնել: Գրա պատճառներն են.

Առաջին՝ մարդիկ ի ծնե ֆիզիկական և մտավոր ունակություններով տարբերվում են, որի հետևանքով նրանք գործունեության ընթացքում ապահովում են տարբեր արտադրողականություն: Այդ պատճառով, օրինակ, լավ մասնագետը վճարվում է ավելի բարձր, հմուտ ձեռներեցն ապահովում է շահույթի ավելի մեծ չափեր և այլն:

Երկրորդ՝ մարդկանց սեփական ունեցվածքի չափերի տարբերությունները: Պարզ է՝ ովքեր ավելի մեծ չափերի միջոցներ ունեն, նրանց եկամուտները մույնպես մեծ են:

Երրորդ՝ կրթական և մասնագիտական մակարդակների տարբերությունները: Խնդիրն այն է, որ կրթական և մասնագիտական մակարդակը, մի կողմից՝ պայմանավորված է անհատի ունակություններով, իսկ մյուս կողմից՝ ուսումնական հաստատության վարկանիշով: Այդ պատճառով բարձր վարկանիշ ունեցող ուսումնական հաստատություններում կրթություն ստանալը կապված է ավելի մեծ ծախսերի հետ:

Չորրորդ՝ մարդիկ տարբերվում են իրենց ձգտումներով: Կան մարդիկ, ովքեր, ի տարբերություն մյուսների, կարող են բավարարվել ավելի սահմանափակ միջոցներով: Ջանասեր և մեծ ձգտումներ ունեցող մարդիկ քրտնաջան աշխատանքի շնորհիվ ձեռք են բերում ավելի մեծ եկամուտներ:

Եկամուտների անհավասար բաշխվածությունը գնահատելու համար սովորաբար հիմք է ընդունվում հասարակության 10% հարուստների և 10% աղքատների եկամուտների հարաբերակցությունը: Օրինակ՝ եթե հասարակության 10% հարուստները տնօրինում են եկամտի 40%-ը, իսկ 10% աղքատները՝ 2%-ը, ապա այդ երկու սոցիալական խմբերի եկամուտների տարբերությունը 20 անգամ է:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՄԸ ԵՎ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԶԱՄՔՅՈՒՂԸ: Ընդհանուր առմամբ, որպես աղքատության շեմ ընդունվում է *նվազագույն սպառողական զամբյուղը*: *Նվազագույն սպառողական զամբյուղը բարիքների այն քանակությունն է, որի ստեղծման հնարավոր է ապահովել մարդու կենսագործունեության նվազագույն պայմանները*: Նվազագույն սպառողական զամբյուղը ներառում է պարենային և ոչ պարենային բարիքները, ինչպես նաև անհրաժեշտ ծառայությունները: Հայաստանում նվազագույն սպառողական զամբյուղը կազմում է 36262 դրամ: *Նվազագույն պարենային զամբյուղն* ընդգրկում է հացամթերքի, մսամթերքի, կաթնամթերքի, յուղի, շաքարի, մրգի, բանջարեղենի և սննդի այլ տեսակների սպառման չափաբաժինները: Այդ չափաբաժինների որոշման հիմքում օրական մեկ շնչի հաշվով սպառվող սննդամթերքի կիլոկալորիականությունն է: Մեկ օրվա հաշվով ընդունված նորման 2412 կկալ է: Այսինքն՝ տարբեր սննդամթերքներից ընտրվում են այնպիսի չափաբաժիններ, որոնց օրական գումարային էներգատվությունը լինի 2412 կկալ: Պաշտոնական տվյալներով՝ ըստ ամսվա, մեկ շնչի հաշվով Հայաստանում նվազագույն պարենային զամբյուղը արժեքային արտահայտությամբ կազմում է 23394 դրամ:

Տվյալ երկրի սոցիալ-տնտեսական վիճակից ելնելով՝ սահմանվում է *ծայրահեղ աղքատության* և *աղքատության շեմ*: Հայաստանում *ծայրահեղ աղքատության շեմը*, մեկ շնչի հաշվով, համարվում է ամսական 15753 դրամ եկամուտը, իսկ *աղքատության շեմը*՝ 23168 դրամը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԿՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են բնակչության եկամտի աղբյուրները:
2. Որո՞նք են բնակչության եկամուտների անհավասարության պատճառները:
3. Հնարավո՞ր է վերացնել բնակչության եկամուտների անհավասարությունը:
4. Ինչպե՞ս է գնահատվում աղքատության շեմը:
5. Ո՞րն է նվազագույն սպառողական և պարենային զանրյուղի բովանդակությունը:
6. Ենթադրենք՝ որևէ մեկը ունի որոշակի կապիտալ, որը փոխառության փառով սրահանում է րոկոս՝ 100 դոլարի չափով: Միաժամանակ նա աշխատում է որևէ ֆիրմայում և արանում 150 դոլար աշխատավարձ: Բացի այդ, պետական բյուջեից արանում է 25 դոլարի օգնություն (տրանսֆերտ): Եկամտահարկը աշխատավարձից 20% է, իսկ րոկոսից՝ 10: Որքա՞ն է կազմում րեֆինանդ եկամուտը:

ԳԱՍ 15. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՉԵՎԵՐԸ

ՏՐԱՆՍՅԵՐՏ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ: *Տրանսֆերտ վճարումները բնակչությանը արվող անհատույց հատկացումներն են:* Այդ վճարումները հիմնականում կատարվում են պետական բյուջեից: Այս ճանապարհով պետությունը փորձում է, հնարավորության սահմաններում, մեղմել բնակչության տարբեր խավերի եկամուտների միջև անհավասարությունը և սոցիալապես անապահով խավերի համար տեղեղծել կենսաապահովման նվազագույն պայմաններ: Փաստորեն, պետությունը պետական բյուջեից տրվող անհատույց հատկացումներով իրականացնում է սոցիալական ապահովության միջոցառումներ, որոնց հիմնական ուղղություններն են.

Առաջին՝ գործազուրկներին, աղքատ ընտանիքներին տրվող նպաստները և միանվագ դրամական օգնությունները:

Երկրորդ՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցրածներին տրվող վճարումները (որոնք կոչվում են սոցիալական կենսաթոշակներ), ինչպես նաև հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ միջոցներով ապահովումը:

Երրորդ՝ մինչև երկու տարեկան երեխաների խնամքի և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամակալության համար տրվող նպաստները, ինչպես նաև երեխաների ծննդի կապակցությամբ տրամադրվող միանվագ հատկացումները:

Չորրորդ՝ տարեցների խնամակալության և հաշմանդամներին տնային պայմաններում սպասարկման համար տրվող հատկացումները:

Պետք է նշել, որ բնակչությանն անհրաժեշտ եկամուտ ապահովելու նպատակով պետությունը սահմանում է **նվազագույն աշխատավարձի** չափ:

Ըստ որոշ վերլուծաբանների՝ գործազուրկներին տրվող նպաստները, մի կողմից՝ մեծացնում են պետական բյուջեի ծախսերը, մյուս կողմից՝ նվազեցնում

նրանց մի մասի շահագրգռվածությունը աշխատանք փնտրելու գործում: Խնդիրը հետևյալն է. եթե պետության կողմից տրվող վճարների հաշվին հնարավոր է ապահովել կենսագործունեության նվազագույն պայմաններ, ապա թուլանում է աղքատ, սակայն աշխատունակ բնակիչների՝ աշխատանք փնտրելու ձգտումը: Այդ պատճառով առաջարկվում է կիրառել **երաշխավորված նվազագույն նպաստի տրման ժամկետի սահմանափակման մոդելը**: Սա նշանակում է՝ նպաստի տրման ժամկետը սահմանափակ է, ինչը ստիպում է գործազուրկին աշխատանք փնտրել:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵԿԱՄՏԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ:

Այս սկզբունքի բովանդակությունը հետևյալն է՝ **ապահովել երաշխավորված նվազագույն հարկացումներ նրանց համար, ովքեր չունեն եկամտի անհրաժեշտ աղբյուրներ**: Եթե որևէ անապահով ընտանիք ունի եկամտի աղբյուր, ապա, դրա աճին զուգընթաց, պետության կողմից տրվող հատկացումները կրճատվում են որոշակի գործակցով (տե՛ս աղյուսակ 15.1.):

Աղյուսակ 15.1.

Երաշխավորված նվազագույն եկամուտը

Վաստակը	Պետության կողմից տրվող վճարը	Ընդհանուր եկամուտը (վաստակը +տրվող վճարը)
0	1000	1000
300	880	1180
600	760	1360
900	640	1540
1200	520	1720
1500	400	1900
1800	0	1800

Աղյուսակ 15.1.-ի տրամաբանությունը հետևյալն է. եթե բնակչի եկամտի մակարդակը գրո է, ապա պետությունը նրան տրամադրում է երաշխավորված 1000 դոլար: Եթե նրա վաստակը 300 դոլար է, պետության կողմից տրվող վճարը կրճատվում է որոշակի գործակցով: Եթե այդ գործակիցը 40% է, ապա 300 դոլարի չափով վաստակ ունեցողի եկամտի ընդհանուր մեծությունը կկազմի $300+(1000-300 \cdot 40/100)=300+(1000-120)=300+880=1180$ դոլար: Եվ այսպես՝ ըստ վաստակի չափի կարող ենք հաշվարկել պետության կողմից տրվող վճարի և հասանելիք ընդհանուր եկամտի մեծությունը: Եթե բնակչի վաստակի չափը 1800 դոլար է, ապա պետությունը նրան երաշխավորված վճար չի տրամադրում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԿԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ:

Անժխտելի է, որ պետության կողմից սոցիալապես անապահով խավերին նպաստների տրամադրումը հնարավորություն է տալիս նրանց համար ստեղծելու կենսաապահովման նվազագույն պայմաններ:

Սակայն, ինչպես նշվեց վերևում, որոշ վերլուծարանների կարծիքով՝ պետք է կրճատել պետության կողմից տրվող նպաստները, և այդ դրամական միջոցները ներդնել արտադրության մեջ՝ ստեղծելով նոր աշխատատեղեր:

Այսպիսով՝ **ո՞րն է ճիշտ ճանապարհը. մեծացնել տրանսֆերտ վճարումները, թե՞ դրանց կրճատման հաշվին ավելացնել ներդրումների չափերը:** Ամեն դեպքում սոցիալական ապահովության նպատակով պետության կողմից կատարվող ծախսերի մեծությունը հաշվարկելիս անհրաժեշտ է միշտ նկատի առնել պարտադիր վճարումները, որոնք վերաբերում են անաշխատունակների, կենսաթոշակառուների, աղքատության շեմի սահմաններում գտնվող ընտանիքների նվազագույն կենսական պայմանների ապահովմանը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԿՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են սոցիալական ապահովության հիմնական ուղղությունները:
2. Ո՞րն է երաշխավորված նվազագույն եկամտի ապահովման սկզբունքը: Ինչո՞ւ է նվազում որոշ մարդկանց աշխատանք փնտրելու ցանկությունը:
3. Ո՞ր մուրեցումն է ճիշտ. մեծացնել տրանսֆերտ վճարումները, թե՞ դրանց կրճատման հաշվին ավելացնել ներդրումների չափերը:
4. Պեկության կողմից արվող վճարի կրճատման գործակիցը 50% է: Չրոշյալն է կամուր ունեցողի երաշխավորված վճարի չափը 500 դոլար է: Վասարակը կազմում է 400 դոլար: Հաշվի ընդհանուր եկամտի չափը:

ԹԵՄԱ 8. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԱՄ 16. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ: ԲԱՅԱՐՉԱԿ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԿՋԲՈՒՆՔԸ

Միջազգային տնտեսական հարաբերությունները ներառում են տարբեր երկրների միջև առևտրային, կապիտալի ներմուծման և արտահանման, աշխատանքի միգրացիայի, արժուքային գործարքների հետ կապված միջոցառումների ամբողջությունը:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ: Միջազգային տնտեսական հարաբերությունները ձևավորվել են արտաքին առևտրի հիմքի վրա: Արտաքին առևտուրն ընդգրկում է տվյալ երկրի արտահանումն ու ներմուծումը այլ երկրների հետ: Արտաքին առևտուրը պայմանավորված է աշխատանքի միջազգային բաժանմամբ: Աշխատանքի միջազգային բաժանման նախադրյալներն են.

Առաջին՝ բնական ռեսուրսների անհավասարաչափ բաշխվածությունը տարբեր երկրների միջև: Սովորաբար այս կամ այն երկիրը մասնագիտանում է այնպիսի բարիքների արտադրության մեջ, որի համար ունի ռեսուրսային ապահովվածություն:

Երկրորդ՝ բնակլիմայական պայմանները, որոնք հատկապես կարևոր են գյուղատնտեսական արտադրության համար: Դրանք պայմանավորում են տարբեր երկրների մասնագիտացումը որոշակի գյուղատնտեսական բարիքների արտադրության մեջ:

Երրորդ՝ գիտակրթական և տեխնոլոգիական զարգացման մակարդակը, որը վճռորոշ նշանակություն ունի որևէ բարիքի արտադրության մեջ մասնագիտացման համար:

Չորրորդ՝ պատմականորեն ձևավորված ավանդական արտադրությունները: Մա նշանակում է՝ որևէ երկիր, ավանդաբար մասնագիտանալով այս կամ այն արտադրության մեջ, կարողանում է ապահովել արտադրության բարձր որակ և արտադրողականություն:

Աշխատանքի միջազգային բաժանման հիմքի վրա տարբեր երկրների միջև ձևավորվում են առևտրային հարաբերություններ: Աշխատանքի միջազգային բաժանման վերը նշված նախադրյալների առկայության պայմաններում որևէ երկիր այս կամ այն բարիքի արտադրության գործում մյուսների նկատմամբ ձեռք է բերում առավելություն: Այդ առավելությունը կարող է լինել **բացարձակ և հարաբերական**: Միջազգային առևտուրը հիմնված է այդ երկու սկզբունքների վրա:

ԲԱՅԱՐՉԱԿ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԿՋԲՈՒՆՔԸ: Այս սկզբունքի էությունը հետևյալն է. **որևէ երկիր միավոր ծախսի դեպքում նույն բարիքից ար-**

տաղրում է ավելի մեծ քանակություն, քան մյուս երկիրը: Դիտարկենք երկու երկիր՝ A և B: Ենթադրենք՝ նույն ծախսի դեպքում A երկրում կարող է արտադրվել կամ 50 տ քանան, կամ 20 տ նարինջ, իսկ B-ում՝ կամ 40 տ քանան, կամ 80 տ նարինջ: Սա նշանակում է՝ A երկիրն ունի բացարձակ առավելություն քանանի, իսկ B-ն՝ նարնջի արտադրության մեջ: A երկրում 1 տ քանանը համարժեք է 0.4 տ նարնջի քանակությանը, իսկ B երկրում՝ 2 տ նարնջի քանակությանը: Եթե այդ երկրների միջև առկա են առևտրային կապեր, ապա A երկիրը շահագրգռված կլինի իր արտադրած քանանը արտահանելու B երկիր, որովհետև այնտեղ 1 տ քանանի դիմաց կարող է ձեռք բերել 2 տ նարինջ, իսկ B երկիրը շահագրգռված կլինի իր արտադրած նարինջը արտահանելու A երկիր, որովհետև այնտեղ կարող է 1տ նարնջի դիմաց ձեռք բերել 2.5 տ քանան: Այսինքն՝ նպատակահարմար է, որ A երկիրը մասնագիտանա քանանի արտադրության մեջ, իսկ B-ն՝ նարնջի: Ենթադրենք՝ միջազգային շուկայում 1տ քանանի գինը հավասար է 1տ նարնջի գնին: Փորձենք ներկայացնել օգուտը արտաքին առևտրից բացարձակ առավելության սկզբունքի կիրառման դեպքում (տե՛ս աղյուսակ 16.1.):

Աղյուսակ 16.1.

Օգուտն արտաքին առևտրից բացարձակ առավելությունների դեպքում

Մինչև մասնագիտացումը				
Երկիր	Թողարկում (տոննա)	Արտահանում – Ներմուծում +	Սպառում	Սպառման ան
A քանան նարինջ	20 12	0 0	20 12	0 0
B քանան նարինջ	10 60	0 0	10 60	0 0
Մասնագիտացումից հետո				
A քանան նարինջ	50 0	-16 +16	34 16	+14 +4
B քանան նարինջ	0 80	+16 -16	16 64	+6 +4

Աղյուսակ 16.1.-ից երևում է, որ մինչև մասնագիտացումը A երկիրը կարող է արտադրել 20 տ քանան և 12 տ նարինջ, իսկ B-ն՝ համապատասխանաբար 10 և 60 տ: Երկու երկրներում միասին վերցրած կարող է արտադրվել 20+10=30 տ քանան և 12+60=72 տ նարինջ: Մասնագիտացումից հետո A երկիրը արտադրում է միայն քանան (50 տ), իսկ B-ն՝ միայն նարինջ (80 տ): Փաստորեն, մասնագիտացման արդյունքում արտադրվել է ավելի շատ քանան և նարինջ, քան մինչև մասնագիտացումը: A երկիրն իր արտադրած քանանի մի մասը (16 տ) արտահանում է B երկիր և այնտեղից ներմուծում նարինջ (16 տ), որովհետև դրանց գները հավասար են: Այսինքն՝ A և B երկրների միջև տեղի է ունենում քանանի և նարնջի փոխանակություն: Այդ դեպքում A երկրում քանանի սպառումը կկազմի

50-16=34 տ, իսկ նարնջի սպառումը՝ 0+16=16 տ: Փաստորեն, մասնագիտացումից հետո բանանի սպառումը ավելացել է 34-20=14 տ-ով, իսկ նարնջինը՝ 16-12=4 տ-ով: B երկրում բանանի սպառումը կկազմի 0+16=16 տ, իսկ նարնջինը՝ 80-16=64 տ: Սա նշանակում է՝ մասնագիտացումից հետո B երկրում բանանի սպառումն ավելացել է 16-10=6 տ-ով, նարնջինը՝ 64-60=4 տ-ով: Դա էլ հենց այն օգուտն է արտաքին առևտրից, որի հիմքը բացարձակ առավելությունների սկզբունքի կիրառումն է:

ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿՉԲՈՒՆՔԸ: Եթե անգամ որևէ երկիր մյուսի նկատմամբ բացարձակ առավելություն չունի, դրանց միջև առևտուրը նույնպես կարող է փոխշահավետ լինել: Ենթադրենք՝ նույն ծախսերի դեպքում A երկիրը կարող է արտադրել կամ 50 տ բանան, կամ 20 տ նարինջ, իսկ B-ն՝ կամ 60 տ բանան, կամ 80 տ նարինջ: Այսինքն՝ B երկիրը և՛ բանանի, և՛ նարնջի արտադրությամբ A երկրի նկատմամբ ունի առավելություն: Սակայն A երկրում 1 տ բանանը համարժեք է նարնջի 0,4 տ-ին, իսկ B-ում՝ 1,3 տ-ին: Այդ դեպքում A երկրի համար շահավետ է իր արտադրած բանանը արտահանել B երկիր, որովհետև այնտեղ կարող է 1 տ բանանը փոխանակել 1,3 տ նարնջի հետ: Ուրեմն՝ A երկիրը բանանի արտադրությամբ B-ի նկատմամբ ունի **հարաբերական առավելություն**: B երկրի համար շահավետ է իր նարինջն արտահանել A երկիր, որովհետև այնտեղ կարող է 1 տ նարինջը փոխանակել մոտավորապես 3 տ բանանի հետ: Ուստի նպատակահարմար է, որ A երկիրը մասնագիտանա բանանի, իսկ B-ն՝ նարնջի արտադրության մեջ: Ենթադրենք՝ միջազգային շուկայում 1 տ բանանի գինը հավասար է 1 տ նարնջի գնին: Փորձենք ներկայացնել արտաքին առևտրից ստացվելիք օգուտը հարաբերական առավելության սկզբունքի կիրառման դեպքում (տե՛ս աղյուսակ 16.2.):

Աղյուսակ 16.2.

Օգուտն արտաքին առևտրից հարաբերական առավելությունների դեպքում

Մինչև մասնագիտացումը				
Երկիր	Թողարկում (տոննա)	Արտահանում - Ներմուծում +	Սպառում	Սպառման աճ
A բանան	20	0	20	0
նարինջ	12	0	12	0
B բանան	15	0	15	0
նարինջ	60	0	60	0
Մասնագիտացումից հետո				
A բանան	50	-16	34	+14
նարինջ	0	+16	16	+4
B բանան	0	+16	16	+1
նարինջ	80	-16	64	+4

Աղյուսակ 16.2.-ից երևում է, որ մինչև մասնագիտացումը A երկիրը, ելնելով իր սպառողների պահանջարկից, արտադրում է 20 տ բանան և 12 տ նարինջ, իսկ B-ն՝ համապատասխանաբար 15 տ և 60 տ: Այդ դեպքում երկու երկրները միասին արտադրում են $20+15=35$ տ բանան և $12+60=72$ տ նարինջ: Մասնագիտացումից հետո A երկրում արտադրվել է 50 տ բանան, իսկ B-ում՝ 80 տ նարինջ: Այսինքն՝ բանանի արտադրությունն ավելացել է $50-35=15$ տ-ով, իսկ նարնջինը՝ $80-72=8$ տ-ով: Իրենց սպառողների պահանջարկը բավարարելու համար A և B երկրների միջև տեղի է ունենում բանանի և նարնջի փոխանակում: A երկիրը 16 տ բանանը արտահանում է B երկիր և այնտեղից ներմուծում 16 տ նարինջ, որովհետև դրանց գները հավասար են: Այդ փոխանակության արդյունքում A երկրում բանանի սպառումը կկազմի $50-16=34$ տ, նարնջինը՝ $0+16=16$ տ, իսկ B երկրում բանանի սպառումը կկազմի $0+16=16$ տ, նարնջինը՝ $80-16=64$ տ: Այսինքն՝ մասնագիտացումից հետո A երկրում բանանի սպառումն ավելացել է $34-20=14$ տ-ով, նարնջինը՝ $16-12=4$ տ-ով, իսկ B երկրում բանանի սպառումն ավելացել է $16-15=1$ տ-ով, նարնջինը՝ $64-60=4$ տ-ով: Փաստորեն, արտադրվող բարիքների առումով, A երկրի նկատմամբ B-ի առավելության դեպքում անգամ տնտեսապես նպատակահարմար է, որ դրանք մասնագիտացան նաև որևէ բարիքի արտադրության մեջ և իրականացնեն փոխանակություն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳԻՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ են ներառում միջազգային փոխհասկան հարաբերությունները:
2. Ներկայացրե՛ք արտաքին առևտրի և աշխարհների միջազգային բաժանման փոխկապվածությունը: Որո՞նք են աշխարհների միջազգային բաժանման նահադրյալները:
3. Բացարժեք բացարձակ և հարաբերական առավելությունների սկզբունքների էությունը:
4. Սկորև ներկայացված աղյուսակներում փրված են A և B երկրների կողմից շաքարի և հացահատիկի բողարկումը մինչև մասնագիտացումը և մասնագիտացումից հետո: Մի դեպքում՝ այդ երկրների միջև առկա է բացարձակ, իսկ մյուս դեպքում՝ հարաբերական առավելություն: Ենթադրենք՝ միջազգային շուկայում 1 տ շաքարի գինը հավասար է 1 տ հացահատիկի գնին: Լրացրե՛ք աղյուսակների դատարկ սյունակները՝ ըստ ձեր հաշվարկների:

Օգուտն արտաքին առևտրից բացարձակ առավելությունների դեպքում

Մինչև մասնագիտացումը				
Երկիր	Թողարկում (տոննա)	Արտահանում – Ներմուծում +	Սպառում	Սպառման ան
A շաքար հացահատիկ	20 15			
B շաքար հացահատիկ	12 65			

Մասնագիտացումից հետո				
A շաքար հացահատիկ	50 0			
B շաքար հացահատիկ	0 90			

Օգուտն արտաքին առևտրից հարաբերական առավելությունների դեպքում

Մինչև մասնագիտացումը				
Երկիր	Թողարկում (տոննա)	Արտահանում – Ներմուծում +	Սպառում	Սպառման ան
A շաքար հացահատիկ	20 15			
B շաքար հացահատիկ	14 70			

Մասնագիտացումից հետո

A շաքար հացահատիկ	50 0			
B շաքար հացահատիկ	0 90			

**ՉԱՍ 17. ԿԱՊԻՏԱԼ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ,
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՎՃԱՐԱՅԻՆ
ՀԱՇՎԵԿՇԻՈՒ**

ԿԱՊԻՏԱԼ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ: Միջազգային տնտեսական հարաբերությունների կարևոր ուղղություններից է կապիտալի արտահանումը: Կապիտալի արտահանման պատճառներ են համարվում.

Առաջին՝ կապիտալ ներմուծող երկրում հումքի և աշխատուժի էժան արդյունքների առկայությունը: Դա հնարավորություն է տալիս միավոր բարիքը կապիտալ ներմուծող երկրում արտադրելու ավելի էժան և ապահովելու շահույթի ավելի մեծ չափեր:

Երկրորդ՝ երկրների տնտեսական զարգացման տարբերությունները: Թույլ զարգացած երկրները չեն կարող ապահովել արտադրության անհրաժեշտ մակարդակ: Կապիտալի ներմուծումը այդ երկրներ ապահովում է նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի, արտադրության կազմակերպման փորձի ներդրում:

Կապիտալի արտահանման ձևերն են՝

1. **Ձեռնարկագրական**, որն իր հերթին իրականացվում է **ուղղակի** և **պորտֆելային** ներդրումների եղանակով: **Ուղղակի** ներդրումների դեպքում արտահանվող կապիտալը ներմուծող երկրում անմիջապես օգտագործվում է որևէ արտադրության մեջ: Այդ դեպքում արտասահմանցի ներդրողը ստանում է շահույթ: **Պորտֆելային** ներդրման դեպքում արտասահմանյան երկրում ձեռք են բերվում որևէ ձեռնարկության բաժնետոմսեր: Այս պարագայում արտասահմանցի ներդրողը չի մասնակցում ձեռնարկության կառավարմանը և եկամուտը ստանում է շահաբաժնի ձևով:

2. **Փոխարկական**, երբ կապիտալը տրվում է փոխառության ձևով, և օտարերկրյա ներդրողը պահանջում է դրա դիմաց տոկոս վճարել: Մրանք, փաստորեն, վարկային հարաբերություններ են միջազգային հարաբերությունների մակարդակով: Այդ դեպքում օտարերկրյա ներդրողը եկամուտը ստանում է տոկոսի ձևով:

Կապիտալի արտահանման միջոցով կապիտալ ներմուծող երկրները բարելավում են իրենց արտադրության տեխնոլոգիական մակարդակը: Դա մեծ չափով նպաստում է այդ երկրների տնտեսության զարգացմանը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՅԻՆ: Միգրացիան մարդկանց տեղաշարժն է մի երկրից մյուսը: **Միգրացիան ընդգրկում է բնակչության էմիգրացիան (արտագաղթ) և իմիգրացիան (ներգաղթ):** Աշխատանքային ռեսուրսների էմիգրացիայի պատճառներն են.

Առաջին՝ երկրների միջև առկա տնտեսական զարգացման աստիճանների տարբերությունը: Մարդիկ ձգտում են բնակություն հաստատել այն երկրներում, որտեղ կենսամակարդակն ավելի բարձր է: Շատ հաճախ մարդիկ ստիպված լինում են իրենց հայրենիքն աշխատանք չունենալու պատճառով, ինչպես նաև ավելի բարձր աշխատավարձ ստանալու ակնկալիքով:

Երկրորդ՝ ոչ տնտեսական գործոնները, մասնավորապես՝ քաղաքական, կրոնական, ազգային, ռասայական և այլն: Օրինակ՝ պատերազմները, բռնատիրական քաղաքական ռեժիմների հաստատումը, ազգային փոքրամասնությունների և մարդու իրավունքների ռոնահարումը նպաստում են արտագաղթին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ (ՎԱՆՅՈՒՏԱՅԻՆ) ՀԱՐԱԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Արժույթը որևէ երկրի դրամական միավորն է, որի միջոցով **տարբեր երկրների միջև կատարվում են առևտրամատչելի առևտրային գործարքներ:** Օրինակ՝ միջազգային արժույթ են ԱՄՆ դոլարը, եվրոն, ճապոնական իենը, ռուսական ռուբլին և այլն:

Արժույթի փոխարժեքը (կուրսը) տվյալ երկրի դրամական միավորի գինն է՝ արտահայտված մեկ այլ երկրի դրամական միավորով: Արժույթի կուրսը պայմանավորված է դրա գնողունակությամբ: Գնողունակությունը բարիքների այն քանակությունն է, որը կարող է ձեռք բերվել տվյալ դրամական միավորով: Օրինակ՝ եթե 1 եվրոյի փոխարժեքը հավասար է 1.3 ԱՄՆ դոլարի, ուրեմն 1 եվրոյի գնողունակությունը հավասար է 1.3 դոլարի գնողունակությանը:

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ: Վճարային հաշվեկշիռը որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում) միջազգային փոխհասկան հարաբերություններում ավյալ երկրի փաստացի վճարումների և դրամական մուտքերի հարաբերակցությունն է: Վճարային հաշվեկշիռը պարունակում է երկու հիմնական բաժին.

Առաջին՝ ընթացիկ գործառնությունների հաշիվը, որն իր հերթին ներառում է՝

ա) Առևտրային հաշվեկշիռը: Դա բարիքների արտահանման և ներմուծման հարաբերակցությունն է կամ սալոն (հաշվեմնացորդը), որը կարող է լինել դրական կամ բացասական մեծություն կամ հավասար լինել զրոյի: Ենթադրենք՝ արտահանված բարիքների դիմաց A երկիր մուտք են գործել 80 մլն դոլարի դրամական միջոցներ: Այսինքն՝ երկրից արտահանված բարիքները, վաճառվելով տարբեր երկրների շուկաներում, ապահովում են արժութային միջոցների հոսք: Իսկ ներմուծված բարիքների վաճառքից ստացված արժութային միջոցները դուրս են տարվում: Ենթադրենք՝ ներմուծման դիմաց երկրից դուրս են բերվել 75 մլն դոլարի դրամական միջոցներ: Հետևապես՝ արտահանման և ներմուծման հաշվեմնացորդը կազմել է $80-75=5$ մլն դոլար:

բ) Ծառայությունների հաշվեկշիռը: Դա տվյալ երկրի և մյուս երկրների միջև ապահովագրության, տրանսպորտի, զբոսաշրջության, մտավոր սեփականության վաճառքի հետ կապված փոխադարձ վճարումների հարաբերակցությունն է: Ենթադրենք՝ A երկիր դրամական միջոցներ մուտք են գործել ապահովագրական (10 մլն դոլար), տրանսպորտային (20 մլն դոլար), զբոսաշրջության (50 մլն դոլար) ծառայությունների դիմաց վճարումների և մտավոր սեփականության (5 մլն դոլար) վաճառքի շնորհիվ: Ասենք՝ մույն A երկիրը մյուսներին վճարում է ապահովագրական (15 մլն դոլար), տրանսպորտային (15 մլն դոլար), զբոսաշրջության (60 մլն դոլար) ծառայության և մտավոր սեփականության (10 մլն դոլար) դիմաց: Այդ դեպքում ծառայությունների հաշվեկշիռը կկազմի $(10+20+50+5)-(15+15+60+10)=85-100=-15$ մլն դոլար:

գ) Գործոնային եկամուտների հաշվեկշիռը: Սա տվյալ երկրի և մյուս երկրների միջև գործոնային (աշխատանքի, կապիտալի, բնական ռեսուրսների և ձեռնարկատիրության) եկամուտների հետ կապված փոխադարձ վճարումների հարաբերակցությունն է: Ենթադրենք՝ A երկրի քաղաքացիների եկամուտները արտասահմանում աշխատավարձի, տոկոսի և շահաբաժնի ձևով համապատասխանաբար կազմել են 40, 10 և 17 մլն դոլար: Իսկ A երկրում արտասահմանցիների եկամուտները աշխատավարձի, տոկոսի և շահաբաժնի ձևով համապատասխանաբար կազմել են 30, 15 և 6 մլն դոլար: Այդ դեպքում գործոնային եկամուտների հաշվեկշիռը կկազմի $(40+10+17)-(30+15+6)=67-51=16$ դոլար:

դ) Չուր փրանսֆերտները: Սրանք մասնավոր և պետական դրամական փոխադարձ փոխանցումներն են: Ներառում են տարբեր տեսակի անհատույց մասնավոր և պետական դրամական օգնություններ, թոշակներ, պարգևատրումներ և այլն: Ենթադրենք՝ տարբեր տեսակի տրանսֆերտ վճարումների հոսքը դե-

պի A երկիր կազմել է 5 մլն դոլար, իսկ A երկրից՝ 8 մլն դոլար: Այդ դեպքում գուտ տրանսֆերտը կկազմի $5-8=-3$ մլն դոլար:

Այսպիսով՝ ընթացիկ գործառնությունների հաշիվը կկազմի առևտրային հաշվեկշիռ+ժառայությունների հաշվեկշիռ+գործոնային եկամուտների հաշվեկշիռ+գուտ տրանսֆերտ: Փաստորեն, ընթացիկ գործառնությունների հաշվեկշիռը հավասար է $5+(-15)+16+(-3)=5-15+16-3=21-18=3$ մլն դոլար: Այսինքն՝ ընթացիկ գործառնությունների արդյունքում A երկրի արժուքային պաշարն ավելացել է 3 մլն դոլարով:

Երկրորդ՝ կապիտալի շարժի հաշիվը: Դա ներառում է տվյալ և մյուս երկրների միջև ուղղակի և պորտֆելային ներդրումների, փոխառությունների հետ կապված փոխադարձ դրամական միջոցների շարժի հարաբերակցությունը: Տարբեր երկրների միջև գոյություն ունեն ուղղակի և պորտֆելային փոխադարձ ներդրումներ, ինչպես նաև փոխառություններ: Ենթադրենք՝ դեպի A երկիր արտասահմանցիների ուղղակի ներդրումներին գումարը կազմել է 100 մլն դոլար, պորտֆելայինը (արժեթղթերի ձեռքբերումը)՝ 50 մլն դոլար, փոխառությունները՝ 20 մլն դոլար: Իսկ A երկրի ուղղակի ներդրումները արտասահմանում կազմել են 90 մլն դոլար, պորտֆելայինը՝ 40 մլն դոլար, փոխառությունները՝ 30 մլն դոլար: Այդ դեպքում կապիտալի շարժի հաշվեկշիռը կկազմի $(100+50+20)-(90+40+30)=-170-160=10$ դոլար: Սա նշանակում է՝ կապիտալի և ֆինանսական գործառնությունների արդյունքում A երկրի արժուքային պաշարն ավելացել է 10 մլն դոլարով:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋՈՎՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են կապիտալի արտահանման պայմանները և շեղերը:
2. Որո՞նք են աշխատանքի միջազգային միգրացիայի պայմանները:
3. Ի՞նչ է արժույթը, ո՞րն է դրա փոխարժեքը:
4. Ի՞նչ է վճարային հաշվեկշիռը:
5. Որո՞նք են վճարային հաշվեկշռի բաժինները:

Մեկ տարվա ընթացքում տվյալ երկիր մուտքը արտահանումից կազմել է 60 մլն, էլքը՝ ներմուծումից՝ 70 մլն դոլար: Մուտքը տարբեր տեսակի ծառայություններից կազմել է 40 մլն, էլքը՝ 30 մլն դոլար: Մուտքը գործոնային եկամուտներից կազմել է 80 մլն, էլքը՝ 85 մլն դոլար: Մուտքը տրանսֆերտ վճարումներից կազմել է 50 մլն, էլքը՝ 10 մլն դոլար: Մուտքը կապիտալի արտահանումից կազմել է 120 մլն, ներմուծումից՝ 100 մլն դոլար: Որքա՞ն են կազմել ընթացիկ գործառնությունների և կապիտալի հաշիվը և արժուքային պաշարի անը (նվազումը):

ԲՈՎԱՆ-ԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	3
ԲԱԺԻՆ 1. ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	4
ԹԵՄԱ 1. ԻՆՉ Է ԳԵՂԵՑԻԿԸ	4
ԳԱՍ 1-2. ԳԵՂԵՑԻԿԻ ՀԱՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	4
ԳԱՍ 3. ԳԵՂԵՑԻԿԸ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱԿԱՅՐԵՐՈՒՄ	8
ԹԵՄԱ 2. ԿԵՆՑԱԿԻ ԵՎ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ	13
ԳԱՍ 4. ԳԵՂԵՑԻԿԸ ՄԵՐ ԱՄԵՆՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ	13
ԳԱՍ 5-6. ՄԻՋ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄԸ	16
ԳԱՍ 7. ՄՈԳԱՅԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԲԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱԳՈՒՄՏ	22
ԳԱՍ 8. ԳԵՂԵՑԻԿ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	26
ԹԵՄԱ 3. ԳԵՂԵՑԻԿԸ ԵՐՎԵՏՏԱԲՄ	28
ԳԱՍ 9. ԵՐՎԵՏԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԳՈՒ ԻՆՔՆԱՄԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	28
ԳԱՍ 10-11. ԳԵՂԵՑԻԿԸ ԵՐՎԵՏԻ ՏԱՐԲԵՐ ԲԱՍԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ	32
ԹԵՄԱ 4. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԻԳԵՍԼ ԵՎ ՃԱՇՎԿ	41
ԳԱՍ 12. ԻՆՉ Է ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԻԳԵՍԼԸ	41
ԳԱՍ 13. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԻԳԵՍԼԻ ՓՈՆԵԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԳՎՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ	45
ԳԱՍ 14. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԻԳԵՍԼԻ ՓՈՆԵԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԳՎՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)	49
ԳԱՍ 15-16. ԳԵՂԵՑԻԿԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿՅՈՒՄ ԵՐՎԵՏՏՈՒՄ	55
ԲԱԺԻՆ 2. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	61
ԹԵՄԱ 1. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	61
ԳԱՍ 1-2. ԻՆՉ Է ԲԱՐՈՅԱԿԱՆԸ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ	61
ԳԱՍ 3. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	66
ԹԵՄԱ 2. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ	70
ԳԱՍ 4. ԲԱՐԻՆ ՈՒ ՉԱՐԸ	70
ԳԱՍ 5. ՊԱՐՏԸ ԵՎ ԽԻՂԸ	72
ԳԱՍ 6. ԵՐԱՆԿՈՒԹՅՈՒՆ	74
ԳԱՍ 7. ԷԳՈՒԾՄ ԵՎ ԱՆՏՐՈՒԾՄ	78
ԹԵՄԱ 3. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՇՈՒԿԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՅՈՒՄ	81
ԳԱՍ 8-9. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՇՈՒԿԱՏՈՒՄՆԵՐ	81
ԳԱՍ 10. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՐԿԸՆՏՐԱՆՔՆԵՐ	84
ԹԵՄԱ 4. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒՄՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ	87
ԳԱՍ 11. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	87
ԳԱՍ 12. ԽՐՊՈՒՄՈՒՄ ԵՎ ՊԱՏԻԺ	90
ԳԱՍ 13-14. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԱՌԱՔԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	93
ԹԵՄԱ 5. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿՅՈՒՄ ՀԻՄՆԱՎԱՐՅԵՐ	96
ԳԱՍ 15. ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱ	96
ԳԱՍ 16. ԿԵՆԳԱՆԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՎԱՐՅԸ	98
ԲԱԺԻՆ 3. ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ	101
ԹԵՄԱ 1. ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԳՀԱՆՈՒՐ ՀԱՐՅԵՐ	101
ԳԱՍ 1. ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	101
ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	101
ԳԱՍ 2. ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	106
ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱՌԱՐԿԱՅՈՒՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ	106
ԹԵՄԱ 2. ՀՈԳԵՎԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԻ ՈՒ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆ	112
ԳԱՍ 3. ՀՈԳԵՎԱՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՅՈՒՄ	112
ԳԱՍ 4. ԲԱՐՉՐԱԳՈՒԹՅՆ ՆՅԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ	112
ՀՈԳԵՎԱՆԻ ԱԿՏՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԿԱԿՆԵՐԸ	115

ԹԵՄԱ 3. ՀՈԳԵԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ	119
ԳԱՍ 5. ՀՈԳԵԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՒԿԻՐԸ ԱՐԴԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ	119
ԹԵՄԱ 4. ԱՆՉ	124
ԳԱՍ 6. ԱՆՉԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	124
ԹԵՄԱ 5. ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒՄ	130
ԳԱՍ 7. ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԿԱՆՈՒՄ	130
ԳԱՍ 8. ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ	134
ԳԱՍ 9. ՄՏԱՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔ	141
ԳԱՍ 10. ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ: ԿԱՄՔ	146
ԹԵՄԱ 6. ՀՈՒՅՁԵՐ ԵՎ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ ԳԱՍ 11. ՀՈՒՅՁԵՐՆ ՈՒ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՐԳՈՒ ԿՅԱՆՔՈՒՄ	150
ԹԵՄԱ 7. ԱՆՉԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԽԱՆՆԱՎՈՐԵ ԵՎ ԲՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ: ԸՆԳՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	153
ԳԱՍ 12. ԽԱՆՆԱՎՈՐԸ	153
ԳԱՍ 13. ԲՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ: ԸՆԳՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	157
ԹԵՄԱ 8. ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԱՍ 14. ԸՆՏԱՆԻՔԻ ՏԵՄԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՈՒՅԹՆԵՐԸ	161
ԹԵՄԱ 9. ԿՈՆՅԱԿՏՆԵՐԸ ՄԱՐԳՈՒ ԿՅԱՆՔՈՒՄ ԳԱՍ 15. ԿՈՆՅԱԿՏՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ՄԱՐԿԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ	167
ԹԵՄԱ 10. ՀՈԳԵԿԱՆԻ ԽԱԹԱՐՈՒՄՆԵՐ: ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԵՐԵՎԱՆԵՐ ԵՎ ՆԵՐԱՈՒՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	171
ԳԱՍ 16. ՀՈԳԵԿԱՆԻ ԽԱԹԱՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՈՒՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՆՆԵՐԸ	171

ԻԼՃԻՆ 4. ՏՆՏԵՍԱԳՅՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1. ՏՆՏԵՍԱԳՅՈՒԹՅՈՒՆ ԱՈՒՍԿԱՆ ԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ	178
ԳԱՍ 1. ԻՆՉ Է ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԳՅՈՒԹՅՈՒՆԸ	178
ԳԱՍ 2. ՎԵՐԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՒՆԵՐԸ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇ: ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	181
ԹԵՄԱ 2. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: ԱՐԺԵՔ ԵՎ ՓՈՂ	185
ԳԱՍ 3. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ԲԱՐԻՔԻ ԱՐԺԵՔԸ	185
ԳԱՍ 4. ՓՈՂԸ ԵՎ ԳՐԱ ԳՈՐԾԱՈՒՅԹՆԵՐԸ	188
ԹԵՄԱ 3. ՊԵՃԱՆՁԱՐԿԻ ԵՎ ԱՈՒՋԱՐԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	192
ԳԱՍ 5. ՊԵՃԱՆՁԱՐԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	192
ԳԱՍ 6. ԱՈՒՋԱՐԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	196
ԳԱՍ 7. ՀԱՎԱՍՏԱՐԱԿՇՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԻՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ	197
ԹԵՄԱ 4. ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՅԻՆ ԵԿԱՄՈՒՆՆԵՐԸ	202
ԳԱՍ 8. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ: ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՏՈԿՈՍ: ՀՈՂ ԵՎ ՌԵՆՏԱ	202
ԳԱՍ 9. ԶԵՆՈՒՐԿԱՅԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀՈՒՅԹ	206
ԹԵՄԱ 5. ԲԱՆԿԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐԺԵՔՂԹԵՐ	210
ԳԱՍ 10. ԲԱՆԿԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՅ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	210
ԳԱՍ 11. ՎԱՐԿԵՐ ԵՎ ԱՐԺԵՔՂԹԵՐ	214
ԹԵՄԱ 6. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	218
ԳԱՍ 12. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱՄԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ	218
ԳԱՍ 13. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ: ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԸ: ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԸ	221
ԹԵՄԱ 7. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	225
ԳԱՍ 14. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՅ ԱՆՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ	225
ԳԱՍ 15. ՍՈՑԻԱԼԿԱՆ ՍՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԶԵՎԵՐԸ	227
ԹԵՄԱ 8. ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	230
ԳԱՍ 16. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ: ԲԱՅԱՐՉԱԿ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՈՒՎԵՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿՋՔՈՒՆՔԸ	230
ԳԱՍ 17. ԿԱՊԻՏԱԼ ԻՐՏԱՀԱՆՈՒՄԸ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՒ	234

ԳԱՍԱԳԻՐՔԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ՝

- ԲԱԺԻՆ 1. ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – ՄԻՆՎԱ ՍԱՐԳՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԲԱԺԻՆ 2. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – ՍԵՐՈՐ ՀՈՎՍԵՓԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԲԱԺԻՆ 3. ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ – ՀԵՂԻՆԵ ՎԱՐԳԳԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ,
ԿԱՄՈ ԵՐԵՄԻ ՎԱՐԳԱՆՅԱՆ
ԲԱԺԻՆ 4. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – ՀՈՎՍԵՓ ԻՎԱՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

10-րդ դասարան

**ԳԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՅԻ
ԲՈԼՈՐ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՐ**

Խմբագիր՝	Ա. Ռոկանյան
Սրբագրիչ՝	Ա. Պատյան
Չափորոշիչ՝	Ն. Հայրապետյանի
Շապիկը՝	Ս. Դավիդյանի

Պատվեր՝ 1004: Տպարանակ՝ 47000:
Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: 15+0.5 (ներդիր) տպ. մամուլ:
Տասառնասկը՝ DallakTimeNew, Arm Scool, Sovorakan:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում



ШКОЛЫ ИТОГ
ИЗДАТЕЛЬСТВО
САНКТ-ПЕТЕРБУРГСКОГО
УНИВЕРСИТЕТА

САНКТ-ПЕТЕРБУРГСКОЕ
ИЗДАТЕЛЬСТВО